

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ, ԿԱՆՈՆԱԳՐԵՐ
ԵՒ ՎԱՒԵՐԱԳՐԵՐ

ԿԱԶՄԵՑ

ԴՈԿՑ. ՎԱԶԷՂԱՋԱՐԵԱՆ

ՊԵՂՐՈՒՔ
1988





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ, ԿԱՆՈՆԱԳՐԵՐ
ԵՒ ՎԱՌԵՐԱԳՐԵՐ

ԿԱԶՄԵՑ

ԳՈԿՑ. ՎԱԶԷ ՂԱԶԱՐԵԱՆ

ՊԵՂՈՒՔ

1 9 8 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏԵՐԱՆԻ ԿՈՄԻՏԵ

ԱՅՍ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Այս ժողովածուին իրագործումը կը նպատակադրէ մէկ-տեղել ՀՍՖՍՀՍ բնագրերը Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ զայն բաղկացուցած տարրերուն Ծրագրերուն, Կանոնագրերուն եւ կազմական կարեւորագոյն տրամադրելի փաստաթուղթերուն:

Ժողովածուն ամբողջական չէ, որովհետեւ հոսկէ կը բացակային Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան առաջին Ծրագիրն ու Կանոնագիրը, Գաղափարակցական Միութեան ծննդոցէն վկայաթուղթերը, Հայ ժողովրդական Կուսակցութեան հիմնական Ծրագիր-Կանոնագիրը, ապա նաեւ յարակից այլ փաստաթուղթեր, զորս չենք ունեցած մեր տրամադրութեան տակ կամ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւին մէջ, որուն նիւթերուն հիման վրայ առաւելապէս կազմուած է տուեալ ժողովածուն:

Ընթերցողն ու ուսումնասիրողը հետագայ Հում Նիւթերուն ընդմէջէն պիտի նշմարեն այն էական կապը, որ կ'երկարի հայ բաղաձական առաջին կուսակցութիւն Արմենական Կազմակերպութիւնէն մինչեւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւն՝ հետզհետէ իրարու կապելով եւ միաձուլելով Արմենական Կազմակերպութիւնը, Յեղափոխական Միութիւնը, Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան չափաւորական թւը, Միացեալ Հայ Յեղափոխական Կազմակերպութիւնը, Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութիւնը, Հայ ժողովրդական Կուսակցութիւնը, Հայ Ազգային Ազատական Միութիւնը եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան երբեմնի արմատական թւ՝ Ազատական Կուսակցութիւնը:

Ժողովածուին առաջին բաժինը յստկացուցած ենք հիմնական Ծրագիր-Կանոնագրերու:

Առաջին բաժինին առաջին ենթաբաժնով տրուողը 1885-ի աշնան վանի մէջ հիմնուած Արմենական Կազմակերպութեան Ծրագիրն ու Ներքին Կանոնագրերն են: Ծրագիրը կ'արտատպենք 1947-ին Գահիրէ լոյս տեսած Արմենակ Եկաբեանին «Յուշեր»էն, բանի որ անոր ձեռագիր բնագրին չենք հանդիպած բնաւ: Կանո-

նագրերու պարագային, թէեւ դարձեալ ներկայացուած Եկարեանին «Յուշեր»ով, իբր հիմ կ'ընդունին 1895-ին պատրաստուած ձեռագիր այն օրինակները, որոնք պահպանուած են Ռ. Ա. Կ. Կեդրոնական Արխիւին մէջ:

Երկրորդ ենթաբաժինը կ'ամփոփէ Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան առընչակից նիւթերը: Նախ կը հանդիպին կազմութեան 1908 Հոկտեմբեր 31-ին հոչակուած Հ. Ս. Ռ. Կ. ի հիմնական Ծրագիր-Կանոնագրին: Ծրագիրը ատենին լոյս տեսած է պոլսահայ մամուլին մէջ, ինչպէս նաեւ Արտակ Դարբինեանին «էջեր հայ ազատագրական շարժման օրերէն» գիրքով թէ այլուր: Մենք գայն եւ Կանոնագիրը կ'արտատպեն 1908-ին Պոլիս լոյս տեսած անջատ գրքոյկներէն, բաղդատել ետք ձեռագիր բնագրերուն հետ, որոնք կը գտնուին Ռ. Ա. Կ. Կեդրոնական Արխիւին մէջ: Յիշեալներուն անմիջապէս կը յաջորդեն Հ. Ս. Ռ. Կ. ի Գ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին (Պոլիս, 1920 Սեպտ.-Ռեկտ.) կողմէ վերատեսութեան ենթարկուած Ծրագիրն ու Կանոնագիրը, որոնք կը կրեն Հայ Ռամկավար Կուսակցութեան անունը: Ծրագիրը կ'արտատպեն 1921-ին Պոլիս հրատարակուած օրինակէն, իսկ Կանոնագիրը կը ներկայացնեն Ռ. Ա. Կ. Կեդրոնական Արխիւի ձեռագիրն հիմամբ: Ասոնց կը հետեւին 1919-ի գարնան Մ. Նահանգներու Հ. Ս. Ռ. Կ. ի եւ կարգ մը չէզոքներու միաձուլումով կազմուած Ազգային Ռամկավարական Կուսակցութեան Ծրագիրն ու Կանոնագիրը՝ արտատպելով համապատասխան առանձին գրքոյկներէ: Հարկ է նշել թէ Ա. Ռ. Կ. նմանակներ կը նկատէր Հ. Ս. Ռ. Կ. ի ամերիկեան մասնաճիւղը եւ ուղղակի կախեալ էր Հ. Ս. Ռ. Կ. ի Պոլսոյ Կեդրոնական վարչութենէն:

Երրորդ ենթաբաժինը կը վերաբերի աստիճանաբար Ազատական Կուսակցութեան վերանած վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ծրագրային փաստաթուղթերուն:

Չորրորդ ենթաբաժինը կը պարզէ համադրական պատկերը Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ծրագրերուն ու Կանոնագրերուն: Իբրեւ հիմ բնդունելով 1922-ին Պոլիս լոյս տեսած Ծրագիրն ու Կանոնագիրը, բաղդատական աղիւսակով կը ներկայացնեն անոնց զարգացումը եւ այս ենթաբաժինը վերջաւորութեան կ'արտատպեն 1968-ին լոյս տեսած Ծրագիր-Կանոնագիրը՝ տալու համար մինչեւ Ժ. Ընդհ. Պողմ. Ժողով կատարած բարեփոխումներուն արդիւնքը:

Հոս հարկ է նշել թէ Ռ. Ա. Կ. ի հիմնական Ծրագրերն ու Կանոնագրերը իրարմէ անջատ կամ միացեալ ձեւով լոյս տեսած են 1922, 1924, 1926, 1930, 1935, 1943, 1948, 1954 եւ 1968 թու-

կանոններուն: Ասոնցմէ 1930-ի Ծրագիրն ու կանոնագիրը, ի բաց առեալ նպատակային կէտերէն, կրկնութիւնն է 1926-ի Ծրագրին ու կանոնագրին, ինչպէս որ 1943-ի Ծրագիր-կանոնագիրը բոլորովին նոյնական կրկնութիւնն է 1935-ի օրինակին:

Ռ.Ա.Կ.ի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովներուն հերթականութիւնը եղած է հետեւեալը.-

Ա.- 1922 Յունիս 2-23, Պոլիս, Հայ Կղզի:

Բ.- 1924 Յունուար 14-Փետր. 5, Փարիզ:

Գ.- 1926 Մարտ 6-11, Փարիզ:

Դ.- 1929 Յունիս 20-31, Փարիզ:

Ե.- 1931 Օգոստ. 10-Սեպտ. 1, Փարիզ:

Զ.- 1934 Օգոստ. 6-16, Փարիզ:

Է.- 1937 Սեպտ. 19-Հոկտ. 24, Գահիրէ:

Ը.- 1946 Հոկտ. 23-Նոյ. 2, Գահիրէ:

Լրացուցիչ՝ 1947 Հոկտ. 11-22, Փարիզ:

Թ.- 1954 Ապրիլ 20-Մայիս 6, Պէյրութ:

Ժ.- 1957 Հոկտ. 6-11:

ԺԱ.- 1961 Սեպտ. 27-30:

ԺԲ.- 1965 Մարտ 6-10:

ԺԳ.- 1969 Հոկտ. 22-25:

ԺԴ.- 1972 Հոկտ. 18-22:

ԺԵ.- 1977 Սեպտ. 30-Հոկտ. 3:

ԺԶ.- 1982 Ապրիլ 10-14:

Վերոյիշեալ ժողովներէն ծրագրային եւ կանոնագրային բարեփոխումներ կատարողներ եղած են Բ.բ (1924-ին հրատարակուած), Ե.բ, որ կը նախատեսէ կանոնագրային հետեւեալ նոր կէտը, որ յաջորդ ժողովին իսկ կը ջնջուի. «Կեդրոնական վարչութեան գտնուած վայրին մէջ կ'առկայուի Շրջանային վարչութեան գոյութիւնը եւ Կեդր. վարչութիւնը կը ստանձնէ անոր գործերը», Զ.ն (1935-ին հրատարակուած), Է.ն մանաւանդ (1948-ին հրատարակուած), Թ.ն (1954-ին հրատարակուած) եւ ԺԲ.բ (1968-ին հրատարակուած): ԺԳ. Ընդհ. Պոգմ. Ժողովը կատարած է կանոնագրային մէկ բարեփոխում միայն, որ կը նախատեսէ Շրջանային վարչութեան մը ի հարկին երկու տարիով սլաշտօնավարելը՝ փոխանակ մէկի:

Կանոնագրային կէտերու ետեւաւաջութեան կամ սոսկ լեզուական ուղղումներու պարագաները բաղդատական աղիւսակին մէջ չենք նշած:

Հոս կ'ուզենք ընդգծած ըլլալ թէ ակնյայտ է այն մեծ մամուլփիւնը, որ կայ Հ.Ռ.Կ.ի եւ Ռ.Ա.Կ.ի (սկզբնական շրջանի) Ծրագիր-Կանոնագրերուն միջեւ: Արդէն Ռամկավար եւ Ազատական կուսակցութիւններու միութեան բանագնացները Ռ.Ա.Կ.ի Առաջին Ընդհանուր Պատգմ. Ժողովին գումարման համար իբրեւ հիմ ընդունած էին Հ.Ռ.Կ.ի հիմնական Կանոնագրին յօդւածները:



Ժողովածուին երկրորդ բաժնով կը ներկայացնենք կարգ մը տեղական բնոյթի կանոնագրեր, որոնք զանազան առումներով պերճախօս են եւ ի մասնաւորի կ'արտացոլեն տուեալ երկիրներու ընկերային կարգուսարքերու ազդեցութիւնները:



Իսկ Ժողովածուին երրորդ եւ վերջին բաժինը կը պարփակէ բովանդակութիւնը փաստաթուղթերու, որոնք լոյս կը սփռեն Միացեալ Հայ Յեղափոխական Կազմակերպութեան, Ազգային Ռամկավարական կուսակցութեան, Հայ Ազգային Ազատական Միութեան եւ Ռ.Ա. կուսակցութեան կազմութեան պարագաներուն վրայ:



Մենք այստեղ դիտումնաւոր կերպով կը սահմանափակուինք հում հիւթի մատուցումով միայն՝ իբրեւ ատաղձի հետագայ աշխարհոյթ ուսումնասիրութիւններու, որոնք իրենց մեկնակէտ ունենան ճշգրիտ, հաւաստի ու հարազատ տուեալներ:

ԴժԿԱՆ. ՎԱՋԻ ԴԱՉԱՐԵԱՆ

Բ Ա Ժ Ի Ն

Ա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՒ

ԿԱՆՈՆԱԳՐԵՐ

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԾՐԱԳԻՐ ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ*

Արմենական կազմակերպությունն հիմնուած ըլլալով «Արմենիա»-ի ցարդ քաղաքացիական պայքարուն վրայ, կ'աշխատի այդ թերթի գաղափարի տարածման:

Ն Պ Ա Տ Ա Կ

Արմենական կազմակերպութեան նըպատակն է յեղափոխութեամբ Թուրքիայի հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել ինքզինքն ազատօրէն կառավարելու, որով միայն կարող կը լինի իբրեւ մարդ ապրելու միջոցներ գիտնալ եւ զանոնք գործադրել ժամանակի պահանջմանց համեմատ:

Կազմակերպությունն իր ջանքերը կ'անփոփէ հայ ազգի այլեւայլ մասերի մէջ, առանց դաւանամքի խտրութեան, իր ուժերը չի ցրուեր դրացի ազգերի մէջ յեղափոխական շարժումներ յառաջ բերելու, նկատելով որ հայ ազգի եւ միւս ցեղերի մէջ զգացման, աշխարհայեցողութեան, պահանջների եւ զարգացման մեծ տարբերութիւններ կան, որով հայ ազգի յեղափոխական շարժումը կարող է դանդաղիլ եւ կննդոտիլ:

Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր

«Արմենական» կազմակերպությունն իր նպատակին հասնելու համար կ'աշխատի ներքին ուժ գոյացնել, միացնելով իրարու հետ միեւնոյն գաղափարի ծառայող հայ հայրենասէրներ եւ կեդրոնական ուղղութեան ենթարկելով ժողովուրդը արթնցնել, կազմակերպութեան մղել եւ նպաստել տալ առանց բռնի միջոցների, յեղափոխական գրականութեամբ, ընտիր դաստիարակութեամբ, գործիչի ազ-

նիւ կենցաղով եւ քաղաքով գաղափար տարածել, կանոնաւոր եւ յարատեւ յարաբերութիւն մշակել, զինակրթութեան եւ կարգապահութեան վարժեցնել, ինքնապաշտպանութեան զգացում արծարծել, զէնք եւ դրամ հայթայթել, զինուորական շարժում խմբեր կազմակերպել եւ ի հարկին գործածել եւ ընդհանուր շարժման պատրաստել, երբ մանաւանդ արտաքին հանգամանքներն ալ (օտար պետութիւնների եւ շրջակայ ցեղերի տրամադրութիւնները) մեզ նպաստաւոր համարուին: Մասնակի եւ տկար ուժերի շարժումները, ցոյց (բացառիկ հանգամանքներէ դուրս) ինչպէս եւ անժամանակ ոգեւորութիւնը միջոց չեն համարուիր, ընդհակառակն վնասակար կը նկատուին, որովհետեւ մէկ կողմանէ յեղափոխական ուժերը կը վատնեն եւ միւս կողմանէ յոռետեսութիւն կը ծաւալեն ժողովրդին մէջ: Մահու պատժի եւ սարսափի միջոցների գործադրութիւնը ստիպողական պահանջների մէջ ներելի է:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Կազմակերպությունն բաղկացած է գործող եւ քաղաքացիական անդամների: Գործող անդամներ անոնք են՝ որք կազմակերպութեան կանոններին կ'ենթարկուին, նորա հրահանգները կը գործադրեն եւ պարբերական տուրք մը կը վճարեն:

Քաղաքացիները անոնք են, որոնք կազմակերպութեան ծրագրին կը համակրին եւ նիւթապէս ու բարոյապէս կ'օժանդակեն կազմակերպութեան. առանց ենթարկուելու նորա կանոններին եւ հրահանգներին:

Տակաւ-Հայաստանի գործող անդամների հասոյթի %-ին 15-ը կը տրուի Կեդրոնին եւ 15-ը շրջանակների մասնաժո-

* Առնուած՝ Արմենակ եկարիանին «Ցուշբուռ»:

դովներին: Իսկ արտասահմանին %-ին 40-ը կը տրուի Կեդրոնին: Կազմակերպութիւնը ունի խումբեր, կազմուած գործող անդամներէ, շրջանակներ եւ Կեդրոն:

Կ Ե Դ Ր Ո Ն

Կազմակերպութեան Կեդրոնը կը կազմուի իւրաքանչիւր շրջանակի մասնաժողովի ներկայացուցիչներից, որը կը վարէ յեղափոխական գործի վերի տեսչութիւնը, կանոնաւոր յարաբերութիւն կը մշակէ շրջանակների մասնաժողովների եւ ուրիշ յեղափոխական մարմինների հետ, կ'որոշէ ընդհ. շարժումների ժամանակը եւ եղանակը: Կեդրոնը կ'աշխատի ունենալ իրեն յատուկ օրկանը, որ կազմակերպութեան պաշտօնական յայտարարութիւններ եւ հրահանգներ հրատարակելէ ի գատ կը տարածէ նաեւ անոր դաւանած գաղափարները:

Շ Ր Զ Ա Ն Ա Կ

Գործող անդամների խմբերը շրջանակների կը բաժնուին ըստ կարգադրութեան Կեդրոնին: Իւրաքանչիւր շրջանակ կ'ունենայ իրեն յատուկ մասնաժողովը որ կը վարէ տեղական յեղափոխական գործերը եւ յարաբերութիւն կը մշակէ Կեդրոնի եւ զանազան շրջանակների մասնաժողովների հետ:

Յեղափոխական ուրիշ մարմինների հետ, որոնք «Արմենական» կուսակցութիւնից դուրս կը գտնուին, յարաբերիլ եւ գործակցիլ միմիայն Կեդրոնի քայլաւորու-

թեամբ կը լինի:

Կազմակերպութեան իւրաքանչիւր շրջանակը կ'ունենայ իրեն յատուկ կանոնադրութիւնը տեղի եւ պահանջների համեմատ որով կը գծուի նորա զանազան հատուածների պարտուց եւ իրաւաց սահմանը, ինչպէս եւ մասնաժողովների ընտրութեան եղանակը, ըստ տեղական հանգամանքների:

Ներքին կանոնագիրը հակառակելու չէ ծրագրի ոեւէ մէկ կէտին:

Թ Ե Ր Թ

Կազմակերպութեան գաղափարի տարածման քերթը ներկայիս մէջ «Արմենիա»ն լինելով, նորա ջանքը պիտի լինի բարոյապէս եւ նիւթապէս օժանդակել այդ քերթին: «Արմենիա»ի խմբագրութիւնը ո'րեւէ պատասխանատուութիւն չունի կազմակերպութեան, վարչական եւ ելմտական գործերի մէջ:

Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն, Ծ Ր Ա Գ Ր Ի

Երբ կազմակերպութեան մէջ գըտնուող անձերէ կամ խմբերէ մին ծրագրի ոեւէ կէտը բարեփոխելի գտնէ, կրնայ իր կարծիքը յայտնել Կեդրոնին կամ իր ծանօթ մասնաժողովին: Այդ կարծիքը կամ առաջարկը եթէ Կեդրոնը կամ մասնաժողովը յարմար տեսնեն, կը հաղորդեն միւս մասնաժողովներին եւ անոնցմէ զրկուած կարծիքների հաւաքումէն ետք, մեծ մասի ձայների համեմատ փոփոխուր կ'ընդունուի կամ կը մերժուի:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՒ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ*

1) Հինդէն մինչեւ տասներկու խմբեր (5-15 անդամ ունեցող) կրնան իրենց խմբապետների միջոցով մի առանձին համայնք կազմել: Մասնաժողովը կ'որոշէ, ո՞ր խմբերի իրար հետ միանալու յարմարութիւնը:

2) Համաձայնող եւ իրար միացող ալլ խմբերի խմբապետներն առանձին մի ժողով կը կազմեն «Խմբապետական ժողով» անունով եւ իրենց վերաբերող խմբերի գործերը համերաշխութեամբ եւ իրար աջակցութեամբ առաջ կը տանին. դէթ երեք չարաթ մի անգամ պարտին ժողով դուժարել: Ի պահանջել հարկին արտակարգ նիստեր ալ ունենալու են:

3) Խմբապետական այն ժողովները (որոնց խմբերի անդամաց թիւը առնուազն 10-է պակաս չէ) կրնան մի մի անձ երկու տարուան համար ներկայացուցիչ ընտրել, զադտնի քուէի մեծամասնութեամբ ալլ ընտրուածներ միանալով մէկ առանձին բարձր մարմին կը կազմեն Մասնաժողով անունով. երկու տարիէն ետք նոր ընտրութիւն կը լինի, հիները կրնան վերընտրուել:

4) Մասնաժողովը իրեն համար ընտրուած մէկ անդամը եթէ անյարմար նկատէ՝ խմբապետ ժողովին հրահանգ կու տայ նոր ընտրութիւն անելու եւ կամ իր կողմէ տրուածը կը ներկայացունէ իրր ընտրելի, երբ խմբապետ ժողովի անդամաց մէջ յարմար մի անձ չտեսնուի Մասնաժողովին անդամակցելու:

5) Մասնաժողովի եւ խմբապետ ժո-

ղովի մի անդամ երբ առ առաւելն վեց ամսի չափ բացակայութիւն ունենայ քաղաքէս, ժողովին հաւանութեամբ իրեն մի տեղակալ կը նշանակէ, իսկ երբ բացակայութիւնը վեց ամսէն աւելի լինի, նորա տեղ նոր ընտրութիւն կատարելու է:

6) Մասնաժողովը իր մէջէն զադտնի քուէի մեծամասնի ձայնով հետեւեալ պաշտօնեաներ կ'ընտրէ: Ատենապետը որ անդամներ ժողովի կը կանչէ եւ որոշումների գործադրութեանը կը հսկէ, օրակարգի ցանկը պահելով: Քարտուղարը՝ որ Մասնաժողովի որոշումներ եւ հրահանգներ կը խմբադրէ, եւ պաշտօնական թղթակցութիւններ կը կատարէ: Գանձապահը որ Մասնաժողովի հասույթները եւ կեդրոնին յղուելիք %-ին 15-ի բաժինը կը գանձէ եւ ծախսեր կը կատարէ ժողովի որոշման համեմատ: Մթերապահ որ Մասնաժողովի գոյքերի պահպանման հոգ կը տանի: Ընդհ. քննիչ որ խմբերի գոյքերի եւ տոմարի վիճակագրական ցուցակներ կը բռնէ եւ պէտք տեսած տեսն, անձամբ կամ կողմնակի դանոնք նոյնիսկ խմբերի մէջ կը ստուգէ: Յարաբերութեան տեսուչ որ խմբերի մէջ նստակների եւ յեղ. հրատարակութիւնների եւ այլն յանձնարարութիւնների բաշխման եւ կատարման գործերին կը հսկէ: Գանձապահ եւ Մթերապահ ինչպէս նաեւ միւս պաշտօնեաներ իրենց հաշիւներ եւ գործառնութիւնք վեց ամիսն անգամ պարտաւոր են ներկայացնել Մասնաժողովին:

Մասնաժողովը գոնէ երեք չարաթ մի անգամ նիստ կ'ունենայ, բացի արտակարգ նիստերէ: Եթէ մի անգամ վեց յորդական նիստերի մէջէ երեք նիստի բացակայ գտնուի առանց բանաւոր պատճառի, հրաժարուած կը նկատուի, եւ նոր ընտրութիւն կատարելու է:

* Առնուած՝ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւէն: Ասոր բաղդատուրիւնը Եկաբեանին «Յուշեր»ուն մէջ լոյս տեսածին հետ՝ ի յայտ կը բերէ տարբերութիւններ:

7) Մասնաժողովը իր անդամներէն որն որ վնասակար գիւրքի մէջ տեսնէ 3/4-ի ձայնով անդամակցութենէ կը հեռացնէ եւ նոր ընտրութեան կը հրաւիրէ խմբապետ, ժողովը:

8) Մասնաժողովի անդամներն առանց այդ ժողովի հրամանին, ժողովին վերաբերող ոչ մի տեղեկութիւն կարող չեն հաղորդել զիրենք ընտրողներին:

9) Մասնաժողովը իրը ընտրութեան տուրք՝ ստացած 1/5-ին 15-ի հասոյթէն զատ կ'աշխատի իրեն համար հասոյթի նոր աղբիւրներ գտնել, իսկ խմբերին ալ կ'ընթերցէ յաճախ եւ կամ անոնց կ'աջակցի հարկաւոր տեսնուած ծախսեր եւ գործեր անելու:

10) Քաղաքէս զուրս եթէ խմբեր կազմուին ինքնին կամ քաղաքիս խմբերի մէկի ձեռքով, այդ խմբեր ուղղակի Մասնաժողովի հետ կապ կ'ունենան. սա եթէ յարմար տեսնէ այն պարագային միայն դառառի խումբը առանձին կամ գիւղապետական ժողովով մը քաղաքիս տեւէ մէկ խմբի կամ խմբապետ, ժողովի հետ կը կապակցէ:

11) Մասնաժողովը երկտարեմըջին իրեն յաջորդող Մասնաժողովին կը սալ իր հաշիւներ:

12) Երբ մասնաժողովի անդամոց մեծամասնութիւնը ինքնին հրաժարի կամ պայմանաւոր լրացած լինելով զաղբիւր, ամբողջ ժողովը զաղարուած կը համարուի եւ նոր ընտրութիւն կը լինի:

13) Մասնաժողովը իրաւունք ունի 3/4-ի ձայնով խմբերէն կամ մինչեւ իսկ զուրսէն իրեն նոր անդամներ առնել, երբ վստահ է որ զոքա համակիր են «Արմէնիական» կազմակերպութեան եւ նորա ծրագրին ու պայմանաւ որ այսպէս ընտրուելիք անդամները Մասնաժողովի խմբերէն ընտրուած անդամոց թուին կէսէն աւելի չլինեն: Մասնաժողովի անդամոց թիւը երբ 8-էն աւելի լինի, եթէ Մասնաժողովը հարկ տեսնէ, կրնայ իր մէջէն 3-5 հոգիէ բաղկացեալ յանձնաժողով մը ընտրել. որին իրաւունք կու տայ ի հարկին (տաղնապալի օրերու եւ հաւաքմանց դժուարութեանց տեսնել) լիազօր իշխանութիւն վարել՝ բացի օրէնսդրական գործերէ:

15) Կեդրոնի ներկայացուցիչը կ'ընտրուի շրջանակի Մասնաժողովի 3/4-ի ձայնով*:

* Բնագրին մէջ 13-րդ կէտին կը յաջորդէ 15-րդը, կա՛մ բուակարգումի սխալ եւ կա՛մ ալ արտագրումի ատեն՝ բացթողում:

**«ԱՐՄԵՆԻԱԿԱՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ Շ. ՀՐԶԱՆԱԿ
ԽՈՒՄԲԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ (1895 ՆՈՑԵՄԲԵՐ 1)***

Յօդուած 1) Խմբերը կը կազմուին այն անհատներէ որոնք «Արմէնիական» կազմակերպութեան ծրագիրը ընդունած են:

2) Նոր անդամները խմբի մէջ կ'առնուին արդէն եղած անդամների մեծամասնի ձայնով, տարիք եւ զարգացում նկատողութեան առնելով:

3) Խմբերէ կը մերժուին այն անդամները, որոնք ո՛րեւէ կերպով վնասակար կը համարուին, ինչպէս եւ անոնք որք Յեղափոխական դրամ կամ գոյք իրենց անձնական շահուն կը ծառայեցնեն, փառասիրական զխումներ ունին, մտքերի մէջ երկպառակութիւն կը սերմանեն եւն. առժամանակեայ արտաքսում ալ տեղի կ'ունենայ: Այդ պատիժներ կրնան որոշել ոչ թէ խմբերը, այլ խմբապետական ժողովները եւ Մասնաժողովը մեծամասնի ձայնով: Մասնութեան եւ դաւաճանութեան պատիժներ Մասնաժողովը կ'որոշէ 2/3-ի մեծամասնութեան քուէովը. սակայն մահուան պատժի համար 3/4-ի քուէն անհրաժեշտ է:

4) Խմբերէ ամէն մին իր անդամների վիճակի եւ զարգացման աստիճանի համեմատ ամսական մի հուսասար տուրք կը ստանան անդամների վրայ [...] զըշտաստիճաններով, այդ տուրքը կրնայ տարւէ տարի փոփոխութիւն կրել: Վեցամսի տուրքը ասանց բանաւոր պատճառի (հիւանդութիւն, յայտնի անկարողութիւն) անվճար թողնող անդամները ինքնին հրաժարուած կը լինին խմբէն, եւ իրանոնք չունին իրենց տուածներէ մի բան

եւս պահանջելու: Դրամ տալու անկարող, բայց ուրիշ ծառայութիւններով օգտակար տեսնուած անդամների համար, խումբը յարմար տեսածին չափ ժամանակամիջոց կու տայ եւ երբ այն ատեն ալ չվճարեն, եթէ ինք, խումբը, հարկ տեսնէ մեծամասնութեան ձայնով կը հրաժարցունէ: Նխթապէս տկար ընկերների համար, խումբը կէս տուրքի գրութիւն ալ կրնայ գործադրել:

5) Ինչպէս հրաժարողները նոյնպէս եւ հրաժարուողները եւ արտաքսուածները, նաեւ անոնք որք կ'ուզեն խումբը մի ուրիշ կուսակցութեան մէջ ձուլել (թէ եւ մեծամասնութիւն իսկ կազմեն), իրանոնք չեն ունենար խմբի գոյքերէն մի ո՛րեւէ մասին տէր կանգնիլ: Գոյքը կամ զրամը միշտ կը մնան խումբի մնացեալ անդամների տրամադրութեան տակ. իսկ խումբը եթէ կազմալուծուի (մնացող անդամները չուզեն շարունակել ըստ ծրագրի եւ կանոնադրի) իր գոյք ու զրամ կը մնան Մասնաժողովին:

6) Խմբերը իրենց հաւաքած տուրքի եւ ուրիշ վայել միջոցներով ձեռք բերած հասոյթի %-ին 15-ը վեց ամիս մի անգամ պարբերապէս կը զրկեն Կեդրոնին՝ Մասնաժողովի միջոցով: %-ին 15 եւս իրը բնորակաւ իրաւունքի տուրք չըջանակի Մասնաժողովին կու տան:

7) Մնացած %-ին 70-ը կը գործածեն «Կազմակերպութեան» ծրագրի համեմատ՝ յարաբերութիւնների, նոր խմբեր կազմելուն, գաղափարի տարածման համար թերթին նպաստելու, ճանապարհորդութեան, գործիչների օգնութեան, ինքնապաշտպանութեան միջոցների, զինուորման, ինքնակրթութեան նպաստող ևն գրողարարներին եւն:

* Առնուած՝ Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւն: Այս եւս ունի տարբերութիւններ Եկարեանին «Յուրիշ»-ուն տպագիր օրինակին:

8) Խմբերը վերոյիշեալ գործերը կը կատարեն յաճախ Մասնաժողովի հրահանգներին համեմատ, որպէսզի սխալներէ որչափ կարելի է դերժ մնան եւ իրենց արածը աւելի օգտաւէտ լինի: Ընդհանուրի շահուն վերաբերող ուէէ մի խնդրի մէջ խմբական գոյքի կամ դրամի կորուստը յեղափոխական զոհողութիւն մը լինելով՝ ետ չի կրնար պահանջուիլ երբ «կազմակերպութեան» Մասնաժողովէն հրահանգուած մի գործի մէջ եղած է նոյն ատեն:

9) Խմբերը գէթ տասնեւհինգ օր մի անգամ ժողով կ'ունենան, օրուան խնդիրների մասին խորհրդակցելու, Մասնաժողովի հրահանգներ, եթէ կան, լսելու, խնդիրներին յեղափոխական բնթերցումով դարգացնելու եւայլն, եւայլն: Պէտք եղած ատեն արտակարգ նիստեր ալ կ'ունենան:

10) Խմբերը երկու տարուան տեւողութեամբ եւ գաղտնի քուէի մեծամասնութեամբ կ'ընտրեն մի խմբապետ, մի գանձապահ, մի մթերապահ. երկու տարին լրանալէ ետք նոր ընտրութիւն կը լինի. նախորդներն ալ կրնան վերընարժիլ: Եթէ այդ պաշտօնեաներ ղեկծում գործեն, պայմանաժամէն առաջ ալ կրնան հրաժարեցուիլ գաղտնի քուէի մեծամասնութեամբ եւ նոր ընտրութիւն կատարել:

11) Գանձապահն ու մթերապահն իրենց յանձնուած գրամին ու գոյքերին ճիշդ հաշիւը կը բռնեն, անոնց գործածումը թույլ կու տան միայն խմբի օրոշման համեմատ եւ իրենք պատասխանատու են գրամի կորստեան եւ գոյքի ոչընչացման մասին: Վէջ ամիս մի անգամ իրենց հաշիւ կը ցուցնեն խմբի ժողովին: Խմբերի գրամը չի տրուիր տոկոսի. եթէ խումբը [ինք] յարմար տեսնէ շատ ապահով կարծած մի տեղ պահելու կը գնէ գրամը, պայմանաւ որ պէտք եղած ատենը գրամը միշտ պատրաստ լինի Յեղ. միջոցների գործածելու համար:

13) Խմբերը Մասնաժողովի միջոցով միանալով մի մարմին կը կազմեն, ուստի եւ իրենց բոլոր անդամներն աշխատելու են իրենց խմբի կամ թաղի շահերը ստորագրասել ընդհանուր խմբական եւ յեղափոխական շահերին*:

14) Խմբերը եւ խմբապետական ժողովները Մասնաժողովի իշխանութեան ենթարկուած լինելով՝ պարտաւոր են լսել եւ գործադրել անկէ բղխած այն ամէն որոշումներ եւ հրահանգներ, որոնք կազմակերպութեան ծրագրի ոգւոյն եւ ներքին կանոնադրի տրամադրած սահմանին մէջն են:

15) Խմբերը իրենց ուէէ մի գոյք ծախելու համար խմբապետական ժողովի կամ Մասնաժողովի թույլտուութեանը զխելու են, անոնց հաղորդելով վաճառման պարագաները:

16) Առանց Մասնաժողովի թույլտուութեանը խմբերի կողմից մահու պատի գործադրել յանցանք կը համարուի. յեղափոխութեան անունով խմբերի եւ անդամների կողմից անհատների վրայ [...ութեան] եւ բռնութեան գործեր անելն [ծանր] յանցանք կը նկատուի եւ բոտ աշնմ [...] գէժ պատիժներ կը տնօրինուին:

17) Խմբերի մէջ պատահած տարաձայնութիւնները եւ գատերը քննելու եւ վճռելու իրաւունք սնին խմբապ. ժողովներն. եթէ սոցա տուած վճիռը մէկ կամ միւս կողմէն չընդունուին, խնդիրը Մասնաժողովը կը վճռէ, եւ այդ վճիռը վերջնական է: Այս վճռին չհնադանդելը, կամ առանց խմբապ. ժողովի եւ Մասնաժողովի վճռին սպասելու խնդիրը բորբոքել եւ խմբերէն դուրս յայտնելն յանցանք կը համարուի եւ պատժի ենթակայ կը լինի դանցառուն:

* Բնագրէն կը բացակայի 12-րդ կէտը. սխալ թուակարգում կամ բացթողում:

ՀԱՅ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ - ՌԱՄԿԱՎԱՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ**

סמך

המחבר - שמעון שמעון

הדפוס והנشر

Հ. Ս. Ռ. Կ. Ի ԾՐԱԳԻՐ *

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՑՔ

Օսմանեան բռնապետական ղեկավարին տապալումովը եւ Սահմանադրական օրէնքին հաստատութեամբը, թէ՛ ընդհանրապէս Պետութեան եւ թէ՛ մասնաւորապէս բաղկացուցիչ բոլոր ազգութիւններու համար՝ բարօրութեան եւ յառաջդիմութեան նոր թուական մը բացուեցաւ:

Յայտնի է թէ՛ ղեկավարի այս փոփոխութենէն առաջ, եւ նոյնիսկ այսպիսի յեղաշրջում մը առաջացնելու համար, երկրին մէջ գոյութեան իրաւունք ունէին - եւ գոյութիւն ունեցան իսկ - ամէն ազգէ յեղափոխական մարմիններ եւ գաղտնի կազմակերպութիւններ: Բայց հիմա, երբ արդէն որոշ չափով քաղաքացիական իրաւունքներ ձեռք բերուած են, եւ ամէն մարդ ազատ է իր կարծիքները յայտնելու. եւ վիճաբանելու Պետութեան եւ ժողովուրդին շահերը շօշափող բոլոր խրնդիրներու վրայ, բնական է որ բուն յեղափոխական կուսակցութիւններու գոյութեան եւ գործունէութեան պէտքը ինքնին դադրած է այլեւս:

Ասոր հակառակ, միշտ կարելի եւ օգտակար է՝ քաղաքական որոշ ծրագրով եւ գործելակերպով օրինական (legal) կուսակցութեանց կազմութիւնը, որոնց իւրաքանչիւրը՝ իր սկզբունքներուն համաձայն՝ ջանար կազմաւորել եւ յուսաւորել հանրային կարծիքի եւ ներգործել կառավարութեան վրայ, որուն վարչութիւնը եւ աշխարհավարութիւնը՝ արտայայտուած հանրային կարծիքի գանազան ուղղութիւններուն արդիւնաբարր (résultante)

պէտք է որ ըլլայ սահմանադրական-առկա վարական երկիրներու մէջ:

Հանրային կարծիքը - ընկերային յառաջդիմութեան այս կենսական գապանակը եւ կառավարութեանց իբր հակակշիռ ծառայող այս ամենակարեւոր ազդակը - չի կրնար կազմուիլ եւ գիտակցաբար ու հրամայողականօրէն արտայայտուիլ, առանց *կադմակերպելու քաղաքական կուսակցութիւններու* գոյութեան եւ յարաջան գործունէութեան:

Անկազմակերպ եւ անգիտակից ամբօխը, թէեւ ունենայ անարդար պահանջներ, յաճախ կը մատնուի յուսախաբութեան, շահագործումի ու պարտութեան, ենթարկուելով՝ շոգոքութեան եւ ազդեցիկ պաշտօնակալութեան (bureaucratie) կամ պռնոտախօս ամբոխավարներու խաբկանքին: Կազմակերպուած մարմիններն են Վիայն որ կը ներկայացնեն իրական ուժ եւ կրնան յոյս ունենալ յաջողցնելու իրենց պահանջներուն իրագործումը կամ ողջունելու իրենց գաղափարին յաղթանակը:

Այս տեսութեամբ, Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն ի վեր, Թուրքիոյ բաղկացուցիչ ամէն ազգերուն մէջ սկսան կազմուիլ օրինական *քաղաքական կուսակցութիւններ*, որ հետզհետէ հրապարակ կը հանեն իրենց ծրագիրները:

Հայերու համար ալ -այն օրէն երբ Օսմանեան Սահմանադրութեան վերահաստատութեամբը եւ Սահմանադրական ղեկավար անխախտ պահպանութեան եւ իրապէս գործադրութեան անկալութեամբ եւ հետապնդումով, նախկին հայ յեղափոխական կազմակերպութիւնները կը վերածուէին նոյնպէս օրինական քաղաքական կուսակցութիւններու, մասնաւորապէս գգալի եղած էր կազմութիւնը

* 1908-ին Պոլիս լոյս տեսած առանձին գրքիցէն:

այնպիսի ֆաղափական կուսակցութեան մը, որ հեռու մնալով ծայրայեղ աշխարհահայեացքներէ եւ վիճելի ընկերային վարդապետութիւններէ, հայ իրականութեան մէջ գործէր՝ ժողովուրդի գիտակից մասին հարազատ բաղձանքներուն համաձայն, եւ ժամանակի պահանջմանց համապատասխան՝ տարամերժօրէն օրինական միջոցներով: Այսպիսի կուսակցութիւն մը միայն պիտի կրնար համախըմբել իր շուրջ հայ ազգին գիտակից եւ կենսունակ տարրերը, առանց դաւանական կամ դոստակարգային խտրութեան:

Այս համոզումով եւ այս նպատակով, ստորեւ յիշատակուած հայ յեղափոխական նախկին կազմակերպութեանց նախաձեռնութեամբ, ամիսներէ ի վեր բանակցութիւններ եւ ընդարձակ խորհրդակցութիւններ կատարուեցան թէ՛ կուսակցական եւ թէ՛ ոչ-կուսակցական բազմաթիւ հայ անհատներու միջեւ, միանգամայն դիմուելով կարեւոր հայ մտաւորականներու եւ հեղինակաւոր անձնաւորութիւններու կարծիքներուն եւ խորհուրդին՝ թէ՛ հայրենիքին եւ թէ՛ արտասահմանի մէջ:

Այս բանակցութեանց եւ խորհրդակցութեանց իբր արդիւնք՝ կազմուեցան ներկայ Ծրագիրը, որուն շուրջ այսօրերնէ կը բոլորուի գաղափարակիցներու ընդարձակ շրջանակ մը «ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ, - ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ» անուն տակ:

Հայ Սահմանադրական - Ռամկավար կուսակցութեան կազմին մէջ վերջնականապէս ձուլուած միախառնուած են՝ արդէն նախապէս իրարու մէջ միութիւն կնիած հետեւեալ մարմինները - *Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւն* (իբր *Ազգ քերթով*) եւ *Գաղափարակցական Ռիւթիւն* (նախկին *Արմենական եւ Ռիւթիւնական* կազմակերպութիւններ):

Վստահ ենք որ մեր սկզբունքները եւ մեր որդեգրած ուղղութիւնը պիտի ար-

ժամանան բոլոր լրջախոհ, ձեռնհաս եւ պարտաւանաչ ազգայիններու հաւանութեան, եւ այսպիսիներու համակրութեամբ եւ գործակցութեամբ՝ կուսակցութեան ծրագիրը իրապէս պիտի կըրնայ նկատուիլ իբր *Ազգային Ծրագիր*:

Նոյնչափ վստահ ենք որ մեր պահանջներուն եւ հետապնդումներուն բանաւորութիւնը եւ երկրին ընդհանուր շահերուն տեսակէտէն օգտակարութիւնը՝ ստելի պիտի դիւրացնեն մեր եւ օտմանեան միւս ժողովուրդներու ֆաղափական կուսակցութեանց միջեւ համերաշխութիւն մը, որ ամէն կերպով բաղձալի է եւ որ կրնայ ուժգնապէս նպաստել Սահմանադրական Ռեժիմը ամրապնդելու, ինչպէս եւ երկրին տեւական անդորրութիւնը եւ բարօրութիւնը համեմատօրէն քիչ ժամանակի մէջ ապահովելու:

Ծրագրին մէջ արդէն պարզուած են կուսակցութեան հայեացքները եւ հիմնական սկզբունքները. բայց եւ այնպէս աւելորդ չենք համարիր այս տեղ քիչ մը աւելի ընդլայնել ու բացատրել անոնք:

Կուսակցութիւնս, ներշնչուած 20րդ դարու լուսաւոր գաղափարներէն, իր ֆաղափական դաւանանքին իբր հիմ եւ իր գործունէութեան իբր գլխաւոր նպատակակէտ կ'ընդունի *Ժողովուրդին Գերիշխանութիւնը*:

«Կառավարութիւնը ժողովուրդն է» - ահա՛ նշանաբանը ամէն ռամկավարական երկիրներու. նոյնը պարտի ըլլալ եւ Օսմանեան Պետութեանը:

Օսմանեան Պետութիւնը բաղկացած ըլլալով բազմազան տարրերէ, որ ծագմամբ, լեզուով, կրօնով, աւանդութիւններով եւ սովորութիւններով իրարմէ կը տարբերին, ասոնց մէջ *միաձուլում* առաջ բերելու ձգտող ֆաղափականութիւն մը ո'չ միայն անիրականալի պիտի ըլլար, այլ եւ մեծապէս վնասակար Օսմանեան Պետութեան շահերուն:

Այս գանազան ազգութիւնները՝ իբր

օսմանեան - ֆաղափացիներու որոշ համախոսութեան՝ ընդունելով երկրին ամբողջութիւնը եւ ֆաղափական անբաժանելիութիւնը - իբրեւ հասարակաց հայրենիք՝ որուն հանդէպ ունին նոյն հաւասար իրաւունքները եւ պարտականութիւնները, - միեւնոյն ժամանակ պէտք է որ պանծանան եւ երաշխաւորութեան տակ դնեն իրենց ազգային առանձնայատկութիւնները եւ իրաւունքները: Մեծամասնութիւն կազմող տարրը պէտք է որ յարգէ փոքրամասնութիւններու այս կարգի անվիճելի իրաւունքները՝ ազգութեանց հաւասարութեան սկզբունքով: Արդարեւ, Սահմանադրական - Ռամկավարական սկզբունքները չեն ժխտեր ազգերու ինքնորոշման իրաւունքը, անոնց ներքին կամ տեղական իրաւասութիւնները. ընդհակառակը՝ այս իրաւունքներուն ապահովումն է եղած միակ միջոցը՝ բազմազան ազգութիւններէ կազմուած Պետութիւններու անդորրութեան եւ յստաջգիւմութեան:

Այս տեսութեամբ, Օսմանցի հայութիւնը կը ներկայանայ՝ երկու որոշ հանգամանքով - իբրեւ *Օսմանեան Քաղաքացիութիւն* եւ իբրեւ *Հայ Ազգայնութիւն*: Այս երկու հանգամանքները պէտք է որ միմեկին գոյութիւն ունենան, առանց իրարու հետ շփոթելու, առանց իրար հակասելու:

Հարկ չի կայ ըսել թէ ազգային անհատականութեան պահպանման եւ զարգացման պահանջը երբեք ազգայնամոլ եւ աշխարհիկ ինքնասիրութիւն մը չէ եւ ո՛չ ալ իբր *անջատողական ձգտում* պէտք է որ մեկնուի. այլ նոյն ազգային ինքնագիտակցութեան եւ զարգացման իրաւունքները պէտք է որ վայելեն անխտիր եւ հաւասարապէս՝ օսմանեան հայրենիքին բաղկացուցիչ բոլոր մեծ եւ փոքր ազգութիւնները. եւ առանց բոլորին լայնախոհ համերաշխութեամբ եւ ազատամիտ եղբայրակցութեամբն է որ կտրելի պիտի

ըլլայ իւրաքանչիւրին առանձին. եւ ազատ զարգացումը, ինչ որ ամենէն ապահով միջոցն է ընդհանուրին զարգացմանը եւ երկրին ընդհանուր բարգաւաճմանը:

Այս սկզբունքով է որ *Կուսակցութիւն* կը կանգնի ջատագով՝ *ազգային իրաւունքներու պահպանման եւ զուտ վարչակին ապակեզրոնացման գրութեան*:

Հայ Սահմանադրական - Ռամկավար Կուսակցութիւնը, ձգտելով առնել ազգային կուսակցութեան մը նկարագիրը եւ հանդիսանալ հայ ժողովուրդի *ազգային խորհրդակցութեան* արտայայտիչը, իրեն մշտաջան գործ պիտի ընէ համերաշխութիւն գոյացնել հայ ազգին բոլոր դասակարգային յարաբերութիւններուն եւ բոլոր դասակարգներուն մէջ, եւ կարելիութեան սահմանին մէջ ներդաշնակել անոնց շահերը: Առանց այդպիսի ազգային համերաշխութեան մը՝ դժուար պիտի ըլլար ապահովել մեր ազգային շահերու պաշտպանութիւնը, եւ անպայմանօրէն պիտի տապալէր մեր բնատոհմիկ յառաջդիմութեան գործը: Կուսակցութեանն դրօշին տակ, պարտաւանաչ հայ հարուստը, ժրաջան հայ աշխատաւորը եւ գիտակից հայ մտաւորականը՝ ազգային ընդհանուր շահերու անձկնոտ կամաւորութեամբ մը՝ ձեռք ձեռքի տուած պիտի փակեն դէպի ընդհանուր նպատակը. - եւ մենք ո՛չ միայն կը հաւատանք այսպիսի երեւոյթի մը կարելիութեանը այս պատմական բնորոշիչ վայրկեանին մէջ, այլ եւ վստահ ենք որ ազգային այդ համերաշխ գործակցութիւնը կրնայ շարունակել դեռ ամբողջ սերունդներ, շնորհիւ մեր ժողովուրդի բնածին ռամկավարական խառնուածքին եւ մեր ազգային-կրօնական հաստատութեանց մէջ արդէն տիրող ռամկավարական ոգիին:

Տնտեսականի մէջ, Կուսակցութիւնը պիտի ջանայ աստիճանաբար ձեռք բերել այն ամէն բարեկարգութիւնները՝ որ կը նպաստեն աշխատաւոր դասակարգին եւ

գիւղացիութեան նիւթական վիճակին բարոյութեանը, առանց սակայն դժուարացնելու դրամագլուխի մուտքը եւ արդիւնագործութեան զարգացումը մեր երկրին մէջ, ինչ որ անհրաժեշտ է նոյնիսկ աշխատաւոր ժողովուրդին շահերուն տեսակէտով:

Արդարեւ, օսմանեան երկիրներու տնտեսական զարգացման արդի վիճակը հեռու է րեկերվարական սկզբունքներու կիրառութեան կռուան ընծայելէ: Այս հանգամանքներու մէջ, օսմանեան ժողովուրդին բարօրութեան ճգնաժամը բոլոր ձեռնարկները կրնան պարփակուիլ ռամկավարական ծրագրի պահանջներու սահմանին մէջ:

Գործելակերպի տեսակէտով, կուսակցութիւնն ազատ եւ անկաշկանդ բոքականոր միայն կ'ընդունի իբրեւ միջոց հանրային կարծիք պատրաստելու, եւ հանրային կարծիքին ուժովը եւ ծրագրին մէջ նախատեսուած, միջոցներով միայն կը հետապնդէ իր պահանջներուն իրականացմանը: Կր մերժէ՝ կարծիքի ու գաղափարի տարբեր հոսանքներու դէմ անհաշտ եւ աններող ոգին, մամուլի ու կարծիքի ազատութիւնը խափանելու միտող բոլորն եւ ապօրինի միջոցները: Կուսակցական դիկտատորութիւնը եւ ամբոյսավար բռնապետութիւնը (*despotisme démagogique*) կը նկատենք միապետական բրնակալութեան համահաւասար չարիք մը՝ Սահմանադրական հանրային կեանքին մէջ: Բնդհակառակը, կազմակերպութեան առաջնորդող սկզբունքներէն մին պիտի ըլլայ մնալ միշտ գաղափարական բարձրութեան վրայ եւ ետ կենալ կուսակցական անագնիւ պայքարէ, ինչպէս նաեւ ջանալ յանգիլ որոշ համեքաշխութեան եւ գործակցութեան երկրին մէջ գործող ուրիշ - նոյնիսկ րեկերվարական - կուսակցութեանց հետ, ամէն անգամ որ՝ ազգային եւ քաղաքական կռուանի վրայ կարելի ըլլայ հաշտեցնել րեկահանութիւն հայ-

եացիները եւ ժամանակաւոր գործելակերպը, եւ մանաւանդ երբ հարկը ներկայանայ համագործակցելու (*պլօք կազմելու*) յետադիմական տարրերուն եւ Օսմանեան Սահմանադրութեան քշմամբներուն դէմ:

Վերջապէս, կուսակցութիւնն հետամուտ պիտի ըլլայ՝ իր բերանացի բրօքականտով եւ իր հրատարակութիւններով՝ սահմանադրական-ռամկավարական սկզբունքները ժողովրդականացնել, քաղաքական իրաւունքներու եւ պարտականութիւններու գիտակցութիւնը զարգացնել հայ ժողովուրդին մէջ, եւ վարժեցնելով ան հանրային-քաղաքական կեանքի, պատրաստել օսմանեան երկրին օգտակար քաղաքացիներ եւ հայ ազգին պիտանի անհատներ:

Հայ Սահմանադրական-Ռամկավար
Կուսակցութեան

Հիմնադիրներ

Կ. Պօլիս, 18/31 Հոկտ. 1908

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

Հայ Սահմանադրական - Ռամկավար Կուսակցութիւնը, հաստատուած ռամկավարական յայտնի սկզբունքներու վրայ, ամէն կառավարութեան իբրեւ հիմ կը նկատէ *ժողովուրդի Գերիշխանութիւնը* (*Souveraineté du Peuple*):

Կրնդունի անհատներու ազատութեան եւ հաստատութեան յարակից՝ ազգութիւններու ինքնուրոյնութիւն եւ հաստատութիւն:

Կր դառնի թէ՝ Օսմանեան Պետութեան քաղաքացիք տարբեր ազգութիւնները - իբրեւ օսմանեան քաղաքացիներու որոշ համախմբումներ, իբրեւ առանձին միութիւններ կամ պատմական անհատականութիւններ - հաստատ պահելով հանդերձ Օսմանեան Հայրենիքին միութիւնը եւ ամբողջութիւնը, պարտին ո'չ միայն

պահպանել, այլ եւ երաշխաւորուած տեսնել իրենց ազգային գոյութիւնը՝ համահաւասար իրաւունքներու վրայ կրթնած:

Կը մերժէ, հետեւաբար, օսմանեան ազգութիւններուն քէ՝ միաձուլումի եւ քէ՝ անջատողութեան ոգին, ինչպէս նաեւ ազգայնամոլ եւ այլաւերժ ո՛րեւէ ձգտում:

Իր ազգային բնաբանն է - *Հայու-թիւնը* Օսմանցիութեան հետ*:

Կը ներկայանայ, մասնաւորապէս Հայկական ներքին կեանքին մէջ, իբրեւ *ազգային կոստակցութիւն*, համախմբելով իր շուրջ Հայութեան բոլոր գիտակից եւ կենսունակ տարրերը՝ առանց դաւանական եւ դասակարգային խտրութեան, եւ ընդգրկելով Հայ ազգային, քաղաքական, ընկերային, մտաւորական եւ տնտեսական զարգացման վերաբերեալ բոլոր երեւոյթները:

Կը կանգնի կեանքի իրականութեան պահանջներու վրայ, մնալով հեռու եւ անկախ՝ ընկերային վիճելի վարդապետութիւններէ:

Կ'որդեգրէ, գործնականին մէջ, *«Դրամազլուիլ, Աշխատութեան եւ Տաղանդի կամաւոր ընկերակցութեան»* (Association volontaire du capital, du travail et du talent) սկզբունքը:

Կը հանդիսանայ պաշտպան՝ տնտեսական բարեմոռոգումներու հետամտութեամբ՝ առհասարակ աշխատաւորներու շահերուն, ինչպէս քաջալերող՝ դրամագլուխի արդիւնաբերութեան, գոհացնելու համար երկրին արդի անմիջական պէտքերը՝ առանց շեղելու ռաւակալարական հիմնական սկզբունքներէն:

Ն Պ Ա Տ Ա Կ

Հ.Ս.Ռ. Կուսակցութիւնը, հաւատարիմ վերոյիշեալ սկզբունքներուն եւ հե-

տամուտ անոնց յաղթանակին, հետեւեալ կերպով կ'ամփոփէ իր նպատակը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

Ա.- Ձեռք բերել Օսմանեան Սահմանադրութեան լայն իմաստով վերաբնութիւնը. եւ վերածել ան Ռամկավարական Սահմանադրութեան մը:

Բ.- Ապահովել - իբրեւ երաշխաւորութիւն Օսմանեան Պետութեան քաղաքական անկախութեան եւ հողային ամբողջութեանը - գուտ վարչային ապակեդրոնացումի (Décentralisation) դրութիւնը, աստիճանաբար ընդարձակելով բոլոր համայնքներու եւ նահանգներու (հետեւաբար նաեւ հայաբնակ նահանգներու) տեղական իրաւասութիւնները:

ԱԶԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿ

Ա.- Հսկել Հայոց օրինապէս հաստատուած ազգային իրաւունքներուն անվթար պահպանումին, իբրեւ երաշխիք՝ կրօնական ազատութեան եւ կրթական զարգացման:

Բ.- Համաձայնեցնել Ազգային Սահմանադրութիւնը վերաբնութեամբ՝ ժամանակակից պահանջներու:

Գ.- Աշխատիլ Հայ Դաւանական Հասարակութեանց գուտ եկեղեցական գործերը անջատելու՝ անոնց ազգային վարչական կազմէն, եւ առաջ բերելու ազգային եւ կրթական միացեալ վարչութիւն:

Դ.- Պահպանել եւ ժողովրդականացնել Հայ լեզուն, պատմութիւնը եւ գրականութիւնը, եւ ապահովել ազգային յիշատակարաններու անկեղծ պահպանումը:

Գ Ո Ր Ծ Ե Լ Ա Կ Ե Ր Պ

Ա.- Հ.Ս.Ռ. Կուսակցութիւնը կը գործէ, սահմանադրական ըէժիմի տակ, իբրեւ քաղաքական օրինական կազմա-

* Հայ կամ Հայութիւն, բառերը գործածուած են ներկայ ծրագրին մէջ միայն Օսմանցի Հայերու վերաբերմամբ:

կերպութիւն, եւ ո՛չ իբրեւ յեղափոխական-ապստամբական գաղտնի մարմին:

Բ.- Իր գործունէութեան եւ բրոքականտի միջոցներն են - Մամուլ (լրագիր եւ ուրիշ հրատարակութիւններ), ազգային եւ ընդհանուր հրապարակային գումարամներ եւ հրապարակասօսութիւններ, ընտրական եւ խորհրդարանական պայքար, ժողովրդային զգացման խաղաղ արտայայտումներ. եւլն.:

Գ.- Հին բռնապետական քէժիմը վերահաստատելու եւ ընդհանրապէս անգամ մը ձեռք բերուած սահմանադրական իրաւունքները հոտ խլելու կամ վտանգելու ո՛րեւէ փորձի դէմ, կուսակցութիւնը պիտի կռուի իր բոլոր ուժով եւ գործելակերպով, ինչպէս նաեւ, ի հարկին, բացառիկ միջոցներու կիրառութեամբ:

Դ.- Կուսակցութիւնը պիտի ուսումնասիրէ եւ հետազօտէ ընդհանրապէս Օսմանեան Հայրենիքի եւ մասնաւորապէս Հայ ժողովուրդի կեանքի պայմանները եւ անմիջական պահանջները, որոնց պիտի համաձայնեցնէ իր գործունէութիւնը՝ ստորինհանական յառաջխաղացութեամբ:

Ե.- Պիտի ջանայ Օսմանեան բաղկացուցիչ ազգութիւններու հետ մշակել եղբայրակցութեան ոգին, եւ՝ իր ծրագրին սահմանին մէջ՝ համերաշխաբար գործակցիլ անոնց քաղաքական կուսակցութեանց հետ:

Յ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Ս.Ռ. Կուսակցութիւնը կ'ընդունի, իբրեւ Օսմանեան Սահմանադրութեան երաշխաւորութիւն, հետեւեալ անվերափոխելի եւ անբռնաբարելի սկզբունքները:

Ա.- Քաղաքային Իրաւունքներ (Droits Civils).- Հաւասարութիւն եւ Ազատութիւն:

Բ.- Քաղաքական Իրաւունքներ (Droits

Politiques).- Ժողովուրդի գերիշխանութիւն եւ ձայնին գերակշռութիւն:

Գ.- Պետական Կազմ.- Խորհրդարանի օրէնսդիր իշխանութիւն եւ նախարարութեան պատասխանատուութիւն:

Դ.- Սահմանադրական Բէժիմ.- Սահմանադրութեան մասնակի կամ ամբողջովին դադարումը, ինչպէս նաեւ Սահմանադրական Օրէնքին ամբողջական վերափոխութիւնը, բացարձակապէս անկարելի է:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ

Ա. ՀԱՆՍԱՐՈՒԹԻՒՆ

1) Հաւասարութիւն ամէն անհատի՝ Պետութեան եւ Օրէնքի առջեւ:

2) Հաւասարութիւն ամէն ազգութեան: Ոչ մէկ ցեղ ո՛րեւէ գերիշխանութիւն կամ առաւելութիւն չունի:

3) Քաղաքական իրաւունքները իրենց հակակշիռ ունին քաղաքացիական պարտականութեանց կատարումը (տուրք, զինուորութիւն, օրէնքի հնազանդութիւն): Այդ պարտքերը չի կատարող համայնքները կը կառավարուին առժամեայ եւ բացառիկ օրէնքներով:

4) Բոլոր օսմանեան քաղաքացիները անխտիր, իրենց արժանիքին եւ ընդունակութեան համաձայն. պիտի կրնան պաշտօնի ընդունուիլ կառավարական բոլոր միւլդերուն մէջ: (Ստորագրաւ պաշտօններու բաշխում մըցումի դրութեամբ):

Բ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

1) Ազատութիւն ամէն անհատի՝ օրէնքի եւ հաւասարութեան սահմանին մէջ:

2) Անձեռնմխելիութիւն անձի, եւ անբռնաբարելիութիւն՝ բնակարանի, մամակագրութեան եւ սեփականութեան: Բացառութիւն՝ հանրօգուտ շինութեանց

համար արդար հատուցումի փոխարեն սեփականագրկումը (**Expropriation**):

3) Ազատութիւն խիղճի, պաշտամունքի եւ ուսուցումի:

4) Ազատութիւն խօսքի, մամուլի, հաւաքումի եւ ընկերակցութեան: (Անդամալի ջնջում գրաքննութեան: Հաւաքումները՝ առանց զենքի):

5) Ազատութիւն աշխատութեան, առեւտուրի եւ տեղափոխութեան: (Ջնջումներին անցագրի):

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

1) Օսմանեան Պետութեան վեհապետը կը կոչուի «Կայսր Օսմանցիներու»:

2) Վեհապետին անձին անձեռնմխելիութիւնը եւ անպատասխանատուութիւնը երաշխաւորուած են Սահմանադրութեամբ:

3) Կայսրը կ'երգնու յարգել Սահմանադրութիւնը եւ Օսմանեան ժողովուրդին օրէնքները, պահպանել օսմանեան անկախութիւնը եւ հողային ամբողջութիւնը:

4) Կայսերական հրովարտակը, որ ժողովուրդին որոշման վաւերագիրն է, պարտի յետադրագրուիլ ձեռնհաս նախարարին կողմէ՝ որ ատով պատասխանատու կը կանգնի:

5) Օրէնդարական իշխանութիւնը կը պատկանի հաւաքաբար Կայսեր եւ հորհրդարանին (Երեսփոխանական ժողով եւ Ծերակոյտ), իսկ նախաձեռնութիւնը՝ անշտաբար՝ իւրաքանչիւրին, ինչպէս նաեւ Նախարարական Դահլիճին:

6) Կայսրը եւ Նախարարութիւնը կը ներկայացնեն Գործադիր իշխանութիւնը:

7) Նախարարական առանձին եւ հաւաքական համերաշխ պատասխանատուութիւն՝ հորհրդարանին առջեւ:

(Դահլիճը պարտի Երեսփոխանական ժողովին մեծամասնութիւնը վայելել):

8) Նախարարական Դահլիճը իւրաքանչիւր տարուան եւմտացոյցը (**Budget**) կը հրատարակէ՝ հորհրդարանին վաւերացումը ստանալէ վերջ:

9) հորհրդարանի անբռնաբարելիութիւնը (**Inviolabilité Parlementaire**) հաստատուած է՝ անդամներուն իրենց պաշտօնին բերմունքով վայելած անպատասխանատուութեան սկզբունքին վրայ:

10) Երեսփոխանական ժողովին անդամներու թիւը կ'որոշուի 25,000 օսմանեան արու քաղաքացիի փոխարէն մէկ անդամի համեմատութեամբ: Անդամները կ'ընտրուին ընդհանուր, հաւասար, գաղտնի եւ ուղղակի խօսքովութեամբ (**Suffrage Universel**): Միեւնոյն նահանգին բոլոր լեւորդական Շրջանակները՝ նահանգին ամբողջ երեսփոխանները միանգամայն կ'ընտրեն: 21 տարին լրացուցած եւ քաղաքական իրաւունքներէ չի զրկուած ամէն օսմանցի այդ ընտրող է իր բնակավայրին մէջ. իսկ 30 տարին լրացուցած՝ ընտրելի է իր բնակավայրէն ինչպէս նաեւ տարբեր շրջանակներէ:

11) Նախարարութեան գլխումին վերայ՝ Վեհապետը կրնայ լուծել Երեսփոխանական ժողովը, պայմանով որ՝ մինչեւ երեք ամիս նոր ընտրութեանց կատարումը հրամայող հրովարտակը միանգամայն հրատարակուի: Միեւնոյն պատճառին համար՝ Երեսփոխանական ժողովը մէկ անգամ միայն կրնայ լուծուիլ:

12) Ծերակոյտի անդամներուն թիւը Երեսփոխանական ժողովին անդամներուն թիւին մէկ երրորդին հաւասար է: Ծերակուտականները (40 տարին լրացուցած բոլոր պայմանաւ)՝ բ. կարգի խօսքովութեամբ՝ Նահանգային Ընդհ. ժողովներու կողմէ կ'ընտրուին, ինչ տարուան ժամանակամիջոցի համար:

Ծերակոյտի անդամներուն մէկ երրորդը երեք տարին անգամ մը կը վերանորոգուի. առաջին երկու անգամին համար՝ դադարեալները կ'որոշուին վիճակով:

13) Իւրաքանչիւր նահանգ կանխաւ կ'որոշէ տեղական զանազան ազգութեանց պատկանող հորինդարական անդամներու թիւը, հիմ բռնելով անոնց իւրաքանչիւրն բնակչական համեմատութիւնը:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

1) Դատաստանական իշխանութիւնը անկախ է վարչական իշխանութենէն:

2) Դատաստանական դուրսեան հիմնական բարեկարգում, մասնաւորապէս՝

Ա) Նոր դատաւորները կ'ընտրուին վկայեալ իրաւագէտներէ:

Բ) Իրաւագիտութեան վկայական ունեցող դատաւորներու պաշտօնը մշտնջենաւոր է (օրէնքի սահմանին մէջ):

Գ) Հաստատում հաշտարար, մանդատ (Sommaire), քեֆերէ եւ ժիւրիի դատարաններու: Վերջինը՝ հասարակ ռիւրներու, քաղաքական ու մամուլի դատերու յատուկ:

Դ) Կարօտ դատարարներու (Justices)՝ դատաստանական օգնութիւն (Assistance Judiciaire):

Ե) Անուանում տեղական լեզուներու ծանօտ, կառավարական քարգմաններու՝ դատարաններու մօտ:

Չ) Դատական յայտարարութիւնները տեղական գլխաւոր լեզուներով եւս:

3) Օրէնքներու կատարեալագործում, մասնաւորապէս՝

Ա) Ջնջում քաղաքացիին իրաւունքներէ զրկումի, տանջանքի, ինչքերու գրաւումի, եւ օտար երկիր արտաքսումի (օսմանեան քաղաքացիներու):

Բ) Արգիլում մուրագկանութեան եւ

Գ) Օրինագրում՝ կտակի, ժառանգութեան եւ վագֆի:

Դ) Ձերբակալութիւն՝ օրինական պատճառի համար միայն, առանց ընդհանուր դատախազի հրամանագրի՝ 24 ժամէն աւելի չի տեւելու պայմանով:

Ե) Բանտային բարեկարգում՝ խցկային (cellulaire) դրութեան եւ բանտարկեալներու աշխատութեան կազմաւորումով:

Չ) Հատուցում վնասներու (Domages-intérêts)՝ անխոհեմաբար կամ գիտակցօրէն եւ ուղղակի կամ անուղղակի տեղի ունեցած, ըլլա՛յ անհատին կամ անհատականութեան, ըլլա՛յ կառավարութեան կողմէ:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1) Ուսուցումը ազատ է, սակայն Օսմանցի իր ծախքով կրնայ վարժարաններ բանալ:

2) Նախնական կրթութիւնը ձրի եւ պարտաւորիչ:

3) Իւրաքանչիւր ազգութիւն իրաւունք ունի վարելու իր նախնական վարժարանները՝ Պետութեան կրթական ախտնէն ստանալով իր համեմատական ծախսաբաժինը:

4) Պետութեան լեզուն (քուրքերէն) պարտաւորիչ է ծխական նախակրթարաններու մէջ՝ տարրական դասընթացէն վերջ:

5) Ծխական վարժարան չի գտնուած տեղեր՝ պետական նախակրթարաններու մէջ, քուրքերէնէն գաւտ, տեղական գրիխաւորագոյն լեզուներու եւս աւանդում:

6) Կրթական բոլորամի միաձեւութիւն եւ կառավարական վերին հսկողութիւն՝ պետական եւ ծխական նախակրթարաններու եւ երկրորդական վարժարաններուն մէջ:

կը մնայ իւրաքանչիւր ազգութեան յատուկ մայրենի լեզուի, կրօնագիտութեան, ազգային պատմութեան եւ գրականութեան ազատ ուսումը եւ ծաղկումը:

8) Պետութիւնը կը ստանձնէ բարձրագոյն եւ մասնագիտական կրթութիւնը: Պետական այդ կարգի հաստատութիւնները բաց են անխօսիք ամէն անհատի համար:

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1) Ամէն օսմանեան քաղաքացի ենթակայ է զինուորագրութեան:

2) Զինուորական ծառայութիւնը երկու տարի:

3) հաղադրութեան ժամանակ զօրքերը նախընտրապէս իրենց բնակավայրին մօտ ծառայեցնել:

4) Բարութում զօրքերու կենցաղի պայմաններուն:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԱԶՄ

1) Վարչային, ընտրական, կրթական եւ տնտեսական պահանջներու համաձայն՝ նահանգային նորագոյն բաժանում եւ սահմանազծում, համայնքներու մէջ համացեղ տարբերու միաձայլ խրմբակցութիւնը հիմ բռնելով:

2) Վարչային ապակեդրոնացումի հիման վրայ՝ նահանգային իրաւասութեանց ընդարձակում: Իւրաքանչիւր նահանգ, ինչպէս եւ համայնք, ինք կը վարէ տեղական գործերը:

3) Նահանգներու ընդհանուր ժողովները, ինչպէս նաեւ տեղային միւս ժողովները, կ'ընտրուին ժողովուրդին կողմէ. իրենց նիստերը հրապարակային են եւ անդամները կը ստանան չափաւոր վարձ:

4) Նահանգներու հասոյթներու կանխորոշ մէկ մասը՝ նահանգային ընդհա-

նուր ժողովներէն հաստատուած եւ հրապարակուած պիտենէին համաձայն՝ պիտի յատկացուի զուտ տեղական պէտքերու:

5) Պաշտօնական յայտարարութիւնները՝ պետական լեզուին հետ միանգամայն՝ տեղական գլխաւոր լեզուներով եւս:

6) Ոստիկաններու եւ հարկահաւաքներու ընտրութիւնը կը կատարուի տեղական զանազան ազգութիւններու ծոցէն՝ ասոնց իւրաքանչիւրին քիւին համեմատութեամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐ

1) Խորհրդարանը միայն կրնայ հաստատել կամ բարեփոխել պետական տուրքերը:

2) Հարկային դրութեան հիմնական բարեփոխում: Աստիճանաբար հաստատում յառաջատուական (Progressif) սխաղէմի, նպաստաւորելու համար քիչ շահ կամ քիչ եկամուտ ունեցող հարկատուները:

3) Տասանորդը մինչեւ տասը տարի *թախտիսի* դրութեամբ գանձելի, եւ յետոյ հաստատում *պատասթրօյի*:

4) Հարկավարձներու (միւլթէգիմ) դրութեան բացարձակ ջնջում:

5) Շնորհում յետամնաց թուրքերու՝ նախկին քէթիմի օրով հարստահարուած եւ կարօտութեան մատնուած վայրերու մասնաշատուկ:

6) Գիւղացիներու եւ առհասարակ աշխատաւորներու վիճակին բարութում, եւ անոնք նպաստաւորող աշխատութեան օրէնքի հաստատում:

7) Աժան եւ մատչելի վարկերու հաստատում:

8) Հողագործներու ապրուստի բա-

ւական հող մատակարարել դիրամատ-
չելի պայմաններով:

9) Պետական հողերու բաւարար
բաշխում՝ մասնաւորապէս վերջին բռնա-
պետութեան երեսէն փնացած գիւղացի-
ներուն:

10) Նախկին ըծիմին պատճառա-
գաղթած գիւղացիները եւ աշխատաւոր-
ները պետական ծախքով վերադարձնել
իրենց բնակավայրերը:

11) Նոր գաղթականութեանց տեղա-
ւորումը կ'ենթարկուի տեղական ժողով-
ներու որոշումին:

12) Յետադարձում իր նախատիրոջ՝
նախկին ըծիմին օրով ո'ւէ կերպով
գրաւուած եւ յափշտակուած անշարժ
կալուածներու, տեղական քննիչ յանձնա-
ժողովներու միջոցաւ:

13) Բացարձակ ջնջում պետական եւ
համայնական տարապարհակ աշխատանք-
ներու:

14) Տեղական Անանուն ընկերու-
թեանց եւ երկրագործական Դրամատուն-
ներու յատուկ օրէնքներու կազմութիւն՝
դիրացնելու համար այդպիսի հանրօ-
գուտ ձեռնարկները:

15) Ջնջում մենաշնորհի եւ աստիճա-
նական պետականացում հին մենաշնորհ-
ներու:

ՔԱՂԱՔԱԿՐԹԻՉ ԲԱՑԱՌԻԿ ՄԻՋՈՑՆԵՐ

Երկրին մշտական խաղաղութիւնը եւ
դրացի ժողովուրդներուն եղբայրակցու-
թիւնը ապահովելու համար, անհրաժեշտ
է հետեւեալ բացառիկ միջոցներու անմի-
ջական կիրառումը՝ ոյ կը լրացնէ քաղա-
քակրթութեան հրամայողական պահանջն
իսկ:

1) Ջնջել Աշիրէթի դրութիւնը, եւ
Պէյերը ու Աղաները օրէնքին հպատակեց-
նել:

2) Ջնջել քափառաշրջիկ եւ վաչկա-
տուն ցեղերու ապօրէն եւ վտանգաւոր
դրութիւնը, եւ վարժեցնել անոնք հաս-
տատուն բնակութեան եւ պարկեշտ աշ-
խատութեան:

3) Ջնջել Համիտիէ գորագունդերը:

4) Ջնջել Պէյերու եւ Աղաներու աւա-
տական իրաւունքները եւ կամայական
հարկահանութիւնները:

5) Զինաթափ ընել քափառաշրջիկ
եւ առհասարակ ասպատակող ցեղերը՝ եւ
մինչեւ կատարեալ զինաթափութիւն՝
ո'ւէ գինով պաշտպանել դրացի խաղաղ
ժողովուրդները եւ արտօնել ասոնք ինք-
նապաշտպանութեան համար գէնք գոր-
ծածելու:

6) Կառավարել այդպիսի ցեղերը բա-
ցառիկ օրէնքներով եւ միջոցներով, մին-
չեւ որ օրինապահութեան շաւիղին մէջ
մտնելով՝ կատարել իրենց քաղաքացիա-
կան պարտականութիւնները:

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1) Հ.Ս.Ռ. Կուսակցութեան կրնայ
անդամակցիլ ամէն հայ՝ առանց դաւա-
նանքի եւ դասակարգի խտրութեան:

2) Իւրաքանչիւր անդամ կը ստորա-
գրէ մասնաւոր տոմարի մը մէջ՝ խոստա-
նալով հաւատարիմ մնալ Կուսակցութեան
ծրագրին եւ օգտակար ըլլալ անոր նպա-
տակին՝ նիւթական եւ բարոյական աջակ-
ցութեամբ:

3) Հ.Ս.Ռ. Կուսակցութեան կեդրոնն
է Կ. Պոլիս:

4) Կուսակցութիւնը կ'ունենայ հայ-
րենիքի եւ արտասահմանի հայաբնակ
վայրերու մէջ Ակումբներ:

5) Կ. Պոլսի Կեդրոնական Ակումբը
կը զբաղի ընդհանուր բրօքականով, եւ

կը ներշնչէ իր խորհուրդներն ու թելադրութիւնները բոլոր տեղական Ակումբներուն: Տեղական Ակումբները պարտաւոր են իրենց գործառնութեանց եւ տեղական հանգամանքներու մասին պարբերաբար տեղեկութիւններ հաղորդել Կեդրոնական Ակումբին՝ իրենց դիւանին միջոցաւ:

6) Տեղական Ակումբները իրենց շրջանակին մէջ ինքնավար են եւ կը մատակարարուին տեղական միջոցներով:

7) Իւրաքանչիւր Ակումբ ինք կը պատրաստէ իր ներքին կազմական կանոնագիրը եւ կը հաղորդէ Կեդրոնական Ակումբին:

8) Ընդհանուր ժողովը կը բաղկանայ Ակումբներու պատգամաւորներէն եւ կը

գումարուի երկու տարին անգամ մը, իսկ արտասովոր կերպով՝ Կեդրոնական Ակումբին եւ կամ Տեղական վեց Ակումբներու պահանջին վրայ:

9) Ընդհանուր ժողովը Կուսակցութեան օրէնսդիր եւ համարառու մարմինն է: Կուսակցութեան գործելակերպին ընդհանուր գիծերը կը նախասահմանուին Ընդհանուր ժողովի կողմէ՝ իւրաքանչիւր ժամանակաշրջանի համար:

ՎԵՐԱՔՆՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ ԾՐԱԳՐԻ

Ներկայ Ծրագիրը՝ իր հիմնական սկզբունքները անփոփոխ մնալու պայմանով՝ վերաքննելի է Ընդհանուր ժողովին մէջ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ* Հ. Ա. Ռ. Կ. Ի

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.- Հայ Սահմ.-Ռամկավար Կուսակցութիւնը, որ ունի իր Ազգային և Բազմաբան Մրցիրը, կը բաղկանայ Կեդրոնական Ակումբէ մը, Տեղական Ակումբներէ և Օթեակներէ:

Յօդ. 2.- Հ.Ս.Ռ. Կուսակցութեան Կեդրոնն է Կ. Պօլիս՝ ուր կը գտնուի Կեդրոնական Ակումբը:

Յօդ. 3.- Տեղական Ակումբներ և Օթեակներ կը կազմուին Կեդրոնի, ինչպէս նաև Հայրենիքի և արտասահմանի Հայերնակ մայրերու մէջ:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 4.- Ամէն Հայ, առանց դատանքի և դատակարգի խորութեան, կրնայ անդամակցիլ Հ.Ս.Ռ. Կուսակցութեան:

Յօդ. 5.- Անդամակցիլ փափաքողը նախապէս կը ներկայացուի երկու անդամներու կողմէ, և Ակումբին Դիւանը՝ քննութենէ վերջ՝ կ'ընդունի խնդրարկուն իրրեւ անդամ, իսկ մերժումի պարագային՝ Ակումբին գնահատման կ'ենթարկէ իր որոշումը:

Յօդ. 6.- Ամէն անդամ պարտի ստորագրել մասնաւոր տոմարի մը մէջ՝ ընդունելով Կուսակցութեան Մրցիրը և ներկայ Կանոնադիրը, և խոստանալով օգտակար ըլլալ անոր նպատակին՝ նիւթական և բարոյական աջակցութեամբ:

Յօդ. 7.- Իւրաքանչիւր անդամ կը վճարէ առ նուազն մէկ ամսարածին, որուն քանակութիւնը կ'որոշուի Տեղական

Ակումբներու կողմէ՝ պայմանաւ որ տեղւոյն նիւթական հանգամանքները նկատողութեան առնուին և նուազագոյն ամսարածինը ղիւրամաշէլի ըլլայ ընդհանուրին համար:

Յօդ. 8.- Ամէն անդամ մէկ ձայն միայն ունի, ինչ որ ալ ըլլայ իր վճարած ամսարածինը:

Յօդ. 9.- Ամսամբարէ ղերծ են այն անդամները՝ որոնց կարեւորութիւնը ինչպէս նիւթական անձկութիւնը կը հաստատուին Տեղական Ակումբին կողմէ:

Յօդ. 10.- Պատիւը արատաւորող արարքի մէջ գտնուած և կամ Կուսակցութեան սկզբունքներուն դէմ գործող սեւէ անդամ կ'արտաքսուի յետ քննութեան՝ Ակումբին որոշումովը:

Օ Թ Ե Ա Կ Ն Ե Ր

Յօդ. 11.- Ուեւէ տեղ մը երբ Կուսակցութեան անդամակցողներու թիւը 15-է պակաս է, կը կազմուի Օթեակ մը, որ կը կապուի մօտակայ Ակումբի մը:

Օթեակին իր մէջ կ'ընտրէ Նախագահ մը՝ որ Օթեակին անունովը կը թղթակցի Ակումբին հետ:

Յօդ. 12. Տեղական Ակումբները եւս կրնան ունենալ իրենց Օթեակները՝ իւրաքանչիւրը առնուազն հինգ անդամէ բաղկացած:

Յօդ. 13.- Ամսարածին վճարող Հայահիները ևս կրնան կազմել առանձին Օթեակներ և յաճախել Տեղական Ակումբը՝ միայն խորհրդակցական իրաւունք ունենալով:

ՏԵՂԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Յօդ. 14.- Տեղական Ակումբը կը

* 1908ին Պոլիս լոյս տեսած առանձին գրքով կէն:

կազմուի տոնուազն 15 անդամներէ:

Յօդ. 15.- Տեղական Ակումբները իրենց շրջանակին մէջ ինքնավար են: Կը գործեն իրենց պատասխանատուութեան տակ Կուսակցութեան տնօրէնով, բայց կը ներկայացնեն միայն իրենց շրջանակի անդամներուն կարծիքը:

Յօդ. 16.- Տեղական Ակումբները իրենք կը պատրաստեն իրենց Ներքին Կանոնադիրը, զոր կը հաղորդեն Կեդրոնական Ակումբին՝ գիտութեան համար:

Յօդ. 17.- Տեղական Ակումբները կը հոգան իրենց տեղային ծախքերը, կը մասնակցին Կուսակցութեան բնօրինակ տի բնդհանուր ծախքերուն, ի հարկին տմաւճարներէ զատ, հասոյթի օրինաւոր ամէն միջոցներ ստեղծելով:

Հասոյթներուն հարիւրին սաար վար կը զնեն իրրեւ պահեստի գումար՝ բացառիկ պէտքերու համար:

Յօդ. 18.- Տեղական Ակումբները մէկ տարուան համար կ'ընտրեն Դիւան մը՝ որ կը վարէ Ակումբին գործերը և որուն համարատու է: Դիւանը վերընտրելի է:

Յօդ. 19.- Դիւանը կը բաղկանայ տոնուազն երեք անդամներէ, որ իրենց մէջէն կ'ընտրեն Նախագահ մը, Քարտուղար մը և Գանձապետ մը:

Յօդ. 20.- Դիւանը ամիսը գոնէ մէկ անգամ իր օրակարգը կ'ենթարկէ Ակումբին անդամներուն խորհրդակցութեան:

Յօդ. 21.- Դիւանը Կեդր. Ակումբին կը հաղորդէ պարբերաբար Ակումբին գործառնութեանց և տեղական հանգամանքներու մասին տեղեկութիւններ:

Յօդ. 22.- Տեղական Ակումբները կրնան իրենց Դիւանին միջոցաւ իրարու հետ յարաբերութեամբ Կուսակցութեան ներդաշնակութիւնը սպաւնոյթի:

Յօդ. 23.- Տեղական Ակումբները նկատի կ'առնեն Կեդր. Ակումբին խոր-

հուրդները և թելադրութիւնները, և պարտաւոր են զործադրել Կուսակցութեան Ընդհանուր Ժողովին որոշումները:

Յօդ. 24.- Տեղական Ակումբները համարատու են Կուսակցութեան Ընդհ. Ժողովին:

Յօդ. 25.- Տեղական Ակումբի մը լուծման պարագային, անոր գոյքերը կ'ըլլան Հ.Ս.Ռ. Կուսակցութեան սեփականութիւնը և կը մնան Կեդր. Ակումբի կամ մերձաւորագոյն Ակումբի մը արամադրութեան տակ:

ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Յօդ. 26.- Աշխարհագրական գիրքով իրարու մօտ գտնուող Ակումբները իրարու հետ միանալով կը կազմեն Շրջանակներ:

Յօդ. 27.- Հ.Ս.Ռ. Կուսակցութիւնը ներկայիս մէջ կը բաժնուի հետեւեւէ Շրջանակներու.

Կ. Պօլիս, Բուժէլիի, Միջազեաք (Պատրա, Պաղատա և Մուսուլ), Օսմանեան Պետութեան միւս ամէն մէկ վերայէթր, Եգիպտոս, Ամերիկա, Պուլկարիա (և Ռումանիա), Ռուսաստան (և Կովկաս), Պարսկաստան, Եւրոպա:

Յօդ. 28.- Նոյն Շրջանակին մէջ գտնուող Ակումբները պարտաւոր են իրարու հետ սերտ յարաբերութիւն մշակել, իրենց գործունէութեան մէջ միահերպուցիւն և ներդաշնակութիւն առաջ բերելու համար:

Յօդ. 29.- Շրջանակները, թէ որ պէտք տեսնեն, կրնան կազմել Շրջանակային Դիւաններ՝ 5 անձերէ բաղկացած՝ որ Շրջանակին կողմէ կը յարաբերին Կեդր. Ակումբին և ուրիշ Ակումբներու հետ:

Յօդ. 30.- Շրջանակային Դիւանը կ'ընտրուի երկու տարուան պաշտօնով և

անդամները վերընտրելի ըլլալու պայմանով՝ Շրջանակին բոլոր Ակումբներուն Դիւաններուն կողմէ՝ Համագումար կամ Պատգամաւորական Ժողովի մը մէջ:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Յօդ. 31.- Կուսակցութեան Կեդր. Ակումբը (խկապէս՝ Կեդրոնական Դիւանը) կը զբաղի ընդհանուր բարոյականտով եւ կը ներշնչէ իր խորհուրդները եւ թելադրութիւնները Տեղական Ակումբներուն:

Յօդ. 32.- Կեդր. Ակումբը կը հրատարակէ Ամսական Տեղեկագիր (bulletin mensuel) մը՝ հաղորդակից ընելու համար անդամները Կուսակցութեան գործունէութեան եւ յարակից կարեւոր անցուցարձներուն:

Յօդ. 33.- Կեդր. Ակումբը կը բաղկանայ 9 անդամներէ՝ որ կ'ընտրուին Կուսակցութեան Ընդհ. Ժողովին կողմէ երկու տարուան համար եւ վերընտրելի են:

Առաջին Կեդր. Ակումբը բացառաբար կ'ընտրուի հիմնադիր անդամներէն:

Յօդ. 34.- Կեդր. Ակումբը առնուադն չարաթիւ անդամ մը նիստ կը դուժարէ կանխորոշ վայր մը:

Յօդ. 35.- Կեդր. Ակումբը կ'ընտրէ իր մէջէն Նախագահ մը, Փոխ-Նախագահ մը, Ա. Քարտուղար մը, Բ. Քարտուղար մը, Գանձապետ մը, Համարակալ մը եւ երեք Խորհրդական:

Յօդ. 36.- Կեդր. Ակումբը կ'ունենայ ի հարկին թուականոր պաշտօնեաներ:

Յօդ. 37.- Կեդր. Ակումբը իր գործառնութեանց համար պատասխանատու է Կուսակցութեան Ընդհ. Ժողովին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 38.- Ընդհ. Ժողովը Կուսակ-

ցութեան օրէնսդիր եւ համարառու մարմինն է:

Կուսակցութեան գործելակերպի ընդհանուր դիժերը կը նախասահմանուին Ընդհ. Ժողովի կողմէ՝ իւրաքանչիւր Ժամանակաշրջանի համար:

Յօդ. 39.- Ընդհ. Ժողովը կ'որոշէ նոյնպէս Կուսակցութեան պիւտճէն եւ կը սահմանէ Շրջանակներու մասնակցութեան չափը՝ Կուսակցութեան ընդհանուր ծախքերուն:

Յօդ. 40.- Ընդհ. Ժողովը կը բաղկանայ Կուսակցութեան բոլոր Շրջանակներու պատգամաւորներէն:

Յօդ. 41.- Իւրաքանչիւր Շրջանակ իր մէկ կամ աւելի պատգամաւորը կուտայ հետեւեալ համեմատութեամբ.

50-էն 100 անդամ ունեցող Շրջանակները կուտան միայն 1 պատգամաւոր.

100-200 անդամ ունեցողները 2 պատգամաւոր.

200-400 անդամ ունեցողները 3 պատգամաւոր. եւ այսպէս շարունակաբար:

Ամէն մէկ պատգամաւոր երեք ձայնէ աւելի չի կրնար միացնել իր անձին մէջ*:

Յօդ. 42.- Ընդհ. Ժողովը կը գումարուի երկու տարին անգամ մը Կ. Պօլսի մէջ կամ Կեդր. Ակումբին յարմար դատած ուրիշ մէկ վայրը:

Յօդ. 43.- Ընդհ. Ժողովը արտասովոր նիստ կ'ընէ երբ Կեդր. Ակումբը, եւ կամ առնուադն վեց Ակումբ կամ երեք Շրջանակ պէտք տեսնեն:

Յօդ. 44.- Ընդհ. Ժողովը օրինաւոր է երբ Շրջանակներուն թիւին մեծամասնութիւնը ներկայացուած է. իր որոշումները կը տրուին մեծամասնութեամբ:

* Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւին մէջ պահ. պանուղ ձեռագիր օրինակէն կը բացակայի այս վերջին պարբերութիւնը:

ՀԱՍՈՑԹԻ ԱՂԲԻԻՐՆԵՐ

Յօդ. 45.- Հ.Ս.Ռ. Կուսակցության
հասցիների աղբյուրներն են՝ ամսաթիվ-
ներ, նույնատեսակիներ, հանգանա-
կություններ, հրատարակություններ, հան-
դեսներ, եւ այլ նպատակադրմար եւ օր-
նաւոր միջոցներ:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 46.- Ներկայ Հիմնական Կանո-
նադիրը վերաքննելի է Հ.Ս.Ռ. Կուսակ-
ցության Ընդհանուր Ժողովին մէջ:

ԾՐԱԳԻՐ ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ *

Կուսակցութեան անունն է՝

ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՆՊԱՏԱԿ

Կուսակցութեան նպատակն է՝

Ա.- Ապահովել եւ պահպանել Միաց-
եալ Հայաստանի անկախութիւնը:

Բ.- Աշխատիլ Հայաստանի քաղա-
փական, տնտեսական եւ բարոյական բար-
գաւանման:

Գ. Ծառայել ազգային լուսամիտ քա-
ղաքակրթութեան մը զարգացման:

Դ.- Ամրապնդել բարոյական կա-
պերը Հայաստանի եւ արտասահմանի հա-
յութեան միջեւ:

Ե.- Վաջալերել ներգաղթը դէպի
Հայաստան:

Զ.- Ռամկավարական սկզբունքները
իրբել հիմ ծառայեցնել Հայաստանի սահ-
մանադրական օրէնքներուն:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Կուսակցութիւնը հիմնուած ըլլալով
ժողովրդային վեհապետութեան եւ քա-
ղաքական կառավարչական իրաւունքներու
սկզբունքին վրայ. Հայաստանի կառավա-
րութեան ձեւ կ'ընդունի Ռամկավարական
Հանրապետութիւնը:

* Իրեն անանձին գրքոյկ լոյս տեսած է Պո-
լիս, 1921-ին:

Ռ Ա.Ն. Կեդրոնական Արխիւին մէջ պահպան-
ւող անոր ձեռագիր օրինակէն կը պարզուի թէ
տաւայ Մրադիրը մտերացուած է Հ.Ս.Ռ.Կ.ի Գ.
Բնոճ. Պտղոմ. Ժողովին (Պոլիս, 1920 Սեպտ.-
Դեկտ.) ԻԹ. Նիստին ընթացքին, իսկ ՄԱ. Նիստի
Ընթացքին որոշուած է նախապէս նկատի առ-
նուած Հայաստանի Ռամկավար Կուսակցութիւն
անունը վերածել Հայ Ռամկավար Կուսակցու-
թիւնի, Հայաստանի խորհրդայնացումին հետե-
ւանքով:

ԱՆՈՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 1.- Հայաստանի ամէն քա-
ղաքացի բացարձակապէս հաւասար է օ-
րէնքին առջեւ:

Յօդ. 2.- Հայաստանի ամէն քաղա-
քացի կը վայելէ քաղաքացիական հաւա-
սար իրաւունք, Սահմանադրութեամբ ո-
րոշուած տարիքէն սկսեալ, առանց սեռի
խտրութեան:

Յօդ. 3.- Ներկայացուցչական բոլոր
մարմիններու ընտրութիւնը կը կատարուի
ընդհանուր, հաւասար, ուղղակի ու
զաղանի քաղաքացիութեամբ եւ համեմա-
տական սկզբունքով:

Յօդ. 4.- Զինուորական պարտաւո-
րիչ կրթութիւն եւ ի հարկին՝ պարտադիր
հաւասար զինուորական ծառայութիւն:

Յօդ. 5.- Հայերէնը պետութեան
աւանդական լեզուն է, իսկ Հայաստանի
մէջ խօսուած տարբեր լեզուները կը վա-
յելեն ազատութիւն:

Յօդ. 6.- Ընդհանուր, ձրի եւ պար-
տաւոր՝ ճակատկրկութիւն: Զրի՝ բայց
կամաւոր, միջնակարգ, բարձրագոյն եւ
մասնագիտական կրթութիւն:

Յօդ. 7.- Ազատութիւն խօսքի, մա-
մուլի, հանրագրութեան, հաւաքումնե-
րու, ընկերակցութեան եւ փամբորդու-
թեան:

Յօդ. 8.- Ազատութիւն խղիճի, կրօնի
եւ պաշտամունքի:

Յօդ. 9.- Անձեռնմխելիութիւն անձի,
անբռնաբարելիութիւն բնակարանի, ըս-
տացուածքի եւ նամակի:

Յօդ. 10.- Հրապարակային դատավարութիւն եւ երդուեալ դատաւորներու դրութիւն:

Յօդ. 11.- Վարչական ապակեդրոնացում՝ պետութեան հիմնական օրէնքներուն համաձայն:

ԳԼՈՒԽ Բ.

ԸՆԿԵՐԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱԶԲՈՒՆՔՆԵՐ

Յօդ. 1.- Հրատարակում օրէնքներու որ կ'ընծայեն զարգացման հաւասար պատեհութիւն բոլոր քաղաքացիներուն եւ կ'ապահովեն արդարութեան գործադրութիւնը պետութեան ընկերա-տնտեսական կեանքին մէջ:

Յօդ. 2.- Հիմնարկութիւն պետական դրամատուններու՝ ընծայելու համար դիւրամատչելի վարկ քաղաքացիներուն:

Յօդ. 3.- Կանոնադրում օրէնսդրական միջոցներով՝ աշխատութեան եւ դրամագլուխի փոխադարձ յարաբերութիւններուն:

Յօդ. 4.- Արդար եւ համերաշխ գործակցութիւն եւ շահակցութիւն դրամագլուխի եւ աշխատութեան միջեւ, հաշտարար ատեաններու միջոցաւ:

Յօդ. 5.- Պետական վերսկզողութիւն աշխատանքի ժամերու, վարձատրութեան չափի եւ գործավայրերու առողջապահական պայմաններու:

Կանանց եւ անչափահասներու աշխատութեան պայմաններու մասին մասնաւոր օրէնսդրութիւն:

Յօդ. 6.- Հաստատում պետական գրասենեակներու (պիւրօ)՝ իբրեւ միջնորդ գործաւորոց եւ գործաւորի միջեւ, անգործներուն աշխատանք հայթայթելու համար:

Յօդ. 7.- Պետական ապահովագրու-

թիւն՝ պաշտպանելու համար ամէն կարգի աշխատաւորներ՝ ընդդէմ անգործութեան, հիւանդութեան, արկածի, ծերութեան եւ մահուան:

Պետական ապահովագրութիւն նաեւ ընդդէմ բնական պատահարներու, ինչպէս՝ երաշտ, հեղեղ, կարկուտ եւն.

Յօդ. 8.- Օրէնսդրական մասնաւոր միջոցներով քաղաքներ եւ պաշտպանել երկրագործութիւնը եւ առունին ճարտարարուեստը:

Յօդ. 9.- Պետութեան կը պատկանի հանքերու, անտառներու, ջուրներու եւ ուրիշ բնական հարստութիւններու արդիւնագործումը:

Կռավարութիւնը կրնայ իր վերիւսկողութեան տակ անոնց շահագործումը տալ անհատներու կամ ընկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար:

Յօդ. 10.- Պետականացում թղթատարութեան, հեռագրի, հեռախօսի եւ երկաթուղիներու:

Կառավարութիւնը կրնայ՝ իր վերսկզողութեան տակ՝ երկաթուղիներու, հեռագրի եւ հեռախօսի մեծաշնորհը տալ անհատներու կամ ընկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար:

Յօդ. 11.- Քաղաքապետութեան կը պատկանի հանրակառքերու, լոյսի ու ջրի մատակարարութիւնը:

Յօդ. 12.- Քաղաքներում գործակցական (cooperative) ընկերակցութիւններու կազմակերպումին եւ ծաւալման:

Յօդ. 13.- Պետական հասոյթի հայթայթում՝ տուրքի արդար բաշխումով, որպէսզի չջլատուին անհատական ու ընկերակցական ձեռներէցութիւնը եւ երկրին արդիւնաբերական եւ առեւտրական գործունէութիւնը:

Յօդ. 14.- Յառաջատուական տուրք եկամուտի եւ ժառանգութեան վրայ, իսկ

համեմատական միօրինակ տուրք՝ հողի եւ կալուածի արժէքին վրայ:

Յօդ. 15.- Աստիճանական ջնջում անուղղակի տուրքերու:

ԳԼՈՒԽ Գ.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՅ

Յօդում 1.- Կուսակցութիւնը կ'ընդունի հողային սեփականութեան իրաւունքը:

Յօդ. 2.- Հողին անհատական սեփականատիրութիւնը կը սահմանաւորուի խորհրդարանին կողմէ՝ փութարկուած հողային օրէնքներու համաձայն:

Յօդ. 3.- Սեփականատիրութեան ընդհանուր պայմանն է հողին մշակութիւնը եւ արդիւնագործումը:

Ներկայ հողային սեփականատիրութեանց իրաւունքները կը ճշդուին սոյն սկզբունքին կիրառութեամբը:

Յօդ. 4.- Հողագուրկ եւ սակաւահող գիւղացիներու ճրիաբար հող կը տրուի պետական տնօրինութեամբ, հողային ընդհանուր օրէնքի համաձայն:

Յօդ. 5.- Հողին բաշխման չափանիշը (նորմա) կ'որոշուի տեղական պայմաններու, հողի որակին եւ աշխատութեան չափին համեմատ:

Յօդ. 6.- Պետութիւնը իրաւունք ունի գրաւելու անհատներու եւ ընկերութիւններու սեփական հողերը, երբ անոնք օրէնքով սահմանուած չափանիշէն աւելի են,

նաեւ այն հողերը եւ անշարժ ստացուածքները, որոնք անհրաժեշտ են հանրօգուտ նպատակներու համար, արդար հատուցում ընելով անոնց տէրերուն:

Յօդ. 7.- Գրաւման ենթակայ չեն՝

Ա. Այն հողերը, որոնք թէեւ չափանիշէն աւելի, բայց կը ծառայեն հանրային, մշակութային եւ բարեգործական հաստատութեանց պահպանման:

Բ. Այն հողերը, որոնք իբր պարտեզ, այգի, մրգաստան, փորձադաշտ, բուծարան եւն., իրենց վրայ կը կրեն մասնաւոր աշխատանքի եւ դրամագլուխի արդիւնքը:

Գ.- Գործարաններու եւ այլ ճարտարարուեստական հիմնարկութիւններու պատկանող հողերը, որոնք անհրաժեշտ են անոնց գործածութեան համար:

Յօդ. 8.- Ընդհանուր հայ ժողովուրդին նուիրաբերութեամբը գոյացած վանքերու եւ եկեղեցիներու սեփական հողային ստացուածքները ենթակայ չեն գրաւման: Պետութիւնը կը հսկէ սակայն անոնց արդիւնաւոր եւ նպատակայարմար գործածութեան վրայ:

Յօդ. 9.- Հողային օրէնքները կը գործադրուին աստիճանաբար՝ բնակչութեան թիւին, մշակման պահանջներուն եւ տեղական պայմաններուն համեմատ:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ ծրագիրը վերաբնեւի է կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական ժողովին կողմէ՝ հիմնական կանոնագրին տրամադրութեանց համաձայն:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ*

Հայ Ռամկավար Կուսակցութեան կազմակերպական բաժանումներն են.

Ա.- Տեղական ակումբներ եւ իրենց վարչութիւններ.

Բ.- Ենթաշրջանակներ եւ Ենթաշրջանային վարչութիւններ.

Գ.- Շրջանակներ եւ Շրջանային վարչութիւններ.

Դ.- Շրջանակային պատգամաւորական ժողովներ.

Ե.- Կեդրոնական վարչութիւն.

Զ.- Ընդհանուր պատգամաւորական ժողով.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 1.- Իւրաքանչիւր Շրջանակ ինքնավար է եւ ունի իր առանձին ներքին կանոնադիրը, յարմարուած տեղական պայմաններուն՝ համաձայն Կուսակցութեան հիմնական սկզբունքներու եւ կանոնադրին:

Յօդ. 2.- Կուսակցութեան բոլոր պաշտօնական մարմինները, Ակումբէն մինչեւ Ընդհ. Պատգ. Ժողովը, պարտին պահել իրենց որոշումներուն եւ յարարութեանց արձանագրութիւնները, որոնք պիտի կրեն դիւանին ստորագրութիւնը:

Յօդ. 3.- Բոլոր պաշտօնական մարմիններու դիւանները պարտին աւանդապահը ըլլալ Կուսակցութեան ստմարներուն, թղթակցութիւններուն, պայմանագրութեանց եւ կնիքին:

Յօդ. 4.- Բոլոր վարչական մարմիններու եւ դիւաններու ընտրութիւնը կը կատարուի զապանի քուէարկութեամբ:

Անդամները վերընտրելի են երբ օրինական արգելք չկայ:

Յօդ. 5.- Ընտրութեանց ատեն մինչեւ վերջնից ամիսը իր անդամատուրքը առանց բանաւոր պատճառի չվճարող անդամ մը ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունք չունի:

Յետեալ տուրքերու դանձումը կը փակուի ընտրութիւններէն 24 ժամ առաջ:

Յօդ. 6.- Անպատահութեան քուէները եւ կախակայման որոշումները ռեւէ մարմնի անդամներու ամբողջութեան թիւին մեծամասնութեամբ միայն կրնան տրուիլ. իսկ արտաքսումի վերաբերեալ դատական վճիռները՝ երեք չորրորդին քուէով:

Յօդ. 7.- Կուսակցութիւնը, իր սովորական պիւտճէն դատ, կ'ունենայ իր հիմնադրամը, որուն գործածութիւնը կ'որոշուի Ընդհ. Պատգ. Ժողովին կողմէ:

ԳԼՈՒԽ Ա.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.- Հայաստանի Ռամկավարական Կուսակցութեան կրնայ անդամակցիլ, առանց սեռի խտրութեան, 18 տարեկանէն վեր Հայաստանի ամէն քաղաքացի եւ օտարահայտակ ամէն հայ, որ կ'ընդունի Կուսակցութեան սկզբունքները:

Յօդ. 2.- Նոր անդամ կ'ընդունուի Ակումբի վարչութեան կամ անդամական Ժողովին մեծամասնութեան որոշումով՝ ըստ Շրջանակի ներքին կանոնադրին: Ընդունուած անդամը պարտի ստորագրել խոստմնագիր մը:

Յօդ. 3.- Կուսակցութեան անդամ չեն ընդունուիր անոնք որ՝

Ա.- Ուրիշ հայ քաղաքական կուսակցութեան մը անդամ են:

* Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւին մէջ գտնուող ձեռագիր օրինակէն:

Բ.- Բ.- Ոճիրով եւ զեղծումով զա-
տապարտուած են եւ ծանօթ են
իրը յսոսի նկարագրի տէր անձ:

Յօդ. 4.- Կուսակցութեան այլ ան-
դամները պարտին մտարեւ տարեկան ան-
դամատուրք մը, որուն քանակը կ'որոշուի
Շրջանակին պատգամաւորական ժողո-
վին կողմէ եւ ամբողջովին կը զրկուի
Շրջանակին կեդրոնական անտուկը:

Կիներէ եւ ուսանողներէ կազմուած
սկումբները իրենք կ'որոշեն անդամա-
տուրքի քանակը:

Յօդ. 5.- Նոր անդամները, յօդուած
4-ի մէջ յիշուած անդամատուրքէն զատ,
պարտին մտարեւ նաեւ մուտքի տուրք մը,
որուն քանակը իրենք կ'որոշեն:

Յօդ. 6.- Անդամատուրքէ զերծ են
այն անդամները որոնց նիւթական անձ-
կութիւնը կը հաստատուի իրենց սկում-
բին կողմէ:

Յօդ. 7.- Բնակութեան փոփոխու-
թեան հետեւանքով անդամ մը իր պատ-
կանած սկումբէն կրնայ ուրիշ սկումբ մը
փոխադրուիլ վարչութեան գրասր յանձ-
նարարագրով:

Յօդ. 8.- Իւրաքանչիւր անդամ միայն
մէկ ձայնի իրաւունք ունի:

Յօդ. 9.- Ամէն անդամ պարտի յար-
զել կարգապահութեան օրէնքները:

Յօդ. 10.- Ուեւ անդամ որ չի հնա-
դանդիր իր Ակումբին որոշումներուն,
կամ չի մտարեւ իր տուրքերը եւ կամ
կ'ոտնակոխէ կուսակցութեան օրէնքները,
ազդարարութիւն կը ստանայ եւ եթէ ազ-
դարարութիւնը ապարդիւն մնայ, պատ-
ժոյ կ'ենթարկուի Շրջանակին ներքին կա-
նոնադրին տրամադրութեանց համաձայն:

Յօդ. 11.- Ուեւ անդամ որ՝

Ա.- Կուսակցութեան սկզբունքներուն
դէմ կը դործէ,

Բ.- Կարգապահութեան օրէնքները չի
յարգեր,

Գ.- Իրեն դէմ տրուած վճիռի մը դէմ
օրինական միջոցներէ տարրեր
միջոցներու կը դիմէ,

Դ.- Երբ ուրիշ հայ կուսակցութեան
մը եւս կ'անդամակցի, իր ա-
կումբին անդամական ժողովին
կողմէ կը կախակայուի եւ կը
կորսնցնէ իր անդամական իրա-
ւունքները որոշուած ժամանակի
մը համար եւ ի հարկին կ'ար-
տաքսուի յետ պատաժարութեան:

Յօդ. 12.- Ոճիրով եւ զեղծումով զա-
տապարտուած անդամ մը կ'արտաքսուի
կուսակցութենէն իր Ակումբին վճիռով:

Յօդ. 13.- Արտաքսուած անդամի մը
անունը կը հաղորդուի կուսակցութեան
բոլոր Ակումբներուն գերագուս մարմին-
ներու միջոցաւ:

Յօդ. 14.- Տրուած վճիռէ մը դժգոհ
ուեւ կողմ կրնայ սկումբին գերագուս
մարմինին բողոքել, մտնին թուականէն
մինչեւ մէկ ամիս:

ԳԼՈՒԽ Բ.

Յօդ. 1.- Անդամներու խմբաւորում
կը կազմէ Ակումբ մը, որուն նուազագոյն
թիւը կ'որոշուի իւրաքանչիւր Շրջանակի
ներքին կանոնադրութեան համաձայն:

Յօդ. 2.- Նորակազմ սկումբի մը
զոյսութիւնը օրինաւոր կը ճանչցուի այն
առեւ միայն, երբ իր կազմութիւնը վա-
ւերացուի Շրջ. Վարչութեան կողմէ:

Յօդ. 3.- Տեղական պարմաններու
համեմատ կիները կրնան առանձին ա-
կումբներ ունենալ առանձին վարչութիւն-
ներով:

Յօդ. 4.- Իւրաքանչիւր սկումբ կ'ու-
նենայ 3-7 անդամներէ բաղկացեալ վար-
չութիւն մը, որ կը պաշտօնավարէ մէկ
տարի եւ մինչեւ իր յաջորդին բնաւոր-
ութիւնը:

Յօդ. 5.- Ակումբի մը վարչութեան պակասած կամ հրաժարած անդամներուն յաջորդներ ընտրելու իրաւունքը կը պատկանի անդամական ժողովին:

Յօդ. 6.- Թէ՛ Ակումբի վարչութեան եւ թէ՛ անդամական ժողովին որոշումները կը տրուին մեծամասնութեամբ:

Յօդ. 7.- Ակումբի վարչութիւնը կը վարէ ակումբին գործերը եւ կը գործադրէ իր գերադաս մարմինն որոշումները եւ հրահանգները:

Յօդ. 8.- Ակումբի վարչութիւնը համարատու է թէ՛ անդամական ժողովին եւ թէ՛ իր գերադաս մարմինին:

Յօդ. 9.- Ակումբի վարչութիւնը պարտաւոր է կանոնաւորապէս եռամսեայ տեղեկագիրներով իր գերադաս մարմինը իրազեկ պահել ակումբին անդամներու թիւին, ելեւմտական կացութեան եւ ընդհանուր գործունէութեան մասին:

Յօդ. 10.- Այս կանոնաւոր տեղեկագիրներէն զատ ակումբներու վարչութիւնները պարտաւոր են նաեւ իրենց գերադաս մարմինը տեղեկ պահել, անմիջական տեղեկագիրներով, այնպիսի խնդիրներու մասին, որոնց ծանօթութիւնը կարեւոր եւ օգտակար է կուսակցութեան:

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԴԱՄԱՆԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 1.- Առ նուազն ամիսը մէկ անգամ տեղի կ'ունենայ անդամական կանոնաւոր ժողով, որուն հրաւերը գրաւորապէս կամ մամուլի միջոցաւ կը հաղորդուի բոլոր անդամներուն, ժողովէն առնուազն երեք օր առաջ:

Յօդ. 2.- Ակումբի մը անդամական ժողովը օրինաւոր է երբ անդամներուն կէսէն մէկ աւելին ներկայ է:

Յօդ. 3.- Երբ առաջին հրաւերով ժո-

ղովը մեծամասնութիւն չունենայ, վարչութիւնը կրնայ նոյն ամսուան մէջ երկրորդ հրաւեր մը ուղղել նոյն օրակարգով: Երկրորդ ժողովին ներկաներուն թիւը օրինական կը նկատուի եւ արուած որոշումները պարտաւորիչ են բոլոր անդամներուն համար:

Յօդ. 4.- Վարչութեան ատենապետը, եւ իր բացակայութեան՝ փոխատենապետը, իրաւունք ունի արտասովոր նիստի հրաւիրել անդամական ժողովը:

Յօդ. 5.- Ակումբի տարեկան ժողովը կը դումարուի Շրջանակի Պատգամաւորական ժողովին դումարման թուականէն առնուազն մէկ ամիս առաջ:

Յօդ. 6.- Ակումբի վարչութիւնը տարեկան ժողովի մէջ կը կատարէ իր համարատուութիւնը, որ կը տեղեկագրուի Շրջանակի Պատգամաւորական ժողովին:

Յօդ. 7.- Ակումբի տարեկան ժողովին մէջ կ'ընտրուին Շրջանակի Պատգ. ժողովին պատուիրակները, ներքին կանոնադրի արամադրութեանց համաձայն:

Յօդ. 8.- Կանանց ակումբները, եթէ ուզեն, կրնան տեղւոյն այրերու ակումբին հետ խառն ժողով դումարել եւ միասին ընտրել իրենց պատուիրակները:

Յօդ. 9.- Եթէ կարելի չըլլայ ընկերաբար կարգադրել վէճերը որոնք կը ծագին ընդմէջ ակումբի վարչութեան անդամներուն եւ կամ ակումբի անդամական ժողովին միջեւ, անոնք կը յանձնարարուին գերադաս մարմնի՝ որուն վճիռը պարտաւորիչ է բոլոր կողմերուն համար մինչեւ Շրջանային Պատգամաւորական ժողովը:

Յօդ. 10.- Իր գերադաս մարմնոյն որոշումներուն եւ կարգադրութեանց դէմ անսաստող ակումբի վարչութիւն մը կը հրաժարեցուի նոյն ակումբին գերադաս մարմնին կողմէ:

Յօդ. 11.- Ակումբը մը լուծուած կը համարուի երբ իր անդամներուն թիւը որոշուած նուազագոյն թիւէն պակաս է:

Յօդ. 12.- Ակումբի մը լուծման պարագային իր գոյքերը կը յանձնուին զերպառ մարմինին:

ԳԼՈՒԽ Դ.

ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Յօդ. 1.- Կուսակցութիւնը կը բաժնուի շրջանակներու՝ աշխարհագրական կամ վարչական յարմարութիւններու համեմատ:

Յօդ. 2.- Շրջանակ մը կը կազմուի մէկ կամ աւելի ակումբներէ պայմանաւ որ առնուազն (100) հարիւր ունենայ եւ վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէն:

Յօդ. 3.- Իւրաքանչիւր շրջանակ տարին անգամ մը կ'ունենայ Շրջ. Ժողով, որ կը կազմուի ակումբներու պատուիրակներէն, որոնց համեմատական թիւը կ'որոշուի Իւրաքանչիւր շրջանակի կանոնադրութեան համաձայն:

Յօդ. 4.- Շրջ. Պատգ. Ժողովին պատուիրակ կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն մէկ տարի անգամ եղած են Կուսակցութեան: Նորակազմ ակումբները բացառութիւն են:

Յօդ. 5.- Շրջանակային Պատգ. Ժողովը կը պատրաստէ նոյն շրջանակին կանոնադիրը, որ պէտք չէ հակասէ Կուսակցութեան սկզբունքներուն եւ հիմնական կանոնադրին եւ որ պէտք է վաւերացուի Կեդրոնական Վարչութեան:

Յօդ. 6.- Շրջանակային Պատգ. Ժողովը կը զբաղի շրջանակին վերաբերեալ խնդիրներով, կը սահմանէ տարեկան պիւտձէն եւ կ'ընտրէ Շրջանակին Վարչութիւնը:

Յօդ. 7.- Իւրաքանչիւր շրջանակ Կուսակցութեան Կեդրոնական գանձին կը վճարէ տարեկան տուրք մը, որուն քանակը կ'որոշուի Ընդհ. Պատգամաւորական Ժողովին կողմէ:

Յօդ. 8.- Շրջանակին վարչութիւնը կը բաղկանայ առնուազն հինգ անդամներէ, կ'ընտրուի մէկ տարուան համար եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդ ընտրութիւնը:

Յօդ. 9.- Շրջանակին Վարչութեան անգամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն մէկ տարի անգամ եղած են Կուսակցութեան:

Նորակազմ շրջանակներ բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 10.- Շրջ. Վարչութիւնը կ'ընդունի եւ կը գործադրէ Կեդր. Վարչութեան հրահանգները եւ Շրջանակային Պատգամաւորական Ժողովին որոշումները: Կրնայ յարաբերութիւն մշակել միւս շրջանակներու հետ:

Յօդ. 11.- Շրջ. Վարչութիւնը պատասխանատու է իր շրջանակի Պատգամաւորական Ժողովին որուն պարտի ներկայացնել իր տարեկան տեղեկագիրը եւ հաշիւը:

Յօդ. 12.- Շրջ. Վարչութիւնը երեք ամիս անգամ մը պարտաւոր է զրկել Կեդրոնական Վարչութեան՝ իր շրջանակին վիճակագրական, ելեւմտական եւ բարոյական տեղեկագիրը: Ասկէ զատ Շրջ. Վարչութիւնը յաճախակի թղթակցութիւններ կը կատարէ Կեդրոնական Վարչութեան հետ:

Յօդ. 13.- Շրջանակին շարժուն եւ անշարժ ստացուածքները մատակարարելու վերին իրաւասութիւնը կը պատկանի Շրջ. Վարչութեան:

Յօդ. 14.- Շրջ. վարչութեան հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուին շրջանակին պաշ-

տօնաթերթը եւ ուրիշ հրատարակութիւնները:

Յօդ. 15.- Երջանակները, ըստ տեղական պայմաններու, կրնան ունենալ մէկ կամ աւելի ենթաշրջանակներ համապատասխան վարչութիւններով, որոնք կը վարեն ենթաշրջանակին վերաբերեալ ընդհանուր դորձերը եւ պատասխանատու են Երջանային վարչութեան:

Յօդ. 16.- Երջ. վարչութիւնը պէտք է նախապէս Կեդր. վարչութեան հաւանութիւնը ստանայ բոլոր այն ձեռնարկներուն համար, որոնք կուսակցութեան ընդհ. քաղաքականութեան հետ կապ ունին եւ որոնք տեղ. հանգամանք չունին:

ԳԼՈՒԽ Ե.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ Ժ Ո Ղ Ո Վ

Յօդ. 1.- Ընդհ. Պատգ. Ժողովը կուսակցութեան Գերագոյն, Օրէնսդիր եւ Համարադու մարմինն է:

Յօդ. 2.- Ընդհ. Պատգ. Ժողովը կը կազմուի կուսակցութեան բոլոր շրջանակներէն բնորոշած պատգամաւորներէն:

Կեդրոնական վարչութեան անդամները կը մասնակցին Ընդհ. Պատգ. Ժողովին առանց քուէի իրաւունքի:

Յօդ. 3.- Կուսակցութեան բոլոր շրջանակները պատգամաւոր կը զրկեն հետեւեալ համեմատութեամբ.

100-250 անդամ	1	պատգամաւոր
251-500	» 2	»
501-750	» 3	»
751-1000	» 4	»
1001-1500	» 5	»
1501-2000	» 6	»
1001-1500	» 5	»

Եւ այսպէս իւրաքանչիւր յաւելուածական հինգ հարիւր կամ նուազ անդամի համար մէկ պատգամաւոր աւելի:

Յօդ. 4.- Պատգամաւորներու ընտրութիւնը կը կատարուի Երջանակային Պատգամաւորական Ժողովներու կողմէ՝ նոյն Ժողովին համար բնորոշած պատգահրակներուն թիւին մեծամասնութեամբ: Այն պարագային, երբ անկարելի ըլլայ Երջ. Պատգ. Ժողովը գումարել, Երջ. վարչութիւնը իրաւասութիւն պիտի ունենայ նշանակելու պատգամաւորները:

Յօդ. 5.- Ընդհ. Պատգ. Ժողովը կը գումարուի երկու տարին անգամ մը Հայաստանի մայրաքաղաքին մէջ: Հարկեցուցիչ պարագաներու մէջ, ուրիշ մէկ վայր՝ Կեդր. վարչութեան միաձայն որոշումով:

Յօդ. 6.- Արտասովոր Ընդհ. Ժողովը կը գումարուի՝

Ա. երբ Կեդր. վարչութիւնը պէտք տեսնէ, իր անդամներու երկու երրորդին քուէովը: Այս պարագային հրաւիրադիրը պէտք է կրէ Կեդր. վարչութեան անդամներուն երկու երրորդին ստորագրութիւնը:

Բ. երբ կուսակցութեան բոլոր շրջանակներուն երկու երրորդը գրաւորապէս կը պահանջէ զայն եւ նոյն առաջարկով:

Գ. երբ Կեդր. վարչութիւնը կը կորսնցնէ իր մեծամասնութիւնը:

Արտասովոր Ընդհ. Պատգ. Ժողովը իր մասնաւոր նպատակը իրագործելէ յետոյ կրնայ ուրիշ խնդիրներով ալ զրադիլ, պատգամաւորներու մեծամասնութեան հաւանութեամբ:

Յօդ. 7.- Կեդր. վարչութիւնը պարտաւոր է հրաւիրադիր զրկել խնդիրներու ցանկով միասին, բոլոր Երջանակներուն Ընդհ. Պատգ. Ժողովի գումարման թուականէն չորս ամիս առաջ:

Յօդ. 8.- Իւրաքանչիւր Երջանակ պատգամաւոր կ'ընտրէ իր շրջանակի անդամներէն եւ կամ ի հարկին ուրիշ շրջանակի պատկանող անդամներէն:

Յօդ. 9.- Կեդր. Վարչութեան անդամները կրնան ո՛րեւէ չըջանակի ձայնը ներկայացնել Ընդհ. Պատգ. Ժողովին մէջ: Բայց իրենց համարատուութեան վերաբերեալ խնդիրներու մէջ չեն կրնար քուէ տալ:

Յօդ. 10.- Իւրաքանչիւր պատգամաւոր կրնայ ներկայացնել միայն մէկ ձայն:

Յօդ. 11.- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը՝

Ա. Կը դժէ կուսակցութեան ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը, որոշելով դործելակերպի ընդհանուր դիժերը:

Բ.- Կը պահանջէ, կը քննէ եւ կը վաւերացնէ Կեդր. Վարչութեան, ինչպէս նաեւ չըջանակներու տեղեկագիրները եւ հաշիւները:

Գ. Կը քննէ, կը դատէ եւ կը պատժէ Կեդր. Վարչութեան ամբաստանեալ անդամները,

Դ. Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւնը,

Ե. Կ'ընտրէ Կեդր. Վարչութեան համար 3 փոխանդամներ,

Չ. Կը վերաքննէ Կեդր. Վարչութեան դատական վճիռները, եթէ բողոքարկու կողմը գրաւորապէս ներկայացնէ իր բողոքը:

Ժ. Կը քուէարկէ կուսակցութեան պիւտճէն եւ կ'որոշէ չըջանակներու մասնակցութեան չափը,

Ը. Կը վերաքննէ ի հարկին Ծրագիրը եւ Հիմնական Կանոնագիրը:

Յօդ. 12.- Ընդհ. Պատգ. Ժողովը օրինաւոր է, երբ չըջանակներուն երկու երրորդը ներկայացուած է եւ ըստ Յօդ. 3-ի տրամադրութեան՝ ընտրուելիք պատգամաւորներու ամբողջական թիւին կէսէն մէկ աւելին ներկայ է:

Յօդ. 13.- Ընդհ. Պատգ. Ժողովին պատգամաւոր կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն երկու տարի կուսակ-

ցութեան անդամ եղած են: Նորակազմ չըջանակները բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 14.- Ընդհ. Պատգ. Ժողովի որոշումները կը տրուին ներկաներու մեծամասնութեամբ՝ ի բաց առեալ հետեւեալ խնդիրները որոնց համար անհրաժեշտ է վաւերացուած պատգամաւորներու մեծամասնութեան քուէն:

Ա. Ծրագրի եւ Հիմն. Կանոնագրի փոփոխութիւն:

Բ. Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն:

Գ. Դատական վճիռներ:

Դ. Պիւտճէի քուէարկութիւն:

Ե. Ընդհանուր քաղաքականութեան հարցեր:

Յօդ. 15.- Ընդհ. Պատգ. Ժողովին ատենագրութիւններուն ամփոփումը տը պաշտօնաւոր կը ղրկուին չըջանակներու պատասխանատու մարմիններուն՝ աւելցնելով ընտրուած ընտրութիւնը:

ԳԼՈՒԽ 2.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.- Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն, երկու տարուան համար, պատգամաւորներու բացարձակ մեծամասնութեամբ, եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

Յօդ. 2.- Կեդր. Վարչութեան անդամները թէ՛ անհատապէս, թէ՛ հաւաքաբար պատասխանատու են Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին:

Յօդ. 3.- Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ առնուազն հինգ անդամներէ:

Երբ Կեդր. Վարչութեան անդամներէն մէկ կամ աւելին հրաժարին կամ պակսին, անոնց կը յաջորդեն Ընդհ. Պատգամաւորական Ժողովին կողմէ ընտ-

րուած փոխանդամները՝ առաւելագոյն քուէի կարգով:

Երբ ըստ ներկայ յօդուածի տրամադրութեան հրաժարող կամ պակասող անդամի մը յաջորդութեան եղանակը կանոնական դժուարութեանց հանդիպի, կեդրոնական Վարչութիւնը կրնայ միաձայնութեամբ պակասը լրացնել, պայմանաւ որ այս կերպով լրացուած անդամներուն թիւը երկուքը չանցնի:

Յօդ. 4.- Կեդր. Վարչութեան անդամակցութեան թեկնածու են անոնք միայն, որոնք առնուազն երկու տարի կուսակց. անդամ եղած են:

Յօդ. 5.- Կեդր. Վարչութեան կեդրոնաօլայրը Հայաստանի մայրաքաղաքն է:

Յօդ. 6.- Կեդր. Վարչութիւնը ինքը կ'ընտրէ իր դիւանը:

Յօդ. 7.- Կեդր. Վարչութիւնը երբ հարկ վատէ, կը նշանակէ լիազօրներ, յանձնաժողովներ եւ կը վարձէ քարտուղարներ, գործիչներ եւ ուրիշ պաշտօնեաներ, իր որոշումները գործադրելու եւ կուսակցութեան ընդհանուր գործերուն ընթացք տալու համար:

Յօդ. 8.- Կեդր. Վարչութիւնը կը վերաքննէ Շրջանակի մը պատգ. ժողովին դատական միջոցները, պայմանաւ որ բողոքարկուն գրաւորապէս ներկայացնէ իր բողոքը տրուած միջոցին թուականէն մինչեւ երեք ամիս:

Յօդ. 9.- Կեդր. Վարչութեան հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուին կուսակցութեան պաշտօնական հրատարակութիւնները:

Յօդ. 10.- Կեդր. Վարչութեան պաշտօնն է՝

Ա.- Գործադրել Ընդհ. Պատգ. Ժողովին կողմէ քուէարկուած օրէնքներն ու որոշումները եւ վարել կուսակցութեան ընդհանուր գործերը:

Բ.- Կանոնաւոր յարարերու թեան մէջ ըլլալ բոլոր շրջանակներուն հետ եւ անոնց հրահանգ տալ կուսակցութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան նկատմամբ:

Գ.- Տնօրինել բոքրականտի միջոցներ կուսակցութեան սկզբունքները եւ քաղաքականութիւնն ընդհանրացնելու համար:

Դ.- Ճշդել կուսակցութեան տեսակէտն ու դիրքն հանդէպ պետական հարցերու:

Ե.- Առնուազն միամսեայ շրջաբերականներով շրջանակները տեղեակ պահել կուսակցութեան ընդհ. գործունէութեան եւ պետական խնդիրներուն:

Զ.- Պատրաստել կուսակցութեան յաջորդ շրջանի պիւտձէն ներկայացնելու համար Ընդհ. Պատգամաւորական Ժողովին:

Յօդ. 11.- Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի բեկանելու շրջանային վարչութեանց որոշումները, երբ զանոնք կուսակցութեան սկզբունքներուն հակառակ գտնէ:

Յօդ. 12.- Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի լուծելու Շրջանային Վարչութիւն մը, երբ անոր ընթացքը, յետ ազդարարութեան, կը չարունակէ մնալ հակառակ կուսակցութեան սկզբունքներուն եւ ընդհ. քաղաքականութեան: Այդ պարագային Կեդր. Վարչութիւնը կը հրաւիրէ արտասովոր Շրջանակային Պատգ. Ժողով, որ կ'ընտրէ նոր Շրջանային Վարչութիւն:

Լուծուած Շրջ. Վարչութեան անդամները վերընտրելի չեն:

Յօդ. 13.- Կեդր. Վարչութեան անդամներն ու ներկայացուցիչները իրաւասութիւն ունին իրենց դաժնուած շրջանակներու բոլոր պաշտօնական մարմիններու նիստերուն մասնակցիլ խորհրդակցական ձայնով:

Յօդ. 14.- Կուսակցութեան սեփական

չարժուն եւ անչարժ ստացուածքներու մատակարարութեան վերին իրաւասութիւնը կեղըր. վարչութեան կը պատկանի:

Շրջ. վարչութիւնները փոխանորդարար կը վաշելեն իրենց շրջանակներուն սեփական շարժուն եւ անչարժ ստացուածքներու մատակարարելու իրաւասութիւնը:

Յօդ. 15.- Կեղըր. վարչութեան անդամները պարտին ուխտել հաւատարմութիւն կուսակցութեան սկզբունքներուն եւ շահերուն եւ ստորագրել Երդմնագիր մը:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ Հիմնական Կանոնադիրը վերաքննելի է կուսակցութեան Ընդհ. Պատգամաւորական ժողովին մէջ:

Վաւերացում.- Այս Հիմնական Կանոնադիրը վաւերաց[ուեցաւ] Հայ Ռամկ. Կուսակցութեան Գ. Պատգ. ժողովին ԻԲ. նիստին մէջ ու ԻԹ. նիստին մէջ որոշուած է անմիջապէս դործադրութեան դնել: 11 Նոյ. 1920:

Ծախօթ Ա. Հիմնական Կանոնադիրին

«Կեղըր. վարչութիւն» հաստատմին տրամադրութեան համեմատ Կեղըրական վարչութեան անդամները կ'երզնուն հետեւեալ բանաձեւով եւ անոր մէկ օրինակը կը ստորագրեն յատենի ժողովոյ:

ԵՐԴՄՆԱԳԻՐ.- «Կ'երզնում խղճիս եւ պատուոյս վրայ հաւատարիմ գտնուիլ Հայ Ռամկ. Կուսակցութեան սկզբունքներուն, պահպանել եւ դործադրել կուսակցութեան Ծրագիրն ու Կանոնադիրը, խղճմտօրէն կատարել Պատգ. ժողովին որոշումները եւ անոր ինծի վստահուած պաշտօնը, աշայրջօրէն հսկել Ռամկ. Կուսակցութեան շահերուն վրայ եւ ջանալ անոր քաղաքական նպատակներուն իրագործման»:

Ծախօթ Բ.- Հիմնական Կանոնադիր «Ընդհանուր Կանոններ» հաստատմին վրայ պիտի աւելցուի հետեւեալ 8-րդ Յօդուածը, համաձայն Ծ. նիստին որոշման:

«Կուսակցութեան բոլոր պատասխանատու մարմինները կը ստորագրեն Երդմնագիր մը, որուն բանաձեւը կը խմբագրուի իւրաքանչիւր շրջանակի Պատգամատուրական ժողովին կողմէ»:

ԾՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ *

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայ Ազգին արդի փառափառական պահանջներուն ընդառաջ երթալու համար Ազգային Քաղաքական գործառն կազմակերպութեան մը պէտքը զգալի եղած էր ժամանակէ մը ի վեր: Այսպիսի կազմակերպութիւն մը երեսան բերելու բաղձանքով՝ Ամերիկահայ զանազան գաղութներու ոչ-կուսակցական տարրերուն եւ արդէն գոյութիւն ունեցող երկու ազգայնական կուսակցութիւններու միջեւ տեղի ունեցան կարգ մը բանակցութիւններ: Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը, իրեն յատուկ պատմառնեալ, ի վիճակի չ'զգաց առաջադրուած նոր կազմակերպութեան մասը կազմել: Հ.Ս.Ռ. կուսակցութեան եւ ոչ-կուսակցականներու յիմարտութեան մը բանակցութիւնները համաձայնութեան մը յանգած ըլլալով՝ հիմնուեցաւ նոր կազմակերպութիւնը. *Ազգային Ռամկավարական կուսակցութիւն* անուանով:

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

Քաղաքակրթութիւնը կը ձգտի իրագործել մարդկային ընկերութեան ազատութիւնն ու երջանկութիւնը գործակցական սկզբունքին կիրառութեամբը:

Ընկերային յառաջդիմութեան այս գերագոյն նպատակը կրնայ միայն իրագործուիլ ցեղային ինքնուրոյն մշակոյթի զարգացմամբ:

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ԱԶԳ

Հայրենիքը ազգի մը տունն է՝ բնական ու պատմական յիշատակներով եւ ցեղային մասնայատուկ մշակոյթով նուիր-

րագործուած աշխարհագրական որոշ սահմաններու մէջ: Զայն շէնցնել ու գեղեցկացնել նոյն ազգի զաւակներուն ո՛չ միայն անբռնաբարելի իրաւունքը, այլ եւ նուիրական պարտականութիւնն է:

Հայրենասիրութիւնը գերազանցօրէն մարդկային առաքինութիւն մըն է:

Ազգը ամբողջական միութիւն մըն է, որուն հաւաքական շահերը միշտ գերադաս են անհատական եւ դասակարգային առանձնաշնորհումներէ:

ԿՈՒՍԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Կառավարութիւնը՝ ժողովրդային վեհապետութեան հեղինակութեամբ օժտուած՝ պարտի ստանձնել ո՛չ միայն ազգային պաշտպանութեան պատասխանատուութիւնը, այլեւ տնօրինել ընկերային արդարութիւն յառաջացնող օրէնքներ եւ հաստատութիւններ, եւ այդ կերպով արգիլել անսահման շահագործումները, խափանարար մեղաշնորհները եւ այլ եւ այլ տնտեսական անարդարութիւնները, յօգուտ հանրային բարօրութեան:

ՕՐԷՆՔ

Օրէնք եւ Սահմանադրութիւն՝ միշտ ենթակայ բնաշրջական բարեփոխումներու՝ կը ծառայեն իբրեւ ուղեցոյց խաղաղ եւ կանոնաւոր զարգացման ու կը փրկեն հայրենիքը անիշխանութեան կործանարար չարիքներէն: Ազգերու կեանքին մէջ օրէնքը կը կատարէ դաստիարակի պաշտօնը՝ առաջնորդելով յառաջդիմական նորանոր փայլերու եւ փառափառական նուաճումներու:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Կազմակերպութիւնը անհատական ոյժերը արդիւնաւորող միջոցն է: Ազնիւ եւ գեղեցիկ բաղձանքներ ու տրամադրութիւններ դատապարտուած են ապարդիւն

* 1919-ին Պոսթոնի «Ազգ» պաշտօնաթերթին տպարանէն լոյս տեսած է իբրեւ զրբոյց:

մնալու առանց կազմակերպուած եւ ներ-
դաշնակ ջանքերու:

Հրաւեր կը կարդանք ամէ՛ն պարտա-
նանաչ Հայնո գործակցելու Կուսակցու-
թեանս հետ անոր հայրենաշինական նպա-
տակներուն եւ՝ ձեռնարկներուն մէջ:

Հայրենակիցներ՝,

Այսօր, երբ անհուն գոհողութիւննե-
րու գնով Հայ Ազգին դարբերու երազը կ'ի-
րականանայ, եւ գերութեան տառապանք-
ներէն փրկուած Մայր Հայրենիքին առջեւ
կը բացուի ազատութեան եւ յառաջդի-
մութեան նոր արշալոյսը. այսօր, երբ
Հայ ժողովուրդը պատմական նոր շրջանի
մը գիտակցութեամբ պարտականութիւն
կը գգայ բոլորանուէր ճիգերով փութալ
դէպի վերականգնումի սրբազան գործը,
Ազգային Ռամկավարական Կուսակցու-
թիւնս՝ իբրեւ քաղաքական կազմակեր-
պութիւն՝ կ'ուխտէ նուիրուիլ Հայկական
ազատ քաղաքակրթութեան մը իտէալին,
որուն հաւատովը ներշնչուած պայքարե-
ցան մեր հերոսները եւ ինկան մեր նահա-
տակները:

Ազգային Ռամկավարական Կուսակ-
ցութիւնը, որուն Ծրագիրը կը յանձնեմք
հանրային դատողութեան, օրուան պա-
հանջներուն ծառայելու պարտականութե-
նէն քեյադրուած՝ կը հրաւիրէ գործակ-
ցութիւնը ազգանուէր բոլոր կազմակեր-
պութիւններուն, որոնք այլ եւ այլ կեր-
պերով նուիրուած են Հայաստանի ազա-
տութեան եւ վերաշինութեան գործին:
Փոխադարձաբար այս Կուսակցութիւնը
իր գործակցութիւնը կը խոստանայ այն
բոլոր մարմիններուն, որոնց ուղղութիւնը
եւ գործունէութիւնը չեն հակասեր իր
հետապնդած նպատակներուն:

ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Մայիս, 1919,

Պօսթօն

ԱՆՈՒՆ

Կուսակցութեանս անունն է Ազգային
Ռամկավարական Կուսակցութիւն:

ՆՊԱՏԱԿ

Կուսակցութեանս նպատակն է,

1.- Ապահովել եւ պահպանել պատ-
մական Միացեալ Հայաստանի անկախու-
թիւնը:

2.- Աշխատիլ անկախ հայրենիքին
քաղաքական, տնտեսական եւ բարոյա-
կան վերականգնումին:

3.- Ծառայել հայկական լուսամիտ
քաղաքակրթութեան մը զարգացման:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Կուսակցութիւնս, հիմնուած ըլլալով
ժողովրդային վեհապետութեան եւ քա-
ղաքական հաւասար իրաւունքներու
սկզբունքին վրայ, կը ջատագովէ Սահմա-
նադրական Հանրապետութիւնը՝ իբրեւ
պետական ձեւ Հայրենիքի կառավարու-
թեան: (Ծան. 1)*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱԽԱՆԱՆՔ ~

1.- Ամէն Հայ-քաղաքացիի քուէար-
կութեան հաւասար իրաւունքը՝ Սահմա-
նադրութեամբ որոշուած տարիքէն սկըս-
եալ, առանց սեռի խտրութեան:

2.- Ամէն Հայ-քաղաքացիի քացար-
ձակ հաւասարութիւնը օրէնքի առջեւ:

3.- Քուէներու համեմատական քուով
ներկայացուցիչ ընտրելու սկզբունքը, որ-
պէսզի ներկայացուցչական մարմիններու
կազմին մէջ՝ տիրող մեծամասնութեան
հետ՝ իրենց ձայնը ունենան նաեւ փոքրա-
մասնութիւնները: (Ծան. 2)

* Ծանօթութիւնները տե՛ս [այս Ծրագրին]
վերջին մասին մէջ:

4.- Զինուորական պարտադիր կրթութիւն, դպրոցական շրջանէն սկսեալ եւ օրէնքով սահմանուած տարիքներու մէջ, իբրեւ պայման երկրապահ զինուորական ծառայութեան, եւ իբրեւ նախագուշական միջոց ազգային պաշտպանութեան:

5.- Հայերէնի գործածութիւնը իբրեւ պետական լեզու, եւ իբրեւ կանխապայման կառավարական բոլոր պաշտօնատարութեան:

6.- Պետութեան եւ Եկեղեցիի անջատում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԱԻՌՈՒԹԻՒՆՆԵՐ

7.- Ազատութիւն խօսքի, մամուլի, հաւաքումներու, ընկերակցութեան եւ նամբորդութեան:

8.- Ազատութիւն խղնի, կրօնի եւ պաշտամունքի:

9.- Անձեռնմխելիութիւն անձի, անբռնաբարելիութիւն բնակարանի, ստացւածքի եւ նամակագրութեան: (Ծան. 3)

10.- Օրէնսդիր, Դատական եւ Գործադիր իշխանութեանց իրարմէ անկախութիւնը՝ պետական ընդհանուր կազմին մէջ: (Ծան. 4)

11.- Տեղական ինքնավարութիւն, պետական ընդհանուր օրէնքներու համաձայն:

12.- Ժողովրդային նախաձեռնութեան իրաւունքը,

Ա.- Նոր օրէնքներ առաջարկելու, (Initiative):

Բ.- Հին օրէնքներ վերաքննելու, (Referendum):

Գ.- Անհատատարիմ պաշտօնեաներ յետս կոչելու: (Recall): (Ծան. 5)

ԿՐԹԱԿԱՆ

13.- Հանրային ընդհանուր, ճիշտ պարտաւորիչ նախնական եւ միջնակարգ դաստիարակութիւն Հայաստանի բոլոր երկսեռ մանուկներուն եւ պատանիներուն համար. իսկ երիտասարդներու եւ երիտասարդուհիներու ակադեմական, արհեստագիտական ու մասնագիտական ճիշտ բայց կամաւոր կրթութեան համար՝ պետական ազատ ուսումնարաններու հաստատութիւնը հայրենիքի յարմարագոյն վայրերուն մէջ:

ԸՆԿԵՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ

14.- Օրէնքներ որ կը նպաստաւորեն տնտեսական հաւասար պատեհութիւն եւ ընկերային արդարութիւն: (Ծան. 6)

15.- Պետական դրամատուններու հաստատումը, ընծայելով դիրամատչելի վարկ բոլոր դասակարգերուն:

16.- Կանոնաւորումը, պետական հեղինակութեամբ, աշխատութեան եւ դրամագլուխի փոխադարձ յարաբերութիւններուն:

17.- Հաստատումը պետական ճիշտ պիւրոներու, իբրեւ միջնորդ գործին եւ գործաւորին միջեւ, ջնջելու համար անգործութեան տնտեսական եւ ընկերային չարիքները:

18.- Պետական Ապահովագրութեան դրութիւն մը, պաշտպանելու համար աշխատաւոր զանազան դասակարգերը՝ ընդդէմ անգործութեան, հիւանդութեան, արկածի, հրդեհի, ծերութեան եւ մահուան: Պետական ապահովագրութիւն նաեւ ընդդէմ բնական պատահարներու, ինչպէս՝ երաշտ, հեղեղ, կարկուտ եւայլն, հողագործ բնակչութեան մասնաւոր պաշտպանութեանը համար: (Ծան. 7):

19.- Տնօրինութիւնը արդար եւ ազդեցիկ միջոցներու, որ պիտի նպաստէ

երկրագործական եւ առտնին ճարտարութեան արդիւնաբերութիւններու զարգացման:

20.- Արդիւնագործումը, պետական գօնքօրի տակ, երկրին բնական հարբստութիւններուն, ինչպէս՝ հանքեր, անտառներ, ջուրեր, արօտներ, եւայլն:

21.- Ղեկավարումը, ազգին հաշույն, հանրային մեծաշնորհներու, ինչպէս՝ թղթատարութիւն, հեռագիր, հեռախօս, երկաթուղիներ, լոյսի եւ ջուրի մատակարարութիւն, եւայլն:

22.- Զուտ շահադիտական նպատակներու համար հողային մեծաշնորհներու օրէնքով արգելումը, եւ արդի հողատիրական անհաւասարակշռութիւններու դարմանումը՝ օրէնսդրական միջոցներով: (Ծան. 8)

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

23.- Հանրային ծախքերու համար տուրքի գիտական դրութիւն մը, առանց սակայն ջլատելու անհատական եւ ընկերակցական ձեռներէցութիւնները, եւ երկրին արդիւնագործական եւ առեւտրական գործունէութիւնները:

Ա.- Յառաջատուական Տուրք եկամուտի եւ ժառանգութեան վրայ: (Ծան. 9)

Բ.- Միօրինակ Տուրք հողի գետնաբծէֆին վրայ: (Ծան. 10)

Ներկայ Ծրագիրը վերաբերելի է Կուսակցութեան Ընդհ. Պատգ. Ժողովին կողմէ՝ Հիմնական Կանոնագրին տրամադրութեանց համաձայն:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծան. 1.- Իմաստի տարբերութիւն մը կայ Հանրապետութիւն եւ Ռամկավարութիւն բառերուն միջեւ: Առաջինը կը շեշտէ

Ներկայացուցչական Դրութիւնը իբրեւ կառավարութեան ձեւ, երկրորդը կը շեշտէ ուղղակի Ժողովրդային Վեհապետութեան սկզբունքը:

Կան երկիրներ, ուր թէեւ Ռամկավարական սկզբունքը աւելի կամ նուազ չափով կը գործադրուի, բայց Հանրապետական չեն անոնք իրենց ձեւին մէջ, ինչպէս Անգլիա եւ Յունաստան: Այս երկիրներուն մէջ դեռ գոյութիւն ունի ժառանգական թագաւորութիւնը: Զուտ Հանրապետական երկիրներու մէջ, ինչպէս Ֆրանսա եւ Զուիցերիա, ժառանգական պաշտօնավարութիւնը ի սպառ ջնջուած է:

Միացեալ Նահանգները արդի լաւագոյն օրինակն է Հանրապետական-Ռամկավարութեան, ուր ազգին բարձրագոյն պաշտօնեան՝ Նախագահը, կ'ընտրուի ուղղակի ժողովրդային փուէով եւ պատասխանատու է անոր, եւ ուր բոլոր փաղափայկները անխտիր կը վայելեն փաղափայկան հաւասար իրաւունքներ:

Ծան. 2.- Ներկայացուցչական Մարմիններու ընտրութիւնը երկու գլխաւոր սկզբունքներու հիման վրայ կը կատարուի - *Մեծամասնական* եւ *Համեմատական*:

Ենթադրեմք թէ հինգ տարբեր հասանքներու պատկանող 1000 փաղափայկներ 10 հոգի պիտի ընտրեն փաղափ մը գործերը վարելու պաշտօնով: Եթէ *Մեծամասնական* սկզբունքը ընդունուի, այդ հինգ հոսանքներէն ոեւէ մէկը որ 1000 փուէներուն կէսէն մէկ աւելի (501) կը շահի, բացարձակ իրաւունք կ'ունենայ իր 10-ը թեկնածուներով տեղւոյն գործերը տնօրինելու: Եթէ սակայն *Համեմատական* սկզբունքը ընդունուի եւ իւրաքանչիւր 100 փուէի համար մէկ ներկայացուցիչ տալու չափանիշը որդեգրուի՝ այն ատեն 1000 փուէներուն 600-ը շահող հասանքը վեց ներկայացուցիչ միայն տալու իրաւունք կ'ունենայ, 300 փուէ շահողը՝ երեք ներկայացուցիչ, 200 փուէ շահողը՝

երկու ներկայացուցիչ, 100 ֆուտ շահողը՝ մէկ ներկայացուցիչ:

Որեւէ ընտրութեան ատեն ներկայացուցիչ մը ընտրելու համար պահանջուած ֆուտներու թիւը կը նշողուի՝ տրուած ֆուտներուն համագումարը բաժնելով ընտրելիներու թուովը, օրինակ

1000-:10 հաւասար է 100-ի
այսինքն, ամէն մէկ 100 ֆուտի մէկ ներկայացուցիչ:

Հասկնալի է, անշուշտ, թէ ուր որ ընտրութիւնը միակ թեկնածուի մը շուրջ կը դառնայ, ինչպէս Նախագահի ընտրութեան պարագային, *Համեմատական Ներկայացուցչութեան* սկզբունքը անգործադրելի է:

Ծան. 3.- Ասիկա կը նշանակէ թէ կառավարական ռեւէ պաշտօնեայ չի կըրնար ձեռքակալել քաղաքացի մը եւ կամ բռնաբարել անոր ստացուածքը, բնակարանը եւ թղթակցութեան իրաւունքը, առանց օրինական հրամանագրի մը:

Ծանօթ. 4.- Պետական կազմին մէջ այս երեք բաժանումներու իրաւասութեան որոշ սահմաններ նշուած են, որպէսզի անոնք գերծ մնան ա՛յն չարիքներէն որ կըրնան ծնիլ փոխադարձ միջամտութիւններէ եւ ազդեցութիւններէ:

Օրէնսդիր իշխանութեանց պաշտօնն է միայն օրէնքները գծել երկրին քաղաքական, տնտեսական եւ բնկերական պէտքերուն համաձայն:

Դատական իշխանութեանց պաշտօնը օրէնք չինել չէ, այլ Օրէնսդրական Մարմիններու կողմէ հաստատուած օրէնքներուն վրայ հսկել, զանոնք մեկնել եւ անոնց ոգւոյն համեմատ վնասներ արձակել: Դատաւորը պատասխանատու չէ, օրէնքին արդար կամ անիրաւ հանգամանքին համար:

Գործադիր իշխանութեանց պաշտօնն է, պարզապէս տրուած վնասները հաւատարմաբար եւ պատշաճօրէն գործադրել:

Ծան. 5.- Նոյնիսկ ամենէն յառաջադէմ երկիրներու մէջ շատ անգամ գեղծումներու եւ չարաշահութիւններու ասպարէզ կ'ըլլայ Օրէնսդրական Մարմինը: Երեսփոխաններ եւ Ծերակուտականներ դասակարգային շահերու ազդեցութեանց ենթարկուելով, կ'անտեսեն իրենց ուխտեալ պարտականութիւնը ժողովուրդին հանդէպ ու կը դաւաճանեն հանրային շահերու դէմ:

Այս կարգի չարիքները ջնջելու եւ անհաւատարիմ պաշտօնեաները պատժելու համար, արդի Ռաֆկավարութիւնը կ'որդեգրէ այս յօդուածին մէջ ամփոփուած սկզբունքները:

Ենթադրեմք թէ՝ հանրային կարծիքը ոգելից բնական ճիշդ արտայայտուելու դէմ է, եւ այդ կարծիքը մարմնացնող օրէնք մը կը պահանջէ. բայց, ինչպէս երբեմն կը պատահի, Օրէնսդիր Մարմինը ի՛նչ ի՛նչ նկատումներով, կը հակառակի այդպիսի օրէնքի մը: Այս պարագային քաղաքացիներ հանրագրութեան մը միջոցաւ - որ պէտք է պարտականէ օրէնքով սահմանուած թիւով ստորագրութիւններ - իրաւունք կ'ունենան ասարտադրել Օրէնսդիր Մարմինը, որ ուղղակի ժողովրդային ֆուտարկութեան ենթարկէ պահանջուած առաջարկութիւնը: Քուէարկութեան արդիւնքը կը վճռէ խնդիրը: Ասիկա կը կոչուի *Նախաձեռնութեան Իրաւունք (Initiative)*:

Միւս կողմէն, երբեմն կը պատահի որ Օրէնսդիր Մարմինը կը փորձուի հանրային շահու վնասակար օրէնք մը անցընել: Այս պարագային ալ վերոյիշեալ մէթոտով, ժողովուրդը իրաւունք կ'ունենայ պահանջել որ, այդ օրէնքը գործադրութեան դրուելէ առաջ ժողովուրդին հաւատարմութեան ենթարկուի: Նոյնպէս ֆուտարկութեան արդիւնքը կը վճռէ խնդիրը: Ասիկա կը կոչուի *Վերաքննութեան Իրաւունք (Referendum)*:

Երբ հանրային պաշտօնեայ մը չարա-

չար կը գործածէ իրեն վստահուած դիրքը, ժողովուրդը, առա՛նց սպասելու պաշտօնաշրջանի լրանալուն, նոյն մեքոտով, իրաւունք կ'ունենայ պահանջել անոր հրաժարումը: Այս պարագային յիշեալ պաշտօնեային արարքները կը յանձնուին ժողովրդային դատաստանին եւ նոր փոփոխութեամբ մը կ'որոշուի անոր դիրքը: Ասիկա կը կոչուի *Յետո Կշում* (Recall):

Այսպիսի օրէնքի մը գոյութիւնը ինքնին ազդարարութիւն մըն է հանրային պաշտօնեաներուն. որ անոնք խղճմտօրէն կատարեն իրենց պարտականութիւնները:

Ծան. 6.- Այս յօդուածին իմաստը երբեմն կը նկարագրուի «Տնտեսական Ռաժիստրութիւն» բացատրութեամբ, եւ կը նշանակէ թէ տնտեսական աշխարհի մէջ ամէն ֆաղափաղ իրաւունք ունի հաւասար պատեհութիւն վայելելու իր փիզիքական, մտային եւ բարոյական կարողութիւնները ի յայտ բերելու եւ արդիւնաւորելու, առանց սակայն ջնջելու ազատ մրցակցութեան ինչպէս եւ անհատական սեպիականութեան դրութիւնը: Այս յօդուածին ոգին հակառակ է անսանձ շահագործումներու, խախտարար մենաշնորհներու (*Թրոթ*) եւ ընկերային անարդար օրէնքներու եւ հաստատութիւններու, որոնք կը զրկեն անհատը պատեհութեան հաւասար իրաւունքէն կեանքի գոյամարտին մէջ:

Ծան. 7.- Ապահովագրութիւնը առանձին ընկերութիւններու ձեռքին մէջ, շահադիտական ձեռնարկ մըն է: Պետական դրութեան մէջ շահու շարժառիթը գոյութիւն չպիտի ունենայ, անոր միակ նպատակը պիտի ըլլայ ֆաղափաղներուն բարեկեցութիւնը ապահովել, կարելի նուազագոյն ծախքով: Պետական ապահովագրութիւնը պարտաւորիչ չէ, բայց անոր բարիքները այնքան բացայայտ են որ, ամէն ֆաղափաղ պիտի ուզէ օգտուիլ այս

դրութեան մատուցած առաւելութիւններէն:

Ծան. 8.- Երեք գլխաւոր պատճառներով ազգի մը սահմաններուն մէջ պարփակուած հողը՝ հաւաքական ժառանգութիւն մըն է:

Ա.- Հողը մարդոց աշխատանքով ստեղծուած չէ, այլ Բնութեան մէկ պարգեւն է (ինչպէս օդը եւ ջուրը) եւ ազգի մը փիզիքական գոյութեան բացարձակ պայմանն է:

Բ.- Հողը իր տնտեսական արժէքը կը ստանայ բնակիչներու ներկայութենէն եւ անոնց ընդհանուր, շինարար գործունէութենէն, հետեւաբար հողին տնտեսական արժէքը մասնաւոր իմաստով մը ընկերային ծագում եւ բնոյթ ունի:

Գ.- Տրուած սահմանի մը մէջ հողին տարածութիւնը կը մնայ նոյնը, մինչ բնակիչներու թիւը օրէ օր կ'անի: Ապագայ սերունդներն ալ իրաւունք եւ բաժին ունին այս ժառանգութեան մէջ. ուստի անիրաւութիւն մը պիտի ըլլայ որ ռեւէ անհատ կամ ընկերութիւն հողի ընդարձակ տարածութիւններ գրաւէ, ոչ թէ գայն արդիւնագործելու՝ այլ պարզապէս սպագային յաւելեալ արժէքով վաճառելու շահապաշտ դիտաւորութեամբ:

Հողին մենաշնորհը պատմութեան մէջ բռնապետական ձգտումներու կոտանքիւն է: Հողային օրէնքներու նպատակն ըլլալու է.-

Ա.- Արգիլել հողին մենաշնորհը:

Բ.- Քաջալերել հողին ընդհանուր եւ արդիւնաբեր մշակութիւնը:

Գ.- Բաւարար հող տալ հողագործիին՝ պետական տնօրինութեամբ եւ ձեռնտուութեամբ:

Դ.- Ապահովել հողագործին տնտեսական բարեկեցութիւնը:

Ասիկա չնշանակէր թէ հողը մշակելու դժկամակ ֆաղափաղներ ստիպուած պիտի ըլլան երկրագործութեամբ զբաղելու՝ եթէ անոնք իրենց արհեստին, տա-

դանդին կամ դրամագլուխին կրնան աւելի արդիւնաբեր ասպարէզ գտնել ուրիշ գրադումներու մէջ:

Ծան. 9.- Եկամուտի եւ ժառանգութեան Տուրքին չափը կը տարբերի գումարներու ֆանակին համեմատութեամբ: Նախ՝ օրէնքով որոշուած գումար մը (օրինակ 1,000 տօլար) ազատ կ'ըլլայ տուրքէ, իսկ անկէ վեր իւրաքանչիւր 1,000 տօլարի համար տուրքի սակագին մը կ'որոշուի, (օրինակ, 5 առ հարիւր) մինչեւ օրէնքով ճշդուած յաջորդ ֆանակը (օրինակ 10,000 տօլար). եւ այսպէս աստիճանաբար, ֆանի մեծնայ եկամուտի եւ ժառանգութեան գումարը, անոր համեմատ սակագինն ալ կը բարձրանայ:

Ծան.- 10.- Ամէն ֆաղափացի իր սեփական հողի գետնարժէքին համեմատութեամբ միօրինակ տուրք մը վճարելով Պետական Գանձին՝ փոխ-հատուցում մը ըրած կ'ըլլայ հասարակաց ժառանգութենէն իր գրաւած բաժնին համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՆՈՒՆ

ԱՌԱՋԻՆ.- Կուսակցութեան անունն է, *Ազգային Ռամկավարական Կուսակցութիւն:*

ՆՊԱՏԱԿ

ԵՐԿՐՈՐԴ.- Կուսակցութեան նպատակն է.

1.- Ապահովել եւ պահպանել պատմական Միացեալ Հայաստանի Անկախութիւնը:

2.- Աշխատիլ անկախ հայրենիքին փաղափական, տնտեսական եւ բարոյական վերականգնումին:

3.- Ծառայել Հայկական լուսամիտ փաղափարքութեան մը զարգացման:

ԵՐՐՈՐԴ.- Կուսակցութեան գործունէութեան գլխաւոր վայրերը պիտի ըլլան Հայաստան, Միացեալ Նահանգներ եւ Արտասահմանեան ուրիշ երկիրներ:

ԶՈՐՐՈՐԴ.- Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին կեդրոնավայրը պիտի ըլլայ Պոսթոն:

ՀԻՆԳԵՐՈՐԴ.- Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին Վարիշ Մարմինը կը կոչուի Նահանգային Վարչութիւն եւ կը բաղկանայ ինն անդամներէ, որոնք պիտի պաշտօնավարեն *մէկ տարի* եւ մինչեւ նոր Նահանգային Վարչութեան ընտրութիւնը: Նահանգային Վարչութեան տարեշրջանը երբ աւարտի, Պատգամաւորական Ժողովը նախ անոնցմէ երեքը գաղտնի ֆուէարկութիւնով կը վեր-

ընտրէ, պայմանաւ որ Վարչութիւնը Պատգամաւորական Ժողովին վստահութիւնը ստացած ըլլայ: Ապա, մնացեալ վեցին տեղ նոր անդամներ կ'ընտրէ. նախկին անդամներն ալ վերընտրելի են: Այսպէս տարուէ տարի յաջորդաբար նոյն եղանակով կ'ընտրուի Նահանգային Վարչութիւնը:

ՎԵՑԵՐՈՐԴ.- Կուսակցութեան տարեկան ժողովը որ կը կոչուի Պատգամաւորական Ժողով, պիտի գումարուի ամէն տարի Սեպտեմբեր ամսուն առաջին երկուշաբթիի (Լէյպըր Տէյ) նախընթաց Շաբաթ օրը:

ԵՕԹՆԵՐՈՐԴ.- Կուսակցութիւնս պաշտօնապէս ներկայացնող մարմինն է Նահանգային Վարչութիւնը, որուն կը պատկանի Կուսակցութեան բոլոր գործերը վարելու իրաւասութիւնը:

ՈՒԹԵՐՈՐԴ.- Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին սեպհական շարժուն ու անշարժ ստացուածքները մատակարարելու իրաւասութիւնը (*Թայթըլ*) կը պատկանի Նահանգային Վարչութեան:

ԻՆՆԵՐՈՐԴ.- Նահանգային Վարչութիւնը իր իրաւասութիւնն ու որոշումները գործադրելու համար կրնայ նշանակել Գործադիր Յանձնախումբ մը կամ Յանձնախումբեր իր անդամներէն կամ իրմէ դուրս Կուսակցութեան ուրիշ անդամներէն եւ կամ Ընդհանուր Գործադիր Քարտուղար մը կամ Քարտուղարներ:

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԳԼՈՒԽ Ա.

ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 1.- Նահանգային Վարչութիւնը կուսակցութեան Պատգամաւորական Ժողովին գումարման թուականը եւ տեղը պիտի ղեկուցանէ բոլոր Ակումբներուն գրաւորապէս, որոշուած թուականէն առ նուազն ամիս մը առաջ:

ՅՕԴ. 2.- Արտասովոր Պատգամաւորական Ժողով կարելի է գումարել:-

Ա.- Երբ Նահանգային Վարչութիւնը պէտք տեսնէ, բոլոր մեծամասնութեամբ:

Բ.- Երբ Շրջանակին Ակումբներու մեծամասնութիւնը գրաւորապէս կը պահանջէ:

ՅՕԴ.- 3.- Արտասովոր Պատգամաւորական Ժողովի ղեկուցումը պիտի հաղորդուի Ակումբներուն՝ Ժողովի թուականէն առ նուազն ամիս մը առաջ եւ պէտք է կրէ Նահանգային Վարչութեան գոնէ հինգ անգամներուն ստորագրութիւնը: Զեկույցին մէջ պէտք է որոշակի յիշուի Ժողովին նպատակը:

Արտասովոր Պատգամաւորական Ժողովները իրենց մասնաւոր նպատակը իրագործելէ յետոյ՝ կրնան ուրիշ խնդիրներով ալ զբաղիլ պատգամաւորներու մեծամասնութեան հաւանութեամբ:

ՅՕԴ.- 4.- Իւրաքանչիւր Ակումբ պատգամաւոր կրնայ ընտրել իր տեղական անդամներէն եւ կամ ուրիշ Ակումբի մը պատկանող անդամներէ:

ՅՕԴ. 5.- Իւրաքանչիւր պատգամաւոր կրնայ ներկայացնել միայն մէկ ձայն:

ՅՕԴ. 6.- Պատգամաւորներ կ'ընտրը-

ւին հետեւեալ համեմատութեամբ: 5-էն մինչեւ 50 անգամ ունեցող Ակումբ մը կը զրկէ մէկ պատգամաւոր, 51-էն 100 անգամ ունեցողը՝ երկու պատգամաւոր, 101-էն 150 անգամ ունեցողը՝ երեք պատգամաւոր, 151-էն 200 անգամ ունեցողը՝ չորս պատգամաւոր, եւ այսպէս իւրաքանչիւր յաւելուածական 50 կամ նուազ անգամի համար մէկ պատգամաւոր աւելի:

ՅՕԴ. 7.- Պատգամաւորները Ժողովի ղիւանին պէտք է ներկայացնեն գրաւոր յանձնարարական մը, ստորագրուած եւ կնքուած Ակումբի Ատենապետին ու Ատենադպրին կողմէ:

ՅՕԴ. 8.- Պատգամաւորական Ժողովը,

Ա.- կը քննէ պատգամաւորներուն վկայագրերը:

Բ.- Կ'ընտրէ Շրջանակիս Նահանգային Վարչութիւնը:

Գ.- կը պահանջէ, կը ստանայ եւ կը վաւերացնէ Նահանգային Վարչութեան Դիւանին, Գանձապետին եւ ուրիշ պաշտօնեաներուն տեղեկագիրները:

Դ.- կը քննէ, կը դատէ Նահանգային Վարչութեան անդամները եւ կամ ուրիշ սեւէ պաշտօնեայ եւ ի հարկին կ'արտաքսէ:

Ե.- Իրը Շրջանակիս Գերագոյն Ատենան՝ կը վերաքննէ Նահանգային Վարչութեան վճիռները:

Զ.- Կրնայ բարեփոխել Սահմանագրութիւնն ու Կանոնադիրը եւ նոր օրէնքներ ու կանոններ գծել, եւ Կուսակցութեան վերաբերեալ խնդիրներուն մէջ ընել այն ամէն տնօրինութիւնները, որոնք իր իրաւասութեան սահմանին մէջ կ'ընեն:

ԳԼՈՒԽ Բ.

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

307. 1.- Նահանգային Վարչութիւնը իր անդամներէն դադանի քուէով կ'ընտրէ Ատեմապետ, Փոխ-Ատեմապետ, Ատեմադպիր եւ Գանձապահ:

307. 2.- Տարուան ընթացքին եթէ Նահանգային Վարչութեան անդամներէն մէկը կամ աւելին հրաժարին կամ պակսին, անոնց կը յաջորդեն Պատգամաւորական Ժողովի ընտրական ցանկին վրայ յաջորդ առաւելագոյն քուէ ստացողները:

307. 3.- Նահանգային Վարչութեան վերին հսկողութեան ու պատասխանատուութեան տակ կը հրատարակուին Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին պաշտօնաթերթը եւ ուրիշ հրատարակութիւնները:

307. 4.- Նահանգային Վարչութիւնն ինք կամ իրմէ նշանակուած Քարտուղարութիւնը կը կատարէ Կուսակցութեան պաշտօնական բոլոր թղթակցութիւնները թէ չըջանակիս եւ թէ արտասահմանի Ակումբներուն ու տարբեր մարմիններու հետ:

307. 5.- Նահանգային Վարչութեան պաշտօնն է,

Ա.- Պատգամաւորական Ժողովին կողմէ քուէարկուած որոշումներն ու օրէնքները գործադրել:

Բ.- Միջոցներ տնօրինել Կուսակցութեան գործերուն բարեօք կատարումին, եւ իր արամադրութեան տակ զըրուած գումարներուն արդիւնաւէտ գործածութեան համար:

Գ.- Վարձել ու աճակել Կուսակցութեան բոլոր պաշտօնեաները, Քարտուղար, Ոմրագիր, Գործիչ, Գործակատար, Ներկայացուցիչ, եւլն.:

Դ.- Պարբերաբար, մասնաւոր չըջարեականներով, Ակումբները տեղեակ

պահել Կուսակցութեան ընդհանուր գործունէութեան:

Ե.- Քննել Կուսակցութեան անդամներուն դէմ բերուած ամբաստանութիւնները եւ ըստ այնմ պէտք եղած տնօրինութիւններն ընել:

Զ.- Ի հարկին ստանձնել եւ մատակարարել Ակումբներէն որեւէ մէկուն պաակտնող գրամները, կալուածներն ու գոյքերը:

307. 6.- Նահանգային Վարչութիւնը իր բոլոր Ժողովներուն եւ որոշումներուն արձանագրութիւնները պէտք է յատուկ տետրակի մը մէջ պահէ Դիւանին կողմէ ստորագրուած: Պիտի պահուին նաեւ թղթակցութեանց պատճենները:

307. 7.- Նահանգային Վարչութեան անդամները հաւաքաբար եւ անհատաբար պատասխանատու են Պատգամաւորական Ժողովին: Անոնք պարտին ներկայ գրուել Պատգամաւորական Ժողովի նիստերուն, եւ Դիւանը կամ Քարտուղարը՝ Վարչութեան տարեկան գործունէութեան գրաւոր անդեկագիրը ինչպէս նաեւ Գանձապահին հաշուեկշիռը կը ներկայացնէ Ժողովին:

307. 8.- Նահանգային Վարչութեան անդամները կը մասնակցին Պատգամաւորական Ժողովի գործառնութիւններուն, առանց քուէի իրաւունքի:

307. 9.- Նահանգային Վարչութեան անդամները կարող են ոեւէ Ակումբի ձայն ներկայացնել Պատգամաւորական Ժողովին մէջ, բայց չեն կրնար քուէ տալ իրենց համարատուութեան վերաբերեալ խնդիրներու մէջ:

307. 10.- Նահանգային Վարչութիւնը իր արամադրութեան տակ պէտք է ունենայ Շրջանակիս Ակումբներուն եւ անոնց անդամներուն կատարեալ ցանկը սպաւորուած քարտերու զրութեամբ:

307. 11.- Նահանգային Վարչու-

թեան անդամ ընտրուող իւրաքանչիւր ընկեր պարտի Պատգամաւորական Ժողովին առջեւ ուխտել հաւատարմութիւն կուսակցութեանս սկզբունքներուն ու չահերուն:

ԳԼՈՒԽ Գ.

ԴԻԻԱՆ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՅՕԴ. 1.- Ատենապետը՝ անոր րացակայութեան Փոխ-Ատենապետը, պիտի նախագահէ Նահանգային Վարչութեան ժողովներուն, նաեւ պիտի կատարէ ուրիշ աշխարհի պարտականութիւններ, որոնց համար Վարչութիւնը իրեն հեղինակութիւն կու տայ:

ՅՕԴ. 2.- Ատենապետը Նահանգային Վարչութեան բոլոր ժողովներուն արձանագրութիւնը պիտի պահէ, աւանդապահ՝ պիտի ըլլայ կուսակցութեանս Սահմանադրութեան, կանոնադրին, Համաձայնագրերուն, թղթակցութիւններուն, եւ Կնիքին, նաեւ պիտի կատարէ Վարչութեան կողմէն իրեն յանձնուած ուրիշ գործեր:

ՅՕԴ. 3.- Գանձապետը կուսակցութեան անունով հաշիւ պիտի բանայ դրամատան մը հետ եւ հոն պիտի պահէ կուսակցութեանս անունով եւ անոր համար ստացուած ու հաւաքուած բոլոր դրամները: Գանձապետը՝ իբր երաշխաւորութիւն՝ պարտի տալ երաշխագիր մը (պոնտ): Պէտք է պահէ իր ստացած դրամորներուն ինչպէս նաեւ ծախսերուն ճշգրիտ եւ մաքուր հաշիւը: Իր պաշտօնը աւարտի եւ կամ երբ դադարի պաշտօնավարելէ, իր յաջորդին պիտի յանձնէ գրաւոր հաշիւ մը վաւերացուած վկայեալ հաշուեքննիչի մը կողմէ, զոր պիտի նշանակէ Նահանգային Վարչութիւնը:

ԳԼՈՒԽ Դ.

ԱԿՈՒՄԲՆԵՐ

ՅՕԴ. 1.- Ազգային Ռամկաւարական կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին պատկանող սեւէ Ակումբ պէտք է առ նուազն բաղկացած ըլլայ հինգ անդամներէ:

ՅՕԴ. 2.- Նորակազմ Ակումբ մը օրինաւոր զոյութիւն կը ստանայ այն տան միայն, երբ անոր կազմութիւնը Նահանգային Վարչութենէն կը վաւերացուի:

ՅՕԴ. 3.- Ակումբի Վարչութիւնը կ'ընտրուի անդամոց զաւանի քուէարկութեամբ եւ իր պաշտօնը կը տեսէ մէկ տարի: Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր Դիւանը:

ՅՕԴ. 4.- Վարչութեան պակսած անդամներուն կը յաջորդեն ընտրելիներու ցանկին վրայ յաջորդ առաւելագոյն քուէ ստացողներ:

ՅՕԴ. 5.- Իւրաքանչիւր Ակումբի Վարչութիւնը պատասխանատու է թէ իր Ակումբին եւ թէ Նահանգային Վարչութեան:

ՅՕԴ. 6.- Ակումբները պարտաւոր են երեք ամիսն անգամ մը կանոնաւոր տեղեկագիր դրկել Նահանգային Վարչութեան՝ ստորագրուած ու կնքուած Դիւանին կողմէն:

ՅՕԴ. 7.- Անդամներու հրաժարականները ընդունելու կամ մերժելու իրաւասութիւնը կը պատկանի Ակումբին Անդամական Ժողովին:

ՅՕԴ. 8.- Եթէ կարելի չըլլայ բարեկամաբար կարգադրել վէճերը որ կը ծագին ընդմէջ Վարչութեան անդամներուն, Ակումբի անդամներուն եւ կամ Վարչութեան ու Ակումբին միջեւ, որոնք պիտի յանձնուին Նահանգային Վարչութեան,

որուն վճիռը պարտաւորիչ պիտի ըլլայ ըստ կողմերուն համար մինչեւ Պատգամաւորական ժողով:

ՅՕԴ. 9.- Ակումբը լուծուած կը համարուի երբ իր անդամոց թիւը հինգէն պակաս է. մնացեալ անդամները կրնան մօտակայ Ակումբին միանալ եթէ կայ՝ կամ իրենց յարարերութիւնը պահել նահանգային Վարչութեան հետ մինչեւ յաջողին նոր անդամներու յաւելումով կըրկին կազմել օրինաւոր Ակումբ մը:

ԳԼՈՒԽ Ե.

ԱԿՈՒՄԲԻ ԺՈՂՈՎՆԵՐ

ՅՕԴ. 1.- Ակումբի տարեկան ժողովը՝ Սեպտեմբեր 1-ի Պատգամ. ժողովի համարատուութեան ու տեղեկագրութեան համար՝ պիտի գումարուի Օգոստոս ամսուն առաջին շաբթուան մէջ:

ՅՕԴ. 2.- Առենապետը իրաւունք ունի արտասովոր նիստի հրաւիրել Ակումբը: Անոր բացակայութեան Փոխ-Առենապետը կամ Վարչութեան անդամներու մեծամասնութիւնը կրնայ ժողով գումարել: Արտասովոր ժողով ծանուցանող զեկոյցին մէջ պէտք է յիշուի ժողովին տեղը, ժամանակը եւ նպատակը: Այդ մասնաւոր նպատակէն դուրս ուրիշ որեւէ գործ կամ խնդիր նկատի չառնուիր արտասովոր նիստերու մէջ:

ՅՕԴ. 3.- Երեք շաբաթը անդամ մը տեղի կ'ունենայ Անդամական կանոնաւոր ժողով, որուն զեկոյցը կը հաղորդուի Ակումբի անդամներուն գրաւորապէս, առ նուազն երեք օր առաջ:

ՅՕԴ. 4.- Անդամական ժողովը օրինաւոր կը նկատուի երբ անդամներու կէսէն աւելին ներկայ է:

ՅՕԴ. 5.- Երբ ժողովը օրինական թիւը չի լրացներ, երկրորդ գումարման ժամանակ ներկաներուն թիւը օրինական

կը համարուի: Որոշումները մեծամասնութեամբ կը տրուին եւ պարտաւորիչ են ըստ անդամներուն:

ԳԼՈՒԽ Զ.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՅՕԴ. 1.- Կուսակցութեան անդամակցել 18 տարեկանէն վեր հայեր՝ առանց սեռի խտրութեան, պայմանաւ որ վկայեալ ըլլան իրրեւ նկարագրի տէր անձինք ու չի պատկանին ուրիշ քաղաքական կուսակցութեան:

ՅՕԴ. 2.- Նոր անդամներ կ'ընդունին Ակումբի Անդամական ժողովի հաւանութեամբ եւ առանց ներկայութեամբ կատարուած ուխտով:

ՅՕԴ. 3.- Նոր անդամները պարտին վճարել մուտքի տուրք մը, որուն քանակը իրենք կ'որոշեն: Իւրաքանչիւր անդամ պարտի վեց աօլար վճարել իր Ակումբին իրր տարեկան անդամատուրք: Անդամատուրքը ամբողջութեամբ պէտք է ղրկուի Նահանգային Վարչութեան: Անդամատուրքէ զերծ են այն անդամները, որոնց նիւթական անձկութիւնը կը հաստատուի տեղական Ակումբին կողմէ, ինչպէս նաեւ ուսանողները:

ՅՕԴ. 4.- Իւրաքանչիւր անդամ պարտի Կուսակցութեան գէթ մէկ պաշտօնական թերթին բաժանորդագրուիլ: Երբ բնականիքի մը մէջ մէկէ աւելի բնիկները գտնուին մէկ բաժանորդագրութիւն բաւական պիտի ըլլայ այս պայմանը լրացընելու:

ՅՕԴ. 5.- Իւրաքանչիւր անդամ պարտի լեզնեւ հարցաբան մը որ կը մնայ Ակումբի քարտուղարին մօտ:

ՅՕԴ. 6.- Իւրաքանչիւր անդամ պարտի հնազանդիլ կարգապահութեան եւ պաշտնապահութեան օրէնքներուն:

ՅՕԴ. 7.- Անդամները կրնան Ակումբ-
բէ Ակումբ փոխադրուիլ Վարչութեան
գրաւոր յանձնարարականով:

ՅՕԴ. 8.- Կուսակցութեան անդամ
ըլլալէ վերջ, իւրաքանչիւր անդամ պար-
տի ստանալ անդամակցութեան քարտ մը,
ստորագրուած Վարչութեան Ատենայե-
տէն եւ Ատենադպիրէն եւ կնքուած Ա-
կումբի կնիքով:

ԳԼՈՒԽ Է.

ՏԻԿՆԱՆՑ ԱԿՈՒՄԲՆԵՐ

ՅՕԴ. 1.- 18 տարեկանէն վեր կիներ
կրնան Ակումբներու անդամակցիլ այր
մարդոց հաւասար իրաւունքներով:

ՅՕԴ. 2.- Կին անդամներու տարեկան
անդամատուրքը առ նուազն երկու տօլար
է:

ՅՕԴ. 3.- Տեղական պայմաններու
համեմատ կիներ կրնան իրենց առանձին
Ակումբները ունենալ առանձին վարչու-
թիւններով:

ՅՕԴ. 4.- Տիկնանց Ակումբներ կրնան
իրենց պատգամաւորներն ունենալ պա-
տմաւորական ժողովին մէջ, ինչպէս
այլերու Ակումբներ՝ անդամներու թուոյն
միւլենոյն համեմատութեամբ (Տէս Գլ.
Ա. Յօդ. 6):

ՅՕԴ. 5.- Տիկնանց Ակումբները
եթէ ուզեն, կրնան տեղւոյն այլերու Ա-
կումբին հետ խառն ժողով գումարել եւ
միասին ընարել պատգամաւոր:

ԳԼՈՒԽ Ը.

ԵՆԹԱ. - ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 1.- Կուսակցութեան Ամերի-
կայի Ակումբները շրջանակներու կը բաժ-
նուին աշխարհագրական յարմարութիւն-
ներու համեմատ:

ՅՕԴ. 2.- Շրջանակի մը Ակումբները
տարին անգամ մը կը գումարեն Շրջանա-
կային ժողով, որ կը զբաղի իրենց Շրջա-
նակին մէջ Կուսակցութեան յառաջդի-
մութեան վերաբերեալ խնդիրներով:

ՅՕԴ. 3.- Շրջանակային ժողովը
կ'ընտրէ Ենթա-Նահանգային Վարչութիւն
մը՝ իրբեւ Գործադիր Մարմին նոյն շրջ-
նակին:

ՅՕԴ. 4.- Ենթա-Նահանգային Վար-
չութիւնը իր շրջանակին մէջ Ակումբնե-
րու զարգացման եւ Կուսակցութեան դու-
րունէութեան ծաւալման համար՝ Նա-
հանգային Վարչութեան Ենթակայ դու-
րակից մարմին մըն է, եւ անոր պատաս-
խանատու:

ՅՕԴ. 5.- Շրջանակային ժողովը իր
Շրջանակին Ակումբներուն համար կը
զծէ կանոնադիր մը եւ կ'ընէ ուրիշ անո-
րի նութիւններ, պայմանաւ որ անոնք չի
հակասեն Կուսակցութեան Սահմանա-
դրութեան եւ Հիմնական Կանոնադրին:

ՅՕԴ. 6.- Ենթա-Նահանգային Վար-
չութեան րնթացիկ ծախքերուն համար
Շրջանակային ժողովը կը քուէարկէ
սխառէ մը, որ պիտի հոգացուի նոյն
շրջանակին Ակումբներէն:

ՅՕԴ. 7.- Ենթա-Նահանգային Վար-
չութիւնը պարտաւոր է՝ իր շրջանակի
գործունէութեան մասին վեց ամիսն ան-
գամ մը կամ պահանջուած ատեն տեղե-
կագիր գրկել Նահանգային Վարչութեան:

ՅՕԴ. 8.- Ենթա-Նահանգային Վար-
չութիւնը կրնայ՝ իր շրջանակին համար
առեւմտայէս գործիչ վարձել՝ Նահանգա-
յին Վարչութեան գիտութեամբ եւ հաւա-
նութեամբ:

ՅՕԴ. 9.- Նահանգային Վարչու-
թիւնը իրաւունք ունի լուծել Ենթա-Նա-
հանգային Վարչութիւնը՝ եթէ վերջինը
Կուսակցութեան սկզբունքներուն եւ շա-
հերուն հակառակ րնթացքի մը մէջ գըա-

նուր: Այդ պարագային Նահանգային Վարչութիւնը ինք կը հրաւիրէ արտասովոր Շրջանակային Ժողովը նոր Ենթանահանգային Վարչութիւն մը ընտրելու:

ԳԼՈՒԽ Թ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՕԴ. 1.- Ուեէ անդամ որ չի հնազանդիր Նահանգային Վարչութեան հրահանգներուն, որ չի մտարեր իր տուրքերը, որ Կուսակցութեան օրէնքները կ'ոտնակոխէ, պիտի կախակայուի, դատաւարատուի եւ արտաքսուի:

ՅՕԴ. 2.- Կուսակցութեան սկզբունքներուն դէմ գործող եւ դալթակղեցուցիչ ընթացք ցոյց տուող ուեէ անդամ նախապէս կ'ազդարարուի եւ յետոյ Ակումբի վճիռով կ'արտաքսուի Կուսակցութենէն, եթէ ազդարարութիւնը ապարդիւն մնայ:

ՅՕԴ. 3.- Այն անդամները որ դիտակցարար եւ չարամտօրէն Կուսակցութեան գաղանիքները դուրս կու տան ի սպառ կ'արտաքսուին Կուսակցութենէն:

ՅՕԴ. 4.- Եղեռնական ոճիրներով դատաւարտուած անհատ մը եւ համբաւով ու նկարագրով վնասարեւ հայ մը Կուսակցութեան անդամ չընդունուիր:

ՅՕԴ. 5.- Երբ Նահանգային Վարչութեան անդամ մը իր պաշտօնավարու-

թեան չըջանին Կուսակցութեան սկզբունքներուն դէմ դալթակղեցուցիչ ու անհաւատարիմ ընթացքի մը մէջ գտնուի, անմիջապէս պէտք է չէզոքացուի իր պաշտօնէն: Վարչութեան միւս անդամները կը կողմեն ընկերական առեան մը եւ առժամեայ կերպով կը դատաւարտեն զայն, մինչեւ որ Պատգամաւորական Ժողովը այդ վճիռը վերաքննելով վաւերացնէ կամ բեկանէ:

ՅՕԴ. 6.- Դատաւարտուած Նահանգային Վարչութեան անդամ մը կ'արտաքսուի նաեւ այն Ակումբէն որուն կ'անդամակցի:

ՅՕԴ. 7.- Նահանգային Վարչութենէն հրաժարող կամ դատաւարտուող անձերու մասին կը ծանուցուի անգային Ակումբներու եւ ուրիշ արտասահմանեան շրջանակներու:

ՅՕԴ. 8.- Ուեէ անդամի արտաքսման որոշումը կրնայ վերաքննուիլ Նահանգային Վարչութեան կողմէ, եթէ արտաքսուած անդամը իր խնդիրը ներկայացնէ անոր իր արտաքսման թուականէն մինչեւ երեսուն օր:

ՅՕԴ. 9.- Նահանգային Վարչութեան հրահանգներուն ու կարգադրութեան դէմ հետող Ակումբ մը առժամապէս կը դադրեցուի ամէն յարաբերութենէ մինչեւ Պատգամաւորական Ժողովը, որ քննելով խնդիրը վերջնական վճիռը կու տայ:

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ
ՀԵՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԾՐԱԳԻՐ ՎԵՐ. ՀՆՁ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ*

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը Թուրքիոյ սահմանադրական նոր ռէժիմի հարկադրած նոր պայմաններուն եւ պահանջներուն ի լրացումն, Հայ հասարակութեան կու գայ ներկայացնել յետագայ Ծրագիրը, որ պիտի ծառայէ իբրեւ ուղեգիծ՝ Վերակազմեալ Հնչակեան շրջանակներու նոր գործունէութեան:

Մեր Կուսակցութիւնը իր երկար տարիներու գոյութեան ընթացքին Հիմնական ծրագրէն միշտ ի բաց թողած ըլլալով ընկերվարական (socialistic) եւ ռաւական (democratic) վարդապետութիւնները կամ նմանօրինակ միջազգային աշխարհահայեցողութիւնները, այսուհետեւ ալ պիտի շարունակէ գործել նոյն հիման վրայ, եւ իբրեւ գլու ազգային-ֆաղափական Կուսակցութիւն, իր սեւեռուն ուշադրութիւնը պիտի նուիրէ մեր ազգին դարաւոր իրաւանց պահպանմանը, եւ վարչական, կրթական, եկեղեցական, լեզուական, պատմական, գրական ու տնտեսական հաստատութեանց եւ իրաւանց բարգաւաճմանը՝ սահմանադրական նոր ոգիով: Պիտի շեշտենք հոս, որ մեր Կուսակցութիւնը չի դաւանիր քէ ինքնին վնասակար վարդապետութիւններ եւ ընկերվարականութիւնը, բայց նոյն ատեն մենք համոզուած ենք քէ ֆաղափակրթութեան նախնական աստիճաններուն վրայ գտնուող ժողովուրդի մը մէջ - ինչպէս է մեր ազգը՝ ստուար մեծամասնութեամբ - գործող Կուսակցութեան մը աւագ պար-

տականութիւնը պէտք է ըլլայ՝ զբաղի գլու ազգային գոյութեան ու բարօրութեան յարակից խնդիրներով, առանց երբեք տկարացնելու մեր ուղեգիրը՝ միջազգային ընկերական կամ տնտեսական հարցերու բրօքականով:

Նկատելով՝ ուրեմն՝ որ Թուրքիոյ մէջ ազատական կառավարութեան մը վերջնական ու իրական հաստատումը եւ սահմանադրական օրինաց անխափան գործադրութիւնը առաւելապէս կախում ունի ֆաղափական Կուսակցութեանց եւ անոնց միջոցաւ՝ Հայ ազգին ամէն դասակարգերուն միաբան եւ միահամուռ ջանքերէն, մեր Կուսակցութիւնը պիտի աշխատի որ՝

Ա. Օսմանեան Սահմանադրութիւնը վերափնտրեալ կատարելագործուի, ազգերու իրաւանց հաւասարութեան, եւ զանազան ցեղերու ինքնուրոյն պահանջներուն եւ պէտքերուն գոհացման սկզբունքին վրայ յենով:

Բ. Այնքան ատեն որ սահմանադրական կառավարութիւն մըն է որ անաշունութեամբ կը վարէ Օսմանեան կայսրութեան գործերը, ու եթէ մասնաւորաբար Հայկական Գաւառներուն մէջ միանգամ ընդ միշտ վերջ գտնէ հարստահարութեան, կոտորածի ու սարսափի տիրապետութիւնը, մեր Կուսակցութիւնը անջատողական ոգի չկարենալով ունենալ՝ պիտի հրաժարի միջազգային դաշնագրերով Հայոց երաշխարուած իրաւունքներէն: Տանկահայաստանը Օսմանեան կայսրութեան անբաժանելի մասը ճկատելով հանդերձ, մենք պիտի աշխատինք որ տակաւ, Հայկական Գաւառները վայելեն տեղական ինքնավարութիւն, վարչական, կրթական ու օրէնսդրական գործերու մէջ:

* Կ'արտատպենք 1916-ին Պոսթոն լոյս տեսած «Ծրագիր-Կանոնագիր»էն, որ կը վերաբերի Վ.Հ.Կ.ի Ամերիկայի մասնաճիւղերուն: Ասիկա բարեփոխումն է այն ծրագրային ուրուագիծին, որ լոյս տեսած է «Զայն Հայրենեաց»ին նոր շրջանի Ա. թիւով, Պոլիս, 23 Հոկտ. 1908:

Գ. Նախկին բռնակալ եւ տաքբաղադրիչ վարչութեան վերադարձի ոեւէ փորձ՝ կանխօրէն դատապարտելի է մեր կուսակցութեան կողմէ. այս նկատումով՝ պարտք կը դնենք իւրաքանչիւր Վերակազմեալ Հնչակեանի վրայ, ամէն կերպով մաքառիլ այդ կարգի պատահականութեան մը դէմ, ու ժողովուրդի ամէն խաւերը պատրաստել, ամէն գնով պաշտպանելու համար Ազատութիւնը եւ Սահմանադրութիւնը:

Դ. Սահմանադրական ազատ ընտրիմ տաքբաղական արտայայտութիւններ կը համարինք խօսքի, մամուլի, դաւանանքի, ժողովներու եւ ընկերակցութեանց կազմութեան ազատութիւն, անձի եւ բնակարանի անձեռնմխելիութիւն, քղաքականութեանց ազատութիւն, տեղափոխուելու դէմ դրուած արգելքներու վերացում, Ոսմանեան ներքին գաւառներու համար հաստատուած անցագրերու ջնջում, եւ այլն:

Ե. Բացի վերագրեալ տաքբաղական պահանջներէն, Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը պիտի աշխատի նաեւ որ Ազգային Սահմանադրութեամբ երաշխաւորուած մեր Ազգային Վարչական առանձնայատուկ հաստատութիւնները եւ առանձնաշնորհեալ իրաւունքները անխաթար պահպանուին եւ կատարելագործուին, ազատական նոր ոգւով:

Զ. Մեր կուսակցութիւնը կը դաւանի թէ՛ Օսմ. պետութեան բոլոր ազգութիւնները արտաքին վտանգի մը դէմ մայր հայրենեաց պաշտպանութիւնն ստանձնելու պարտաւոր ըլլալով, Հայերն ալ պէտք է մասնակցին զինուորական ծառայութեան, կատարելով իրենց զինուորի պարտականութիւնը բարեկարգեալ զինուորական վարչութեան մը տակ:

Է. Մեր այս պատրաստակամութեան փոխարէն կուսակցութիւնը կը պահանջէ որ Համիտիէյի հայաջինջ գունդերը ցր-

ւին եւ զինաքափ ըլլան, խաղաղութեան ժամանակ զօրայտութիւնը իրենց պատկանեալ գաւառներուն մէջ ծառայեն, Հայ զինուորներու ազգային սովորութիւնները յարգուին եւ իսլամ ու քրիստոնեայ գունդերուն միջեւ ոեւէ խտրութիւն չի դրուի:

Ը. Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան իւրաքանչիւր անդամ պարտաւոր է իր շրջանին մէջ բրօքականութիւնը եւ աշխատիլ՝ որպէսզի ազատական ու անկաշառ անձնաւորութիւն միայն երթան Օսմ. հորհրդարան: Ընտրութիւններէն վերջ ալ իւրաքանչիւր ընկերի պարտքն է՝ ուշի ուշով հետեւիլ խորհրդարանական գործունէութեան եւ սահմանադրական ու անխտրական ոգիի հակառակ ոեւէ արարք մատնանիշ ընելով դատապարտել:

Թ. Գրաւուած հողերու եւ ինչքերու վերադարձումը, Հայկական կոտորածներու առթիւ յանցապարտ նանչցուած պաշտօնէից շնորհագրկումը, միւլապէս ամենէն աւելի վնասուած գաւառներուն դրամական հատուցում՝ կառավարութեան կողմէ, եւ բոլոր այս կարգի պահանջներ մեր կուսակցութեան կողմէ պիտի պաշտպանուին:

Վարչութիւնն այն հաւատքը ունի թէ՛ Հայ քաղաքական մարմինները այլեւս մէկդի ձգած՝ նախկին կուսակցական մրցակցութիւններն ու ատելութիւնները, միահամուռ ճիգով պիտի աշխատին տանկահայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան եւ ինքնագիտակցութեան դժուարին գործն ի գլուխ հանելու, ու Օսմ. կայսրութեան մէջ մշտնջենաւորելու համար սահմանադրական ու անխտրական ընտրիմ մը:

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆԶ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ *

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հասած է մեր ազգին ազատութեան օրը, հինգ դարերու ստրկութենէն վերջ:

Կրնանք ըսել թէ այլ եւս մեր ձեռքը պիտի ըլլայ Հայաստանի բախտը, անկա պիտի ձեռակերպուի հայրենասէր Հայերու եւ Հայուհիներու հաւաքական ջանքովը, այսինքն կազմակերպեալ գործունէութեամբը:

Կազմակերպեալ ոյժերով միայն կարելի է լուսաւոր ուղղութիւն մը տալ հանրային կարծիքին եւ ձեռնարկներու, յաջողապէս վարել վերաշինութեան ընդարձակ եւ ահագին գործը, շէնցնել եւ ծաղկեցնել մեր հայրենի աշխարհը, եւ վերջապէս կատարել Հայութեան պատմական դերը Արեւելի մէջ, իբրեւ ռահ-վիրայ քաղաքակրթութեան, եւ իբրեւ թարգմանը Արեւմուտի բարձրագոյն իտէւաներուն:

Այս նկատումներով՝ ստորագրեալներս հիմնեցինք կազմակերպութիւն մը, որպէսզի կարենանք անոր միջոցով արտայայտել եւ գործադրել այն քաղաքական եւ ընկերական սկզբունքները, որոնք կը համապատասխանեն մեր ազգի այսօրւան եւ վաղուան անխուսափելի պէտքերուն:

* 1918 Նոյ. 18-ին Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ կը կազմուի Հայ Ազատական Կուսակցութիւնը, Տուեալ օրուան ժողովականները կ'ընտրեն յանձնախումբ մը, որուն կը վիճակուի բարեփոխել «Ծրագրին ինչ-ինչ մասերը», Յանձնախումբը իր մշակած ուրուագիծը կ'որոշէ ենթարկել Հիմնադիրներու հաւանութեան եւ վաւերացումին՝ 26 Նոյ. 1918-ին գումարուելիք նիստի մը ընթացքին:

Ներկան՝ այդ մշակուած ուրուագիծն է:

Ա Ն Ո Ւ Ն

Այս կազմակերպութիւնը կը կոչուի Հայ Ազատական Կուսակցութիւն:

Ն Պ Ա Տ Ա Կ

Հայ Ազատական Կուսակցութեան նպատակն է.

Հայաստանի ազատութիւնը ձեռք բերել եւ անոր վերաշինութեան օժանդակել:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Այս կուսակցութեան ներկայ եւ անմիջական ծրագիրը պիտի կազմէ հետեւեալը. -

1. Անկախ Հայաստանի աշխարհագրական սահմաններուն մէջ պէտք է պարունակուին.

ա. Ռուսական Հայաստանը,

բ. Պարսկական Հայաստանը,

գ. Թրքական Հայաստանը, այսինքն՝ Վան, Կարին, Բաղէշ, Խարբերդ, Տիարպէֆիք, Սեբաստիա, Կիլիկիա եւ Սեւ Ծովուն վրայ նաւահանգիստ մը:

2. Հայաստանի ամբողջութիւնն ու ապահովութիւնը պէտք է երաշխաւորուին Մեծ Պետութիւններէն, իսկ խնամակալութիւնը պէտք է 25 տարուան համար դրուի Ամերիկայի Միացեալ Նահանգաց ձեռքը: Եւ այս հիման վրայ ոյժ տալ Ազգային Պատուիրակութեան գործունէութեանց:

3. Հայաստանի կառավարութեան ձեւը ըլլալով հանրապետական, ընտրութիւնները պէտք է ըլլան ընդհանուր գաղտնի քուէարկութեամբ, երկսեռ քաղաքացիներու կողմէ:

4. Պէտք է միջոցներ ձեռք առնուին ափսոսանքի Հայերը վերադարձնելու, եւ զանազան Հայաստան տեղաւորելով արդիւնաբեր աշխատութեանց առաջնորդելու: Պէտք է անոնց բաշխուին պետական հողեր՝ անձնական բնակութեան եւ մշակութեան համար: Պէտք է դրամական փոխատուութիւններ ըլլան կարօտ երկրագործներու եւ արհեստաւորներու:

5. Պէտք է ազատագրուին եւ Հայաստանի մէջ խնամուին այն կիները եւ տղաքները որ տեղահանութեան միջոցին մահմետականներու ձեռքը ինկած են, եւ ինքնապահութեան հասցուին:

6. Պէտք է քաջալերել տարաբնակ Հայերու Հայրենիք վերադարձը:

7. Պէտք է պաշտպանուի ընկերային արդարութիւնը Հայաստանի մէջ: Պէտք է հաւասարապէս յարգուին Աշխատանքի եւ Դրամագլխի իրաւունքները: Գործաւորը պէտք է ապահովուի հիւանդութեան եւ արկածի հետեւանքներու դէմ:

8. Պէտք է նախնական կրթութիւնը ըլլայ ձրի, եւ 6-էն 16 տարեկան մանչերու եւ աղջիկներու համար պարտադրական: Հանրային նախնական դպրոցներու մէջ մաս պիտի կազմէ կրօնքի ուսուցումը աշակերտներու ընտանեկան դաւանանքին համաձայն:

9. Կրօնական դաւանանքը, մամուլը եւ հրապարակային ժողովները պէտք է

վայելեն կատարեալ ազատութիւն, օրէնքի սահմանին մէջ:

10. Պէտք է փանչուին եկեղեցիներու եւ յարանուանութիւններու սեփականութեան իրաւունքները:

Պէտք է յարգուի Հայ եկեղեցւոյնու իրապետութեան կազմը եւ Ընդհանրական Կաթողիկոսին գերագոյն հեղինակութիւնը՝ իր եկեղեցւոյ հոգեւոր գործերուն եւ պաշտօնէութեան վրայ:

11. Պէտք է մասնաւոր հոգածութեան առարկայ ըլլայ հանրային առողջութիւնը: Պէտք է պաշտպանուին անտէրունչ հիւանդները, որբերը, այրիները, ծերունիները:

12. Զինուորական կրթութիւնը պարտաւորիչ ըլլալու է:

13.- Պէտք է Թիւրք Կառավարութենէն պահանջուի ափսոսանք կամ սպաննուած Հայերու նիւթական կորուստներուն փոխարինութիւնը:

14. Պէտք է Մեծ Պետութիւններէն պահանջուի որ Հայկական վերջին աղէտին պատասխանատու Թիւրք պաշտօնակալները եւ առաջնորդները դատուին զինուորական ատեանի մը առջեւ ու պատժուին:

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Պիտի ներկայացուի ժողովին)

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ*

Նպատակ

Հայ Ազատական Կուսակցութեան նպատակն է վերականգնումը հայ անկախ պետութեան եւ սեփական հայրենիքին, Պատմական Հայաստանի սահմաններուն մէջ, իր Մեծ Հայքով, փոքր Հայքով ու Կիլիկիայով:

Քաղաքական Յատկանիշ

Հայ Ազատական Կուսակցութեան ֆաղափական յատկանիշն է ազգայնականութիւնը, արդիական ու յառաջդիմական սկզբունքներու ու գաղափարներու համաձայն, որոնք քոյլ չեն տար որ հայ ազգային սեփականութիւններու եւ ազգային շահերու պահպանման նախանշաններու շուրջը տարուի այլամերժութեան եւ ուրիշ ազգութիւններու իրաւունքները ոտնակոխող սահմանները:

ԴԱԻԱՆԱՆՔ

Ա. Քաղաքական

Հայ Ազատական Կուսակցութեան ֆաղափական հիմնական * դաւանանքն է ժողովուրդին բացարձակ վեհապետութեան սկզբունքը, հիմնուած իւրաքանչիւր հայ ֆաղափացիի հաւասարութեան, ազատութեան եւ ֆուէրկութեան իրաւունքներուն վրայ, որոնք մշտնադաւանաբար պիտի ըլլան հայկական կառավարութեան սահմանադրութեամբը:

* Կ'արտատպենք Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւին մէջ գտնուող տպագիր փորձի մը հիմամբ, առանց կարենալ ստուղած ըլլալու թէ իբրեւ առանձին գրքոյկ լոյս տեսած է ան: Որոշ է թէ իր թուականով, որ անծանօթ է մեզի, կը յաջորդէ նախապէս տրուած ուրուագիծին:

Բ. Ընկերա-Տնտեսական

Հայ Ազատական Կուսակցութիւնը կը հաւատայ թէ ընկերային օրէնքներու եւ հաստատութիւններու գերագոյն նպատակն է հաւասար պատեհութիւն ընծայել անհատին ո՛չ միայն բարոյական ու մտաւորական, այլ եւ տնտեսական բարօրութեանը համար:

Կ'ընդունի թէ ազգին հաւաքական շահերը գերադաս են դասակարգային առանձնաշնորհումներէն եւ սրտովին համակիր է արդի ռամկավարական արդար աշխանջներուն, որոնք կը ձգտին օրէնքաւորութիւն միջոցներով, արգիլել անիրաւ շահագործութիւններն ու դասակարգային բռնատիրութիւնները, եւ յառաջացնել ընկերա-տնտեսական ապագայ այն տեսակ իրաւակարգեր, որոնց մէջ անհատին եւ ընկերութեան շահերը պիտի համերաշխին, փոխադարձ պարտքի եւ իրաւունքի սկզբունքի հիմին վրայ:

Բարեշրջական Յառաջացում

(Evolutionary process)

Հայ Ազատական Կուսակցութիւնը ֆաղափական եւ ընկերա - տնտեսական հողի վրայ բարեփոխութիւններ ձեռք բերելու համար՝ իր գործունէութեան իբր ուղղիչ կ'ընդունի բարեշրջութեան ներքին հղանակը, որ աստիճանական ու հաստատուն փայլերով պիտի տանի զինք դէպի անհատին ու հաւաքականութեան երջանկութիւնն ու բարօրութիւնը աւելցնող նոր նուաճումներ, հայ ժողովուրդին ֆաղափական ու ընկերա-տնտեսական գոյավիմակը գերծ պահելով բուն, տեսա ու անժամանակ փորձարկութիւններու յառաջ բերելիք վտանգաւոր վրդովումներէն եւ տակնուվրայութիւններէն:

Հայ Ազատական Կուսակցութեան

ֆաղափական եւ ընկերա-տնտեսական գործունէութիւնը բարեշրջութեան ոգիով՝ իրեն մեկնման կէտ պիտի ունենայ հիմնական սկզբունքներն ու հայեացքները, որ կը ներկայացուին իր ֆաղափական եւ ընկերա-տնտեսական դաւանանքներուն մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հայ Ազատական Կուսակցութիւնը ժողովուրդին վեհապետական իրաւունքը կ'ընդունի իբր հիմնադրել, որուն վրայ պիտի կանգնի Հայաստանի պետութիւնը:

Այդ իրաւունքին կիրարկումը պիտի ընդլայնուի հայ ժողովուրդին ֆաղափական ու իմացական դաստիարակութեան եւ հասունութեան աստիճաններուն հետ:

Ժողովուրդին կառավարութիւնը, եւ ո՛չ թէ ժողովուրդին մէկ մասին կառավարութիւնը, պիտի ըլլայ նշանաբանը եւ կարգախօսը հայ պետական հաստատութեան մասին ժողովուրդին տալիք իր դաստիարակութեան:

Ազատօրէն կատարուած ընդհանուր փութարկութեամբ մը երեւան եկած մեծամասնութեան իշխանութիւնը՝ պիտի ըլլայ ընդունելի ու օրինաւոր ամենուն համար, բայց այդ իշխանութիւնը չպիտի դիմէ բռնի միջոցներու, (յոգդելու համար փոքրամասնութեան ազատօրէն քննադատելու եւ օրինաւորօրէն արտայայտուելու անբռնաբարելի իրաւունքները):

Ժողովուրդին կառավարութիւնը պիտի մանչնայ ու յարգէ խօսքի, մամուլի եւ խղիի ազատութիւնը:

Պիտի մանչնայ ու յարգէ պաշտամունքի, երկրին մէջ ազատ երթ-եկութեան, քղթակցութեան, անձի, բնակարանի, համախմբումներու անբռնաբարելիութիւնը:

Ժողովուրդին վեհապետութեան մէջ՝ իւրաքանչիւր հայկական ֆաղափացի պիտի ունենայ սահմանադրութեամբ սահմանուած տարիքէն սկսած փութարկելու

ու փութարկուելու ժառանգական իրաւունքը, բացի այն պարագային՝ որ դատարանական վնիռով մը ֆաղափացի գրկուած ըլլայ ֆաղափային այդ իրաւունքներէն, իր գործած մէկ յանցանքին համար:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայ Ազատական Կուսակցութիւնը ազգայնականութիւնը կը նկատէ իբր անհրաժեշտ ու անխուսափելի ազդակը՝ ազատ ու անկախ հայ ազգ մ'ունենալու համար, որովհետեւ այդ վարդապետութիւնն է որ բոլոր հայ սրտերը սերտօրէն կապելով իրարու հետ, կը կապէ զանոնք հայկական պատմութեան, աւանդութեան ու հայրենի հողին, եւ անոնց մէջ ստեղծելով ու զօրացնելով այդ սեպհականութիւններուն պահպանման եւ զարգացման նախանձախնդրութիւնը, ո՛չ միայն կը յաջողի այդ սեփականութիւնները պահել արտաքին ռոնտգութիւններէ, խաթարումներէ ու յափշտակութենէ, այլ հայ ազգը կը դարձնէ արժանաւոր մրցակից մը՝ ուրիշ ազգութիւններու, իմացական ու ֆաղափակրթական յառաջդիմութեան տիեզերական շարժումին մէջ:

Ազգային անհատականութեան շեշտուած գաղափարը՝ հիմը կը կազմէ աշխարհի ազգութիւններուն ներկայացուցած յարաբերական դիրքին ու դասաւորումին, եւ որքան զօրաւոր ըլլայ ազգային անհատականութեան գաղափարին մշակումը՝ հայ ժողովուրդին մէջ, այնքան մեծ պիտի ըլլայ ամբողջութեան ունեցած կարողութիւններուն ու ուժերուն յայտնաբերումը՝ տնտեսական, մտաւորական ու բարոյական դաշտին վրայ:

Ազգային անհատականութիւններու մրցումը պիտի շարունակէ տիրել ազգերու կեանքին մէջ, ինչպէս անհատներու մրցումը պիտի շարունակէ անհատներուն մէջ: Այդ մրցումին մէջ չկոխկրտուելու եւ չնգմուելու համար՝ հայ ազգը պէտք

ունի իր բոլոր ուժերուն ներդաշնակ ու նուիրում զործակցութեան, հայ ինքնուրոյն հայրենիքը եւ անոր տնտեսական ու քաղաքական անկախութիւնը ունենալով իբր ամեն բանէ առաջ ու ամեն բանէ վեր նպատակակէտ: Ազգայնականութիւնն է որ պիտի տայ այդ ոգին:

Հայ Ազատական Կուսակցութիւնը ձգտելով պատմական Հայաստանի վերականգնումին՝ անոր իրականացումը կը նկատէ պսակումը ազգային արդար իդէալուն, հայկական հողերուն մասին, եւ չփաշտելու ծաւալողականութեան ու նուաճումի ռելէ՝ ձգտում, որ պիտի անիրաւէ ուրիշ ազգեր ու խլէ անոնց սեփականութիւնը:

Հայ Ազատական Կուսակցութիւնը հայ ազգային անհատականութեան անձեռնմխելի ու անբռնաբարելի իրաւունքներուն պէս անձեռնմխելի ու անբռնաբարելի կը նկատէ ուրիշ ազգութիւններու իրաւունքները, որոնց երաշխաւորութիւնը միջազգային դաշնագրով եւ ազգութիւններու զինակցութիւնով (league) կը ջատագովէ:

Հայ Ազատական Կուսակցութիւնը ազգութեան գաղափարը բնորոշելով էական ու առաջին ազգակը որ հայ ժողովուրդը պիտի վերածէ անբաժանելի ամբողջութեան մը, կրօնքը կը նկատէ խղիժ խնդիր մը եւ եկեղեցիին անջատումը պետութենէն կ'ընդունի անհրաժեշտ սկզբունք մը:

ԸՆԿԵՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ

Հայ Ազատական Կուսակցութիւնը կը մերժէ *Laissez faire*-ի աւանդական վարդապետութիւնը, որուն սանձարձակ կիրառութիւնը ընկերային շատ մը չարիքներու ծագում տուած է, եւ կ'ընդունի թէ ժողովուրդին կառավարութիւնը, իբրեւ ազգին օրինաւոր ու հարազատ ներկայացուցիչ՝ հեղինակութիւն ունի, հասարակաց բարիքին անունով, միջամտելու

անհատներուն եւ խմբակցութիւններուն այն գործունէութիւններուն, որ իրենց ընկերա-տնտեսական հետեւանքով՝ հանրային առողջութեան, հանրային բարեյականի եւ հանրային բարօրութեան համգամանք կը կրեն:

Կառավարութիւնը իրաւասութիւն ունի. տնօրինելու եւ մատակարարելու, իբր ազգին սեփականութիւնը, երկրին բնական հարստութիւնները - անտառներ, գետեր, լիճեր, հանքեր (?), եւայլն:

- Կանոնաւորելու վաճառականութիւնը, աշխատութեան եւ դրամագլխին փոխյարաբերութիւնները, հարտարարութեան արդիւնաբերութեան գործողութիւնները, իրենց զանազան երեւոյթներուն մէջ:

- Ղեկավարելու, ազգին հաշուոյն, հանրային մեծաշնորհները (public utilities) ինչպէս, թղթատարութիւն եւ հեռագիր, հեռախօս, փոխադրութեան միջոցներ, լոյս, ջուր, եւայլն:

Հայ Ազատական Կուսակցութիւնը կը յայտարարէ, թէ կեանքի, ազատութեան եւ երջանկութեան անձեռնմխելի իրաւունքը կ'ենթադրէ աշխատութեան ալ անբռնաբարելի իրաւունքը:

Կը յայտարարէ նաեւ, թէ արդիւնաբեր ծառայութիւնը, մտային կամ փիզիքական աշխատութեամբ՝ վարձատրութեան արդար հիմը կը կազմէ:

Կը ջատագովէ աշխատանքի ազգային ճրի պիւրօներ, իբրեւ կապ ու միջնորդ գործին եւ գործաւորին միջեւ, ջրնջելու համար անգործութենէն յառաջ եկած ընկերական ու տնտեսական չարիքները:



Իբրեւ հիմնական միջոց յիշեալ սկզբունքներու շուտափոյթ իրագործման, Հայ Ազատական Կուսակցութիւնը կը ջատագովէ հաստատութիւնը հանրային կրթական դրութեան մը, որ ազգին ծախքովը պարտաւորիչ նախնական դաստիար

քակութիւն աւանդէ նոր սերունդին, եւ միջնակարգ, ակադեմական, արհեստագիտական ու մասնագիտական բարձր կրթութեան ճրի բայց կամաւոր պատեհութիւնը՝ ամենուն:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Հայ Ազատական Կուսակցութիւնը հողային հարցին մէջ կ'ընդունի անհատական սեփականատիրութեան իրաւունքը, բայց նոյն ատեն կը պահանջէ որ անհատներ եւ խմբակցութիւններ արգիլուին ընդարձակ հողեր սեփականացնել գուտ շահագիտական նպատակներու համար:

Հայ Ազատական Կուսակցութիւնը կը յայտարարէ թէ ազգի մը պետական սահմաններուն մէջ պարփակուած հողը տեսականօրէն ամբողջ ազգին հաւաքական ժառանգութիւնն է, եւ կը պահանջէ որ այս ուղարկութիւնը օրէնքով ցանցուի:

Թէ ամեն հողակալ բազմալիւն ներկայ օրէնքներուն նուիրակներէս միայն արտօնուած սեփականատէր վարձակալ մըն է ազգային-ընկերական այդ ժառանգութեան՝ պայմանաւ անշուշտ որ ան յօժար ըլլայ աւանդապահի մը պայմանները հաւատարմօրէն լրացնել, արդիւնագործելով իրեն վիճակած հողամասը: Թէ մարդկային ամեն տեսակ անձնական ջանքի եւ հնարած գիտութեան արդիւնք՝ գործակցութեամբ բնական տարրերու - հողին, ջուրին, օդին եւ արեւին - կը վերաբերի բացարձակապէս ջանադիր անհատին կամ խմբակցութեան, բայց հողը՝ արհեստական արտադրութիւն մը չըլլալով՝ չկրնար տարաւերժօրէն անհատներու *բացարձակ* սեփականութիւնը դառնալ, առանց փոխ-հատուցում մը ընելու ընկերութեան այդ բացառիկ առանձնաշնորհումին համար:

Թէ անհատներու կամ խմբակցութիւններու կողմէն՝ հողին բացարձակ մեծաշնորհ ընկերական արդարութեան

արդի գիտական ըմբռնումներուն վրայ հիմնուած չէ, այլ պատմական մէկ հետեւանքն է ոյժի յաղթանակիչ բռնապետութեան, եւ յայտնի անիրաւութիւն մը՝ ապագայ սերունդներուն:

Նկատելով որ հողին մշակութիւնը բնական եւ նախնական անհրաժեշտ միջոցն է արդիւնաբերութեան, եւ անհատին ինչպէս նաեւ ընկերութեան փիզիքական գոյութեան,

Նկատելով որ հողը իր տնտեսական արժէքը կ'ստանայ բնակչութեան մը հաւաքական ներկայութենէն եւ գործունէութենէն,

Նկատելով որ անկարելի է, դրուած սահմանի մը մէջ, ընդարձակել հողին տարածութիւնը՝ բնակչութեան անումին հետ զուգընթացաբար, եւ

Նկատելով որ հողը արդիւնագործելուն բնական իրաւունքէն զրկուած ժողովուրդներ ենթակայ եղած են, պատմութեան ամբողջ ընթացքին, սուրկական շահագործումներու անոնց կողմէն՝ որ հողի մեծաշնորհներու տիրացած են,

Հայ Ազատ. Կուս.՝ արդի հողային անհաւասարակշռութիւնը կարելի եղածին չափ դարմանելու նպատակով՝ կը պահանջէ որ - անհատներ կամ խմբակցութիւններ օրէնքով արգիլուին չգրաւել աւելի հող քան ինչ որ կարող ու յօժար են արդիւնաւոր կերպով մշակել ու բեղմնաւորել, եւ այլապէս զարգացնել:

- Անհատներ կամ խմբակցութիւններ արգիլուին հող սեփականել գուտ շահագիտական նպատակներու համար, եւ այդ կերպով անմշակութեան դատապարտել գայն ի վնաս հանրային բարեկեցութեան. որպէսզի հողին մշակութիւնը կամ անոր այլապէս օգտակար գործածութիւնը մատչելի ըլլայ աշխատասէր հասարակութեան:

- Ոեւէ նպատակի համար հողը շահագործելու առանձնաշնորհումը վայելող

անհատներ եւ խմբակցութիւններ պարտաւոր ըլլան արտաստվոր տուրք մը վճարել հողին ընթացիկ արժէքին համեմատութեամբ,

- Աստիճանաբար ջնջուին բոլոր տուրքերը աշխատութեան, արհեստներու տաղանդի, փարտաբարութեան, շէնքերու եւ վաճառականութեան վրայ, եւ հաստատուի միակ տուրքի դրութիւն մը գեոմահողին *ground value* արժէքին վրայ, որպէսզի ընկերութեան նախաձեռնութիւնները եւ գործունէութիւնները ազատ ըլլան խափանաբար արգելքներէ եւ կաշկանդումներէ:

- Ընկերական ծագում եւ բնոյթ ունեցող հողային այս տուրքը միակ աղբիւրն ըլլայ հանրային եկամուտին, որմէ պիտի հայթայթուին ընկերութեան բոլոր ծախքերը յօգուտ հանրային շինութեանց եւ վայելքներու, հանրային ապահովութեան, հանրային դատարարական եւ հանրային պաշտպանութեան:

ԾԱՆՕԹ.- Հողային տուրքին սակագինը կը փոխուի հանրային ելեւմուտի պահանջներուն համեմատ:

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հայ Ազատական Կուսակցութեան կրնայ անդամակցիլ 18 տարեքը թեւակոխած ամեն Հայ, առանց սեռի եւ դաւանանքի խտրութեան:

Անդամակցութեան Պայմաններ

Ամեն անդամ կամաւոր նուէր մը կուտայ իբր մուտքի տուրք:

Ամեն անդամ պարտաւոր է վճարել իւրաքանչիւր շրջանի համար Ընդհ. Պատգմ. Ժողովէն որոշուած մասատուրքը:

Անդամակցութեան թեկնածութիւն մը պէտք է յանձնարարուի ու վկայուի

առնուողն երկու անդամներու կողմէ, թեկնածուին բարոյական նկարագրին ու քաղաքացիական գիրքին մասին:

Անդամակցութենէ Դադարեցում

Կամաւորապէս իր նւթական աջակցութիւնը զրացող, իրարու վրայ երեքէ աւելի անդամներու առանց բանաւոր պատճառի, անդամական ժողովէ բացակայող եւ կամ կուսակցութեան վարկարեկութիւն պատճառող անդամները կը զրկուին իրենց անդամակցութենէն, մասնաճիւղին որոշումով:

Մասնանիւղեր

Առնուողն չինք անդամներ պէտք են մասնաճիւղի մը կազմութեան համար:

Մասնաճիւղ մը կ'ունենայ իր վարչութիւնը, առնուողն երեք, եւ առաւառէին չինք հոգիէ բաղկացած: Ասենապետ, Ասենապիւր, Գանձապետ եւ երկու խորհրդականներ, որ նոյն տան պիտի վարեն զիւանի երկու անդամներուն փոխանորդութիւնը:

Մասնաճիւղ մը անդամական ժողով կ'ունենայ երկու չարաթր անդամ մը, աւելի յաճախ՝ վարչութեան հրաւերով:

Մասնաճիւղերու վարչութիւնները կ'ընտրուին ժողովին ներկայ անդամներու մեծամասնութեան քուէովը եւ իրենց պաշտօնը կը տեսէ մէկ տարի:

Ընտրութեան ժողովներու հրաւիրագիրներուն մէջ պէտք է անպատճառ ընտրութեան օրակարգը զրուած ըլլայ:

Մասնաճիւղերու վարչական ընտրութիւնները կը կատարուին իւրաքանչիւր տարուայ Օգոստոսի առաջին եւ երկրորդ կիւրակէներուն մէջ:

Իւրաքանչիւր մասնաճիւղ իր տարեւորջանի հաշիւը պէտք է փակէ Ընդհ. Պատգմ. Ժողովէն առաջ:

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նահանգային վարչութիւնը կը բաղ-
կանայ եօթը անդամներէ. ատենապետ,
ատենադպիր, զանձապետ եւ չորս խոր-
հրդակներ՝ հետեւեալ պաշտօններով,
խորհրդի, փրօփականտի կազմակերպիչ,
Բ. ատենապետ եւ Բ. ատենադպիր:

Ատենապետը որ նոյն ատեն պիտի
ըլլայ վարչութեան ընդհանուր քարտու-
ղարը, եւ խորհրդիը պիտի ըլլան վճար-
ած անդամներ:

Վարչութեան իւրաքանչիւր անդամ
իրեն յատկացուած մասնաւոր պաշտօնին
գործառնութիւններուն համար պատաս-
խանատու է վարչութեան՝ եւ ի հարկին
ենթակայ պաշտօնադրուելու այդ մար-
մինէն: Իսկ Նահանգային Վարչութիւնը
հաւաքարար պատասխանատու է պատգմ-
աւորութիւն:

Վարչութիւնը կ'ընտրուի Պատգմ-
աւորութիւն, մէկ տարուան պաշտօնաւոր-
ութեան համար:

Վարչութիւնը կ'ընտրուի ներկայ
պատգամաւորներու մեծամասնութեան
քուէով:

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Նահանգային Վարչութեան կը ձգուի
ի հարկին Ամերիկան շրջանակներու բաժ-
նել եւ մասնաճիւղերու քուէարկութեամբ
ընտրել տալ շրջանակային մարմիններ,
որոնց գործունէութեան ու իրաւասու-
թեան սահմանները պիտի զօտին նահան-
գային վարչութեան կողմէ, եւ որոնք

պատասխանատու ու ենթակայ պիտի մը-
նան վարչութեան:

ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Պատգամաւորական ժողովը կը ղու-
մարուի տարին անգամ մը, Սեպտեմբե-
րին մէջ:

Արտակարգ պարագաներու տակ եւ
կամ վարչութեան կազմալուծումի պա-
րագային՝ բացառիկ պատգամաւորական
ժողով կը ղուեմարուի օրակարգ ունենա-
լով այդ մասնաւոր խնդիրները:

Պատգամաւորական ժողովը իր օրի-
նական թիւը կ'ունենայ մասնաճիւղերէն
կէսէն մէկ աւելիին մասնակցութեամբ:

Երեսունէն վար անգամ ունեցող մաս-
նաճիւղեր միայն մէկ պատգամաւոր
ըրկելու իրաւունք ունին, 30-էն 60 ան-
գամներու համար՝ երկու պատգամաւոր,
60-100՝ երեք պատգամաւոր: 100-էն վեր
իւրաքանչիւր 50-ի համար մէկ-մէկ պատ-
գամաւոր:

Պատգամաւորական ժողովը համա-
րառու, հաշուառու եւ օրէնսդիր մար-
մինն է:

ԵՐԿՄՆԱԳԻՐ

Կ'ուխտեմ հաւատարմօրէն եւ Փիզի-
քական, նիւթական ու բարոյական կարո-
ղութիւններու զերազոյն շափով ծա-
ռայել Հայ Ազատական Կուսակցութեան
եւ անոր միջոցաւ Հայրենիքի քաղաքա-
կան ու տնտեսական վերակենդանացու-
մին:

ԾՐԱԳԻՐ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿԵԱՆ (ԱԶԱՏԱԿԱՆ - ԱԶԳԱՅՆԱԿԱՆ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ*

Ազգերու ազատագրութիւնը՝ որ ահաւոր եւ արիւնալի պայքարներէ վերջ, կու գայ միանգամ ընդմիշտ փշրել սուրբ-կութեան ամրակուռ շղթաները եւ գերերջանիկ ու ապահով կեանքով մը օժտել արիւնաբաւ ժողովուրդները, երբէք չի կրնար լիակատար ու օրհնաբեր նկատուիլ, որքան ատեն որ ձեռքազատուած ժողովուրդը չգիտնայ արժեցնել զայն՝ համարային խնդիրներու հանդէպ իր ցոյց տուած քաղաքացիական գիտակցութեամբ եւ լուրջ հետաքրքրութեամբ:

Ձեռք բերուած ազատութիւնը չէ, որ ժողովուրդ մը կը փրկէ իր կապանքներէն. այլ այդ ժողովուրդին հոգիին մէջ արմատացած ազատատեն, ըմբռնումներն են, որ կ'ըմբռնուան ամէն կարգի անիրաւութիւններու դէմ եւ հասարակական կեանքը գերծ կը պահեն նորանոր բռնակալներու քանդիչ տիրապետութենէն:

Երէկ Հայ Յեղափոխութեան փառայեղ ու հերոսական ոգորումները չբռնեցին Մեծ Յաղթանակին համար, որովհետեւ Հայ ժողովուրդը՝ իբր հաւաքականութիւն, իր ունեւորներով եւ մտաւորականներով՝ անտարբեր մնաց Հայ Տառապանքի բարձրագոյն սրբազան գործին հանդէպ, յեղափոխական եւ հայրենասիրական շինարար դաստիարակութեան մը

ողբալի պակասին հետեւանքով:

Վաղը՝ Հայկական անկախութեան քաղաքական ազատ կեանքին մէջ՝ նոյնանման անտարբերութիւն մը պատճառ պիտի դառնայ, որ յետադիմական կամ բացարձակ արմատական երկու հակառակ ծայրայեղութիւնները՝ սխալ ու անհարազատ հայեցողութիւններով առաջնորդուած՝ նորանոր բռնակալութիւններ ստեղծեն Հայ կեանքին մէջ եւ քանդեն անոր բռնականին եւ աստիճանական բարգաւաճումը:

Հայ Յեղափոխութեան շրջանին՝ վեր. Հնչ. Կուսակցութիւնը՝ իբր ԱԶ-ԳԱՅՆԱԿԱՆ-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ Կուսակցութիւն՝ աշխատեցաւ հայ հասարակութեան աւանդել հայրենասիրական եւ յեղափոխական մտաւոր ու հարազատ դաստիարակութիւն մը, վառ պահելով անոր հոգիին մէջ ըմբռնութեան եւ արիւնքեան փայլուն կայծը: Իսկ վաղը՝ Հայկական ազատութեան օրերուն՝ վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը՝ իբր ԱԶ-ԳԱՅՆԱԿԱՆ-ԱԶԱՏԱԿԱՆ Կուսակցութիւն. պիտի աշխատի ազգային կեանքի հաւասարակշռութիւնը ազատ պահել յետադիմական ու արմատական հակառակ երկու ծայրայեղութիւններու կործանարար ելեւէջներէն, եւ դրականօրէն օժանդակել Հայկական վերաշինութեան, յառաջդիմութեան եւ մեծութեան հսկայ ձեռնարկին:

Ահա այս նպատակով է, որ այժմէն իսկ նուիրական պարտք կը սեպեմք Հայ ժողովուրդի ցիր ու ցան եւ շուարուն բեկորներուն ներկայացնել նպատակի եւ գործունէութեան ճշմարիտ ուղի մը, որմէ առաջնորդուած՝ Հայ հասարակութիւնը պիտի կարողանայ տիրանալ իր բացարձակ ազատութեան ու երջանկութեան:

* Չկրցանք ստուգել թէ ե՞րբ լոյս տեսած է առանձին գրքոյկի մէջ ամփոփուած այս «Ծրագիր»ը: Միայն թէ վերջաբան-ծանօթութիւնէն յայտնի կը դառնայ թէ գրքոյկը տպուած է Մ. Նահանգներու Շրջանակին կողմէ, իբրեւ ուրուագծումներ՝ ներկայացուելու Ընդհ. Պետք. Ժողովին, վստահաբար Հայաստանի Հանրապետութեան Հաստատումէն ետք, մանաւանդ որ կ'ակնարկուի Ազգերու Միութեան կողմէ Հայաստանի հողատարութեան հաւանականութեան:

ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՑՌ

Վերականգնելու Հնչակեան Կուսակցութեան աշխարհահայեացքը ԱԶԳԱՅ-ՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ է, որ իր հարազատ ներշնչումը կ'ստանայ պատմական այն գործողութիւնէն, որ փորձուած ճշմարտութեանը՝ թէ անկարելի է ժողովուրդներու հոգիէն արմատախիլ ընել ցեղային ինքնութեան գոյութեան եւ սեպական իրաւունքներու անքեղութեան գիտակցութիւնը:

Ցեղային ինքնապահպանումի գորաւոր բնագոյէն ներշնչուած *Ազատ Ազգայնականութեան* մեր այս դաւանանքը կը հիմնուի ազգային սեփական գոյութեան անբռնաբարելի իրաւունքին վրայ, եւ կը կառավարուի ազատական ու յառաջդիմական այնպիսի սկզբունքներով. որոնք՝ ազգի մը անկախ կեանքը պահպանող բնական ու հիմնական հաստատութիւններն, - հայրենիք, ցեղային ամբողջութիւն, ընտանիք, եկեղեցի, լեզու, գրականութիւն, ազնիւ աւանդութիւններ ու տոհմային նկարագիր - խաթարելու ռեւէ բնոյթ չունենալով՝ կը նպաստեն անոր յառաջդիմութեան եւ քաղաքացիութեան:

Վեր. Հնչ. Կուսակցութիւնը կը հաւատայ թէ ազգային անհատականութեան այս շեշտուած գաղափարը ժողովուրդներու կեանքին մէջ գորատորացոյն ազդակն է, որ ազատելով զանոնք մեղկութեան, անշարժութեան եւ թուլամորթութեան ջլատիչ ու քանդիչ ազդեցութիւններէն, բեղուն կենսունակութեամբ մը կ'օժտէ զանոնք. եւ նախաձեռնութեան ներքոյժ ոգին ներշնչելով անոնց՝ նոր ու պատուաբեր նուաճումներ ընել կուտայ աշխարհի բարոյական, տնտեսական եւ իմացական մրցադաշտին վրայ:

Վերականգնելու Հնչակեան Կուսակցութիւնը՝ իբր *զոտ ազգայնական* կուսակցութիւն՝ ամեն բանէ գերիվեր կը նկատէ Հայ ժողովուրդի քաղաքական ու տնտեսական անկախութիւնը, եւ Հայ

Հայրենիքի ինքնութեան շահերն ու իրաւունքները:

Հայութիւնը՝ ազատ, անկախ ու միացած ազգ մը ձեւացնելու համար՝ պէտք է կառչի ազգայնականութեան այս շինարար սկզբունքին. որ բոլոր հայ սրբտեղը սերտօրէն իրարու պիտի միացնէ, եւ ամեն մէկ հայ քաղաքացի անհատաբար իր սեփական կապէ իր հայրենի հողին, ազգային պատմութեան, ցեղային աւանդութիւններուն, Հայկական հարազատ հաստատութիւններուն եւ ինքնատիպ մշակոյթին, բոլոր այդ սեփականութիւններուն պահպանումին եւ բարելաւման համար տաժուած ջերմ նախանձախնդրութեան բարձր ու հասարակաց ոգիով մը:

Որքան ալ գեղեցիկ հնչեն ազգերու եղբայրակցութեան համար արտայայտուած բաղձանքներն ու խօսքերը, ազգային անհատականութիւններու անխուսափելի եւ բնական մրցումը դեռ պիտի շարունակէ ղեկավարել ազգերու փոխյարաբերութիւնները, եւ՝ անտարակոյս՝ յաճախ իրարու պիտի բաղխին զանազան ժողովուրդներու ինքնութեան շահերն ու փառասիրութիւնները:

Հայ ժողովուրդի շահերն ու իրաւունքներն օտար յարձակումներէ, կաշկանդումներէ եւ ոտնձգութիւններէ անվթար պահելու համար, մենք պէտք ունինք մեր բոլոր ուժերուն համերաշխ ու բոլորակամօր գործակցութեան: Այս ներգաշնակ համագործակցութիւնը մի միայն հայ ժողովուրդի սրտին մէջ արմատացած Ազգայնական սկզբունքի գիտակցութեան կրնայ ծնիլ:

Վեր. Հնչ. Կուսակցութեան Ազգայնական ըմբռնումները բոլորովին գերծրլայով ազգայնամոլական (*chauvinistic*) այլաբերք ու նուաճողական ձգտումներէն, երբեք չեն կրնար հաշտուիլ ռեւէ քաղաքականութեան հետ՝ որ կը ձգտի հողային բռնագրաւումներու վնասակար քաղաքականութեան: Ասանկ անհաշիւ եւ եսամոլ

արկածախնդրութիւններ քշնամութիւն միայն կ'ստեղծեն եւ մեր ազգային գոյութիւնը կրնան ծանրաբեռնել այնպիսի տարրերով, որոնք դժուարաւ պիտի ձուլուին Հայ ազգային ամբողջութեան մէջ եւ հետեւաբար պատճառ պիտի դառնան ներքին անդադրում խռովութիւններու եւ պետութեան տկարացման:

Մենք մեր ազգային սեփական իրաւունքները ուժգնօրէն պաշտպանելով հանդերձ, պիտի ջանամք վստահութեան եւ բարեկամութեան անկեղծ ու անշահախնդիր ոգի մը ցուցնել մեր դրացի ժողովուրդներուն եւ ասանկով օժանդակել աշխարհի խաղաղութեան պահպանումին:

Աշխարհի փառափառութեան եւ զարգացումի հսկայ գործին մէջ ամեն ազգ իր տեղն ու բաժինը պէտք է ունենայ եւ մենք՝ առանց ուրիշին բաժինը բռնութեամբ յափշտակել փորձելու՝ պիտի աշխատինք կատարել մեր դերը, եւ փառափառութեամբ ժողովուրդներու շարքին մէջ գրաւել պատուաւոր ու արժանավայել դիրք մը:

ԱԶԱՏ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ այս փրկարար գաղափարականը՝ իր անայլամերժ ու բարեշրջական ըմբռնումներով, աւելի հաստատ կռուան մը պիտի ըլլայ, որուն վրայ կարելի պիտի ըլլայ Ազգերու Ընկերակցութիւն մը, որ պիտի ղեկավարէ ժողովուրդներու փոխյարաբերութեանց կննդոտ գործը եւ պիտի արգիլէ ազգայնամոլական եսասէր ու շահամոլ ձգտումներէն ծնող պայքարներն ու արիւնալի պատերազմները: Վեր. Հնչ. Կուսակցութիւնը համոզուած ըլլալով այս հշմարտութեան պիտի աշխատի Հայաստանի միացնել Ազգերու Ընկերակցութեան:

Ն Պ Ա Տ Ա Կ

Վերականգնել Հնչակեան Կուսակցութեան քաղաքական նպատակն է իրականացնել բացարձակ ու ամբողջական ա-

զատագրութիւնը Հայուն սեփական Հայրենիքին՝ իր պատմական ընդարձակագոյն սահմաններուն մէջ, օժտուած պետական ԱՆԿԱՅՆ ու ԱՆԲԱԺԱՆ, կազմով եւ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ կառավարութեամբ, որ ամենալայն պատահութիւնը տալ Հայ ժողովուրդին՝ վայելելու անկաշկանդ ու լիակատար ազատութիւն եւ ցեղային զգացման ու ազգային դիտակցութեան պահանջներուն համեմատ՝ ապրելու եւ զարգանալու անխաթար իրաւունք:

Վեր. Հնչ. Կուսակցութիւնը իր այս նպատակին հասած պիտի չնկատէ ինքզինքը՝ որքան ատեն որ Հայաստանի պատմական տարածութեան մէջ իյնող ու հայերով բնակուած ոեւէ հողամաս կրցած չի տեսնէ Հայաստանի ամբողջութեան, եւ իր դիւսանագիտութեան սեւեռուն նպատակը պիտի ըլլայ վերստացումը Հայրենիքէն որբացած այդ հողին ու գաւակներուն:

Հայ ժողովուրդի ընկերային ու տրւտեսական կեանքի կերտումին համալք. Վեր. Հնչ. Կուսակցութեան նպատակն է օրէնսդրական խելացի միջոցներով ստեղծել այնպիսի գոյավիճակ մը, որուն մէջ ամեն Հայ փառափառի հաւասար պատեհութիւն ունենայ մտաւոր, բարոյական ու տնտեսական բարգաւաճման համար:

Վեր. Հնչ. Կուսակցութիւնը վստահելով Հայ ժողովուրդի իմացականութեան, հայրենասիրութեան եւ արդարութեան ճանաչումի կարողութեան վրայ, պիտի ջանայ փութացնել ստեղծումը այն տեսակ իրաւակարգերու, որոնց մէջ անհատ փառափառի ու համայնքին շահերը համեմատաբար, փոխադարձ պարօքի եւ իրաւունքի սկզբունքին արդար հիման վրայ, արգիլելով դասակարգային բռնատիրութեան ոեւէ փորձ եւ անոր հետեւանք հղող անիրաւ շահագործութիւններ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱԽԱՆԱՆՔ

Հայաստանի ազատութիւնն ու յաւաքդիմութիւնը երբեք իր կատարելութեան չպիտի հասնի, որքան ատեն որ անոց յարատեւութիւնը ապահովուած չըլլայ ազատական ու յառաքդիմական սկըզբունքներով: Ոեւէ երկրի ազատութիւն իրական պէտք չէ նկատել՝ որքան ատեն երաշխաւորուած չեն անոր բոլոր քաղաքացիներուն իրաւունքներն ու բարօրութիւնը:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը՝ իբր ազատագրական ազգայնական կուսակցութիւն՝ կը նուիրուի Հայկական քաղաքական եւ հասարակական կեանքի կերտումին, նպատակ ունենալով պայքարիլ բոլոր քաղաքական ու տնտեսական անիրաւութեանց եւ զրկանքներու դէմ եւ ապահովել արդարութիւն, երջանկութիւն եւ հաւասարութիւն ամեն Հայ քաղաքացիի համար:

Վեր. Հնչ. Կուսակցութիւնը երբեք չի հաւատար սակայն, թէ ազգերու քաղաքական եւ տնտեսական կեանքը կարելի է ոեւէ հիմնական փոփոխութեան ենթարկել քաղաք-տնտեսական յանկարծական փոփոխումներով եւ վտանգաւոր խռովարարութիւններով: Հետեւաբար անիկա պիտի ջանայ ազգային ներքին կեանքը գերծ պահել անժամանակ, բունն եւ անհարկի փորձարկութիւններէ:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը քաղաքական, տնտեսական ու բնակչային բարեփոխումներու համար կը հաւատայ բարեջրութեան բանաւոր եղանակին, որ աստիճանական եւ աւելի ապահով քայլերով պիտի առաջնորդէ ժողովուրդը դէպի ամենակարելի հաւասարութեան եւ կատարելագոյն երջանկութեան բաղաձեռնած սահմանները:

Այս խորին համոզումներով առաջնորդուած Վեր. Հնչ. Կուսակցութիւնը իր քաղաքական, բնակչային ու տնտեսական գործունէութեան համար կ'որդեգրէ

հետեւեալ սկզբունքներն ու հայեացքները, որոնց կիրարկումով անիկա պիտի իրականացնէ իր ըմբռնումներուն եւ դաւանանքներուն վերջնական յաղթանակը:

Ա. ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը իր այլազան ձգտումներուն մէջ ըլլալով քաղաքականապէս *ազատական կուսակցութիւն*, իր քաղաքական հիմնական դաւանանքը կը հաստատէ *Ժողովուրդին քաղաքակ վեհապետութեան արդիականն ու ճշմարիտ սկզբունքին* վերայ. որ կը ժխտէ իշխաններու երկնապարգեւ իրաւունքի հին ու ստրկացնող ըմբռնումը, եւ իր ոյժը կ'ստանայ իւրաքանչիւր քաղաքացիի վայելելիք ազատութեան, հաւասարութեան եւ բուհարկելու իրաւունքէն:

Այս ամենատարրական ժողովրդային իրաւունքները պէտք է ամենալայն գծերով ուղղուած ու երաշխաւորուած ըլլան *Հայկական Պետութեան Հիմնական Սահմանադրութեան* մէջ:

Ժողովուրդին կառավարութիւնը, եւ ոչ թէ Ժողովուրդի մէջէ մասին, կամ քանի մը ընտրեալներու կառավարութիւնը, ահա այս պիտի ըլլայ նշանաբանը, որուն վրայ պիտի հիմնէ Վեր. Հնչ. Կուսակցութիւնը Հայ ժողովուրդին տալիք իր քաղաքացիական դաստիարակութիւնը:

Այս ըմբռնումներով դաստիարակուած ժողովուրդ մը՝ աստիճանաբար գիտակցելով իր պետական հաստատութեան ազատական ու յառաքդիմական կազմուածքին՝ իր իրաւունքներու կատարելութեան պիտի հասնի իր քաղաքացիական հասունութեան հետ համընթացաբար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը, իբր ազգային-ազատական կու-

սակցութիւն, կը ճգտի Հայկական անկախ
Հանրապետութեան մը իրականացումին,
եւ իր քաղաքական նպատակներուն յաղ-
քանակը շահած պիտի չըլլայ մինչեւ որ
չի հասնի իր այս սեւեռուն նպատակին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
Մը, հիմնուած ժողովրդապետական ա-
մենալայն սկզբունքներով ձեւուած ՍԱՀ-
ՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ մը վրայ, Հայ ժողո-
վուրդին ընդհանուր բուէով ընտրուած
նախագահով, ծերակուտական եւ երես-
փոխանական ժողովներով, այս ժողով-
ներու կողմէն վաւերացուած նախարա-
րական կազմով եւ դատարանական դրու-
թեամբ, ահա կուսակցութեան քաղա-
քական իտէալը:

ՕՏԱՐ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ

Հակառակ մեր խոր համոզման, թէ
Հայութիւնը, իբր ժողովուրդ, օժտուած
է պետութիւն մը հաստատելու եւ կառա-
վարելու բոլոր բարեմասնութիւններով,
պարտք կը սեպենք հոս պարզել մեր ըմ-
բռնումները օտար աջակցութեան (manda-
tory) դրութեան մասին, որուն՝ ամենայն
հաւանականութեամբ, պիտի ենթարկուի
Հայաստան Ազգերու Միութեան կողմէ:

Վեր. Հնչ. Կուսակցութիւնը չպիտի
հակառակի ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ օտար ա-
ջակցութեան մը նշանակման, պայմա-
նաւոր որ

Ա.- Աջակից պետութիւնը ըլլայ Հայ ժո-
ղովուրդի վստահութիւնը վայելող
պետութիւն մը, եւ այդ տեսակ գրու-
թիւն մը սեւէ տէրութեան անմիջա-
կան չափերուն, քաղաքական ու ռազ-
մական ծրագիրներուն ծառայեցու-
լու կործանարար բնոյթը չունենայ:

Բ.- Կառավարական սխառմը օժտուած
ըլլայ ժողովրդական ամենալայն ըմ-
բռնումներով եւ ազատական սկզբ-
ունքներով:

Գ.- Երկրին օրէնքները դժուին հաշիւէ
կազմուած խորհրդարանի մը կողմ-
էն:

Դ.- Երկրին վարչային, ելեւմտական եւ
դատարանական կազմին մէջ գլխա-
ւոր դեր ունենան Հայ պաշտօնեաներ
ու դատաւորներ:

Ե.- Եկեղեցական, կրթական, լեզուա-
կան, զբոսական, պատմական եւ այս
կարգի ուրիշ հաստատութիւններ
ամբողջովին ու անկաշկանդ կառա-
վարութիւն հաշիւու միջոցաւ միայն:

Զ.- Երկրին ժամանակաւոր աջակիցները
սեւէ իրաւասութիւն չունենան, ա-
ռանց Հայկական խորհրդարանի հա-
ւանութեան, օտար չափաքանական
բնկերութիւններու յանձնել երկա-
թուղիներու, հեռագրի, հեռախօսի
եւ ուրիշ արդիւնարեւոյտի աղբիւր-
ներու խնամքեան, ու հանքերու չա-
փարկերութեան գործերը:

Է.- Հայկական խորհրդարանի հաւանու-
թեան ենթարկուին օտար աջակից-
ները:

Ը.- Հայկական խորհրդարանը իրաւունք
ունենայ յետս կոչել տալ Հայկական
չափերուն դատաճանող տնարժան ու
կեղեքիչ օտար պաշտօնեաները:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակ-
ցութեան քաղաքական նպատակներուն
ուրուագծումն ընելէ վերջ, աւելորդ չենք
նկատեր յայտարարել, թէ մեր ըմբռնում-
ներուն եւ իտէալներուն չի համապատաս-
խանող ոեւէ դրութեան մերքեւ, Կուսակ-
ցութիւնս պիտի շարունակէ մնալ իբր
Յեղափոխական - Ազգայնական Կուսակ-
ցութիւն, եւ կարելի ամեն միջոցներով
պիտի պայքարի Կուսակցութեան քաղա-
քական նպատակներուն յաղթանակին հա-
մար:

ԸՆՏՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը՝ իբր ազատական Կուսակցութիւն՝ կը ձգտի այնպիսի քաղաքական իրաւակարգի մը, որուն մէջ ամեն Հայ քաղաքացի օժտուած ըլլալ քաղաքացիական իրաւունքներու հաւասարութեամբ: Այս տեսակ դրոյքեան մը ներքեւ *Երբէք տեղ չունին զառակարգային ու անհաստատան առանձնաշնորհումները եւ օրէնքին առջեւ ամեն մարդ հաւասար կը նկատուի:*

Ա. ԸՆՏՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Քուէարկելու իրաւունքը ամեն մէկ Հայ քաղաքացիի անբաժան ու անբռնաբարելի իրաւունքն է, որու անկաշկանդ ու գիտակից կիրարկումով բաժին կ'ըստանան ան երկրի բնդհանուր գործերու վարողութեան մէջ: Քուէարկութեան այս իրաւունքէն կը գրկուին միմիայն ոճրագործները, մտազարմերն ու պետութեան դէմ դաւանանդները:

- 1.- Իւրաքանչիւր Հայ քաղաքացի, ազամարդ թէ՛ կին, երբ 21 տարեկան կ'ըլլալ, ինքնարեւարար կ'ունենալ քուէարկելու եւ քուէ ստանալու անբաժան իրաւունքը:
- 2.- Վարչական եւ օրէնսդրական բոլոր պաշտօնեաները կ'ընտրուին ժողովրդական ընդհանուր, հաւասար եւ գաղանի քուէարկութեամբ:
- 3.- Կը ջատագովենք թեկնածուներու նշանակման համար նախնական քուէարկութեան դրութիւնը:
- 4.- Քաղաքական նպատակի մը հասնելու համար, մարտը եւ արդար միջոցներու կիրարկումը քաղաքացիական ամենատարրական առաքելութիւնը նկատելով, առանց որուն պետական ներքին կեանքը կը վատասերի ու

կ'անբարոյանայ, կը պահանջենք խիստ պատիժներու նշանակում ընտրական ապօրինութիւններուն եւ զեղծումներուն համար:

Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼ ՊԱՀԱՆՁՆԵՐ

- 1.- Անձի, ինչքի եւ բնակարանի անձնամիտութիւնը:
- 2.- Բացարձակապէս ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովներու, խղճի եւ գաւառների:
- 3.- Կատարեալ ազատութիւն ընկերակցութիւններու եւ ամեն կարգի օրինական միտութիւններու կազմութեան:
- 4.- Ազատութիւն թղթակցութեան եւ տեղափոխութեան: Պետութեան մը ճամբորդելու համար անցագրի ջրնջում:

Բ. ՏՆՏԵՍԵԱՆ

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը, ըլլալով հարազատօրէն ազատական-ազգայնական Կուսակցութիւն, չի կրնար պաշտպան կանգնիլ այս կամ այն դասակարգին առանձինն, եւ չի կրնար նամանաւոր քաջալերել, կամ քոյլ տալ որ ուրիշներ քաջալերեն, դասակարգային կռիւներու անուամբ ու տարածումը:

Հայկական անկախութիւնն ու վերաշինութեան դժուարին ու ստիպողական գործը կը պահանջեն հաւաքական գործակցութիւն, եւ պէտք ունին դրամատիքին ու բանուորին, կոերին ու աշխարհականին, քաղաքացիին ու գիւղացիին բոլորանուէր ու միանուագ աշակցութեան: Դասակարգային ոեւէ բանավէն բաժանման նորանոր խլամաւորներ պիտի ստեղծէ եւ վերաշինութեան ծանր աշխատանքը չափազանց պիտի դժուարացնէ:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը ամբողջ ազգին Կուսակցութիւնը

թիւնն է եւ ոչ թէ ազգին այս կամ այն դասակարգին կուսակցութիւնը: Անիկա պաշտպանն է ազգային հաւաքական շահերուն, եւ ոչ թէ այս կամ այն դասակարգի շահերուն: Հետեւաբար անոր աւագ նպատակն է արգիլել դասակարգային կռիւներու ստեղծումը, արդարութեան ու հաւասարութեան գորաւոր օրէնքներու պաշտպանութեամբ եւ կիրարկումով:

Դասակարգային նորանոր գրկանքներն արգիլելու եւ կամ արդէն իսկ գոյութիւն ունեցողները բառնալու համար, անհրաժեշտ չենք տեսներ ընկերվարական ըլլալու, եւ ոչ ալ պէտք կը տեսնենք ամբողջ աշխարհի բանուորներու միացումը ջատագովել՝ Հայաստանի մէջ երեւան գալիք ապագայ տնտեսական անհաւասարութիւններն ու անոնց տնտեսական անտեսանքները արգիլելու համար: Այնքան մեծ է Հայկական Տառապանքը, այնքան դժուար ազգային վերաշինութեան գործը, այնքան սուղաւար հայ հասարակութեան պահանջները, որ մեր ամբողջական ուժերու հաւաքական նուիրումն անգամ անբասական են անոնց համար: Հետեւաբար առնուազն քաղաքական անմտութիւն պիտի ըլլար այժմէն իսկ զբաղիլ ուրիշ ժողովուրդներու բարօրութեան բարդ հարցերով եւ մարդկային եղբայրակցութեան քաղցրահնչիւն բայց երազական գաղափարականներով:

Մեր կուսակցութիւնը սակայն՝ իբր ազատական կուսակցութիւն՝ երբեք պիտի չկրնայ հանդուրժել, որ քաղաքական, ընկերային ու տնտեսական ռեւէ բռնակալութիւններ ծայր տան Հայկական ներքին կեանքին մէջ: Զրկանք, շահագործում, վաշխառութիւն, անյիշիկ շահագիտութիւն եւ մասնաւորներ շահուորցնելու ռեւէ դրութիւն, կուսակցութեանս բուն հակառակութեան եւ հալածանքին պիտի ենթարկուի անյստիք:

Մենք կը հաւատանք անհատական ազատութեան եւ սեփականատիրութեան յառաջդիմական ըմբռնումին եւ կը քաջալերենք անհատին ձեռներեցութեան ոգին, սակայն բացարձակապէս կը հակառակինք «ինչ կ'ուզէ թող ըլլայ»-ի - *Laissez faire* - սխալ ու հնաւանդ վարդապետութեան, որ հիմը կը կազմէ ընկերա-տնտեսական զանազան չարիքներու եւ գրկանքներու: Տարակոյս չկայ թէ անհատներու եւ անոնցմէ կազմուած ընկերութիւններու զանազան ձեռնարկներն ու գործունէութիւնները, անհատական բնոյթ կրելով հանդերձ, սերտօրէն առնչութիւն ունին հանրային երջանկութեան, առողջութեան եւ բարոյականին հետ, եւ հետեւաբար կառավարութիւնը՝ իբրեւ հաւաքականութեան օրինաւոր ներկայացուցիչը՝ իրաւունք է հեղինակութիւն ունի, հասարակաց օգուտին համար միջամտելու անոնց: Ժողովուրդին կառավարութեան այս վերահսկողութեամբն ու միջամտութեամբն է, որ կարելի պիտի ըլլայ սանձահարել տնտեսական ու ընկերային անիրաւութիւններն ու չարիքները:

Երկրի մը արդիւնաբերական հատաւորութիւններու զարգացման գլխաւոր ազդակներն են *Հանճարեղ մարդու թիւն, Հնարագիտութիւն, Բնական հարստութիւն ու Կրթապլուխ*, եւ բանուորական ուժ: Ասոնք բոլորն ալ կախում ունին իրարմէ, եւ հետեւաբար անհրաժեշտ են իրարու: Ասոնց եւ ոչ մէկին քաջարձակ տիրապետութիւնը բաղձալի կը նկատենք, որովհետեւ ռեւէ տիրապետութենէ գրկանք ու չարիք միայն կը ծնի:

Ազգային կեանքի հզօրացման եւ հանրային երջանկութեան համար անհրաժեշտ նկատելով տնտեսական կեանքի ընդհանուր բարութումը, Վեր. Հնչ. Կուսակցութիւնը կը պահանջէ, որ արտադրութեանց այս գլխաւոր չորս ազդակներն ալ վայելեն լիակատար եւ արդար հատուցում, որ ոչ թէ միայն պիտի արգիլէ

տնտեսական չարիքներու ծնունդը, այլ նաեւ գորաւոր հիմը պիտի կազմէ հաշտարար ու արդիւնաւոր համագործակցութեան:

Այս նպատակն իրագործելու համար, մեր կուսակցութիւնը կը հաւատայ տընտեսական բարեշրջութեան այն մեթոտներուն, որոնք, առանց բռնութեան եւ դաւաճարգային պայքարներու, հետըզհետէ կը զօրացնեն հաւաքական համագործակցութեան սկզբունքը եւ կը խաթարեն անհատական տիրապետութեան շահամոլ ձգտումները:

Իբրեւ առաջին քայլ, մենք կը ջատագովենք կառավարական ազդու միջամտութեան եւ վարչային աչալուրջ վերհսկողութեան անհրաժեշտութիւնը, եւ միեւնոյն ժամանակ կը քաջալերենք գործաւորական միութիւններու (labor unions) կազմութիւնը, եւ արտադրութեանց սպառումին ու վաճառման համար, կառավարութեան օժանդակութիւնը վայելող համագործակցական ընկերութիւններու (co-operatives) կազմակերպութիւնը:

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

Մենք կը հաւատանք, թէ՛ երկրի մը զարգացման եւ բարգաւաճման ամենատարրական պայմաններէն մին *գրամադլուխ* է՝ թէ՛ ժողովուրդի մը բարեկեցութիւնն ու հանգստութիւնը արդիւնէ երկրին ընդհանուր հարստութեան, թէ՛ հանգիստը շահագործման, քարտաւարութեան զարգացման, վաճառականութեան մշակումին, երկրագործութեան յառաջացման, գործարաններու շինութեան, եւ արուեստներու ծաղկումին համար, անհրաժեշտ է առաւոր դրամագլուխ: Այս իսկ պատճառներով վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը կը թոյլատրէ դրամագլուխի մուտքը Հայաստանի մէջ:

Բայց միեւնոյն ժամանակ գիտնալով դրամագլուխի ազատ, անդէկ ու ինքնագլուխ գործունէութեան հետեւանք եղող

անարդարութիւններն ու կեղեքումները, մեր կուսակցութիւնը կը հաւատայ, թէ կառավարական ամենաաչալուրջ վերհսկողութեամբ եւ ազդու օրէնքներով պէտք է սանձահարուին դրամագլուխի ընչաքաղց եւ ամենակուլ ձգտումները:

Այս նպատակաւ կ'առաջարկենք հետեւեալ միջոցներու գործադրութիւնը, որպէսզի չարիքը իր սաղմին մէջ խեղդուի եւ երկիրը գոհր չըլլայ տնտեսական բռնակալութիւններու:

- 1.- Նշանակել եւ գործադրել տալ ամենախիստ օրէնքներ *գրամադլուխ* անխիղճ շահագործութիւններն արգիլելու համար:
- 2.- Կազմել կառավարական որոշ յանձնախումբեր, որոնց պաշտօնն ըլլայ հսկել գրամատէրներու գործունէութեան վրայ:
- 3.- Յանձնախումբերու իրաւասութիւն տալ քննելու անոնց հաշիւները եւ հասկնալու անոնց գործառնութեանց եւ շահի քանակը:
- 4.- Որոշել շահի ԱՌԱԽԵԼԱԳՈՅՆ տոկոս մը, որմէ աւելի եղած ոեւէ շահ գրամադարտելի նկատուի օրէնքին առջեւ:
- 5.- Որոշել օրավարձի նուազագոյն չափ մը եւ վարձի քանակը աւելցնել գործատիրոջ բրած շահի համեմատութեամբ:
- 6.- Չափաւորել ապրանքներու գիները, աշխատի որ ոչ ժողովուրդը կողոպտուի եւ ոչ գործատիրոջ զրկանք ըլլայ:
- 7.- Շահի որոշեալ տոկոսէն աւելի եկած գրամէն մաս մը յատկացնել գործատիրոջ, արդիւնաբերութեան գործիներու վերանորոգութեան համար, իսկ մնացեալը գործածել բանուորներու հանգիստին, առողջութեան եւ դարգացման համար անհրաժեշտ,

բաղնիք, զբաղարան, ճաշարան եւ հանգստարան հաստատելու նպատակին, գործառնելին յարակից մէկ բաժնին մէջ:

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Մենք կը հաւատանք թէ Բանուորը՝ երկրի արդիւնաբերութեանց գլխաւոր ազդակներէն մին, ունի իր անբռնաբարելի իրաւունքներն ու սեփական շահերը: Այս կենսական շահերուն եւ իրաւունքներուն պաշտպանութեան համար խիստ անհրաժեշտ ու օրինական կը նկատենք Բանուորական միութիւններու կազմութիւնը:

Դրամատէրն ու բանուորը պէտք է իրարու թշնամի ըլլան, որովհետեւ անոնք իրարու համար անհրաժեշտ են: Երկուքն ալ ունին իրենց առանձին իրաւունքները, որոնք պէտք է յարգել, որքան ատեն որ օրինական ու բանաւոր են անոնք: Երկուքն ալ արժանի են օրէնքի հաւասար ու անաչառ պաշտպանութեան, եւ միեւնոյն ատեն հաւասարապէս ենթակայ օրէնքի բոլոր տրամադրութիւններուն:

Մենք այն հաւոգումն ունինք, թէ բանուորական չարիքներու մեծագոյն մասը կ'արգելուի, եթէ երկու կողմերուն միջեւ գոյութիւն ունենայ փոխադարձ հասկացողութեան եւ փոխադարձ շահերու ճանաչման հաշտարար ու թոյլատու ոգի մը: Ասոր համար կ'առաջարկենք կազմութիւնը բանուորական եւ գործատիրական յանձնախումբերու, որոնք իրարու հետ գործակցելով յարգարեն երկու կողմէն ծագած խռնրդոտները:

Գործատիրոջ եւ բանուորին միջեւ ծագելիք անհամաձայնութիւնները կարգադրելու համար կ'առաջարկենք իրաւարար ատեններու ստեղծումը, այս նպատակաւ գծուած որոշ ու պարտադրիչ օրէնքներու համաձայն:

Բանուորին լիակատար իրաւունքներն պաշտպանելու եւ անոր առողջութիւնն ու

երջանկութիւնը ապահովելու համար կը պահանջենք հետեւեալները. -

- 1.- Օրական ութ ժամուան աշխատանք մտնի տեղ:
- 2.- Մինչեւ 15 տարեկաններու աշխատանքի արգելում:
- 3.- Շարժումն մէջ միայն 6 օր գործելու օրէնք:
- 4.- Գործարաններու մէջ առողջապահիկ օրէնքներու կիրարկում եւ բժշկական անմիջական օգնութիւն արկածեալներու եւ հիւանդներու համար:
- 5.- Բանուորներու ընդհանուր ապահովագրութիւն, արկածի, հիւանդութեան եւ ծերութեան դէմ:
- 6.- Հանգստաթոշակ բոլոր գործաւորներուն աշխատանքի որոշ ժամանակաշրջանէ մը վերջ:
- 7.- Լիակատար հատուցում՝ գործարաններու մէջ զգուշական միջոցներու պակասին հետեւանքով վնասուած գործաւորներուն:
- 8.- Աշխատանքի ձրի պաշտօնասենեակներ, իւրեւ միջնորդ գործին եւ գործաւորին միջեւ, ջնջելու համար անգործութեան հետեւանքով յառաջ եկած ընկերական ու տնտեսական չարիքները:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը կը հաւատայ, թէ երկրի մը պետական սահմաններով շրջապատուած հողը տեսականօրէն պետութեան կալւածքն է, թէ՛ պետութիւնն է հողին վերջնական ու բացարձակ սեփականատէրը եւ ի պահանջի հարկին, հանրային պէտքի մը ստիպման ներքեւ, իրաւունք ունի գրաւել ունի հող, արդար հատուցումն ընելով անշուշտ հողին ժամանա-

կաւոր տիրոջ, զայն զարգացնելու համար անոր քափած ջանքերուն եւ ըրած գոհողութիւններուն փոխարէն:

Բայց նկատելով թէ ամէն ֆազաֆազիի համար, հոգը բնակութեան եւ գործի անհրաժեշտ պէտք մըն է, ու հոգագործին համար դրամագլուխ մը եւ աշխատանքի գործիք մը միանգամայն, Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը կը յայտարարէ, թէ հոգային հարցին մէջ ինք կը հաւատայ անհատական սեփականատիրութեան իրաւունքին:

Միեւնոյն ժամանակ աչքի առջեւ ունենալով այն բոլոր չարիքներն, զրկանքներն ու անիրաւութիւնները, որ անխուսափելիօրէն կը ծնին այս իրաւունքի սանձագործ կիրարկումէն, Վեր. Հնչ. Կուսակցութիւնը կը պահանջէ. որ անհատներ, ընտանիքներ ու գիւղացիական խումբակցութիւններ օրէնքով արգիլուին գրաւել աւելի հոգ քան ինչ որ պէտք ունին բնակութեան ու գործի համար, կամ կըրնան զարգացնել, մշակել ու արդիւնաբերել, անհատապէս ղեկավարելով հոգամշակութեան գործը:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը ուժգնօրէն պիտի հակառակի ընդարձակ ու շահագործող հոգատիրութեան եւ չպիտի թոյլատրէ, որ հայ ու օտար դրամատէրներ յափշտակեն բանուոր հոգագործին աշխատանքի ու փորձառութեան արդիւնքը:

Արտադրութեանց առատութիւնն ու պէսպիսութիւնը ֆաջայեքելու եւ բերքերու արագ բաշխումն ու սպառումը դիւրացնելու համար, կը ջատագովենք գիւղացիական տեղական միութիւններու կազմութիւնը, որոնք պէտք է վայելին կառավարական աջակցութիւն, գործիքներու հայթայթման եւ բերքերու վաճառման համար:

Ամեն հոգատէր պէտք է վնարէ տարեկան որոշ տուրք մը, հողի նշանակուած արժէքին համեմատութեամբ:

Ասոնցմէ գաւոնաւ ելը պահանջենք:-

- 1.- Հողային բաշխումներէն մերջ աւելցած բոլոր հողերուն պետականացում եւ բացարձակ արգիլում հողատիրական շահամուլ ընկերութիւններու կազմութեան: Հողը պէտք է զաղրի շահագիրտական նպատակներու առարկայ ըլլալէ:
- 2.- Ճորտական դրութեան ի սպառ ջնջում եւ անոր վերահաստատումն արգիլող խիստ օրէնքներու նշանակում:
- 3.- Բռնակալութեան օրով թուրքերու եւ քիւրտերու կողմէն բռնագրաւուած հողերու վերագրում:
- 4.- Երկրագործին անմիջական կարիքներու հայթայթման համար երկրագործական գրամատուներու հաստատում:
- 5.- Հողագործական նորագոյն մեքենաներու եւ արգասաւորիչ նիւթերու դիւրամատչելի դնելով կամ ձրի բաշխման համար միջոցներ:
- 6.- Գիւղական ձրի թղթատարութեան գրութիւն եւ լաւ ճամբաներու շինութիւն, հողորդակցութեան միջոցները զիւրացնելու եւ երկրագործական կեանքը գրաւիչ դարձնելու համար:
- 7.- Եկեղեցիներու, վանքերու, եւ կրօնական ուրիշ հաստատութիւններու կալուածող վերահսկողութիւն, կառավարութեան կողմէն նշանակուած մասնաւոր ֆանձնախումբերու ձեռամբ, որպէս զի անոնք իրենց լիառատ արգիւնքը տան եւ անոնց եկամուտները գործածուին պատկանեալ համայնքներու կրթական, կրօնական եւ մշակութային ուրիշ ձեռնարկներու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐՆԱԿՈՂՈՒԹԻՒՆ

1.- Կը չատագովեմք պահպանումն ու բարեխառմը երկրին բնական գեղեցկութիւններուն, անտառներուն, գետերուն, լիճներուն, ջրվէժներուն, համալսարաններուն ու ջերմուկներուն: Անոնք պէտք է նկատուին պետական կալուածներ եւ չենթարկուին եսասէր եւ շահամոլ դրամատէրներու շահագործութեանց:

2.- Համեք որ շահագործումը, երկաթուղիներու կառուցումը, քաղաքական դրութիւնը, հեռագիրն ու հեռախօսը, ֆալաֆային ջուրը, լոյսն ու էլեկտրականութիւնը պէտք է վերապահուին կառավարութեան: Անոնց պետականացումը խիստ անհրաժեշտ կը նկատենք, իբրեւ հանրային ծառայութեան համար սահմանափակ միջոցներ: Եթէ երկրին կազմութեան նախկին տարիներուն մէջ, դրամագլուխի չգոյութեան հետեւանքով, կառավարութիւնը ստիպուի անոնց կառուցումն ու շահագործումը յանձնել դրամատէրական ընկերութիւններու, պէտք է որ:-

Ա.- Նշանակէ կարճ ժամանակամիջոց մը, որմէ վերջ՝ արդար փոխհատուցումն ընելով, տիրանայ անոնց:

Բ.- Նշանակէ չափաւոր եւ արդար հարկ մը պետական գանձը հարստացնելու համար:

Գ.- Հսկէ անոնց գործառնութեանց վրայ որպէսզի ընկերութիւնները ժողովուրդը չկեղեքեն:

3.- Բոլոր ապրանքներու գները պէտք է նշանակուին կառավարութեան կողմէն, նաեւ գազոյն եւ առաւելագոյն չափերու հիման վրայ, որպէսզի առանկով արգիլուի մասնաւորներու կողմէն կատարած հանրային աւագակութիւնները:

4.- Շահադիտական ձեռնարկները պէտք է հալածուին ամենաբուռն կերպով:

5.- Ապրանքներու մաքրութիւնն ու քարմութիւնն ապահովող եւ անոնց գեղ-ծանուումն արգիլող խիստ օրէնքներ պէտք է նշանակուին եւ խստօրէն գործադրուին:

6.- Կառավարութիւնը ստանձնելու է կշիռներու եւ չափերու ճշդութեան վրայ հսկելու գործը: Մեքքական սիստէմը լաւագոյնը կը նկատենք եւ կը փափաքենք անոր որդեգրումը Հայաստանի մէջ:

7.- Հանրային առողջութիւնն անվթար պահելու համար, անհրաժեշտ է կառավարական լուրջ հսկողութիւն: Հետեւեալ ձեռնարկները խիստ անհրաժեշտ կը նկատենք:

Ա.- Հսկել կաթի արտադրութեան վրայ:

Բ.- Բնիկ եւ մաքրել խմելու եւ առանձին պէտքերու համար գործածուած բուրբուրները:

Գ.- Տարափոխիկ հիւանդութեանց դէմ դոզաւորական միջոցներ որդեգրել:

Դ.- Հանրային հիւանդանոցներ եւ բուժարաններ հաստատել:

Ե.- Կառուցանել եւ պահել խենթանոցներ, բանտեր, արգելարաններ եւ անկեղանոցներ, գիտական նորադոյն բժշկականներու համաձայն:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Խնայողութիւնը պէտք է ըլլայ Հայաստանի գանձային դրութիւնը ղեկավարող սկզբունքը: Որքան շոյալութիւնը շատնայ ազգային ծախսերուն մէջ, նոյնքան ծանր պիտի ըլլայ ժողովուրդին բեռը, որովհետեւ անոր վրայ դրուած տուրքի քանակը պիտի շատնայ՝ գանձին պակասը գոցելու համար:

1.- Հայաստանի մէջ բնակող ամեն անհատ՝ քաղաքացի կամ ոչ, պէտք է վճարէ պլանհարկ:

2.- Անձնական եւ անշարժ կալուածոց տուրքերու նշանակումը անհրաժեշտ է:

3.- Կր պահանջներ եկամուտի եւ ժառանգութեան տուրքերու զրուծիւն:

ՄԱՔՍՈՅԻՆ ԽՆԴԻՐ

1.- Մեր կուսակցութիւնը կը հաւատայ քէ հովանաւորիչ մաքսային դրութիւն մը (**Protective tariff**) անհրաժեշտ է, Հայկական մանուկ հարտարարութեան ու վաճառականութիւնն օտար մրցակցութեան կաշկանդումներէն գերծ պահելու եւ քաջալերելու համար:

2.- Խիստ չնչին մաքս նշանակելու է այն ապրանքներու վրայ, որոնք Հայաստանի մէջ երբէք չեն արտադրուիր կամ ձեռագործուիր:

3.- Փոխադարձ համաձայնութեան եւ փոխադարձ նպաստաւորումի սկզբունքներով մաքսային ազատ դրութիւններ հաստատել բարեկամ երկիրներու հետ:

Գ. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ

Մեր կուսակցութիւնը բացարձակապէս կը հակառակի զինուորապետական դրութեան (**militarism**), որ արտաքինապէս նուաճողականութեան կը ձգտի եւ ներքին կեանքին մէջ բռնութիւն եւ հպատակութիւն կ'ստեղծէ: Զինուորապետական ոեւէ շարժում մահացու կը նկատենք հայրենիքի ազատ հաստատութիւններուն համար:

Բայց հայրենիքի պաշտպանութեան եւ ներքին կարգապահութեան համար անհրաժեշտ կը սեպենք մնայուն փոքրիկ բանակի մը կազմութիւնը, եւ պահեստի աւելի մեծ զօրութիւն մը:

Հայրենիքի պաշտպանութիւնն ամեն անհատի գերագոյն ու նուիրական պարտականութիւնն ըլլալով՝ ամեն հայ քաղաքացիի համար զինուորական կրթութիւնը պարտաւորիչ կը նկատենք:

Զինուորական հարցին համար կը ջատագովենք հետեւեալները:

1.- Ամեն հայ քաղաքացի պարտաւոր է, քսան տարեկանին զինուորագրուելով, մէկ տարի ծառայել բանակին:

2.- Բանակէն ազատաձեռնը կը կազմեն երկրի պահեստի ոյժը:

3.- Զինուորները պէտք է պահուին իրենց ծննդավայրի մօտիկ շրջաններուն մէջ:

4.- Սպաներու պատրաստութիւնը զինուորական դպրոցներու մէջ սահմանափակուելու է միայն, այլ յարմարագոյնները վերցնելու է հասարակ շարքերէն ալ: Տարիքէն եւ ընկերական դիրքէն աւելի, բնական կարողութիւններն եւ յարմարութիւնները պէտք է ըլլան յառաջացման պայմաններ:

5.- Տուղանքի սեւէ քանակով հայ քաղաքացին չի կրնար ազատիլ զինուորական ծառայութենէ եւ կամ զօրակոչէ:

6.- Զինուորական կրթութիւնը սկսելու է բարձրագոյն դպրոցի շրջանին, քաջալերելով պատանիներու մարտականքներն, ինչպէս նաեւ պատանեկան խումբերու (**boy-scout**) կազմութիւնը:

Դ. ԿՐԹԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Ժողովրդապետական ազատ կառավարութեան մը պահպանումին միակ երաշխիք ժողովուրդին գիտակցութիւնն է: Երկրի մը մէջ, ուր վեհապետութիւնը յանձնուած է ժողովուրդին, եւ ուր ժողովուրդին կամքէն զատ եւ ոչ մէկ ոյժ կրնայ գործել, *մեհապետը* - այսինքն ժողովուրդը - պէտք է դաստիարակուած ու կրթուած ըլլայ:

Հայաստանի վերաշինութեան եւ յառաջացման լաւագոյն ու ամենագորաւոր ազդակը ազգային առողջ ու հարազատ

դաստիարակութիւնն է: Լաւ կառավարութեան մը եւ լաւ ազգութեան մը հիմը դպրոցներու մէջ կը դրուի: Հետեւաբար հայ մանուկը պէտք է թրծուի ազգայնական ուժեղ դաստիարակութեամբ, Հայաստանի լաւ քաղաքացի մը դառնալու համար:

- 1.- Դպրոցները պէտք է բաժնուին եկեղեցիներէն եւ դառնան քաղաքատեական Հաստատութիւններ եւ ղեկավարուին ժողովրդական քուէով քնարուած Յանձնախումբերով:
- 2.- Նախնական կրթութիւնը պէտք է ըլլայ պարտաւորիչ ու ձրի երկու սեռերուն համար ալ հաւասարապէս: Իսկ բարձրագոյն վարժարաններու կրթութիւնը պէտք է ըլլայ կամաւոր ու ձրի:
- 3.- Դպրոցները պէտք է որդեգրեն ազգային հարազատ մշակոյթը զարգացնող դասընթացքներ, ինչպէս Ազգային պատմութիւն, գրականութիւն, երաժշտութիւն եւ այլն:
- 4.- Պէտք է պարբերաբար Եւրոպա եւ Ամերիկա զրկել որոշ ընդունակութիւն ցուցնող Հայ ուսանողներ, որպէսզի պատրաստուին գիտական, կրթական եւ իմաստասիրական գնահատան ճիւղերու մէջ եւ վերագառնան Հայաստան:
- 5.- Անհրաժեշտ է որ Հայաստանի կեդրոնական մէկ վայրին մէջ Հաստատութի պետական Համալսարան մը, օժտուած գիտական բոլոր ճիւղերուն համար պահանջուած գործիքներով, եւ գիւրամատչելի պայմաններով:
- 6.- Պետութիւնը պէտք է որ քաջալերէ բոլոր գիտական խաղաղութիւնները:
- 7.- Պէտք է քաջալերել գիտական միջոցներու եւ գիտութեան գործածութիւնը հարտարարուեստներու, երկրագոր-

ծութեան եւ զիւղաւանտեութեան մէջ:

- 8.- Հայ Հասարակութեան զարգացման աշխատիլ Հասարակաց ձրի դաստանդութիւններու Հաստատութեամբ:

Լ Ե Ձ Ո Ւ

- 1.- Հայերէնը պիտի ըլլայ Հայաստանի պետական լեզուն:
- 2.- Օրէնքները, պատասխանութիւնները, պաշտօնական բոլոր դրութիւնները, պատանդութիւնները եւ երդումները պէտք է ըլլան Հայերէն լեզուով:

Ե. ԿՐԾՆՔԻ ԽՆԴԻՐ

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը կրօնքը համոզումի խնդիր կը նկատէ եւ ամեն հայ քաղաքացի ազատ է իր խղիւղութեան քեղադրութեան համաձայն որոշելու իր դաւանանքն ու պաշտամունքի եղանակը, պայմանաւ որ այդ դաւանանքի մանրամասնութիւնները չհակասեն Պետական Սահմանադրութեան ոգին ու չվնասեն հանրային բարոյականին:

Կուսակցութիւնն յիստ քոյլատու ոգի մը կը տածէ բոլոր յարանուանութեանց համար ալ հաւասարապէս եւ ոեւէ խտիր չի դնէր կաթոլիկին, բողոքականին ու Հայաստանեայց եկեղեցւոյ զաւկին միջեւ, քաղաքացիական եւ այլ իրաւունքներու տեսակէտէն:

Բայց Հայաստանեայց Առաքելական եկեղեցին՝ ըլլալով ազգային ուրոյն եւ ինքնատիպ հաստատութիւն մը, եւ միաժամանակ հաւատարիմ աւանդապահը՝ ցեղային մշակոյթին, լեզուին, գրականութեան ու արուեստին, ինչպէս նաեւ ազգային գոյութեան զօրաւորագոյն խաբիսը անցելոյն մէջ, կը վայելէ կուսակցութեան յարգանքն ու համակրանքը:

Մեր փափաքն է, որ անիկա եմքարկուի հիմնական բարեփոխութեան մը, եւ արդիական ու յառաջդիմաւոր հանգամանք մը ստանալով, դառնայ դրական ու զօրեղ միջ մը մեր բնկերա-բարոյական կեանքին մէջ:

Այս անկեղծ համակրանքն ու փափանքը ունենալով հանդերձ, մեր կուսակցութիւնը *հեղեցիին բացարձակ բաժանումը կը պահանջէ պետութենէն:*

2. ՎԵՐԱՀԻՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի փառաքանկ ազատութեան պէտք է անմիջապէս յաջորդէ Ազգային վերաշինութեան անյետաճգելի եւ ստիպողական ձեռնարկը: Քանզում, ամայացած, կողոպտուած ու հրդեհուած Հայրենիք պէտք է շուտով վերակենդանանայ:

Վերակենդանութեան այս փրկարար գործը յաջողցնելու համար՝ անհրաժեշտ է որ տարագրութեան արհաւիրքէն հողապրող բեկորներն ու զանազան երկիրներու մէջ ապաստանած Հայ գաղթականները Հայաստան վերադառնան:

Ներգաղթի այս բաղձալի նպատակը յաջողցնելու համար անհրաժեշտ է, որ նկատի առնուին հետեւեալ փաջալերիչ պայմանները. -

- 1.- *Կազմակերպել ոստիկանական եւ զինւորական ուժ, երկրին ապահովութիւնն ու անդորրութիւնը երաշխաւորելու համար:*
- 2.- *Կազմակերպել առողջապահական ջոհատներ, որոնք անմիջապէս գործի սկսելով ապահովեն ժողովուրդին առողջութիւնը երկրին բոլոր մասերուն մէջ:*
- 3.- *Գաղթականներու վերադարձը փութացնելու համար, ի հարկին հայթայթել վերադարձի զեւրութիւններ:*

4.- *Վերադարձողներու ապրուստի միջոցները զեւրացնելու համար բաշխել ձրի հող:*

5.- *Հողային բաշխումէն զատ նաեւ անոնց հայթայթել միջոցներ հողամշակութեան, անասնաբուծութեան, զիւղատնտեսութեան եւ զանազան արհեստներու համար:*

Հայաստանի վերակազմութեան եւ երկիրը շէնցնելու եւ բնակեցնելու գործը չի յաջողիր երբէք, եթէ անիկա ձգուի բաղդի բերումին եւ ժողովուրդի անդեկավար ընտրութեան:

Անհրաժեշտ է, որ փառաքանկ, տընտեսագիտական եւ աշխարհագրական որոշ կրթութիւն ունեցող կարող անհատներէ բաղկացեալ յանձնախումբ մը ուսումնասիրէ ամբողջ երկիրը, եւ գաղթականներու վերադարձն ու բաշխումը կատարէ այնպիսի ձեռնեղծութեամբ մը, որ լաւագոյն կերպով նպաստէ մեր ազգային իդներու իրականացման եւ միեւնոյն տեղն պատեհութիւն տայ հոն հաստատուող գաղթականներու նիւթական բարգաւաճման եւ տնտեսական զարգացումին: Գաղթականներու բնակութեան տեղը որոշելու ժամանակ, անոնց ծննդավայրէն աւելի նախապատուութիւն տալու է այն նահանգներուն եւ վայրերուն, որ ռազմական ու փառաքանկ որոշ նշանակութիւն ունին եւ կամ հարուստ են արտադրութեամբ եւ հանքերով:

Հայաստանի մէջ հայ փառաքանկներու թիւը շատցնելու համար անհրաժեշտ է:-

- 1.- *Ամէն կերպով քաջալերել գաղթականներու վերադարձը:*
- 2.- *Հայացնել մօտիկ կամ հեռաւոր անդեալին մէջ կրօնաւորս եղած Հայերը:*
- 3.- *Տնտեսական բարգաւաճման օժանդակելով եւ երկրին արդիւնաբերութեան միջոցները շատցնելով արգի-*

լել արտադրողին ու պանդխտութիւնը:

4.- Քաջալերել առողջ ամուսնութիւնները:

5.- Առողջապահական զօրաւոր կազմակերպութեամբ արդիւլել տարափոխիկ հիւանդութիւնները, մահատիւ ու համաճարակները, անհարկի մահերն ու արկածները եւ հսկել ծննդարեւութեանց վրայ:

6.- Ուսման համայնացման դրութեամբ եւ պետական օժանդակութեամբ թեթեւցնել բնասնիրներու նիւթական ծանրութիւնները եւ ասանկով քաջալերել բազմազաւակութիւնը:

Բազմաթիւ հայ որբերն ու որբեւայրիները խնամելու եւ դաստիարակելու հոգը եւ վեոհսկողութիւնը պէտք է ըստանձնէ Հայկական Պետութիւնը: Անոնց հոգածութեան համար պէտք է կառուցւին եւ պահուին որոշ հաստատութիւններ, իրենց յարակից արհեստանոցներով եւ արդիւնաբերական միջոցներով, որպէսզի անոնք փոխանակ բեռ ըլլալու եւ ծուլութեան վարժուելու, ազգային վերաշինութեան գործօն մշակներն ու մշակուիները դառնան:

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Վեր. Հնչ. Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակը, քաղաքական վերջին յեղաշրջումներու հետեւանքով, անհրաժեշտ կը նկատէ ուրուագծումն ընել Կուսակցութեան քաղաքական, ընկերային ու տնտեսական ըմբռնումներուն, թողելով անոր վերջնական բարեփոխումն ու մանրամասնութիւնները, ընդհանուր պատգամաւորական ժողովին, որ պիտի գումարուի անմիջապէս, երբ քաղաքական պայմանները ներեն:

ԾՐԱԳԻՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ*

Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդ. 1.- Ազատական կուսակցության ընդհանուր նպատակն է՝ պաշտպանել Հայ Ազգին ֆաղափական, տնտեսական ու ֆաղափակրթական շահերը, որոշ դաւանանքով եւ սկզբունքներով:

Դ Ա Ի Ա Ն Ա Ն Ք

Յօդ. 2.- Կուսակցութեան դաւանանքը ազգայնականութիւնն է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ա.- Միացեալ Հայաստանի անկախութեան իրականացումն ու հողային ամբողջութեան տիրացումը հետապնդել:

Բ.- Քաղաքակիրք աշխարհին եւ գրացի ազգերու հետ տեւական բարոյք յարաբերութիւններ մշակել:

Գ.- Անհատին դէպի պետութիւնը, եւ պետութեան դէպի անհատը, պարտականութիւններն ու իրաւունքները ճշդել՝ արժեքներով անձի ազատութիւնը՝ լայն սահմանի մէջ, եւ ապահովելով բնական րանի անձեռնմխելիութիւնը:

Դ.- Կատարեալ ազատութիւն՝ գումարելու, խօսելու, գրելու, եւ ֆաղափական ու տնտեսական ընկերակցութիւններ կազմելու:

Ե.- Պետութեան ձեւը՝ հանրապետութիւն, հիմնուած ժողովուրդի վեհապետութեան սկզբունքին վրայ, օրէնսդրական, դատարանական ու գործադիր իշխանութեան բաժանումներով:

Զ.- Ընդհանուր, ուղղակի, գաղտնի եւ հաւասար ֆուէրկութիւն:

Է.- Ամէն հայ ֆաղափացի, այր թէ կին, իրաւունք ունի ընտրելու եւ ընտրւելու:

Այս իրաւունքէն կը գրկուին ռքագործները, մտագործներն ու պետութեան գէմ դաւանանդները, որոնք դատարանական դատապարտութիւն կրած են:

Ը.- Օրէնսդրական ամէն կարելի միջոցներով ամենախիստ պատիժներ սահմանել պետական եւ ֆաղափապետական անպարտախանաչ ու գեղծարար պաշտօնեաներու համար:

Թ.- Բոլոր դատարաններու նուիրական ու անբռնարարելի հանգամանքը ապահովել:

Ժ.- Կրօնքը պետութենէն անջատ է: Երկրին քրիստոնեայ եւ ոչ-քրիստոնեայ տարբերուն միջեւ չկրնար խտրութիւն գոյութիւն ունենալ՝ ֆաղափական եւ ֆաղափացիական պարտականութիւններու եւ իրաւունքներու տեսակէտով: Օրէնքին կը ձգուի բանաւոր կանխագոյշութիւնը՝ ապահովուելու համար կեղծ ու անհարազատ ֆաղափացիութեան դէմ:

ԺԱ.- Հայաստանի պաշտօնական լեզուն հայերէնն է:

ԺԲ.- Զօրապաշտական ոգիին դէմ ենք, բայց հայրենիքի պաշտպանութեան եւ ներքին կարգապահութեան համար գործօն բանակի մը կազմութիւնը եւ պահեստի ուժի մը գոյութիւնը անհրաժեշտ կը նկատենք:

ԺԳ.- Բանակը ֆաղափական ազդեցութիւններէ զերծ պէտք է ըլլայ եւ պէտք չէ գրադուի ֆաղափականութիւնով: Խաղաղ ժամանակները զինուորը կը գործադրէ ֆուէրկելու իր ֆաղափացիական

* Առանձին գրքով լոյս տեսած է 1921-ին

իրաւունքը. պատերազմի միջոցին այդ իրաւունքը կ'առկալսուի:

ԺԴ.- Մեր կռուակցութիւնը ապագասակարգային է: Ամէնքին բանաւոր ու արդար իրաւունքներուն պաշտպանութիւնը կը կազմէ առանցքը մեր ձգտումներուն ու աշխատութիւններուն:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ա.- Ամէն կարելի միջոցներով ջանալ որ հայ գիւղացին կարենայ հողատէր ըլլալ եւ բարեկեցիկ վիճակի մը տիրանալ՝ իր աշխատանքին արդիւնքը լիուրի վայելելով:

Բ.- Օրէնսդրական միջոցներով, հողի անհատական սեփականութեան սահման մը որոշել, նպատակ ունենալով որ գիւղացի տարրը հորտական դրութեան եմքարկուելու վտանգէն միանգամընդմիջտ ազատ մնայ եւ հողը դադրի շահադիտական շահագործումի առարկան ըլլալէ:

Գ.- Բոլոր հողերը տեսականօրէն պետութեանն են, եւ հանրային պէտքի մը համար պետութիւնը ազատ է գրաւելու հողը, արդար հատուցումն ընելով հողին ժամանակաւոր տիրոջ:

Դ.- Օրական 8 ժամուան աշխատանք:

Ե.- Շաբաթուան մէջ միայն 6 օր գործելու օրէնք:

Զ.- Գործարաններու մէջ առողջապահիկ օրէնքներու կիրարկում եւ բժշկական անմիջական օգնութիւն՝ արկածեալներու եւ հիւանդներու համար:

Է.- Բանուորներու ընդհանուր ապահովագրութիւն, արկածի, հիւանդութեան եւ ծերութեան դէմ:

Ը.- Հանգստաթոշակ բոլոր գործաւորներուն՝ աշխատանքի որոշ ժամանակաշրջանէ մը վերջ:

Թ.- Լիակատար հատուցում՝ գոր-

ծարաններու մէջ զգուշական միջոցներու պակասին հետեւանալով վնասուած գործաւորներուն:

Ժ.- Աշխատանքի ճրի պաշտօնասեռեակներ, գործ հայթայթելու համար անգործներուն:

ԺԱ.- Հայրենիքի շահերուն տեսակէտով կարելի եղածին չափ նպաստաւոր պայմաններով, օտար դրամագլուխներու ներմուծումը՝ յօգուտ հարտաբարութեսուի եւ հանրօգուտ շինութեանց:

ԺԲ.- Ամէն կարելի միջոցներով փութացնել Հայաստանի մէջ երկրագործական ու արհեստական վարժարաններու եւ գործնական վարժոցներու հաստատութիւնը:

ԺԳ.- Աշխատիլ բոլոր երկրին մէջ տարածելու՝ գործակցական ընկերութիւններ (co-opératif):

ԺԴ.- Դրամագլխի գոյութիւնը ընդունելով հանդերձ՝ օրէնսդրական միջոցներով կառավարական խիստ ու իրական հակակշիռ պահել անոր վրայ, մանրավաճառներու, եւ գործաւորներու ու բանուորներու օրինաւոր շահերը պաշտպանելու համար:

ԺԵ.- Որոշել շահի առաւելագոյն չափ մը, որմէ աւելի ռեւէ շահ դատապարտելի նկատուի օրէնքին առջեւ:

ԺԶ.- Որոշել օրավարձի նուազագոյն չափ մը եւ վարձի քանակը աւելցնել գործատիրոջ ըրած շահին համեմատութեամբ:

ԺԷ.- Մասնաւոր օրէնսդրութիւն՝ կանանց եւ տղոց աշխատութեան համար:

ԺԸ.- Հանգիւստ, երկաթուղիներու, հեռագրի, փոստի, ֆաղափային ջուրի, լոյսի, եւ նմանօրինակ հիմնարկութիւններու տէրը՝ պետութիւնն է, որ կրնայ, սակայն, ի հարկին անոնց շահագործումը մասնաւոր ընկերութիւններու կամ

անհատներու փոխանցել՝ որոշ պայմանաժամով միայն:

ԺԹ.- Փութացնել հանրակառքերու, երկաթուղիներու եւ խնուղիներու շինութիւնը, հանքերու շահագործումը, հեռագրի եւ հեռաձայնի ցանցերու հաստատութիւնը, նահիմներու ցամաքեցումը, անջրդի հողերու ոռոգումը, եւայլն:

Ի.- Մաքսային չափաւոր հովանաւորիչ (protectif) դրութիւն մը բնդունիլ, հայկական մարտաբարուեստը պաշտպանելու եւ ֆաջալերելու նպատակով:

ԻԱ.- Խիստ չնչին մաքս նշանակել այն ապրանքներուն վրայ, որոնք Հայաստանի մէջ երբեք չեն արտադրուիր կամ ձեռագործուիր:

ԻԲ.- Փոխադարձութեան սկզբունքին վրայ ազատ մաքսային դրութեան համաձայնութիւն գոյացնել բարեկամ երկիրներու հետ:

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Կրթութիւն եւ Մշակոյթ

Ա.- Մտաւորական հողի վրայ, որուն մէջ կը հասկնանք նաեւ գեղարուեստը, հայ ժողովուրդի զարգացման եւ անոր ինքնատիպ մշակոյթին մղում տայ երկրորդական եւ մասնագիտական թէ՛ հանրային եւ թէ՛ մասնաւոր վարժարաններու, յսարաններու, հանրային ձրի դասասփոսութիւններու եւ գրադարաններու հիմնարկութեամբ:

Բ.- Երկսեռ վարժապետանոցներ հաստատել:

Գ.- Նախնական կրթութիւնը բնդհանուր, պարտաւորիչ եւ ձրի:

Դ.- Միջնակարգ կրթութիւնը նոյնպէս՝ ձրի, բայց կամաւոր:

Ե.- Փնտռել, գտնել եւ պահել հայկական ամէն տեսակ հնութիւններ:

Զ.- Քաջալերել գիտական խուզարկութիւնները:

Է.- Քաջալերել գիտական միջոցներու եւ գիւտերու գործածութիւնը մարտաբարուեստներու, երկրագործութեան եւ գիւղատնտեսութեան մէջ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Ա.- Մեր կուսակցութիւնը ազգայնական եւ ազատական է:

Բ.- Ազգայնական ըսելով կը հասկընանք՝ Ազգին անհատականութիւնը եւ անոր օրինաւոր շահերն ու իրաւունքները աննկուն պաշտպանելու ձգտումը, յարգելով, նոյն ատեն, ո՛րեւէ տարբեր ժողովուրդի իրաւունքները եւ խղճմտօրէն զգուշանալով ուրիշին շահերուն վնաս հասցնելէ:

Գ.- Ազատական ըսելով կը հասկնանք չքոյլատրել ուրեւ օրէնսդրական կամ վարչական կարգադրութիւն, որ պիտի ձգտի անհատներու կամ հաւաքականութիւններու փրկման, մտաւորական եւ բարոյական կարողութիւններու կիրարկումին իրաւունքը խափանել:

Բաց միտք մը ունենալ նոր գաղափարներու. լայն աշխարհահայեացքներու եւ յառաջդիմական գործերու մասին, որոնք կարելի պիտի ըլլայ սակայն որդեգրել եւ կիրարկել՝ հայ աշխարհին ֆառաքական եւ տնտեսական պայմաններն ու միջավայրը նկատի առնելով:

Դ.- Քաղաքական, տնտեսական ու բնկերային բարեփոխումներու համար կ'ընդունինք բարեշրջումի եղանակը եւ դէմ ենք բռնութեամբ ու բիրտ ուժով յեղափարծ փոփոխութիւններ պարտադրելու եղանակին:

Ե.- Անհատական սեփականատիրութեան սկզբունքներու անհատական ձեռնարկութեան իրաւունքը ջիղը կը նկատենք տնտեսական յառաջդիմութեան,

իսկ տնտեսական կեանքի մէջ հաւասարակշռութեան ու ներդաշնակութեան պահպանման համար կ'ընդունին կառավարական հակակշռի եւ միջամտութեան իրաւունքը եւ կազմութիւնը բանուորական ու գործատիրական յանձնախումբերու, որոնք կառավարական միջամտութեան առաջ բանակցին, ծագած խնդիրները լուծելու եւ խոչընդոտները բառնալու համար:

Այս ծրագիրը վերաքննելի է Ազատական Կուսակցութեան է.րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին կողմէ:

**ՌԱՄԿԱՎԱՐ
ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ**

ԾՐԱԳԻՐ Ռ. Ա. Կ. Ի

Ծանօթ.— Ձախի աղիւսակով կու տանք 1922-ին լոյս տեսած Ծրագիրը: Աջի աղիւսակին մէջ կը հանդիպինք հետազային կատարուած բարեփոխումներուն կամ յաւելումներուն — Վ. Ղ.:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ռամկավար Ազատական Կուսակցութեան ծրագիրը հասարակութեան ներկայացնելու առիթով կ'ուզենք մէկ քանի բառերու մէջ խտացնել ռամկավարական կարգուսարքերու եւ ժողովուրդի վեհապետութեան լմբունումին վրայ հիմնուած այս Կուսակցութեան աշխարհահայեացքն ու ուղղութիւնը:

Ազգին անհատականութիւնն ու անոր օրինաւոր շահերն ու իրաւունքները պաշտպանելու ձգտումը՝ ուրիշ ժողովուրդներու իրաւունքներուն եւ շահերուն հանդէպ տաժած յարգանքին հետ կը բնորոշեն այս Կուսակցութեան ազգայնականութիւնը:

Ազատականութեան մէջ կ'ըմբռնուին անհատներու եւ հաւաքականութիւններու ֆիզիքական, մտաւորական եւ բարոյական կարողութիւններու ազատ կիրարկման իրաւունքն ու հայ հայրենիքի քաղաքական եւ տնտեսական պայմաններուն պատշաճօղ եւ անոնց մղում տուող ամէն տեսակ նոր եւ յառաջդիմական դադարները որդեգրելու պատրաստակամութիւնը:

Քաղաքական, տնտեսական ու բնկերային բարեփոխութիւնները՝ բարեշրջման (évolution) եղանակով:

(1922)

Ն Ե Ր Ա Ծ Ո Ի Թ Ի Ի Ն

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, հարագատ ծնունդ հայ ժողովուրդի եւ քարգման անոր տոհմիկ ինքնապահպանման բնագոյն, ազգային ազատագրութեան կը ձգտի ֆիզիքական գոյութեան եւ տնտեսական ու մշակութային զարգացման քամքով ու համբաւաշի ցիգով, ու այդ պատճառով եւս կը մերժէ եւ հայ իրականութեան ալ խորք կը նկատէ դասակարգային պայքարները կամ այլ խտրութիւնները:

Այդ քամքուն վրայ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր ցզքիտ արժէքով կը գնահատէ, դարեր ամբողջ ակնկալուած քաղաքական ներկայ քանկագին իրողութիւնը որ գոյութիւնն է Հայ Պետութեան, Հայ Հողին վրայ, հոծ հայ ազգաբնակչութեամբ: Ներկայի այս իրականութիւնը կը պահանջէ համապատասխան գիտակից քաղաքական բմբռնում եւ քաղաքական դաստիարակութիւն:

Հաւատարմօրէն եւ բոլորանուէր ծառայելով Հայ Պետութեան գօրացման եւ զարգացման, Անոր մէջ հայ ազգը պարտի փնտռել իր գոյութեան ապահովութեան եւ ազգային մեր պատմական եւ անշիջելի իրաւունքներուն իրագործման քաղաքական խարիսխը, որուն գուրգուրանքով պարտինք կառչած մնալ:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հետապնդելով հանդերձ այս քաղաքական դրապաշտ ու հայրենասիրական ուղղութիւնը, չի հրաժարիր ազատ

ֆննադատութեան իր իրաւունքէն հանդէպ այն ընկերային իրաւակարգին, որ Հայ Պետութեան սահմաններուն մէջ կը կիրարկուի այժմ:

Մեր Կուսակցութեան ընկերային աշխարհայեացքը կը հիմնուի ժողովուրդի վեհապետութեան սկզբունքին վրայ, անհատական ու հաւաքական բնական իրաւունքներու կիրարկումով եւ բարեշրջման եղանակով:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը չի բաժներ գաղութահայութիւնը հայրենի հողին կառչած հայութենէն, ու կապելով գաղութահայութիւնը Հայ Պետութեան եւ Հայրենիքին, միեւնոյն ժամանակ կը ծառայէ թէ՛ մէկին եւ թէ՛ միւսին՝ զօրեղացման ու ինքնապահպանման, փոխադարձ ներշնչումներով եւ օժանդակութեամբ:

Գաղութահայութեան ինքնապահպանումի եւ ազատ բարգաւաճումի նոյն մտահոգութեամբ է նաեւ որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը գաղթաշխարհի մէջ կը ձգտի հայ զանգուածները հաւատարիմ պահել հիւրընկալ օտար երկիրներու եւ պետութեանց օրէնքներուն եւ շահերուն:

(1935)

Ն Պ Ա Տ Ա Կ

Ռամկավար Ազատական Կուսակցութեան նպատակն է՝ ապահովել եւ պահպանել Միացեալ Հայաստանի անկախութիւնը, պաշտպանել Հայ Ազգին քաղաքական, տնտեսական եւ քաղաքակրթական-մշակութային շահերը, ու աշխատիլ տնտեսք բարգաւաճման:

ա.

Ռամկավար Ազատական Կուսակցութեան նպատակն է.

Ա. Ժողովրդային կամքի գերիշխանութիւնը եւ ռամկավար ազատական սկզբունքներու կիրարկումը Հայ հանրային կեանքին մէջ.

Բ. Ազատ Հայաստանի ընդհանուր բարգաւաճումը եւ զարգացումը.

Գ. Գաղութներու մէջ հայկական մշակոյթի պահպանումն ու զօրացումը.

Դ. Հայաստանի եւ գաղութներու միջեւ յարաբերութեանց ամրապնդումը:

(1924)

10.

Ռամկավար Ազատական Կուսակցութեան նպատակն է.

Ա. Ազատ Հայաստանի ընդհանուր բարգաւաճումը եւ զարգացումը.

Բ. Ժողովրդային կամֆի գերիշխանութիւնը եւ ռամկավար ազատական սկզբունքներու կիրարկումը հայ հանրային կեանքին մէջ.

Գ. Հայաստանի վերաշինութիւնը եւ ազգահաւաքումը.

Դ. Հայաստանի եւ գաղութներու միջեւ յարաբերութեանց ամրապնդումը.

Ե. Գաղութներու մէջ հայկական մշակոյթի պահպանումն ու զօրացումը:

(1926)

11.

Ռամկավար Ազատական Կուսակցութեան նպատակն է.

Ա. Հայաստանի պետութեան զարգացումն եւ բարգաւաճումը ազատ դաշնակցային կապերով իրարու կապուած եւ ռուսական «օրիանքասիր» (ֆաղափական վարձագիծ) ունեցող պետութեանց խրաւրումին մէջ:

Բ. Հայոց Թուրքիոյ մէջ ունեցած իրաւունքներուն եւ շահերուն հետապնդումը:

Գ. Ժողովրդային կամֆի գերիշխանութիւնը եւ ռամկավար ազատական սկզբունքներու կիրարկումը հայ հանրային կեանքին մէջ:

Դ. Հայաստանի վերաշինութիւնը եւ ազգահաւաքումը:

Զ. Գաղութներու փիզիքական եւ տնտեսական զարգացում եւ անոնց մէջ հայկական մշակոյթի պահպանումն ու զօրացումը:

(1930)

7.

Ռամկավար Ազատական Կուսակցութեան նպատակն է՝

Ա.- Ժողովրդային կամփի գերիշխանութիւնը եւ ռամկավար ազատական սկզբունքներու կիրարկումը հայ պետական եւ հանրային կեանքին մէջ:

Բ.- Հայաստանի պետութեան զարգացումն ու բարգաւաճումը:

Գ.- Արտասահմանի հայ զանգուածներուն հայրենի հողի վրայ հաւաքումը:

Դ.- Հայոց թուրքիոյ մէջ ունեցած իրաւունքներուն եւ շահերուն հետապնդումը:

Ե.- Հայաստանի եւ Գաղութներու միջեւ յարաբերութեանց ամրապնդումը:

Զ.- Գաղութներու փիզիքական եւ տնտեսական զարգացումն ու անոնց մէջ հայկական մշակոյթի պահպանումն ու զօրացումը:

(1935)

8.

Ռամկավար Ազատական Կուսակցութեան նպատակն է՝

1.- Հայ ազգին փիզիքական, տնտեսական, մշակութային, տնտեսական եւ քաղաքական գոյութիւնը, պահպանումը եւ զարգացումը:

2.- Ժողովրդային կամփի գերիշխանութիւնը եւ Ռամկավար Ազատական սկզբունքներուն կիրարկումը հայ հանրային կեանքին մէջ:

Այդ նպատակը իրագործելու էական միջոցներն են՝

Ա.- Հայաստանի զարգացումն ու բարգաւաճումը:

Բ.- Արտասահմանի հայ զանգուածներուն ազգապահպանումը եւ կեդրոնացումը հայ հողի վրայ:

Գ.- Հայոց Թուրքիոյ մէջ ունեցած իրաւունքներուն եւ շահերուն հետապնդումը:

Դ.- Հայաստանի եւ գաղութահայութեան միջեւ յարաբերութեանց ամրապնդումը:

Ե.- Գաղութներու փիզիքական եւ տնտեսական զարգացումն ու անոնց մէջ հայկական մշակոյթի պահպանումն ու զօրացումը:

Զ.- Մշակում բարոյք յարաբերութեանց այն երկիրներու ժողովուրդներուն հետ, ուր հայեր կ'ապրին, զանոնք հաւատարիմ պահելով իրենց բնական երկրներուն:

(Է. Ընդհ. Պատգմ. Ժողով)

ԳԼՈՒԽ Ա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Յօդուած 1.- Կուսակցութիւնը հիմնուած է ժողովրդային վեհապետութեան եւ քաղաքացիական հաւատար իրաւունքներու սկզբունքին վրայ եւ չի ճանչնար դասակարգային ոեւէ խտրութիւն:

Յօդ. 2.- Հայաստանի կառավարութեան ձեւ կ'ընդունուի Ռամկավարական Հանրապետութիւնը, Օրէնսդրական, Դատարանական եւ Գործադիր Իշխանութեանց բաժանումներով:

ԳԼՈՒԽ Բ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՆԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 1.- Հայաստանի ամէն քաղաքացի ըստ իր անձնական հաւատար է օրէնքի առջեւ:

Յօդուած 1.- Կուսակցութիւնը հիմնուած է քաղաքացիական իրաւունքներու հաւասարութեան սկզբունքին վրայ եւ չի ճանչնար դասակարգային ոեւէ առանձնաշնորհում:

(1924)

Յօդ. 3.- Ամէն քաղաքացի բացարձակապէս հաւասար է օրէնքի առջեւ:

(1924)

Յօդ. 2.- Հայաստանի ամէն քաղաքացի կը վայելէ քուէարկութեան հաւասար իրաւունք սահմանադրութեամբ որոշուած տարիքէն սկսեալ, առանց սեռի խտրութեան:

Յօդ. 3.- Ներկայացուցչական բոլոր մարմիններու ընտրութիւնը կը կատարուի ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղանի քուէարկութեամբ:

Յօդ. 4.- Զինուորական կըթութիւնը պարտաւորիչ է Հայաստանի բոլոր արուրնակչութեան համար, ինչպէս նաեւ, ի հարկին, զինուորական հաւասար ծառայութիւնը:

Յօդ. 5.- Բանակը քաղաքականութիւնով չի զբաղիր, որով կ'արգելուին այդ նպատակով բրօրականտն եւ անոր վրայ փորձուած ազդեցութիւնները: Խաղաղ ժամանակներու մէջ միայն, խորհրդարանի մասնաւոր քուէով, զինուորը ազատ կը թողուի գործադրելու իր քաղաքացիական իրաւունքը, մինչ պատերազմի եւ ուրիշ անընականոն ժամանակներու մէջ, անոր այդ իրաւունքը առկախուած է:

Յօդ. 6.- Հայերէնը պետական պաշտօնական լեզուն է:

Յօդ. 7.- Նախակըթութիւնը ընդհանուր, ճրի եւ պարտաւորիչ է: Երկրորդական եւ համալսարանական կըթութեան համար՝ պետութեան կողմէ կը հայթաղթուին դիւրութիւններ ընդունակ աշակերտներուն:

Յօդ. 8.- Ազատութիւն խօսքի, մամուլի, խնդրագրի (petition), հանրագրութեան, հաւաքումներու, ընկերակցութեան եւ ճամբորդութեան:

Յօդ. 4.- Ամէն քաղաքացի կը վայելէ քուէարկութեան հաւասար իրաւունք 20 տարեկանէն սկսեալ, առանց սեռի խտրութեան:

(1924)

Յօդ. 6.- Զինուորական կըթութիւնը պարտաւորիչ է Հայաստանի մէջ:

(1924)

(Յօդ. 5-ը հետագայ բոլոր վերամշակեալ Ծրագրերէն դուրս ձգուած է:)

Յօդ. 7.- Հայերէնը պետական պաշտօնական լեզուն է: Փոքրամասնութեանց մշակութային տեսակէտով՝ ինքնուրոյն դիմագիծը կը փանջցուի:

(1935)

Յօդ. 9.- Ազատութիւն խղճի, կրօն-
քի եւ պաշտամունքի:

Յօդ. 10.- Անձեռնմխելիութիւն ան-
ձի, անբռնարարութիւն բնակարանի,
ստացունածքի եւ նամակի:

Յօդ. 11.- Հրապարակային դատա-
վարութիւն եւ երգուեալ դատաւորներու
զբոսթիւն:

Յօդ. 12.- Վարչական սպակեզրո-
նացում՝ պետութեան հիմնական օրէնք-
ներուն համաձայն:

ԳԼՈՒԽ Գ.

ԸՆԿԵՐԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Յօդ. 1.- Հրատարակում օրէնքնե-
րու, որ կ'ընծային զարգացման հաւա-
սար պատեհութիւն բոլոր քաղաքացինե-
րուն եւ կ'ապահովեն արդարութեան գոր-
ծադրութիւնը պետութեան ընկերա-տըն-
տեսական կեանքին մէջ:

(Յօդ. 11-ը հետագայ բոլոր վերա-
մշակեալ Ծրագրերէն դուրս ձգուած է:)

III.

Յօդ. 13.- Հրատարակում օրէնքնե-
րու, որոնք զարգացման հաւասար պատե-
հութիւն կ'ընծայեն բոլոր քաղաքացինե-
րուն եւ կ'ապահովեն արդարութեան գոր-
ծադրութիւնը պետութեան ընկերային եւ
տնտեսական կեանքին մէջ:

(1924)

IV.

Յօդ. 13.- Սեփականութեան իրա-
ւունքը կը նկատուի իբրեւ արդար վայե-
լումը աշխատանքի եւ խնայողութեան
արդիւնքին: Ժառանգական իրաւունքը կը
յարգուի որոշ սեղմումներով եւ հարկա-
յին պարտադրութեամբ՝ ի նպաստ պե-
տութեան:

Յօդ. 14.- Անհատական ձեռներէցու-
թիւնը կը քաջալերուի իբրեւ խթան յա-
ռաչդիմութեան եւ անհատին ու համայն-
քին վիճակին բարելաւման: Զարգացման

*Յօդ. 2.- Հիմնարկութիւն պետական
գրամատուներու՝ ընծայելու համար
գիրամատուչելի վարկ քաղաքացիներուն:*

*Յօդ. 3.- Կանոնաւորում՝ օրէնսդրա-
կան միջոցներով՝ աշխատութեան եւ
գրամատուչելի փոխադարձ յարաբերու-
թիւններուն:*

*Յօդ. 4.- Արդար եւ համերաշխ գոր-
ծակցութիւն եւ շահակցութիւն գրամա-
տուչի եւ աշխատութեան միջեւ, հաշ-
տարար առեաններու միջոցաւ:*

*Յօդ. 5.- Պետական վերահսկողութիւն
աշխատանքի ժամերու, վարձատրութեան
չափի եւ գործավայրերու առողջապահա-
կան պայմաններու:*

*Կանանց եւ անչափահասներու աշխա-
տութեան պայմաններու մասին մասնա-
ւոր օրէնսդրութիւն:*

հաւասար պատեհութիւն կը տրուի բոլոր
քաղաքացիներուն համար:

*Յօդ. 15.- Ընտանիքը կը նկատուի
հիմնականութեան եւ օրէնքով կը սահ-
մանաւորուին ամուսնութեան, այր-կնոջ
փոխադարձ իրաւունքներուն եւ պարտա-
կանութեանց, զաւակներուն հանդէպ ա-
նունց պարտաւորութեանց եւ ընտանեկան
ստացուածքի սեփականութեան խնդիր-
ները:*

*Յօդ. 16.- Բոլոր քաղաքացիներուն
կ'ապահովուի արդարութեան գործա-
դրութիւնը պետութեան ընկերային եւ
տնտեսական կեանքին մէջ:*

(1935)

*Յօդ. 17.- Հիմնարկութիւն պետա-
կան եւ վարկային դրամատուններու՝ ըն-
ծայելու համար դիւրամատուչելի վարկ
քաղաքացիներուն:*

(1935)

*Յօդ. 19.- Արդար եւ համերաշխ գոր-
ծակցութիւն եւ շահակցութիւն դրամա-
գլուխի եւ աշխատութեան միջեւ, աշխա-
տանքի վէներուն լուծումը՝ հաշտարար
առեաններու միջոցաւ:*

(1935)

*Յօդ. 17.- Պետական վերահսկողու-
թիւն աշխատանքի ժամերու, վարձատ-
րութեան չափի, գործավայրերու առող-
ջապահական պայմաններու եւ կանանց ու
անչափահասներու աշխատութեան պայ-
մաններուն վրայ:*

(1924)

Յօդ. 6.- Հաստատում պետական գրասենեակներու (պիւրօ)՝ իրրեւ միջնորդ գործատիրոջ եւ գործաւորի միջեւ, սնդործներու աշխատանք հայթայթելու համար:

Յօդ. 7.- Պետական սպահովագրութիւն՝ պաշտպանելու համար ամէն կարգի աշխատաւորներ՝ բնդդէմ անգործութեան, հիւանդութեան, արկածի, ծերութեան եւ մահուան:

Պետական սպահովագրութիւն նաեւ բնդդէմ բնական պատահարներու, ինչպէս՝ երաշտ, հեղեղ, կարկուտ, եւն.:

Յօդ. 8.- Օրէնսդրական մասնաւոր միջոցներով քաջալերել եւ պաշտպանել երկրագործութիւնը եւ առանին ճարտարարուեստը:

Յօդ. 9.- Պետութեան կր պատկանի հանքերու, անտառներու, ջուրերու եւ ուրիշ բնական հարստութիւններու արդիւնագործումը:

Կառավարութիւնը կրնայ՝ իր վերահսկողութեան տակ՝ անոնց շահագործումը տալ անհատներու կամ բնկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար:

Յօդ. 10.- Պետականացում թղթատարութեան, հեռագրի, հեռախօսի եւ երկաթուղիներու:

Կառավարութիւնը կրնայ՝ իր վերահսկողութեան տակ՝ երկաթուղիներու, հեռագրի եւ հեռախօսի մենաշնորհը տալ անհատներու կամ բնկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար:

Յօդ. 11.- Քաղաքապետութեան կր պատկանի հանրակրթութիւնը, յոյսի ու ջուրի մատակարարութիւնը:

Քաղաքապետութիւնը կրնայ անոնց մենաշնորհը տալ անհատներու կամ բնկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար:

Յօդ. 19.- Պետական ապահովագրութիւն՝ պաշտպանելու համար ամէն կարգի աշխատաւորները ընդդէմ անգործութեան, հիւանդութեան, արկածի, ծերութեան եւ մահուան:

Նոյնպէս՝ ապահովագրութիւն ընդդէմ բնական պատահարներու, ինչպէս՝ երաշտ, հեղեղ, կարկուտ եւն.:

(1924)

Յօդ. 25.- Պետականացում քղքատարութեան, հեռագրի, հեռախօսի, երկաթուղային եւ փոխադրական միջոցներու, ջրանցքներու եւ էլեկտրակայաններու:

(1935)

Յօդ. 12.- Քաջակերում զործակցական (coöperative) ընկերակցութիւններու կազմակերպումին եւ ծաւալման:

Յօդ. 13.- Պետական հասոյթի հայ-թայթում՝ առերբի արդար բաշխումով, որպէսզի չջրատուին անհատական ու ընկերակցական ձեռներեցութիւնը եւ երկրին արդիւնաբերական եւ առեւտրական զործունէութիւնը:

Յօդ. 14.- Յառաջատուական առերբ եկամուտի եւ ժառանգութեան վրայ, իսկ համեմատական միօրինակ առերբ՝ հողի եւ կայրածի արժէքին վրայ:

Յօդ. 15.- Աստիճանական ջնջում առողջակի առերբերու:

ԳԼՈՒԽ Դ.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

Յօդուած 1.- Կուսակցութիւնը կը ճանչնայ հողային սեփականութեան իրաւունքը:

Յօդ. 2.- Հողին անհատական սեփականատիրութիւնը կը սահմանաւորուի խորհրդարանին կողմէ քուէարկուած հողային օրէնքներու համաձայն:

Յօդ. 3.- Սեփականատիրութեան ընդհանուր պայմանն է հողին մշակութիւնը եւ արդիւնագործումը:

Ներկայ հողային սեփականատիրութեանց իրաւունքները կը ճշդուին այս սկզբունքին կիրառութեամբը:

Յօդ. 28.- Արդար բաշխում պետական տուրքերու, որպէսզի չջրատուին անհատական ու ընկերակցական ձեռներեցութիւնը եւ երկրին արդիւնաբերական ու առեւտրական գործունէութիւնը:

(1935)

Յօդ. 28.- Կուսակցութիւնը կը ճանչնայ անհատական սեփականութեան իրաւունքը:

(1924)

(1935-ի Ծրագրին մէջ ջնջուած է այս յօդուածը:)

III.

Յօդ. 30.- Հողային սեփականութեան իրաւունքը կը պայմանագրուի եւ կը սահմանափակուի հողին մշակութեամբ եւ արդիւնագործութեամբ:

Հողային ներկայ սեփականատիրութեանց իրաւունքները կը ճշդուին այս սկզբունքին կիրառութեամբ: Պետութիւնը կրնայ երկրի արդիւնաբերութեան գարգացման համար ընկերութիւններու եւ անհատներու տալ որոշ չափէն աւելի հողեր:

(1924)

Բ.

Յօդ. 32.- Հողային սեփականութեան իրաւունքը կը պայմանաւորուի եւ կը սահմանափակուի հողին մշակութեամբ եւ արդիւնագործութեամբ:

Պետութիւնը կրնայ երկրի արդիւնաբերական զարգացման համար ընկերութիւններու եւ անհատներու տալ որոշ չափէն աւելի հողեր:

(1935)

Յօդ. 4.- Հողագտերը եւ սակաւահող գիւղացիներու ձրիարար հող կը արուի պետական տնօրինութեամբ, հողային ընդհանուր օրէնքի համաձայն:

Յօդ. 5.- Հողին բաշխման չափանիշը (նօրմա) կ'որոշուի տեղական պայմաններու, հողին որակին եւ աշխատութեան չափին համեմատ:

Յօդ. 6.- Պետութիւնը իրաւունք ունի դրուելու անհատներու եւ ընկերութիւններու սեփական հողերը, երբ անոնք օրէնքով սահմանուած չափանիշէն աւելի են, նաեւ այն հողերը եւ անշարժ ստացածինները, որոնք անհրաժեշտ են հանրօգուտ նպատակներու համար, արդար հատուցում ընելով անոնց տէրերուն:

Յօդ. 7.- Գրաւման ենթակայ չեն՝

Ա. Այն հողերը, որոնք թէեւ չափանիշէն աւելի, բայց կը ծառայեն հանրային, մշակութային եւ բարեգործական նպատատութեանց պահպանման:

Բ. Այն հողերը, որոնք իբր պարտէզ, այգի, մրգաստան, փորձադաշտ, բուծարան են, իրենց վրայ կը կրեն մասնաւոր աշխատանքի եւ պրամագլուխի արդիւնքը:

Գ. Գործարաններու եւ այլ ճարտարարուեստական հիմնարկութիւններու պատկանող հողերը, որոնք անհրաժեշտ են անոնց գործածութեան համար:

Յօդ. 35.- Պետութիւնը իրաւունք ունի գրաւելու անհատներու եւ ընկերութիւններու սեփական այն հողերը եւ անշարժ ստացուածքները, որոնք անհրաժեշտ են հանրօգուտ նպատակներու համար, արդար հատուցում ընելով անոնց տէրերուն:

(1935)

(Յօդ. 7-ը դուրս ձգուած է 1935-ի Ծրագրէն:)

Յօդ. 8.- Ընդհանուր հայ ժողովուրդին նուիրարերութեամբը զոյացած վանքերու եւ եկեղեցիներու սեփական հողային ստացուածքները ենթակայ չեն գրաման: Պետութիւնը կը հսկէ սակայն տնայ տրդիւնաւոր եւ նպատակայարմար գործածութեան վրայ:

Յօդ. 9.- Գիւղերու համար սահմանել հասարակաց գործածութեան յատուկ արօտատեղիներ եւ անտառներ, եւ ապահովել անոնց անձեռնմխելիութիւնը:

Յօդ. 10.- Հողային օրէնքները կը գործադրուին աստիճանաբար, բնակչութեան թիւին, մշակման պահանջներուն եւ տեղական պայմաններուն համեմատ:

ԳԼՈՒԽ Ե.

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

Յօդ. 1.- Մղում տալ հայ ժողովուրդի դարգացման եւ անոր ինքնատիպ մշակութին, դպրոցներու, համալսարաններու, լսարաններու, հանրային ձրի դասախօսութիւններու եւ գրադարաններու հաստատումով:

Յօդ. 2.- Հաստատել երկսեռ վարժապետանոցներ:

Յօդ. 3.- Պաշտպանել եւ քաջալերել զեղարուեստները:

Յօդ. 4.- Փնտռել, հաւաքել եւ պահել հայկական ամէն կարգի հնութիւնները:

(Յօդ. 8-ը զուրա ձգուած է հետագային վերամշակուած բոլոր Ծրագրերէն:)

(Յօդ. 10-ը զուրա ձգուած է 1935-ի ծրագրէն:)

Յօդ. 37.- Մղում տալ ժողովուրդի զարգացման եւ անոր ինքնատիպ մշակութին, դպրոցներու, համալսարաններու, լսարաններու, հանրային ձրի դասախօսութիւններու եւ գրադարաններու հաստատումով:

(1935)

ա.

Յօդ. 38.- Հաստատել վարժապետանոցներ:

(1924)

բ.

Յօդ. 38.- Հաստատել վարժապետանոցներ, երկրագործական եւ արհեստագիտական վարժարաններ:

(1935)

Յօդ. 5.- Քաջալերել գիտական խու-
ղարկութիւնները:

Յօդ. 6.- Փութացնել երկրագործա-
կան ու արհեստական վարժարաններու եւ
գործնական վարժոցներու հաստատու-
թիւնը:

Վերաբնութիւն

Ներկայ ծրագիրը վերաքննելի է Կու-
սակցութեան ընդհանուր Պատգամաւորա-
կան Ժողովին կողմէ՝ Հիմնական Կանո-
նագրի տրամադրութեան համաձայն:

(Յօդ. 6-ը ջնջուած է 1935-ի Ծրա-
գրին մէջ:)

Մանօր.— 1948-ին եւ անկէ ետք լոյս տեսած Մրազրերէն դուրս մնացած են նախորդ էջերով տրուած ներածութիւնը, նպատակն ու սկզբունքային յօդուածները, որոնք փոխարինուած են ամփոփ դաւանանքային եւ ընդհանուր ուղեգծային ակնարկով ու վերամշակեալ նպատակային կէտերով — Վ. Ղ.:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

1948

ԴԱԽԱՆԱՆՔ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵԳԻԾ
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հարազատ ծնունդը եղած է հայ ժողովուրդին եւ հաւատարիմ արտայայտիչը անոր ազգային վերապրումի հզօր տենչին, նուիրուած հայկական պատմական հայրենիքի ամբողջական վերականգնումին: Ան կը դաւանի, որ այս վսեմ նպատակին իրագործումը հնարաւոր է հայ ժողովուրդի ֆիզիքական զօրացումով եւ համապատասխան ճիշդութեամբ բոլոր խաւերուն, առանց դատարարութեան խառնութեան: Ռամկ. Ազատ. Կուսակցութեան աշխարհահայեացքը հիմնուած է ժողովրդային կամքի ղեկիչխանութեան, անհատական ու հաւաքական բնական իրաւունքներու կիրարկումին եւ բնկերային բարեշրջումի սկզբունքներուն վրայ:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը հաւատայ, որ ամէն քաղաքացի հաւասար է օրէնքի առջեւ եւ անոր անձն ու քաղաքային ազատութիւնները անբռնաբարելի պէտք է մնան եւ երաշխաւորին խմբական ու կառավարական ոտընձկութիւններու դէմ: Գաղտնի քուէարկութեան, անհատական նախաձեռնութեան, ընդհանուր եւ պարտադիր նախաիրութեան եւ սեփականութեան իրաւունքները՝ քաղաքացիներու ապահովու-

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

1954

ԴԱԽԱՆԱՆՔ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵԳԻԾ
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը եղած է հարազատ ծնունդը հայ ժողովուրդին եւ հաւատարիմ արտայայտիչը անոր ազգային վերապրումի հզօր տենչին, նուիրուած հայկական պատմական հայրենիքի ամբողջական վերականգնումին:

Ան կը դաւանի, որ այս վսեմ նպատակին իրագործումը հնարաւոր է հայ ժողովուրդի ֆիզիքական զօրացումով եւ համադրուած ճիշդութեամբ բոլոր խաւերուն, առանց դատարարութեան խառնութեան:

Ռամկ. Ազատ. Կուսակցութեան աշխարհահայեացքը հիմնուած է ժողովրդային կամքի գերիշխանութեան, անհատական ու հաւաքական բնական իրաւունքներու կիրարկումին եւ բնկերային բարեշրջումի սկզբունքներուն վրայ:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը հաւատայ, որ ամէն քաղաքացի հաւասար է օրէնքի առջեւ, եւ անոր անձն ու քաղաքային ազատութիւնները անբռնաբարելի պէտք է մնան եւ երաշխաւորին խմբական ու կառավարական ոտընձկութիւններու դէմ: Գաղտնի քուէար-

թեան եւ երջանկութեան անհրաժեշտ պայմանները կը ճանչնայ ան: Պետութիւնը իր պարտականութիւններէն մին պիտի նկատէ, ամէն մարդի աշխատանքներու ապահովութիւնը անգործութեան, հիւանդութեան, արկածի, ծերութեան ու մահուան դէմ:

Տնտեսական կեանքի մէջ ձգտելով արդար եւ արագ յառաջդիմութեան՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հակառակ է, որ մեծ գրամատչելները տիրապեան հրապարակին մենաշնորհներու միջոցով եւ գործատէրեր ստանկոխեն աշխատանքներու շահերը: Ան կը ջատագովէ կազմութիւնը համագործակցական ընկերութեանց, որոնց շնորհիւ կրնան առաւելագոյն չափով նպաստաւորուիլ անհատական տնտեսութիւնները: Ան կը քաջալերէ կազմակերպումը աշխատանքական միութեանց, իրենց իրաւունքներու պաշտպանութեան համար: Այս ուղեգիծով Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը հաստատէ թէ հնարաւոր կը դառնայ աշխատանքի, դրամագլխի եւ տաղանդի կամաւոր ընկերակցութիւնն ու գործակցութիւնը, մեծագոյն բարեփոխումը պարզեւելով ընկերութեան:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը գերադասեցորէն ազգային կազմակերպութիւն մըն է: Եւ ինչպէս անցեալին, զինք բաղկացնող յեղափոխական ու քաղաքական հոսանքներուն՝ նոյնպէս ներկայիս, իր գոյութեան հիմնական նպատակները եւ գործունէութեան հզօր շարժառիթներն են հայ ժողովուրդին գերագոյն շահերը: Իրատես ու հայրենասիրական իր քաղաքականութեամբն էր որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը խորապէս գնահատեց հայ պետութեան վերածնունդը Հայաստանի մէջ, սկսեալ առաջին իսկ օրերէն: Եւ հաստատելով որ ամբողջական նուիրումով ինքզինք տրամադրեց հայկական նորաստեղծ հայրեն-

կութեան, անհատական նախաձեռնութեան, ընդհանուր եւ պարտադիր նախակրթութեան եւ սեփականութեան իրաւունքները՝ քաղաքացիներու ապահովութեան եւ երջանկութեան անհրաժեշտ պայմանները կը ճանչնայ ան: Պետութիւնը իր պարտականութիւններէն մին պիտի նկատէ ամէն մարդի աշխատանքներու ապահովագրութիւնը անգործութեան, հիւանդութեան, արկածի, ծերութեան ու մահուան դէմ:

Տնտեսական կեանքի մէջ ձգտելով արդար եւ արագ յառաջդիմութեան՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հակառակ է, որ մեծ դրամատէրները տիրապետեն հրապարակին մենաշնորհներու միջոցով եւ գործատէրեր ոտնակոխեն աշխատանքներու շահերը: Ան կը ջատագովէ կազմութիւնը համագործակցական ընկերութեանց, որոնց շնորհիւ կրնան առաւելագոյն չափով նպաստաւորուիլ անհատական տնտեսութիւնները: Ան կը քաջալերէ կազմակերպումը աշխատանքական միութեանց, իրենց իրաւունքներու պաշտպանութեան համար: Այս ուղեգիծով Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը հաւատայ թէ հնարաւոր կը դառնան աշխատանքի, գրամագլխի եւ տաղանդի կամաւոր ընկերակցութիւնն ու գործակցութիւնը, մեծագոյն բարեփոխումը պարզեւելով ընկերութեան:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը գերազանցօրէն ազգային կազմակերպութիւն մըն է: Եւ ինչպէս անցեալին, զինք քաղկացնող յեղափոխական ու քաղաքական հոսանքներուն՝ նոյնպէս ներկայիս, իր գոյութեան հիմնական նպատակները եւ գործունէութեան հզօր շարժառիթներն են հայ ժողովուրդին գերագոյն շահերը: Իրատես ու հայրենասիրական իր քաղաքականութեամբն էր որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը խորապէս գնահատեց հայ պետութեան

նիքի վերականգնումին ու զօրացումին, զայն դաւանելով մեր ազգային ապահովութեան եւ պատմական իրաւունքներուն իրականացման հաստատուն խարխալը:

Հայաստան, իր սահմաններուն պաշտպանութիւնն ու ամբողջականութիւնը կարենալ ապահովելու համար՝ ստիպողաբար կը կարօտէր ազատարար ռուս ժողովուրդի աւելական բարեկամութեան ու եղբայրական աջակցութեան: Այս հարկադրիչ իրողութիւնը կը բացատրէ հարազատ Հայաստանի կառավարութեան յարումը Սովետ. Հանրապետութեանց Միութեան, որով մեր հայրենիքը կ'ազատուէր դարաւոր թշնամիին նորազոյն յարձակումներէն եւ իր անկախութեան սպառնացող վտանգներէն: Եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը ջատագով ազդեցութիւն համերաշխութեան միեմ գաղափարին՝ սկիզբէն իսկ ճանչցաւ եւ գնահատեց Հայաստանի կառավարութեան որդեգրած այդ իմաստուն ու փրկարար ուղղութիւնը եւ անվերապահօրէն անոր պատշաճեցուց իր ազգային ու քաղաքական դործունէութիւնը:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը ձգտի բարեօք յարաբերութիւններ պահել Ս. Հայաստանի կառավարութեան հետ, մօտէն շահագրգռուիլ Մայր Հայրենիքի յարաճուն բարգաւաճութեամբ, խանդավառել գաղութահայութիւնը Հայաստանով, քաջալերել ներգաղթի շարժումը, աջակցել եւ գործակցել Ս. Հայաստանի կառավարութեան՝ հայութեան ընդհանուր շահերը հետապնդել իր ձեռնարկներուն եւ հայրենի մնացեալ հողամասերուն ազատագրումին ձգտող անոր ջանքերուն մէջ:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը՝ իր այս իրապաշտ ու հայրենասիրական կեցութեամբ կը հանդիսանայ միութեան կապ՝ հայրենաբաղձ գաղութահայութեան եւ Մայր Հայրենիքի մեր ժողովուրդին ու պետութեան միջեւ:

Վերածնունդը Հայաստանի մէջ, սկսեալ առաջին իսկ օրերէն: Եւ հաւատարիմ ու ամբողջական նուիրումով ինքզինք տրամադրեց հայկական նորաստեղծ հայրենիքի վերականգնումին ու զօրացումին, զայն դաւանելով մեր ազգային ապահովութեան եւ պատմական իրաւունքներուն իրականացման հաստատուն խարխալը:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը մօտէն կը շահագրգռուի Մայր Հայրենիքի յարաճուն բարգաւաճութեամբ, կը ջանայ խանդավառել Գաղթահայութիւնը Հայաստանի մշակութային եւ տնտեսական վերելքով, եւ կը ջատագովէ հայ ժողովուրդին ազգահաւաք Մայր Հայրենիքի մէջ:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր այս իրապաշտ ու հայրենասիրական կեցութեամբ կը հանդիսանայ ազգային միասնականութեան ախոյեանը՝ Գաղթահայութեան եւ Մայր Հայրենիքի ժողովուրդին միջեւ:

Մեր կազմակերպութեան դրական եւ բարեկամական վերաբերումը հանդէպ Ս. Հայաստանին չի նշանակեր որ ան կը հրաժարի բարեացակամ դիտողութիւններ եւ ի հարկին քննադատութիւններ րնել:

Գաղթահայութեան ինքնապահպանումի եւ ազատ բարգաւաճումի նշան մտահոգութեամբն է նաեւ, որ Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը կը հետամտի հայ զանգուածները հաւատարիմ քաղաքացիներ պահել զիրենք հիւրընկալող երկրներուն ու պետութեանց:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ Ծրագիրը վերաքննելի է Կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական ժողովին կողմէ՝ Հիմնական կանոնագրի տրամադրութեան համաձայն:

Մեր կաղամկերպութեան զբաղան ու
բարեկամական վերաբերումը հանդէպ Ս.
Հայաստանին՝ չի նշանակեր որ ան կը
հրաժարի իրաւական տուեալներու վրայ
հիմնուած բարեացակամ զխոցութիւն-
ներէ եւ ի հարկին քննադատութիւններէ :

Գաղութահայութեան ինքնապահպա-
նումի եւ ազատ բարգաւաճումին նոյն
մտահոգութեամբն է նաեւ որ Ռ. Ս. Կու-
սակցութիւնը կը հետամտի հայ զան-
գուածները հաւատարիմ քաղաքացիներ
պահել զիրենք հիւրընկալող երկիրներուն
ու պետութեանց :

ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ Ծրագիրը վերաքննելի է
Կուսակցութեան Ընդհանուր Պատգամա-
ւորական ժողովին կողմէ՝ Հիմնական
Կանոնադրի տրամադրութեան համա-
ձայն :

ՆՊԱՏԱԿ

Ա. Հետապնդել թուրքիոյ բռնադրաման տակ գտնուող, հայոց պատմական հոգերուն ազատագրումը եւ կցումը մայր հայրենիք՝ Սովետ Հայաստանին:

Բ. Կիրարկել ժողովուրդային կամքի գերիշխանութիւնը եւ Ռամկավար Ազատական սկզբունքները հայ հանրային կեանքի մէջ:

Գ. Ստարել Հայաստանի պետական եւ ազգային զարգացումին եւ անտեսական բարգաւաճումին:

Դ. Առաջացնել արտասահմանի հայ զանգուածներուն հայրենադարձը եւ հաւաքումը մայր հայրենիքին մէջ:

Ե. Ամրացնել ազգային ու մշակութային յարաբերութիւնները Հայաստանի եւ գաղութներուն միջեւ:

Զ. Հետապնդել հայոց թուրքիոյ մէջ ունեցած նիւթական շահերը:

Է. Զարկ տալ արտասահմանի հայոց ազգատաճայանումին, հայկական մշակութի զարգացման ու անտեսական յառաջդիմութեան:

Ը. Հետապնդել գաղութներու հայերը հաւատարիմ եւ օրինապահ քաղաքացիները դարձնելու զիրենք հիւրընկալող երկրներուն մէջ:

ՆՊԱՏԱԿ

Ա.- Հետապնդել ազատագրումը թուրքիոյ բռնագրաւման տակ գտնուող Հայոց պատմական հողերուն՝ որոնց կցումովը ներկայ Հայաստանին, պիտի իրականանայ հայ ժողովուրդին դաքաւոր երազը:

Բ.- Կիրարկել ժողովրդային կամքի գերիշխանութիւնը եւ ռամկավար ազատական սկզբունքները հայ հանրային կեանքի մէջ:

Գ.- Ստարել Հայաստանի ընդհանուր զարգացումին եւ բարգաւաճումին:

Դ.- Զատագովել արտասահմանի հայ զանգուածներու ազգահաւաքը Մայր Հայրենիքի մէջ:

Ե.- Ամրացնել մշակութային յարաբերութիւնները Հայաստանի եւ գաղութներուն միջեւ:

Զ.- Հետապնդել թուրքիոյ մէջ Հայոց ունեցած նիւթական իրաւունքները:

Է.- Զարկ տալ արտասահմանի Հայոց ազգապահպանումին, հայկական մշակութի զարգացման ու տնտեսական յառաջդիմութեան:

Ը.- Աշխատիլ որ Սփիւռքահայութիւնը ըլլայ հաւատարիմ եւ մնայ օրինապահ այն երկիրներուն մէջ, ուր բնակութիւն հաստատած է:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ Ռ. Ա. Կ. Ի

Մանօր.— Ձախի սինակով կու տանք 1922-ին լոյս տեսած Կանոնագիրը: Աջի սինակին մէջ կը հանդիպինք յետ այնու կատարուած բարեփոխումներուն եւ յաւելումներուն: Բարեփոխեալ յօդուածները (մէկէ աւելի անգամ բարեփոխեալները կը կրեն ալթութի տառերը) տեղ կը գրաւեն սկզբնական յօդուածներուն դիմաց: Աջ սինակին մէջ երեւցող նոր յօդուածներուն դիմաց, ձախ սինակին մէջ ընթերցողը կը հանդիպի բացութեան — Վ. Ղ.:

Ռամկաւար Աղտտական Կուսակցութեան կազմակերպական բաժանումներն են՝

Ա. Տեղական ակումբներ եւ իրենց վարչութիւնները.

Բ. Շրջանակներ եւ շրջանային վարչութիւններ.

Գ. Շրջանային պատգամաւորական ժողովներ.

Դ. Կեդրոնական վարչութիւն.

Ե. Ընդհանուր Պատգամաւորական ժողով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդուած 1.- Իւրաքանչիւր շրջանակ ինքնավար է ներկայ կանոնադրով ճշգրտած իրաւասութիւններու սահմանին մէջ. ունի տեղական պայմաններու յարմարցուած ներքին կանոնադիր մը, որ հիմնական կէտերու մէջ կը համաձայնի այս կանոնադրի տրամադրութիւններուն:

Յօդ. 2.- Կուսակցութեան բոլոր պաշտօնական մարմինները Ակումբէն մինչեւ Ընդհանուր Պատգամաւորական ժողով պէտք է պահեն իրենց որոշումներուն եւ յարաբերութեանց արձանագրութիւնները, զիւանէն ստորագրուած:

Յօդ. 3.- Պաշտօնական մարմիններու զիւանները աւանդապահն են կուսակցութեան տոմարներուն, թղթակցութիւններուն, պայմանագրութիւններուն եւ կնիքին:

Յօդ. 4.- Բոլոր վարչական մարմիններու եւ գիւաններու բնորոշիւներ կը կատարուի զազանի քուէարկութեամբ:

Անդամները վերընտրելի են, երբ օրինական արգելք չկայ:

Յօդ. 5.- Ընտրութիւններու ատեն մինչեւ վերջնիւթեր ամիսը իր անդամատուրքը առանց ակումբի վարչութեանէն ընդունուած բանաւոր պատճառի չվճարող անդամ մը բնորոշ է բնարեւի ըլլալու իրաւունք չունի:

Յօդ. 6.- Ընտրութիւններու հիմք կը ծառայէ անդամներու ամբողջական թիւը, զանց չառնելով չվճարողները, որոնց անունները օրինակարարէն առաջ ձգուած չեն անուանացանկէն:

Յօդ. 7.- Անխտահալթեան քուէները եւ կախակայքի որոշումները ո՛րեւէ մարմնի անդամներու ամբողջութեան թիւին մեծամասնութեամբ միայն կը տրուին, իսկ արտաքսումի վերաբերեալ պատական վճիռները՝ երեք չորրորդին քուէով:

Յօդ. 8.- Կուսակցութիւնը իր սովորական պիւտճէէն զտաւ, պէտք է ունենայ իր հիմնադրամը, որմէ պոյացած տոկոսին եւ ի հարկին մայր-դումարին պործածութիւնը կ'որոշուի Ընդհանուր Պատգամատրական Ժողովին կողմէ:

Յօդ. 9.- Կուսակցութեան բոլոր պատասխանատու մարմինները կ'ստորագրեն երզմնագիր մը, որուն բանաձեւը կը խորհրդարանի իւրաքանչիւր շրջանակի Պատգամատրական Ժողովին կողմէ:

Յօդ. 10.- Ռամկավար Ազատական Կուսակցութեան խորհրդանիշն է Արարատի երկու կատարները, մէջտեղը հորածագ արեւով մը, կապոյտ պատառի վրայ:

ԳԼՈՒԽ Ա.

Ա Ն Դ Ա Մ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ի Ն

Յօդ. 1.- Ռամկավար Ազատական կուսակցության կրնայ անդամակցիլ, առանց սեռի խտրութեան, 18 տարեկանէն վեր Հայաստանի ամէն քաղաքացի, եւ օտարահպատակ ամէն Հայ, որ կ'ընդունի այս կուսակցութեան սկզբունքները:

Յօդ. 2.- Նոր անդամ կ'ընդունուի ակումբի վարչութեան ժողովին մեծամասնութեան որոշումով, համաձայն այդ մասին չըջանակի ներքին կանոնադրի արամադրութեան:

Ընդունուած անդամը պէտք է ստորագրէ խոստամնագիր մը:

Ծանօթ. Յօդ. 10-ի.- Ռամկավար Ազատական կուսակցութեան զինանշանը վահան մըն է, որուն վրայ պատկերուած են բահ մը, որպէս խորհրդանիշ հողագործ աշխատանքութեան, կարկին մը. որպէս խորհրդանիշ փարտաբարութեան, եւ փետուրէ գրիչ մը, իբրեւ խորհրդանիշ մտաւորականութեան: Ասոնց միութեամբ յառաջ եկած ուժը կամ զօրութիւնն ալ խորհրդանշուած է խուրձով մը, որուն մէջէն կը ցցուի տապարին գլուխը: Վահանին ձախին, փակտը եւ աջին դրոշմուած են Ռ.Ա.Կ. գիրերը, որպէս սկզբնատառ կուսակցութեան անունին:

(1968)

Յօդ. 10.- Ռամկավար Ազատական կուսակցութեան կրնայ անդամակցիլ, առանց սեռի խտրութեան, 18 տարեկանէն վեր ամէն հայ, որ կ'ընդունի այս կուսակցութեան սկզբունքները:

(1924)

Յօդ. 12.- Նոր անդամ կ'ընդունուի Ակումբի վարչութեան ժողովին մեծամասնութեան որոշումով, համաձայն այդ մասին շրջանակի ներքին կանոնադրի արամադրութեան:

Ընդունուած անդամը պէտք է ստորագրէ խոստամնագիր մը եւ ընէ հետեւեալ ուխտը Ակումբին անդամական ժողովին մէջ, նախքան իր մասնակցութիւնը ժողովին.

Ուխտ Նորագիր Անդամներու

«Կ'ուխտեմ խղիւս եւ պատուոյս վրայ յանուն ազատութեան եւ Հայրենիքիս բոլոր նուիրական սրբութիւններուն, ծառայել Ռամկավար Ազատական կուսակցութեան սկզբունքներուն, որդեգրելով անոր դաւանած ազգային եւ քաղաքական նպատակները:

Յօդ. 3.- Իւրաքանչիւր անգամ կ'ու-
նենայ կեդրոնական վարչութենէն պատ-
րաստուած միատեսակ անդամաքարտ մը,
իր լուսանկարը կրող:

Յօդ. 4.- Իւրաքանչիւր անգամ բա-
րոյական պարտաւորութեան տակ կը
գտնուի ընկերական համակրանքի եւ սի-
րոյ վերաբերում ցոյց տալու կուսակցու-
թեան բոլոր անդամներուն հանդէպ: Այս
պարտաւորութենէն չեղումն եւ ուրիշ ան-
դամներու հանդէպ վարկաբեկող վար-
մունքը պատասխանատուութեան կ'են-
թարկեն անգամ մը:

Յօդ. 5.- Կուսակցութեան անդամ
չեն ընդունուիր անոնք, որ ա) Ուրիշ հայ
քաղաքական կուսակցութեան մը անդամ
են. բ) Ոճիրով եւ զեղծումով զատապար-
տուած են. գ) Ծանօթ են իբր յոռի նկա-
րաւոր տէր անձեր:

«Կ'ուխտեմ այս վեհ վայրկեանէն
սկսեալ հաւատարիմ անդամ մը ըլլալ
Ռամկավար Ազատական Կուսակցութեան
եւ խղնիւթէն ու կարգապահութեամբ
կատարել իմ վրայ դրուած բոլոր պար-
տականութիւնները, նուիրելով իմ նի-
թական եւ բարոյական կարողութիւններս
Կուսակցութեան նպատակներուն իրա-
գործման համար:

«Կ'երգնում ամէն գոհադութեամբ եւ
ի հարկին կեանքիս գնով նուիրուիլ կու-
սակցութեանս, ազգիս եւ հայրենիքիս
սուրբ դատին՝ հաւատարմօրէն պահելով
ինծի վստահուած զաղտնիքները:»

(1935)

Յօդ. 13.- Իւրաքանչիւր անգամ կ'ու-
նենայ Շրջանային վարչութենէն պատ-
րաստուած անդամաքարտ մը, իր լուսա-
նկարը կրող:

(1935)

Յօդ. 13.- Իւրաքանչիւր անգամ բա-
րոյական պարտաւորութեան տակ կը
գտնուի ընկերական համակրանքի եւ սի-
րոյ վերաբերում ցոյց տալու կուսակցու-
թեան բոլոր անդամներուն հանդէպ: Այս
պարտաւորութեան հակառակ վերաբե-
րմունք եւ ուրիշ անդամներու հանդէպ
վարկաբեկող վարմունքը պատասխանա-
տուութեան կ'ենթարկեն անգամ մը:

(1924)

Յօդ. 6.- Կուսակցութեան այր անդամները կը վճարեն տարեկան անդամատուրք մը, որուն նուագագոյն քանակը կ'որոշուի շրջանակին Պատգամաւորական ժողովին կողմէ, եւ ամբողջովին կը դրուի շրջանակին կեդրոնական սնտուկը:

Տեղական ծախքերու հաշթաշթման համար շրջանակներու կանոնադիրները կ'ունենան անհրաժեշտ տրամադրութիւնները:

Կիներէ եւ ուսանողներէ կազմուած ակումբները իրենք կ'որոշեն անդամատուրքի քանակը, եւ կը մատակարարեն այս յօդուածի տրամադրութիւններուն համաձայն:

Յօդ. 7.- Նոր անդամները, յօդուած 6-րդի մէջ յիշուած անդամատուրքէն զատ, պարտին վճարել նաեւ մուտքի տուրք մը, որուն քանակը իրենք կ'որոշեն:

ա.-

Յօդ. 15.- Կուսակցութեան այր անդամները կը վճարեն տարեկան անդամատուրք մը, որուն նուագագոյն քանակը կ'որոշուի շրջանակին Պատգամաւորական ժողովին կողմէ, եւ կը յատկացուի մասամբ շրջանակին եւ մասամբ ալ կեդրոնական սնտուկին:

Տեղական ծախքերու հայթայթման համար շրջանակներու կանոնադիրները կ'ունենան անհրաժեշտ տրամադրութիւնները:

Կիներէ եւ ուսանողներէ կազմուած ակումբները իրենք կ'արձեն անդամատուրքի քանակը, եւ կը մատակարարեն այս յօդուածի տրամադրութիւններուն համաձայն:

(1924)

բ.-

Յօդ. 16.- Կուսակցութեան այր անդամները կը վճարեն տարեկան անդամատուրք մը, որուն նուագագոյն քանակը կ'որոշուի շրջանակին Պատգամաւորական ժողովին կողմէ:

Տեղական ծախքերու հայթայթման համար շրջանակներու կանոնադիրները կ'ունենան անհրաժեշտ տրամադրութիւնները:

Կիներէ եւ ուսանողներէ կազմուած ակումբները իրենք կ'որոշեն անդամատուրքի քանակը, եւ կը մատակարարեն զայն այս յօդուածի տրամադրութիւններուն համաձայն:

(1954)

Յօդ. 8.- Անդամատուրքէ զերծ են այն անդամները, որոնց նիւթական անձկութիւնը կը հաստատուի իրենց ակումբին վարչութեան կողմէ:

Յօդ. 9.- Բնակութեան հետեւանքով անդամ մը իր պատկանած ակումբէն կրնայ ուրիշ ակումբ մը փոխադրուիլ, վարչութեան գրաւոր յանձնարարականով:

Յօդ. 10.- Իւրաքանչիւր անդամ միայն մէկ ակումբի կրնայ մասնակցիլ եւ միայն մէկ ձայնի իրաւունք ունի:

Յօդ. 11.- Ամէն անդամ պարտի յարգել կարգապահութեան օրէնքները:

Յօդ. 12.- Ո՛րեւէ անդամ որ չի հնազանդիւր իր ակումբին որոշումներուն կամ չի մճարեր իր տուրքերը եւ կամ կ'ոտնակոխէ կուսակցութեան օրէնքները, ազդարարութիւն կը ստանայ, եւ եթէ ազդարարութիւնը ապարդիւն մնայ, պատժուի կ'ենթարկուի շրջանակին ներքին կանոնադրին տրամադրութեանց համաձայն:

Յօդ. 13.- Ո՛րեւէ անդամ որ՝

Ա.- կուսակցութեան սկզբունքներուն դէմ կը գործէ,

Բ.- կարգապահութեան օրէնքները չի յարգեր,

Գ.- իրեն դէմ տրուած մճիռի մը դէմ ներքին օրինական միջոցներէ տարրեր միջոցներու կը դիմէ,

Դ.- Ուրիշ հայ կուսակցութեան մը եւս կ'անդամակցի,

Իր ակումբին անդամակցական ժողովին մճիռով կը կախակայուի եւ կը կորսնցնէ իր անդամական իրաւունքները որոշուած ժամանակի մը համար եւ ի հարկին կ'արտաքսուի յետ դատաւարութեան:

Յօդ. 17.- Անդամատուրքէ գերծ են այն անդամները, որոնց նիւթական վիճակին քոյլատու չըլլալը կը հաստատուի իրենց ակումբին վարչութեան կողմէ:

(1924)

Յօդ. 14.- Ոճիրով եւ զեղծումով
դատադարտուած անդամ մը կ'արտաք-
սուի կուսակցութենէն իր ակումբին վճի-
ռով:

Յօդ. 15.- Արտաքսուած անդամի մը
անունը կը հաղորդուի կուսակցութեան
բոլոր ակումբներուն՝ գերադաս մարմին-
ներուն միջոցաւ:

Յօդ. 16.- Տրուած վճիռէ մը դժգոհ
սեւէ կողմ կրնայ ակումբին անմիջական
գերադաս մարմինն բողոքել, վճռին
թուականէն մինչեւ մէկ ամիս:

Յօդ. 17.- Բոլոր պատասխանատու
մարմինները, սկսեալ ակումբի վարչու-
թիւններէն մինչեւ կեդր. վարչութիւնը,
պարտաւոր են ներկայ կանոնադրի արա-
մադրութիւններուն հակառակ դարձող
կամ թերացող անհատ անդամներու եւ ի-
րենցմէ ստորադաս մարմիններու հանդէպ
անմիջական ազդու անօրինութիւններ ը-
նել: Այս մասին գանդառութիւնը ծանր
պատասխանատուութիւն կը հրաւիրէ վե-
րոյիչեալ իրաւասու մարմիններուն վրայ,
կուսակցական կարգապահութեան եւ կու-
սակցական վերին շահերուն դէմ մեղան-
շում մը նկատուելով:

Յօդ. 23.- Ո'եւէ անդամ որ կուսակ-
ցութեան մէկ ուրիշ անդամը հրապարա-
կով կը գրապարտէ, գրապարտուած անդա-
մին դիմումին վրայ յետ ֆննութեան կը
պատժուի, յարմար տեսնուած պատիժով
մը, որ կրնայ ըլլալ մինչեւ կախակայում
եւ արտաքսում, ըստ աստիճանի:

(1924)

Յօդ. 24.- Տրուած վճիռէ մը դժգոհ
ոեւէ կողմ կրնայ Ակումբին անմիջական
գերադաս մարմինն բողոքել, վճռին ի-
րենն հաղորդուելէ մինչեւ մէկ ամիս:

(1948)

Յօդ. 29.- 25 տարի անընդհատ կու-
սակցութեան ծառայողները կը հռչակուին
«վերքերան» անդամ եւ անոնց կը տրուի
մասնաւոր շքանշան:

(1935)

ԳԼՈՒԽ Բ.

Ա Կ ՈՒ Մ Բ Ն Ե Ր

Յօդ. 1.- Նուազագոյն հինգ անդամներու խմբաւորում մը կը կազմէ ակումբ մը:

Յօդ. 2.- Նորակազմ ակումբի մը գոյութիւնը օրինաւոր կը ճանչցուի այն տե՛ն միայն, երբ իր կազմութիւնը կը վաւերացուի շրջանային վարչութեան կողմէ:

Յօդ. 3.- Տեղական պայմաններու համեմատ՝ կիները կրնան առանձին ակումբներ ունենալ՝ առանձին վարչութիւններով:

Յօդ. 4.- Իւրաքանչիւր ակումբ կ'ունենայ 3-7 անդամներէ՝ լազկացեալ վարչութիւն մը, որ կը պաշտօնավարէ մէկ տարի եւ մինչեւ իր յաջորդին ընտրութիւնը:

(Ծան.- Յիսունէն վեր անդամ ունեցող ակումբները իրենց վարչութենէն զատ կրնան ունենալ նաեւ տասնեակներու բաժանում մը. իւրաքանչիւր տասնեակի պետը կը նշանակուի վարչութենէն, եւ իր պաշտօնն է իր տասնեակի տուրքերը գանձել եւ հոգ տանիլ որ անդամական ժողովներու յանալսեն:)

Յօդ. 33.- Ակումբի վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն երկու տարի անդամ եղած են Կուսակցութեան, եւ մէկ տարի՝ նոյն Ակումբին:

Նորակազմ Ակումբները բացառութիւն կը կազմեն:

(1948)

Յօդ. 34.- Ակումբի վարչութեան անդամները իրենց ընտրութենէն անմիջապէս յետոյ, Ընդհանուր Անդամական ժողովին առջեւ կ'ընեն հետեւեալ ուխտը.

*Ուխտ Ակումբի վարչութեան
Անդամներու*

«Ստանձնելով Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ակումբի վարչութեան անդամակցութիւնը, կ'երդմում պատուոյս վրայ եւ հայրենիքիս անունով՝ հաւատարիմ մնալ Ռամկավար Ազատական Կուսակցութեան սկզբունքներուն եւ ազգային ու քաղաքական նպատակներուն, գործադրել անոր Ծրագր-Կանոնագիրը, խղիմտօրէն հետեւիլ Շըրջանային վարչութեան որոշումներուն եւ հրահանգներուն, հայ Ազգին եւ Հայրենի-
քին բարիքին համար»:

(1935)

Յօդ. 5.- Ակումբի մը վարչութեան պակսած կամ հրաժարած անդամներուն յաջորդներն ընտրելու իրաւունքը կը պատկանի անդամական ժողովին:

Յօդ. 35.- Ակումբի մը վարչութեան պակսած անդամներուն յաջորդները ընտրելու իրաւունքը կը պատկանի անդամական ժողովին, եթէ փոխ-անդամներ չեն ընտրուած, կամ ընտրուածներով հնարաւոր չէ լրացնել վարչութեան անդամներու թիւը:

(1935)

Յօդ. 6.- Թէ՛ ակումբի վարչութեան եւ թէ՛ անդամական ժողովին որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ:

Յօդ. 7.- Ակումբի վարչութիւնը կը վարէ ակումբին գործերը եւ կը գործադրէ իր գերադաս մարմինն որոշումները եւ հրահանգները:

Յօդ. 8.- Ակումբի վարչութիւնը համարատու է թէ՛ անդամական ժողովին եւ թէ՛ իր գերադաս մարմինն:

Յօդ. 9.- Ակումբի վարչութիւնը պարտաւոր է կանոնաւորապէս եռամսեայ տեղեկագրով իր գերադաս մարմինը իրազեկ պահել ակումբին անդամներուն

թիւին, եւմտական կացութեան եւ ընդհանուր դործունէութեան մասին:

Այս կանոնաւոր տեղեկագիրներէն զտա՝ ակումբներու վարչութիւնները պարտաւոր են նաեւ իրենց գերազատ մարմինը տեղեակ պահել, անմիջական տեղեկագիրներով, այնպիսի խնդիրներու մասին, որոնց ծանօթութիւնը կարեւոր եւ օգտակար է կուսակցութեան:

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 1.- Առնուազն ամիսը մէկ անգամ տեղի կ'ունենայ անդամական կանոնաւոր ժողով, որուն հրաւէրը գրաւորապէս կամ մամուլ միջոցաւ կը հաղորդուի բոլոր անդամներուն, ժողովէն առնուազն երեք օր առաջ:

Յօդ. 2.- Ակումբի մը անդամական ժողովը օրինաւոր է, երբ անդամներուն կէսէն մէկ աւելին ներկայ է:

Յօդ. 3.- Երբ առաջին հրաւէրով ժողովը մեծամասնութիւն չունենայ, վարչութիւնը կրնայ նոյն ամսուան մէջ երկրորդ հրաւէր մը ուղղել նոյն օրակարգով: Երկրորդ ժողովին ներկաներուն թիւը օրինական կը նկատուի եւ տրուած որոշումները պարտաւորիչ են բոլոր անդամներուն համար:

ՅԱԻԵԼՈՒԱԾ.- Անդամներ, որոնք նախորդ անդամական ընդհանուր ժողովի մը մէջ մեծամասնութեան բուեով ազատ կացուցուած են ժողովական ներկայութեմէ՝ տարիքի, երկարատեւ հիւանդութեան, կամ անդամական ընդհանուր ժողովին կողմէ անխուսափելի նկատուած այլ պատճառով մը, նկատի չեն առնուիր ժողովական մեծամասնութիւն գոյացնելու համար, սակայն կը շարունակեն իրենց անդամակցութիւնը եւ անդամական իրաւունքները այդ ակումբին մէջ:

(1968)

Յօդ. 4.- Վարչութեան ատենապետը, եւ իր րացակալութեան՝ փոխ-ատենապետը, անդամներու մէկ երրորդի գլխավոր մին վրայ՝ պարտաւոր է արտասովոր նիստի հրաւիրել անդամական ժողովը:

Յօդ. 5.- Ակումբի տարեկան ժողովը կը գումարուի Շրջանակի Պատգամաւորական ժողովին գումարման թուականէն առնուողն մէկ ամիս առաջ:

Յօդ. 6.- Ակումբի վարչութիւնը տարեկան ժողովին մէջ կը կատարէ ակումբի մէկ տարւան Համարատուութիւնը, որ կը տեղեկագրուի Շրջանակի Պատգամաւորական ժողովին:

Յօդ. 7.- Ակումբի տարեկան ժողովին մէջ կ'ընտրուին Շրջանակի Պատգամաւորական ժողովին պատուիրակները, ներքին կանոնադրի արամագրութեանց համաձայն:

Յօդ. 8.- Կանոնաց ակումբները, եթէ հարկ համարին, կրնան տեղւոյն ալրերու ակումբին հետ խառն ժողով գումարել եւ միասին ընտրել իրենց պատուիրակները:

Յօդ. 9.- Ակումբի մը մէջ ծագած ո՛րեւէ վէճ երբ իր լուծումը չի գտներ տեղին վրայ, անմիջական դերադաս մարմինը կը միջամտէ եւ իր վճիռը պարտաւորել է ըրտը կողմերուն համար, մինչեւ Շրջանային Պատգամաւորական ժողով, ուր կատարուած գլխավոր վրայ վճիռը կը քննուի:

Յօդ. 10.- Իր գերադաս մարմինն որոշումներուն եւ կարգադրութեանց դէմ անտաստող ակումբի վարչութիւն մը կը հրաժարեցուի նոյն գերադաս մարմինն կողմէ: Հրաժարեցուցեալ վարչութեան անդամները վերընտրելի չեն:

Յօդ. 11.- Ակումբ մը լուծուած կը համարուի, երբ իր անդամներուն թիւը որոշուած նուազագոյն թիւէն պակաս է:

Յօդ. 12.- Ակումբի մը լուծման պարագային իր գոյքերը կը յանձնուին իր անմիջական գերադաս մարմինին:

ԳԼՈՒԽ Դ.

Շ Ր Զ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

Յօդ. 1.- Կուսակցութիւնը կը բաժնուի շրջանակներու՝ աշխարհադրական կամ վարչական յարմարութիւններու համեմատ:

Յօդ. 2.- Շրջանակ մը կը կազմուի մէկ կամ աւելի ակումբներէ, պայմանաւ որ առնուազն 100 անդամ ունենայ եւ վարչապետի Կեդրոնական Վարչութեան կողմէն:

Յօդ. 3.- Իւրաքանչիւր շրջանակ տարին անգամ մը կ'ունենայ Շրջանակին Պատգամաւորական Ժողով, որ կը կազմուի ակումբներու պատուիրակներէն, որոնց համեմատական թիւը կ'որոշուի իւրաքանչիւր շրջանակի ներքին կանոնադրութեան համաձայն:

Յօդ. 4.- Շրջանակին Պատգամաւորական Ժողովին պատուիրակ կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն մէկ տարի անդամ եղած են Կուսակցութեան: Նորակազմ ակումբները բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 5.- Շրջանակին Պատգամաւորական Ժողովը կը պատրաստէ նոյն չըր-

Յօդ. 56.- Շրջանակին Վարչութեան անդամներ եւս կրնան պատգամաւոր ընտրուիլ Շրջ. Պատգմ. Ժողովին, պայմանաւ որ անոնք ձայն չունենան Շրջ. Վարչութեան համարատուութեան ատեն:

(1948)

Յօդ. 57.- Շրջանակին Պատգմ. Ժողովը օրինաւոր է երբ Ակումբներու երկու երրորդը ներկայացուած է եւ ըստ յօդւած 55-ի (տես քովի սիւնակի Յօդ. 3-ը) տրամադրութեան, ընտրուելիք պատգամաւորներու ամբողջական թիւին կէսէն մէկ աւելին ներկայ է:

(1948)

ջանակին կանոնադիրը, որ պէտք է հաս-
կանէ կուսակցութեան սկզբունքներուն եւ
հիմնական կանոնադրին եւ որ պէտք է
վաւերացուի Կեդրոնական Վարչութեան:

Յօդ. 6.- Երջանային Պատգամաւո-
րական Ժողովը կը զբաղի շրջանակին վե-
րաբերեալ խնդիրներով, կը սահմանէ
տարեկան պիւտճէն եւ կ'ընտրէ Երջանա-
յին Վարչութիւնը:

Յօդ. 58.- Երջանային Վարչութեան
նորընտիր անդամները կը կատարեն հե-
տեւեալ երդումը.

Երդմնագիր Երջանային Վարչութեան
Անդամներուն

«Ստանձնելով Ռաւկալար Ազատական
Կուսակցութեան Երջանային
Վարչութեան անդամակցութիւնը, կ'երդ-
նում պատուոյս վրայ եւ հայրենիքիս ա-
նունով՝ հաւատարիմ մնալ Ռաւկալար
Ազատական Կուսակցութեան սկզբունք-
ներուն, պահպանել եւ գործադրել անոր
Ծրագիր-Կանոնագիրը, խղճմամբ գոր-
ծադրել Երջ. Պատգմ. Ժողովի որոշում-
ները եւ իր կողմէ ինձ վստահուած պաշ-
տօնը, հետեւիլ Կեդրոնական Վարչու-
թեան հրահանգներուն, աշայրջօրէն հըս-
կել Ռաւկալար Ազատական Կուսակցու-
թեան շահերուն վրայ եւ ջանալ անոր ազ-
գային եւ քաղաքական նպատակներուն ի-
րագործման, Հայ Ազգին եւ Հայրենիքին
համար»:

(1935)

Յօդ. 7.- Իւրաքանչիւր շրջանակ կու-
սակցութեան Կեդրոնական գանձին կը
վճարէ տարեկան տուրք մը, որուն քա-
նակը կ'որոշուի Ընդհանուր Պատգամա-
ւորական Ժողովին կողմէ, հիմնուած
շրջանակին կացութեան եւ նոյն շրջանակի
պատգամաւորներու տեղեկատուութեան
վրայ:

Յօդ. 8.- Շրջանային վարչութիւնը կը բաղկանայ տոնուազն հինգ անդամներէ, կ'ընտրուի մէկ տարուան համար եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

Յօդ. 9.- Շրջանային վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք տոնուազն երկու տարի անդամ եղած են կուսակցութեան:

Նորակազմ շրջանակները բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 10.- Շրջանային վարչութիւնը կ'ընդունի եւ կը գործադրէ կեդրոնական վարչութեան հրահանգները եւ Շրջանային Պատգամ. Ժողովի որոշումները: Կրօնայի հարկին թղթակցիլ միւս շրջանային վարչութիւններուն հետ, տեղական ընդթ կրօն կազմակերպական եւ այլ հասարակական հարցերու շուրջ:

Յօդ. 11.- Շրջանային վարչութիւնը պատասխանատու է իր շրջանակի Պատգամ. Ժողովին, որուն պարտի ներկայացնել իր տարեկան տեղեկագիրը եւ հաշիւը:

Յօդ. 12.- Շրջանային վարչութիւնը երեք ամիսը անդամ մը պարտաւոր է ղրկել կեդրոնական վարչութեան՝ իր շրջանակին վիճակագրական, ելեւմատ-

Յօդ. 63.- Շրջանային վարչութիւնը կը բաղկանայ առնուազն հինգ անդամներէ, կ'ընտրուի մէկ կամ երկու տարուան շրջանի համար՝ ըստ իւրաքանչիւր շրջանի պայմաններուն, եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

(Ժ. Գ. Ընդհ. Պատգ. Ժողով)

Յօդ. 61.- Շրջանային վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն երկու տարի անդամ եղած են կուսակցութեան:

(1935)

Յօդ. 64.- Շրջանային վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն երեք տարի անդամ եղած են կուսակցութեան:

(1948)

Յօդ. 62.- Շրջանային վարչութիւնը կ'ընդունի եւ կը գործադրէ կեդր. վարչութեան հրահանգները եւ Շրջանային Պատգամ. Ժողովի որոշումները. կրնայ ի հարկին քաղակցիլ միւս Շրջանային վարչութիւններուն հետ, տեղական ընդթ կրօն կազմակերպական եւ այլ հասարակական հարցերու շուրջ, այս մասին տեղեակ պահելով կեդրոնական վարչութիւնը:

(1935)

Յօդ. 67.- Շրջ. վարչութիւնը տարին առնուազն անգամ մը պարտաւոր է ղրկել կեդր. վարչութեան՝ իր շրջանին վիճակագրական, ելեւմտական եւ քարո-

կան եւ ըստ յայտնի տեղեկագիրքի: Ասկէ զատ Շրջանային Վարչութիւնը յաճախակի թղթակցութիւններ կը կատարէ Կեդրոնական Վարչութեան հետ:

Յօդ. 13.- Շրջանային չարժուէն եւ տնտեսական տնտեսական մատակարարելու վերին իրաւասութիւնը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

Յօդ. 14.- Շրջանային Վարչութեան հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուին շրջանային պաշտօնաթերթը եւ ուրիշ հրատարակութիւնները:

Յօդ. 15.- Շրջանակները, ըստ տեղական պայմաններու, կրնան ունենալ մէկ կամ տեղի ենթաշրջանակներ՝ համապատասխան վարչութիւններով, որոնք կը վարեն ենթաշրջանակին վերաբերեալ բնականուր զօրժերը եւ պատասխանատու են Շրջանային Վարչութեան:

Յօդ. 16.- Շրջանային Վարչութիւնը պէտք է նախապէս Կեդրոնական Վարչութեան հաւանութիւնը առանց բոլոր այն ձեռնարկներուն համար, որոնք կուտակցութեան բնականուր քաղաքականութեան հետ կապ ունին եւ որոնք տեղական համապատասխան չունին:

Յօդ. 17.- Շրջանային Վարչութիւնը պարտի Կեդրոնական Վարչութեան քննութեան եւ գիտողութեան ենթարկել իր

յական տեղեկագիրք: Ասկէ զատ, Շրջ. Վարչութիւնը յաճախակի քղթակցութիւն կը կատարէ Կեդր. Վարչութեան հետ:

(1954)

Յօդ. 68.- Շրջանային Վարչութիւնը կը վերաբնդէ, կը հաստատէ, կը բեկանէ կամ կը բարեփոխէ Ակումբի մը դասական վիճակները, պայմանաւ որ բողոքական գրաւորապէս ներկայացնէ իր բողոքը, վիճակն իրեն հաղորդուած քուականէն մինչեւ մէկ ամիս:

(1948)

Յօդ. 62.- Շրջանային Վարչութեան հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուի շրջանային պաշտօնաթերթը, որուն խմբագրին ընտրութիւնը կ'ենթարկուի Կեդրոնական վարչութեան վաւերացումին:

(1924)

Յօդ. 65.- Շրջանային Վարչութիւնը պարտի Կեդր. Վարչութեան վաւերացման ենթարկել իր տարեկան պիւտղէն,

տարեկան պիւտճէն, եւ պիւտճէին մէջ չկանխատեսուած այն ձեռնարկներն ու ծախքերը, որոնք կրնան մեծապէս խանգարել պիւտճէին հաւասարակշռութիւնը:

ԳԼՈՒԽ Ե.

ԸՆԴՀ. ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Յօդ. 1.- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կուսակցութեան Գերագոյն, Օրէնսդիր եւ Համարաւոր մարմինն է:

Յօդ. 2.- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը կազմուի կուսակցութեան բոլոր շրջանակներէն ընտրուած պատգամաւորներէն:

Կեդրոնական վարչութեան անդամները կը մասնակցին Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին առանց քուէի իրաւունքի:

Յօդ. 3.- Կուսակցութեան բոլոր շրջանակները պատգամաւոր կը զրկեն հետեւեալ համեմատութեամբ.

100-250 անդամ 1 պատգամաւոր

251-500 անդամ 2 պատգամաւոր

501-750 անդամ 3 պատգամաւոր

751-1000 անդամ 4 պատգամաւոր

1001-1500 անդամ 5 պատգամաւոր

1501-2000 անդամ 6 պատգամաւոր

եւ այսպէս իւրաքանչիւր յաւելումական հինգ հարիւր կամ նուազ անդամի համար մէկ պատգամաւոր աւելի:

Եւ պիւտճէին մէջ չկանխատեսուած այն ձեռնարկներն ու ծախքերը, որոնք կրնան մեծապէս խանգարել պիւտճէին հաւասարակշռութիւնը:

(1924)

Յօդ. 71.- Ընդհ. Պատգմ. Ժողովը կը կազմուի Կուսակցութեան բոլոր Շրջանակներէն ընտրուած պատգամաւորներէն:

(1935)

ա.

Յօդ. 68.- Կուսակցութեան իրաւանջիւր շրջանակը իրաւունք ունի նշանակելու պատգամաւոր մը, ասկէ գատ շրջանակները կը զրկեն նաեւ հետեւեալ համեմատութեամբ.

.....

(1926)

բ.

Յօդ. 72.- Կուսակցութեան իրաւանջիւր Շրջանակը իրաւունք ունի նշանակելու պատգամաւոր մը, ասկէ գատ Շրջանակները պատգամաւոր կը զրկեն նաեւ հետեւեալ համեմատութեամբ.

100-250 անդամ 1 պատգամաւոր

251-500 անդամ 2 պատգամաւոր

501-750 անդամ 3 պատգամաւոր

751-1000 անդամ 4 պատգամաւոր

1001-1500 անդամ 5 պատգամաւոր

1501 եւ աւելի անդամ 6 պատգամաւոր

(1935)

Յօդ. 4.- Պատգամաւորներու ընտրութիւնը կը կատարուի Շրջանային Պատգամաւորական Ժողովներու կողմէ՝ նոյն ժողովին համար ընտրուած պատուիրակներուն թիւին մեծամասնութեամբ:

Այն պարագային, երբ անկարելի ըլլայ Շրջանային Պատգամաւորական Ժողով գումարել, Շրջանային Վարչութիւնը իրաւասութիւն պիտի ունենայ նշանակելու պատգամաւորները, Կեդրոնական Վարչութենէն նախապէս առնուած հաւանութեամբ:

Յօդ. 5.- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը գումարուի երկու տարին անգամ մը Հայաստանի մէջ: Հարկեցուցիչ պարագաներու մէջ, ուրիշ վայր մը՝ Կեդրոնական վարչութեան որոշումով, նիւթական եւ այլ յարմարութիւններ նկատի առնուելով:

Յօդ. 6.- Արտասովոր Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը գումարուի:

Ա. երբ Կեդրոնական վարչութիւնը պէտք տեսնէ, իր անգամներու երկու եր-

Յօդ. 73.- Նորակազմ Ակումբ մը որ իր աշխարհագրական դիրքին բերմամբ չի կրնար կապուիլ ուրիշ շրջանակի մը, կը մասնակցի Ընդհ. Պատգմ. Ժողովին իբր առանձին Շրջանակ, պայմանաւ որ ունենայ առնուազն 25 անդամ, երբ այդ մասնակցութիւնը գուգադիպի իր կազմութեան առաջին տարիին, եւ առնուազն 50 անդամ. երբ իր կազմութենէն ի վեր անցած են մէկէ աւելի տարիներ:

(1935)

Յօդ. 74.- Պատգամաւորներու ընտրութիւնը կը կատարուի Շրջանային Պատգմ. Ժողովներու կողմէ՝ նոյն ժողովին համար ընտրուած պատուիրակներուն թիւին մեծամասնութեամբ:

Այն պարագային որ Շրջանային Պատգմ. Ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներն ու փոխ-պատգամաւորները չկարենան մասնակցիլ Ընդհ. Պատգմ. Ժողովին, Շրջանային Վարչութիւնները եւապատիկ ցանկով պատգամաւորական քեկնածուներ կը ներկայացնեն Ակումբներու անդամական Ժողովներու քուէարկութեան:

Մէկ Ակումբով ներկայացուած Շրջանակ մը Ընդհ. Պատգմ. Ժողովին պատգամաւոր կ'ընտրէ իր անդամական Ժողովին մէջ:

(1935)

Յօդ. 75.- Ընդհ. Պատգմ. Ժողովը կը գումարուի երեք տարին անգամ մը Կեդր. Վարչութեան կողմէ նշանակուած վայրին մէջ:

(1935)

Յօդ. 76.- Արտասովոր Ընդհ. Պատմ. Ժողովը կը գումարուի՝

Ա. երբ Կեդր. Վարչութիւնը պէտք տեսնէ, իր անդամներու մեծամասնութեան քուէով: Այս պարագային՝ հրաւիր-

բորդին քուէով: Այս պարագային՝ հրա-
ւիրադիրը պէտք է կրէ կեդրոնական վար-
չութեան անդամներուն երկու երրորդին
ստորագրութիւնը:

Բ. Երբ կուտակցութեան բոլոր չրջա-
նակներուն երկու երրորդը գրաւորապէս
կը պահանջէ, միեւնոյն առաջարկով:

Գ. Երբ կեդրոնական վարչութիւնը
կը կորսնցնէ իր մեծամասնութիւնը:

Արտասովոր Ընդհանուր Պատգամա-
ւորական Ժողովը իր մասնաւոր նպատա-
կը իրադրծելէ յետոյ, կրնայ ուրիշ խոր-
զիւններով ալ զբաղիլ, պատգամաւորնե-
րու մեծամասնութեան հաւանութեամբ:

Յօդ. 7.- Կեդրոնական վարչութիւնը
պարտաւոր է հրաւիրադիր զրկել, խնդիր-
ներու ցանկով միասին, բոլոր չրջանակ-
ներուն, Ընդհանուր Պատգամաւորական
Ժողովի դումարման թուականէն չորս ա-
միս առաջ:

Որակարգին պիտի ընկերանայ չրջա-
նակներու նիւթական, բարոյական եւ վի-
ճակագրական տեղեկատուութիւնը սահ-
մանաւորող հարցարան մը, որուն պա-
տասխանը Շրջանային վարչութիւնները
պարտաւոր են Ընդհ. Պատգմ. Ժողովի
գումարումէն մէկ ամիս առաջ հասցնել
կեդր. վարչութեան:

Յօդ. 8.- Իւրաքանչիւր չրջանակ
պատգամաւոր կ'ընարէ իր չրջանակի ան-
դամներէն եւ կամ ի հարկին ուրիշ չրջա-
նակի պատկանող ընկերներէն, պայմա-
նաւ որ ընտրելիութեան հանգամանքը
ներկայացնեն:

Յօդ. 9.- Կեդրոնական վարչութեան
անդամները չեն կրնար ո'ւէլ չրջանակի
ձայնը ներկայացնել Ընդհ. Պատգմ. Ժո-
ղովին մէջ:

Յօդ. 10.- Իւրաքանչիւր պատգամա-
ւոր կրնայ ներկայացնել միայն մէկ ձայն:

րագիրը պէտք է կրէ կեդր. վարչութեան
անդամներու երկու երրորդին ստորա-
գրութիւնը:

Բ. Երբ կուտակցութեան բոլոր Շրջա-
նակներու երկու երրորդը գրաւորապէս
կը պահանջէ, միեւնոյն առաջարկով:

Գ. Երբ կեդր. վարչութիւնը կը կոր-
սնցնէ իր մեծամասնութիւնը:

Արտասովոր Ընդհ. Պատգմ. Ժողովը
իւր մասնաւոր նպատակը իրագործելէ յե-
տոյ, կրնայ ուրիշ խնդիրներով ալ զբա-
ղիլ, պատգամաւորներու մեծամասնու-
թեան հաւանութեամբ:

(1935)

Յօդ. 74.- Կեդր. վարչութեան ան-
դամներն եւս կրնան պատգամաւոր ըն-
տրուիլ Ընդհ. Պատգմ. Ժողովին համար.
պայմանաւ որ անոնք ձայն չունենան
վարչութեան համարատուութեան ատեն:

(1926)

Յօդ. 85.- Ընդհանուր Պատգամ. Ժողովին մասնակցող իւրաքանչիւր ընկեր, ըլլայ ան պատգամաւոր, կեդր. վարչութեան անդամ թէ պարզ խորհրդական, ժողովին սկիզբը պարտի, յատենի ժողովոյ, կատարել ու ապա գրաւորապէս ալ ստորագրել հետեւեալ երդումը.-

Ե Ր Դ Մ Ն Ա Գ Ի Ր

«Մ'անակցելով Ռամկ. Ազատ. կուսակցութեան այս Ընդհ. Պատգամ. ժողովին, կ'երդնում պատուոյս վրայ ու յանուն հայրենիքիս եւ ազգիս՝ խղի մտօք քննել եւ դատել օրակարգի բոլոր հարցերը ու գաղտնապահ մնալ՝ խորհրդապահութեան տակ կատարուած խորհրդակցութեանց, վիճաբանութեանց եւ տրուած որոշումներուն նկատմամբ»:

(1948)

Յօդ. 11.- Ընդհ. Պատգամ. Ժողովը օրակարգի անցնելէ տուած՝

Ա. Կ'որոշէ իր ժողովարտական կանոններն ու ժողովի տեսողութիւնը:

Բ. Կ'ըզէ կուսակցութեան ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը, որոշելով գործելակերպի ընդհանուր գիծերը:

Գ. Կ'ըզէ Կեդրոնական վարչութեան, ինչպէս նաեւ չրջանակներու, տեղեկացիրները եւ հաշիւները:

Դ. Կ'ըզէ, կ'ըզէ եւ կ'ըզէ Կեդրոնական վարչութեան ամբաստանեալ անդամները, եթէ կան:

Ե. Կ'ըզէ Կեդրոնական վարչութիւնը:

Զ. Կ'ըզէ Կեդրոնական վարչութեան համար երեք վիճակներ:

Զ. Կ'ըզէ Կեդրոնական վարչութեան գաղտնի վիճակները, եթէ ըստ գործարկուող գրաւորապէս ներկայացնել իր բոլորը:

Ը. Կ'ըզէ քուէարկել կուսակցութեան պիւտճէն եւ կ'որոշէ չրջանակներու մասնակցութեան չափը:

Թ. Կ'ըզէ վերաբնիկ ի հարկին ծրագիրը եւ հիմնական կանոնագիրը:

Յօդ. 86.- Ընդհ. Պատգամ. Ժողովը՝

ա) Կ'որոշէ իր օրակարգը, իր ժողովական կանոններն ու ժողովի տեսողութիւնը:

դ) Կ'ըզէ Կեդր. վարչութիւնը հաւաքաբար կամ անոր անհատները անհատաբար թէ ամբաստանութիւն կայ:

(1948)

Յօդ. 12.- Ընդհ. Պատգմ. Ժողովր-
օրինաւոր է, երբ շրջանակներուն երկու
երրորդը ներկայացուած է եւ ըստ Յօդ.
3-ի տրամագրութեան՝ ընտրուելիք պատ-
գամաւորներու ամբողջական թիւին կէ-
սէն մէկ աւելին ներկայ է:

Յօդ. 87.- Ընդհ. Պատգմ. Ժողովը
օրինաւոր է, երբ շրջանակներու երկու
երրորդը ներկայացուած է եւ ըստ յօդ-
ւած 75-ի տրամագրութեան՝ ընտրուելիք
[պատգամաւորներու] ամբողջական թի-
ւին կէսէն մէկ աւելին ներկայ է: Իսկ
Ընդհ. Պատգմ. Ժողովի նիստերուն օրի-
նաւորութիւնը պայմանաւորուած է վա-
ւերացուած պատգամաւորներու թիւին
[կէսէն] մէկ աւելին ներկայութեամբը:

(1948)

Յօդ. 13.- Ընդհանուր Պատգամաւո-
րական Ժողովին պատգամաւոր կ'ընաւը-
ւին անոնք միայն, որոնք առնուազն եր-
կու տարի կուսակցութեան անդամ եղած
են:

Նորակազմ շրջանակները բացառու-
թիւն կը կազմեն:

Յօդ. 14.- Ընդհանուր Պատգամաւո-
րական Ժողովի որոշումները կը տրուին
ներկաներու մեծամասնութեամբ՝ ի բաց
առեալ հետեւեալ խնդիրները, որոնց հա-
մար անհրաժեշտ է վաւերացուած պատ-
գամաւորներու մեծամասնութեան քուէն:

Ա. Ծրագրի եւ հիմնական կանոնադրի
փոփոխութիւն:

Բ. Կեդրոնական վարչութեան ընտ-
րութիւն:

Գ. Դատական վճիռներ:

Դ. Պիւտճէի քուէարկութիւն:

Ե. Ընդհանուր քաղաքականութեան
հարցեր:

Յօդ. 15.- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի ատենադրութիւններուն ամփոփումը ապագրուած կը ղրկուի չըջանակներու պատասխանատու ժարմիններուն՝ ակումբներուն բաժնուէրու համար:

Յօդ. 90.- Ընդհ. Պատգմ. Ժողովի եզրակացութեանց ամփոփումը կը պատաստուի դիւանին կողմէ, բայց Կեդր. վարչութեան միջոցով կը ղրկուի Շրջանակներու պատասխանատու մարմիններուն, խորհրդապահաբար հաղորդուելու համար ակումբներուն:

Դիւանը իրաւասու է Շրջ. վարչութեանց միայն յղելու նաեւ խորհրդապահական որոշումներու ամփոփում մը:

(1948)

Յօդ. 91.- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի ատենադրութիւնները եւ յարակից թուղթերը կը յանձնուին Կեդր. վարչութեան՝ ի պահ եւ ի գործադրութիւն:

(1948)

Յօդ. 92.- Ընդհանուր Պատգմ. Ժողովի որոշումներուն ու բանաձեւերուն, ինչպէս նաեւ ընդհանուր առմամբ Ծրագիր-Կանոնագրի տրամադրութեանց շուրջ Կեդր. վարչութեան եւ Շրջանակներու միջեւ մեկնաբանութեան անհամաձայնութեան մը պարագային, Կեդր. վարչութեան տեսակէտը անմիջականօրէն պարտադիր է՝ Շրջ. վարչութեանց վերապահուած ըլլալով միայն իրենց նկատուութեանց յղումը Ընդհանուր Պատգմաւորական Ժողովին:

(1948)

ԳԼՈՒԽ 2.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.- Կեդրոնական վարչութիւնը կ'ընտրուի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովէն, երկու տարուան համար, պատգամաւորներու բացարձակ մեծամասնութեամբ, եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

ա.

Յօդ. 86.- Կեդր. վարչութիւնը կ'ընտրուի Ընդհ. Պատգմ. Ժողովէն, երեք տարուան համար, պատգամաւորներու բացարձակ մեծամասնութեամբ եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

(1935)

Յօդ. 2.- Կեդրոնական վարչութեան անդամները թէ՛ անհատապէս եւ թէ՛ հատարար պատասխանատու են Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին:

Յօդ. 3.- Կեդրոնական վարչութիւնը կը բաղկանայ առնուազն հինգ անդամներէ:

Երբ կեդրոնական վարչութեան անդամներէն մէկ կամ աւելին հրաժարին կամ պակսին, անոնց կը յաջորդեն Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին կողմէ՝ ընտրուած փոխ անդամները՝ առաւելագոյն քուէի կարգով:

Երբ հրաժարող պակսած անդամը կամ անդամները վճարեալ են, Կեդրոնական վարչութիւնը համապատասխան թիւով եռապատիկ ցանկ մը կը ղրկէ Շրջանային վարչութիւններուն, քուէարկելու համար:

Իւրաքանչիւր շրջանակի վերջին Ընդհանուր Ժողովի պատգամաւորներու թիւը հիմ կը կազմէ քուէարկութեան, եւ առաւելագոյնով կ'ընտրուին թեկնածուները:

Եռապատիկ ցանկ կազմելու համար նախապատուութիւն կը տրուի վարչութեան ոչ-վճարեալ անդամներուն, եթէ

ը.

Յօդ. 93.- Կեդրոնական վարչութիւնը կ'ընտրուի Ընդհ. Պատգամաւորական Ժողովէն, երեք տարուան համար, վաւերացուած պատգամաւորներու բացարձակ մեծամասնութեամբ, եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

Ընդհ. Պատգամաւորական Ժողովի ընթացքին, Կեդր. վարչութիւնը կը զբաղի միայն ընթացիկ գործերով, իսկ պատասխանատու խնդիրներու առթիւ կը գործադրէ Ընդհ. Պատգմ. Ժողովի հրահանգները, ստիպողական պարագաներու մէջ բաւականանալով միայն այս վերջնոյն դիւանին կարծիքով:

(1948)

Յօդ. 95.- Կեդր. վարչութիւնը կը բաղկանայ առնուազն հինգ անդամներէ.

Երբ Կեդր. վարչութեան անդամներէն մէկը կամ աւելին հրաժարին կամ պակսին, անոնց կը յաջորդեն Ընդհ. Պատգմ. Ժողովին կողմէ՝ ընտրուած փոխ անդամները՝ առաւելագոյն քուէի կարգով:

(1948)

կան եւ վախ-անդամներուն, երբ անոնք տրամադիր են վճարեալ դառնալու եւ իրենց ամբողջ ժամանակը յատկացնելու վարչութեան գործերուն:

Յօդ. 4.- Կեդրոնական վարչութեան անդամակցութեան թեկնածու են անոնք միայն, որոնք առնուազն երեք տարի կուսակցութեան անդամ եղած են:

Յօդ. 5.- Կեդրոնական վարչութեան կեդրոնաօլարը Հայաստանի մէջ է:

Հարկեցուցիչ պարագաներու բերմամբ՝ Ընդհ. Պատգամատարական ժողովի որոշումով առժամապէս ուրիշ վայր:

Յօդ. 6.- Կեդրոնական վարչութիւնը ինքը կ'ընտրէ իր զիւանը:

Յօդ. 7.- Կեդրոնական վարչութիւնը, երբ հարկ գառէ, կը նշանակէ լիազօրներ, յանձնաժողովներ եւ կը վարձէ քարտուղարներ, գործիչներ եւ ուրիշ պաշտօնականներ, իր որոշումները գործադրելու եւ կուսակցութեան բնդհանուր գործերուն ընթացք տալու համար:

Յօդ. 8.- Կեդրոնական վարչութիւնը կը վերաքննէ չըջանակի մը պատգամատարական ժողովին զատական մձիւները, պաշմանաւ որ բողոքարկուն գրաւորապէս ներկայացնէ իր բողոքը՝ տրուած թուականէն մինչեւ երեք ամիս:

Յօդ. 9.- Կեդրոնական վարչութեան հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուին կուսակցութեան կեդրոնական պաշտօնական հրատարակութիւնները:

Յօդ. 10.- Կեդրոնական վարչութեան պաշտօնն է՝

Ա. Գործադրել Ընդհ. Պատգամ. Ժողովին կողմէ քուէարկուած օրէնքներն ու որոշումները եւ վարել կուսակցութեան բնդհանուր գործերը:

Յօդ. 96.- Կեդր. վարչութեան անդամակցութեան թեկնածու են անոնք միայն, որոնք առնուազն 5 տարի կուսակցութեան անդամ եղած են:

(1948)

Յօդ. 90.- Իւրաքանչիւր Ընդհ. Պատգամատարական ժողով կ'որոշէ յաջորդ շրջանի կեդր. վարչութեան պաշտօնավայրը:

(1935)

Յօդ. 100.- Կեդր. վարչութիւնը կը վերաքննէ շրջանակի մը պատգամատարական ժողովին դատական վնիւները, պաշմանաւ որ բողոքարկուն գրաւորապէս ներկայացնէ իր բողոքը, վնիւին իրեն հաղորդուելէն մինչեւ երեք ամիս:

(1948)

Յօդ. 102.- Կեդր. վարչութեան պաշտօնն է՝

ա) Գործադրել Ընդհ. Պատգամ. Ժողովին կողմէ քուէարկուած օրէնքներն ու որոշումները, եւ վարել կուսակցութեան բնդհանուր գործերը:

Բ.- Կանոնաւոր յարաբերութեան մէջ ըլլալ բոլոր շրջանակներուն հետ եւ անոնց հրահանգ տալ կուսակցութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան նկատմամբ:

Գ.- Տնօրինել բրօքականտի միջոցներ՝ կուսակցութեան սկզբունքները եւ քաղաքականութիւնն ընդհանրացնելու համար:

Դ.- Ճշդել ներշնչութիւնը Պատգամ. Ժողովի որոշումներէն եւ կուսակցութեան հիմնական սկզբունքներէն՝ կուսակցութեան տեսակէտն ու զիրքը հանդէպ պետական հարցերու:

Ե.- Առնուազն միաժամեայ շրջաբերականներով շրջանակները տեղեակ պահել կուսակցութեան ընդհանուր գործունէութեան եւ պետական խնդիրներու շուրջ, իսկ եռամսեայ նիւթական տեղեկատուութիւն մը բնել:

Զ.- Թելադրութիւններ ներկայացնել Ընդհ. Պատգամ. Ժողովին, յաջորդ շրջանի ընդհանուր պիւտճէին համար:

Յօդ. 11.- Կեդրոնական վարչութիւնը իրաւասութիւն ունի բեկանելու շրջանային վարչութիւններու որոշումները, երբ զանոնք կուսակցութեան սկզբունքներուն հակառակ գտնէ:

Յօդ. 12.- Կեդրոնական վարչութիւնը իրաւասութիւն ունի լուծելու Շրջանային Վարչութիւն մը, երբ անոր ընթացքը, յետ ազդարարութեան, կը շարունակէ մնալ հակառակ կուսակցութեան սկզբունքներուն եւ ընդհանուր քաղաքականութեան: Այդ պարագային Կեդրոնական Վարչութիւնը կը հրաւիրէ արտասովոր Շրջանային Պատգամաւորական Ժողով, որ կ'ընտրէ նոր Շրջանային Վարչութիւն:

Բ) Կանոնաւոր յարաբերութեան մէջ ըլլալ բոլոր շրջանակներուն հետ եւ անոնց հրահանգ տալ կուսակցութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան նկատմամբ, ինչպէս նաեւ իւրաքանչիւր շրջանակի յատուկ ներքին կազմակերպչական եւ կարգապահական խնդիրներու մասին:

գ) Տնօրինել փրփականտի միջոցներ՝ կուսակցութեան սկզբունքները եւ քաղաքականութիւնը ընդհանրացնելու համար:

դ) Առնուազն երկամսեայ շրջաբերականներով շրջանակները տեղեակ պահել կուսակցութեան ընդհանուր գործունէութեան եւ այն հարցերուն, որոնք կը շահագրգռեն կուսակցութիւնը:

ե) Թելադրութիւններ ներկայացնել Ընդհ. Պատգամաւորական Ժողովին՝ յաջորդ շրջանի գործունէութեան եւ պիւտճէին համար:

(1948)

Յօդ. 103.- Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի բեկանելու Շրջ. Վարչութիւններու որոշումները, երբ գտնուի կուսակցութեան սկզբունքներուն եւ իր հրահանգներուն հակառակ գտնէ:

(1948)

Յօդ. 104.- Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի լուծելու Շրջանային Վարչութիւն մը, երբ ան յետ ազդարարութեան, կը շարունակէ գործել հակառակ կուսակցութեան սկզբունքներուն եւ ընդհանուր քաղաքականութեան կամ կ'անստի իր հրահանգներուն:

Այդ պարագային, Կեդր. Վարչութիւնը կը նշանակէ առժամեայ Շրջ. Վարչութիւն մը, միաժամանակ հրահան-

Լուծուած Շրջանային վարչութեան անդամները վերընտրելի չեն:

գելով գումարել արտասովոր Շրջ. Պատգամաւորական ժողով, որ կ'ընտրէ նոր Շրջ. վարչութիւն:

Լուծուած Շրջ. վարչութիւն մը՝ իր մեծամասնութեամբ վերընտրելի չէ:

(1948)

Յօդ. 105.- Կեդր. վարչութիւնը իրաւասութիւն ունի վարչականօրէն ուղղակի կախակաշելու որեւէ ընկեր որ՝

ա) Կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան դէմ կը գործէ:

բ) Կուսակցութեան ընդհանուր կարգապահութիւնը խախտող արարքներ կը գործէ:

գ) Իր հեղինակութեան անսաստող արարքի մէջ կը գտնուի:

դ) Շրջանակի մը պառակտումին պատճառ կը դառնայ:

Կախակաշման այս տնօրինութիւնը կը հաղորդուի ենթակաշին պատկան Շրջ. վարչութեան՝ առ ի գիտութիւն եւ գործադրութիւն:

Այս տնօրինութեան դէմ որեւէ բողոք կ'ենթարկուի Ընդհանուր Պագտմ. ժողովին:

(1948)

Յօդ. 13.- Կեդր. վարչութեան անդամներն ու ներկայացուցիչները իրաւասութիւն ունին իրենց գտնուած շրջանակներու բոլոր պաշտօնական մարմիններուն նիստերուն մասնակցել խորհրդակցական ձայնով:

Յօդ. 14.- Կուսակցութեան սեփական շարժուն եւ անշարժ ստացուածքներու մատակարարութեան վերին իրաւասութիւնը կը պատկանի Կեդրոնական վարչութեան:

Շրջանային վարչութիւնները փոխանորդարար կը վայելեն իրենց շրջանակներուն սեփական շարժուն եւ անշարժ ստացուածքները մատակարարելու իրաւասութիւնը:

Յօդ. 15.- Կեղրոնական Վարչութեան անդամները պարտին ուխտել հաստատութիւն կուսակցութեան սկզբունքներուն եւ շահերուն, եւ ստորագրել երդմնագիր մը:

ԵՐԴՈՒՄ

Հիմնական կանոնագրին «Կեղրոնական Վարչութիւն» հաստատութիւն վերջին յօդուածին տրամադրութեան համեմատ Կեղրոնական Վարչութեան անդամները կ'երդնուն հետեւեալ բանաձեւով եւ անոր մէկ օրինակը կը ստորագրեն յատենի ժողովոյ.

ԵՐԴՄՆԱԳԻՐ

«Ստանձնելով Ռամկավար Ազատական կուսակցութեան Կեղրոնական Վարչութեան անդամակցութիւնը՝ կ'երդնում «պատուոյս վրայ եւ հայրենիքիս անունով «հաստատրիմ մնալ Ռամկավար Ազատական կուսակցութեան սկզբունքներուն, «պահպանել եւ գործադրել անոր ծրագիրն ու կանոնագիրը, խղճմտօրէն կատարել Պատգամաւորական ժողովին որոշումները եւ իր կողմէ ինծի վստահեցնող աշխատանքներ, աշխատել հսկել Ռամկավար Ազատական կուսակցութեան շահերուն վրայ եւ ջանալ անոր քաղաքական նպատակներուն իրագործման, հայ ազգին եւ հայրենիքին բարիքին համար:»

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ Հիմնական կանոնագիրը վերաքննելի է Կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական ժողովին մէջ:

Յօդ. 100.- Կեղր. Վարչութեան անդամները պարտին ուխտել հաստատութիւն կուսակցութեան սկզբունքներուն ու շահերուն, եւ ստորագրել երդմնագիր մը:

ԵՐԴՄՆԱԳԻՐ

«Ստանձնելով Ռամկավար Ազատական կուսակցութեան Կեղրոնական Վարչութեան անդամակցութիւնը, կ'երդնում պատուոյս վրայ եւ հայրենիքիս անունով՝ հաստատրիմ մնալ Ռամկավար Ազատական կուսակցութեան սկզբունքներուն, պահպանել եւ գործադրել անոր ծրագիրն ու կանոնագիրը, խղճմտօրէն կատարել Ընդհ. Պատգամ. ժողովին որոշումները եւ իր կողմէ ինծի վստահեցնող աշխատանքներ, աշխատել հսկել Ռամկավար Ազատական կուսակցութեան շահերուն վրայ եւ ջանալ անոր քաղաքական նպատակներուն իրագործման, Հայ Ազգին եւ Հայրենիքին բարիքին համար:»

(1935)

ԵՐԴՄՆԱԳԻՐ

«Ստանձնելով Ռամկավար Ազատական կուսակցութեան Կեղր. Վարչութեան անդամակցութիւնը, կ'երդնում պատուոյս վրայ եւ հայրենիքիս անունով՝ հաստատրիմ մնալ Ռամկ. Ազատ. կուսակցութեան սկզբունքներուն, մնալ ցկեան գաղտնապահ, պահպանել եւ գործադրել անոր ծրագիրն ու կանոնագիրը, խղճմտօրէն կատարել Ընդհ. Պատգամ. ժողովին որոշումները եւ իր կողմէ ինծի վստահեցնող աշխատանքներ, աշխատել հսկել Ռամկ. Ազատ. կուսակցութեան շահերուն վրայ եւ ջանալ անոր հետապնդած նպատակներուն իրագործման, հայ ազգին եւ հայրենիքին բարիքին համար:»

(1948)

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 101.- Հիմնական կանոնագիրը վերաքննելի է Կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական ժողովին մէջ:

ԾՐԱԳԻՐ Ռ. Ա. Կ. Ի *

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ն

ԴԱԽԱՆԱՆՔ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵԳԻԾ՝
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ռամկավար Ազատական Կուսակցությանը եղած է հարազատ ծնունդը հայ ժողովուրդին եւ հաւատարիմ արտայայտիչը անոր ազգային վերապրումի հզօր տենչին, նուիրումը հայկական պատմական հայրենիքի ամբողջական վերականգնումին:

Ան կը դաւանի, որ այս վսեմ նպատակին իրագործումը հնարաւոր է հայ ժողովուրդի փիզիքական զօրացումով եւ համադրումը ֆիզերովը բոլոր խաւերուն առանց դասակարգերու խտրութեան:

Ռամկ. Ազատ. Կուսակցութեան աշխարհահայեացքը հիմնուած է ժողովրդային կամքի գերիշխանութեան. անհատական ու հաւաքական բնական իրաւունքներու կիրարկումին եւ ընկերային բարեշրջումի սկզբունքներուն վրայ:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը հաւատայ, որ ամէն քաղաքացի հասարակ է օրէնքի առջեւ, եւ անոր անձն ու քաղաքացիին ազատութիւնները անբռնաբարեղի պէտք է մնան եւ երաշխաւորին խմբական ու կառավարական ոտքնձգութիւններու դէմ: Գաղտնի քուէարկութեան, անհատական նախաձեռնութեան, բնդհանուր եւ պարտադիր նախակրթութեան եւ սեփականութեան իրաւունքները՝ քաղաքացիներու ապահովութեան եւ երջանկութեան անհրաժեշտ պայմանները կը ճանչնայ ան: Պետու-

թիւնը իր պարտականութիւններէն մին պիտի նկատէ ամէն մարդի աշխատանքներու ապահովագրութիւնը անգործութեան, հիւանդութեան, արկածի, ծերութեան ու մահուան դէմ:

Տնտեսական կեանքի մէջ ձգտելով արդար եւ արագ յառաջդիմութեան՝ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հակառակ է, որ մեծ դրամատէրները տիրապետեն հրապարակին մենաշնորհներու միջոցով եւ գործատէրեր ոտնակոխեն աշխատանքներու շահերը: Ան կը ջատագովէ կազմութիւնը համագործակցական ընկերութեանց, որոնց շնորհիւ կրնան առաւելագոյն չափով նպաստաւորուիլ անհատական տնտեսութիւնները: Ան կը քաջալերէ կազմակերպումը աշխատանքական միութեանց, իրենց իրաւունքներու պաշտպանութեան համար: Այս ուղեգիծով Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը հաւատայ թէ հնարաւոր կը դառնան *աշխատանքի, զբաղակցութիւնի եւ տաղանդի* կամաւոր ընկերակցութիւնն ու գործակցութիւնը, մեծագոյն բարիքները պարզեւելով ընկերութեան:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը գերազանցօրէն ազգային կազմակերպութիւն մըն է: Եւ ինչպէս անցեալին. զինքն բաղկացնող յեղափոխական ու քաղաքական հոսանքներուն՝ նոյնպէս ներկայիս, իր գոյութեան հիմնական նպատակները եւ գործունէութեան հզօր շարժառիթներն են հայ ժողովուրդին գերագոյն շահերը: Իրատես ու հայրենասիրական իր քաղաքականութեամբն էր որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը խորապէս գնահատեց հայ պետութեան վերածնունդի Հայաստանի մէջ. սկսեալ առաջին իսկ օրերէն: Եւ հաւատարիմ ու ամբողջական նուիրումով ինքզինք տրամադրեց հայկական նորաստեղծ հայրեն-

* Այս Ծրագիրն ու լազորողը Հիմնական Կանոնագիրը կու տանք ըստ 1968-ին տպագրեալ պրոթիկին:

նիքի վերականգնումին ու գորացումին, գայն դաւանելով մեր ազգային ապահովութեան եւ պատմական իրաւունքներուն իրականացման հաստատուն խարխսլը:

Ռամկավար Ազատական կուսակցութիւնը մօտէն կը շահագրգռուի Մայր Հայրենիքի յարանուն բարգաւաճութեամբ, կը ջանայ խանդավառել Գաղթահայութիւնը Հայաստանի մշակութային եւ տնտեսական վերելքով, եւ կը ջատագովէ հայ ժողովուրդին ազգահաւաք Մայր Հայրենիքին մէջ:

Ռամկավար Ազատական կուսակցութիւնը իր այս իրապաշտ ու հայրենասիրական կեցուածքով կը հանդիսանայ ազգային միասնականութեան ախոյեանը՝ Գաղթահայութեան եւ Մայր Հայրենիքի ժողովուրդին միջեւ:

Մեր կազմակերպութեան դրական եւ բարեկամական վերաբերումը հանդէպ Ս. Հայաստանին չի նշանակեր որ ան կը հրաժարի բարեացակամ դիտողութիւններ եւ ի հարկին ֆնդատութիւններ բերել:

Գաղթահայութեան ինքնապահպանումի եւ ազատ բարգաւաճումի նոյն մտահոգութեամբն է նաեւ, որ Ռամկ. Ազատ. կուսակցութիւնը կը հետամտի հայ զանգուածները հաւատարիմ փաղափայտեալ պահել զիրենք հիւրընկալող երկիրներուն ու պետութեանց:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ Ծրագիրը վերաքննելի է կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական ժողովին կողմէ՝ Հիմնական կանոնադրի տրամադրութեան համաձայն:

ՆՊԱՏԱԿ

Ա.- Հետապնդել ազատագրումը Թուրքիոյ բռնագրաւման տակ գտնուող պատմական հողերուն՝ որոնց կցումովը ներկայ Հայաստանին, պիտի իրականանայ հայ ժողովուրդին դարաւոր երազը:

Բ.- Կիրարկել ժողովրդային կամքի գերիշխանութիւնը եւ ռամկավար ազատական սկզբունքները հայ հանրային կեանքի մէջ:

Գ.- Ստարել Հայաստանի ընդհանուր զարգացումին եւ բարգաւաճումին:

Դ.- Զատագովել արտասահմանի հայ զանգուածներու ազգահաւաքը Մայր Հայրենիքի մէջ:

Ե.- Ամրացնել մշակութային յարաբերութիւնները Հայաստանի եւ գաղութներուն միջեւ:

Զ.- Հետապնդել Թուրքիոյ մէջ Հայոց ունեցած նիւթական իրաւունքները:

Է.- Զարկ տալ արտասահմանի Հայոց ազգապահպանումին, հայկական մշակոյթի զարգացման ու տնտեսական յառաջդիմութեան:

Ը.- Աշխատիլ որ Սփիւռքահայութիւնը ըլլայ հաւատարիմ եւ մնայ օրինապահ այն երկիրներուն մէջ, ուր բնակութիւն հաստատած է:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ Ռ. Ա. Կ. Ի

Ռամկափար Ազատական Կուսակցու-
թեան կազմակերպական բաժանումներն
են՝

Ա.- Տեղական Ակումբներ եւ իրենց
վարչութիւնները:

Բ.- Շրջանակներ եւ Շրջանային վար-
չութիւններ:

Գ.- Շրջանային Պատգամաւորական
Ժողովներ:

Դ.- Կեդրոնական վարչութիւն:

Ե.- Ընդհանուր Պատգամաւորական
Ժողով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 1.- Իւրաքանչիւր շրջանակ
ինքնավար է ներկայ Կանոնադրով ճշ-
դուած իրաւասութիւններու սահմանին
մէջ. ունի տեղական պայմաններու յար-
մարցուած ներքին Կանոնադիր մը, որ
հիմնական կէտերու մէջ կը համաձայնի
այս Կանոնադրի տրամադրութիւններուն:

Յօդ. 2.- Կուսակցութեան բոլոր
պաշտօնական մարմինները, Ակումբէն
մինչեւ Ընդհանուր Պատգամաւորական
Ժողովը, պէտք է պահեն իրենց որոշում-
ներուն եւ յարարերութեանց արձանա-
դրութիւնները, զիւանէն ստորագրուած:

Յօդ. 3.- Պաշտօնական մարմիններու
զիւանները անողապահն են Կուսակցու-
թեան տոմարներուն, թղթակցութիւննե-
րուն, պայմանադրութիւններուն եւ կնի-
րին:

Յօդ. 4.- Բոլոր վարչական մարմին-
ներու եւ զիւաններու ընտրութիւնները
կը կատարուին պաղանի քուէարկու-
թեամբ:

Անդամները վերընարելի են, երբ օ-
րինական արգելք չկայ:

Յօդ. 5.- Ընտրութիւններու ատեն,
մինչեւ վերջընթեր ամիսը իր անդամա-
տուրքը առանց բանաւոր պատճառի չը-
վճարող անդամ մը ընտրող եւ ընտրելի
ըլլալու իրաւունք չունի:

Յօդ. 6.- Ընտրութիւններու հիմք կը
ծառայէ անդամներու ամբողջական թի-
ւը, զանց չառնելով չվճարողները, որոնց
անունները օրինաւորապէս դուրս ձգուած
չեն անուանացանկէն:

Յօդ. 7.- Անվստահութեան քուէները
եւ կախակայման որոշումները որեւէ
մարմնի անդամներու ամբողջական թի-
ւին մեծամասնութեամբ միայն կը արը-
ւին, իսկ արտաքսումի վերաբերեալ դա-
տական վճիռները՝ երեք չորրորդի քը-
ւէով:

Յօդ. 8.- Կուսակցութիւնը իր սովո-
րական պիւտճէէն գատ, պէտք է ունենայ
իր հիմնադրամը, որմէ գոյացած տոկո-
սին եւ ի հարկին մայր-գումարին գործա-
ծութիւնը կ'որոշուի Ընդհանուր Պատգա-
մաւորական Ժողովին կողմէ:

Յօդ. 9.- Կուսակցութեան բոլոր պա-
տասխանատու մարմինները կը ստորա-

զրեն երգմնազիր մը, որուն բանաձեւը կը խմբադրուի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին կողմէ:

Յօդ. 10.- Ռամկավար Ազատական Կուսակցութեան խորհրդանիշն է Արարատի երկու կառարները, մէջտեղը նորածաղ արեւով մը, կապոյտ պատտաւի վրայ*:

ԳԼՈՒԽ Ա.

Յօդ. 11.- Ռամկավար Ազատական Կուսակցութեան կրնայ անդամակցիլ, առանց սեռի խորութեան, 18 տարեկանէն վեր տմէն հայ, որ կ'ընդունի այս կուսակցութեան սկզբունքները:

Յօդ. 12.- Նոր անդամ կ'ընդունուի Ակումբի վարչութեան Ժողովին մեծամասնութեան որոշումով, համաձայն այդ մասին Շրջանակի Ներքին Կանոնադիրի տրամադրութեան:

Ընդունուած անդամը պէտք է ստորագրէ խոստումնադիր մը եւ ընէ հետեւելու ուխտը Ակումբին անդամական Ժողովին մէջ, նախքան իր մասնակցութիւնը Ժողովին:

ՈՒԽՏ ՆՈՐԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ

«Կ'ուխտեմ խղիւս եւ պատուոյս վրայ, յանուն ազատութեան եւ հայրենիքիս բոլոր նուիրական սրբութիւններուն,

* ՄԱՆՕԹ.- Ռամկավար Ազատական Կուսակցութեան զինանշանը վահան մըն է, որուն վրայ պատկերուած են բան մը, որպէս խորհրդանիշ հողագործ աշխատատեղեան, կարկին մը, որպէս խորհրդանիշ նաւարարութեան աշխատատեղեան, եւ փետուէ գրիչ մը, իբրեւ խորհրդանիշ մտաւորականութեան: Ասոնց միութեամբ յառաջ եկած ուժը կամ զօրութիւնն ալ խորհրդանշուած է խուրձով մը, որուն մէջէն կը ցցուի տապաւին գլուխը: Վահանին ձախին, նակատը եւ աջին դրոշմուած են Ռ.Ա.Կ. գիւղերը, որպէս սկզբնատու կուսակցութեան անունին:

ծառայել Ռամկ. Ազատական Կուսակցութեան սկզբունքներուն, որդեգրելով անոր դաւանած ազգային եւ քաղաքական նպատակները:

«Կ'ուխտեմ այս վեհ վայրկեանէն սկսեալ հաւատարիմ անդամ մը ըլլալ Ռամկ. Ազատ. Կուսակցութեան, եւ խղճմտօրէն ու կարգապահութեամբ կատարել իմ վրայ դրուած բոլոր պարտականութիւնները, նուիրելով իմ նիւթական եւ բարոյական կարողութիւններս կուսակցութեան նպատակներուն իրագործման համար:

«Կ'երդնում ամէն զոհողութեամբ, նուիրիլ ազգիս, հայրենիքիս եւ կուսակցութեան սուրբ դատին՝ հաւատարմօրէն պահելով ինձի վստահուած գաղտնիքները»:

Յօդ. 13.- Իւրաքանչիւր անդամ կ'ունենայ Շրջ. Վարչութեան պատրաստուած անդամաքարտ մը, իր լուսանկարը կրող:

Յօդ. 14.- Իւրաքանչիւր անդամ բարոյական պարտաւորութեան տակ կը դանտի ընկերական համակրանքի եւ սիրոյ վերաբերում ցոյց տալու կուսակցութեան բոլոր անդամներուն հանդէպ: Այս պարտաւորութեան հակառակ վերաբերմունք եւ ուրիշ անդամներու հանդէպ վարկարեկող վարմունք պատասխանատուութեան կենթարկեն անդամ մը:

Յօդ. 15.- Կուսակցութեան անդամ չեն ընդունուիր անոնք, որ ա) ուրիշ հայ քաղաքական կուսակցութեան մը անդամ են, բ) ոճիրով եւ զեղծումով դատապարտուած են, գ) ծանօթ են իբր յօռի նկարողի տէր անձեր:

Յօդ. 16.- Կուսակցութեան այլ անդամները կը վճարեն տարեկան անդամատուրք մը, որուն նուագադոյն քանակը կ'որոշուի շրջանակին Պատգամաւորական Ժողովին կողմէ:

Տեղական ծախքերու հայթայթման

Համար չըջանակներու կանոնադիրները կ'ունենան անհրաժեշտ տրամադրութիւններ:

Պիներէ եւ ուսանողներէ կազմուած ակումբները իրենք կ'որոշեն անդամատուրքի քանակը, եւ կը մատակարարեն զայն այս յօդուածի տրամադրութիւններուն համաձայն:

Յօդ. 17.- Նոր անդամները, յօդուած 16-րդի մէջ յիշուած անդամատուրքէն զատ, պարտին վճարել նաեւ մուտքի տուրք մը, որուն քանակը իրենք կ'որոշեն:

Յօդ. 18.- Անդամատուրքէ զերծ են այն անդամները, որոնց նիւթական վիճակին թույլատու չըլլալը կը հաստատուի իրենց Ակումբին Վարչութեան կողմէ:

Յօդ. 19.- Բնակութեան հետեւանքով անդամ մը իր պատկանած ակումբէն կրնայ ուրիշ ակումբ մը փոխադրուիլ, Վարչութեան զրուտը յանձնարարականով մը:

Յօդ. 20.- Իւրաքանչիւր անդամ միայն մէկ ակումբի կրնայ անդամակցիլ եւ միայն մէկ ձայնի իրաւունք ունի:

Յօդ. 21.- Ամէն անդամ պարտի յարկէ կարգադրուած օրէնքները:

Յօդ. 22.- Որեւէ անդամ որ չի հնազանդիր իր ակումբին որոշումներուն, կամ չի վճարեր իր տուրքերը եւ կամ կ'ոտնակոխէ կուսակցութեան օրէնքները, ազդարարութիւն կը ստանայ, եւ եթէ ազդարարութիւնը ապարդիւն մնայ, պատժու կ'ենթարկուի չըջանակին ներքին կանոնադրին տրամադրութեան համաձայն:

Յօդ. 23.- Որեւէ անդամ որ՝

ա) կուսակցութեան սկզբունքներուն դէմ կը դործէ,

բ) կարգապահութեան օրէնքները չի յարգեր,

գ) իրեն զէմ տրուած վճիռի մը դէմ ներքին օրինական միջոցներէ տարբեր միջոցներու կը դիմէ,

դ) ուրիշ հայ կուսակցութեան մը եւս կ'անդամակցի,

իւր ակումբին Անդամական Ժողովին վճիռով կը կախակայուի եւ կը կորսնցնէ իր անդամական իրաւունքները, որոշուած ժամանակի մը համար, եւ ի հարկին կ'արտաքսուի յետ դատաւարութեան:

Յօդ. 24.- Տրուած վճիռէ մը դժգոհ որեւէ կողմ կրնայ Ակումբին անմիջական գերագաւ մարմինն ընդգրկել, վճռին իրեն հաղորդուելէն մինչեւ մէկ ամիս:

Յօդ. 25.- Որեւէ անդամ որ կուսակցութեան մէկ ուրիշ անդամը հրապարակով կը զրպարտէ, զրպարտուած անդամին դիմումին վրայ յետ քննութեան կը պատժուի, յարմար ահանուած պատիժով մը, որ կրնայ ըլլալ մինչեւ կախակայում եւ արտաքսում, ըստ աստիճանի:

Յօդ. 26.- Ոճիրով եւ զեղծումով դատապարտուած անդամ մը կ'արտաքսուի կուսակցութենէն՝ իր ակումբին վճիռով:

Յօդ. 27.- Արտաքսուած անդամի մը անունը կը հաղորդուի կուսակցութեան բոլոր ակումբներուն՝ գերագաւ մարմիններու միջոցաւ:

Յօդ. 28.- Բոլոր պատասխանատու մարմինները, սկսեալ Ակումբի Վարչութիւններէն մինչեւ Կեդրոնական Վարչութիւնը, պարտաւոր են ներկայ կանոնադրի տրամադրութիւններուն հակառակ դործող կամ թերացող անհատ անդամներու եւ իրենցմէ ստորադաս մարմիններու հանդէպ անմիջական ազդու տնօրինութիւններ ընել: Այս մասին զանցառութիւնը ծանր պատասխանատուութիւն կը հրաւիրէ վերոյիշեալ իրաւասու մարմիններուն վրայ, կուսակցական կարգադրութեան եւ կուսակցական վերին շահերուն դէմ մեղանշում մը նկատուելով:

Յօդ. 29.- 25 տարի անընդհատ կուսակցութեան ծառայողները կը հռչակուին «Վեթերան» անդամ եւ անոնց կը տրուի մասնաւոր շքանշան:

ԳԼՈՒԽ Բ.

Ա Կ Ո Ւ Մ Բ Ն Ե Ր

Յօդ. 30.- Նուազագոյն հինգ անդամներու խմբաւորումը կը կազմէ Ա-կումբ մը:

Յօդ. 31.- Նորակազմ Ակումբի մը գոյութիւնը օրինաւոր կը ճանչցուի այն տաւն միայն, երբ իր կազմութիւնը կը վաւերացուի Շրջ. Վարչութեան կողմէ:

Յօդ. 32.- Տեղական պայմաններու համեմատ, կրնենք կրնան առանձին Ա-կումբներ ունենալ, առանձին Վարչութիւններով:

Յօդ. 33.- Ակումբի Վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն՝ որոնք առնուազն երկու տարի անդամ եղած են կուսակցութեան, եւ մէկ տարի՝ նոյն Ա-կումբին:

Նորակազմ Ակումբները բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 34.- Իւրաքանչիւր ակումբ կ'ունենայ 3-7 անդամներէ բաղկացեալ Վարչութիւն մը, որ կը պաշտօնավարէ մէկ տարի եւ մինչեւ իր յաջորդին ընտրութիւնը:

ԾԱՆՈԹ.- Յիսունէն վեր անդամ ունեցող Ա-կումբները իրենց Վարչութենէն զատ կրնան ունենալ նաեւ տասնեակներու բաժանում մը. իւրաքանչիւր տասնեակի պետը կը ճշանակուի Վարչութենէն, եւ իր պաշտօնն է իր տասնեակի տուրքերը գանձել եւ հսկ տանիլ որ անդամական ժողովներու յանձնին:

Յօդ. 35.- Ակումբի վարչութեան անդամները իրենց ընտրութենէն անմիջապէս յետոյ, ընդհանուր անդամական ժողովին առջեւ կ'ընեն հետեւեալ ուխտը.-

ՈՒՆՏ ԱԿՈՒՄԲԻ

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՄՆԵՐՈՒ

«Ստանձնելով Ռամկ. Ազատ. Կուսակցութեան Ակումբի Վարչութեան անդամակցութիւնը, կ'երդմում պատուոյս վրայ եւ հայրենիքս անուով՝ հաւատարիմ մնալ Ռամկավար Ազատական Կուսակցութեան սկզբունքներուն եւ ազգային ու ֆաղափական նպատակներուն, գործադրել Ծրագիր-Կանոնագիրը, խղմտօրէն հետեւիլ Շրջ. Վարչութեան որոշումներուն եւ հրահանգներուն՝ հայ ազգին եւ հայրենիքին բարիքին համար»:

Յօդ. 36.- Ակումբի մը վարչութեան պակասած անդամներու յաջորդները ընտրելու իրաւունքը կը պատկանի Անդամական Ժողովին, եթէ փոխ-անդամներ չեն ընտրուած, կամ ընտրուածներով հնարաւոր չէ լրացնել վարչութեան անդամներուն թիւը:

Յօդ. 37.- Թէ՛ Ակումբի Վարչութեան եւ թէ՛ Անդամական Ժողովին որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ:

Յօդ. 38.- Ակումբի Վարչութիւնը կը վարէ Ակումբին գործերը եւ կը գործադրէ իր գերադաս մարմնոյն որոշումներն ու հրահանգները:

Յօդ. 39.- Ակումբի Վարչութիւնը համարատու է թէ՛ Անդամական Ժողովին եւ թէ՛ իր գերադաս մարմինին:

Յօդ. 40.- Ակումբի Վարչութիւնը պարտաւոր է կանոնաւորապէս՝ եռամսեայ տեղեկագրով՝ իր ղերադաս մարմինը տեղեկել պահել ակումբին անդամներուն թիւին, ելեմասական կացութեան եւ ընդհ. գործունէութեան մասին:

Այս կանոնաւոր տեղեկագրերներէն զտա՝ Ակումբներու վարչութիւնները պարտաւոր են նաեւ իրենց գերադաս մարմինը տեղեկել պահել, անմիջական տեղեկագրերով, այնպիսի խնդիրներու:

մասին, որոնց ծանօթութիւնը կարենոր
եւ օգտակար է կուսակցութեան համար:

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 41.- Առնուազն ամիսը մէկ ան-
գամ տեղի կ'ունենայ անդամական կանո-
նաւոր ժողով, որուն հրաւէրը գրաւորա-
պէս կամ մամուլի միջոցաւ կը հաղոր-
դուի բոլոր անդամներուն, ժողովէն առ-
նուազն երեք օր առաջ:

Յօդ. 42.- Ակումբի մը անդամական
ժողովը օրինաւոր է՝ երբ անդամներուն
կէսէն մէկ տւելին ներկայ է:

ՅԱԻԵԼՈՒԱՅ.- Անդամներ, որոնք նախորդ ան-
դամական ընդհանուր ժողովի մը մէջ մեծամաս-
նութեան բուհով ազատ կացուցուած են ժողովա-
կան ներկայութենէ՝ տարիքի, երկարատեւ հի-
ւանդութեան, կամ անդամական ընդհանուր ժո-
ղովին կողմէ անխուսափելի նկատուած այլ պատ-
ճառով մը, նկատի չին առնուի ժողովական մե-
ծամասնութիւն գոյացնելու համար, սակայն կը
շարունակեն իրենց անդամակցութիւնը եւ անդա-
մական իրաւունքները այդ ակումբին մէջ:

Յօդ. 43.- Երբ առաջին հրաւէրով
ժողովը մեծամասնութիւն չունենայ,
վարչութիւնը կրնայ նոյն ամսուան մէջ
երկրորդ հրաւէր մը ուղղել նոյն օրա-
կարգով: Երկրորդ ժողովին ներկաներուն
թիւը օրինական կը նկատուի եւ տրուած
որոշումները պարտաւորիչ են բոլոր ան-
դամներուն համար:

Յօդ. 44.- Վարչութեան ատենապե-
տը, իր բացակայութեան՝ փոխ-ատենա-
պետը, անդամներու մէկ երրորդին գի-
մումին վրայ՝ պարտաւոր է արտասովոր
նիստի հրաւիրել անդամական ժողովը:

Յօդ. 45.- Ակումբի տարեկան ժողո-
վը կը գումարուի Շրջանակի Պատգամա-

ւորական Ժողովին գումարման թուակա-
նէն առնուազն մէկ ամիս առաջ:

Յօդ. 46.- Ակումբի վարչութիւնը
տարեկան ժողովին մէջ կը կատարէ ա-
կումբի մէկ տարուան համարատուութիւ-
նը, որ կը տեղեկագրուի Շրջ. Պատգա-
մաւորական Ժողովին:

Յօդ. 47.- Ակումբի տարեկան ժողո-
վին մէջ կ'ընտրուին Շրջանակի Պատգա-
մ. Ժողովին պատուիրակները, ներքին կա-
նոնադրի արամադրութեանց համաձայն:

Յօդ. 48.- Կանանց ակումբները, եթէ
հարկ համարեն, կրնան տեղւոյն այրերու
ակումբին հետ խառն ժողով գումարել եւ
միասին ընտրել իրենց պատուիրակները:

Յօդ. 49.- Ակումբի մը մէջ ծագած
որեւէ վէճ երբ իր լուծումը չի գտներ տե-
ղին վրայ, անմիջական գերադաս մար-
մինը կը միջամտէ եւ իր վճիռը պարտա-
ւորիչ է բոլոր կողմերուն համար, մինչեւ
Շրջանակին Պատգա-մ. Ժողովը, ուր, կա-
տարուած զիմումի մը վրայ, վճիռը կը
քննուի:

Յօդ. 50.- Իր գերադաս մարմինն ո-
րոշումներուն եւ կարգադրութեանց դէմ
անստատոյց Ակումբի Վարչութիւն մը կը
հրաժարեցուի նոյն գերադաս մարմինն
կողմէ: Հրաժարեցուած վարչութեան ան-
դամները վերընտրելի չեն:

Յօդ. 51.- Ակումբ մը լուծուած կը
համարուի, երբ իր անդամներուն թիւը
որոշուած նուազագոյն թիւէն պակաս է:

Յօդ. 52.- Ակումբի մը լուծման պա-
րագային, գոյքերը կը յանձնուին իր ան-
միջական գերադաս մարմինն:

ԳԼՈՒԽ Գ.

Շ Ր Զ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

Յօդ. 53.- Կուսակցութիւնը կը բաժ-

նուի Ծրջանակներու՝ աշխարհադրական կամ վարչական յարմարութիւններու համեմատ :

Յօդ. 54.- Ծրջանակ մը կը կազմուի մէկ կամ աւելի Ակումբներէ, պայմանաւ որ առնուազն 100 անդամ ունենայ եւ վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ :

Յօդ. 55.- Իւրաքանչիւր շրջանակ տարին անգամ մը կ'ունենայ Ծրջանային Պատգամաւորական Ժողով, որ կը կազմուի Ակումբներու պատուիրակներէն, որոնց համեմատական թիւը կ'որոշուի իւրաքանչիւր Ծրջանակի ներքին Կանոնադրին համաձայն :

Յօդ. 56.- Ծրջանային Վարչութեան անդամներն եւս կրնան Պատգամաւոր ընտրուիլ Ծրջ. Պատգմ. Ժողովին, պայմանաւ որ անոնք ձայն չունենան Ծրջ. Վարչութեան համարատուութեան աւան :

Յօդ. 57.- Ծրջանային Պատգմ. Ժողովը օրինաւոր է երբ Ակումբներու երկու երրորդը ներկայացուած է եւ ըստ յօդ. 55ի տրամադրութեան, ընտրուելիք պատգամաւորներու ամբողջական թիւին կէսէն մէկ աւելին ներկայ է :

Յօդ. 58.- Ծրջանային Պատգամաւորական Ժողովին պատուիրակ կ'ընտրուին անոնք միայն՝ որոնք առնուազն մէկ տարի անգամ եղած են կուսակցութեան : Նորակազմ Ակումբները բացառութիւն կը կազմեն :

Յօդ. 59.- Ծրջ. Պատգմ. Ժողովը կը պատրաստէ նոյն շրջանակին Կանոնադրը, որ պէտք չէ հսկսողէ կուսակցութեան սկզբունքներուն եւ հիմնական կանոնադրին, եւ որ պէտք է վաւերացուի Կեդրոնական Վարչութենէն :

Յօդ. 60.- Ծրջ. Պատգմ. Ժողովը կը զրազի Ծրջանակին վերաբերեալ խնդիր-

ներով, կը սահմանէ տարեկան պիւտճէն եւ կ'ընտրէ Ծրջ. Վարչութիւնը :

Յօդ. 61.- Ծրջ. Վարչութեան նորընտիր անդամները կը կատարեն հետեւեալ երդումը .

ԵՐԴԱՆԱԳԻՐ

ԵՐԶ. ՎԱՐԶ. ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

«Ստանձնելով Ռամկ. Ազատ. Կուսակցութեան Երջ. վարչութեան անդամակցութիւնը, կ'երդնում պատուոյս վրայ եւ հայրենիքիս անանով՝ հաւատարիմ մնալ Ռ. Ա. Կուսակցութեան սկզբունքներուն, պահպանել եւ գործադրել անոր Մրագիր-Կանոնագիրը, խղճմանով գործադրել Երջ. Պատգմ. Ժողովի որոշումները եւ իր կողմէ ինձ վստահեցնող պաշտօնը, հետեւիլ Կեդր. վարչութեան հրահանգներուն, աշխրջօրէն հսկել Ռամկ. Ազատ. Կուսակցութեան շահերուն վրայ եւ ջանալ անոր ազգային ու բազմազան նպատակներուն իրագործման, հայ ազգին եւ հայրենիքին համար» :

Յօդ. 62.- Իւրաքանչիւր շրջանակ կուսակցութեան կեդրոնական գանձին կը տրամադրէ տարեկան տուրք մը, որուն քանակը կ'որոշուի Ընդհ. Պատգմ. Ժողովին կողմէ, հիմնուած շրջանակին կացութեան եւ նոյն շրջանակի պատգամաւորներու տեղեկատուութեան վրայ :

Յօդ. 63.- Ծրջանային Վարչութիւնը կը բաղկանայ առնուազն հինգ անդամներէ, կ'ընտրուի մէկ կամ երկու տարուան շրջանի համար՝ ըստ իւրաքանչիւր շրջանի պայմաններուն, եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը : (ԺԳ. Ընդհ. Պատգմ. Ժողով) :

Յօդ. 64.- Ծրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն՝ որոնք առնուազն երեք տարի անգամ եղած են կուսակցութեան :

Յօդ. 65.- Ծրջանային Վարչութիւնը կ'ընդունի եւ կը դործադրէ Կեդր. Վար-

չութեան հրահանգները եւ Շրջ. Պատգմ. ժողովի որոշումները. կրնայ ի հարկին թղթակցել միւս Շրջ. վարչութիւններուն հետ, տեղական ընդթ-կող կազմակերպչական եւ այլ հասարակական հարցերու շուրջ, այս մասին տեղեակ պահելով կեդրոնական վարչութիւնը:

Յօդ. 66.- Շրջանային վարչութիւնը պատասխանատու է իր շրջանակի Պատգամաւորական ժողովին, որուն պարտի ներկայացնել իր տարեկան տեղեկագրերը եւ հաշիւը:

Յօդ. 67.- Շրջ. վարչութիւնը տարին տնտեսային անդամ մը պարտաւոր է զրկել կեդր. վարչութեան՝ իր շրջանին վիճակագրական, ելեւմտական եւ բարոյական տեղեկագրերը: Ասկէ զտու, Շրջ. վարչութիւնը յաճախակի թղթակցութիւն կը կատարէ կեդր. վարչութեան հետ:

Յօդ. 68.- Շրջանային վարչութիւնը կը վերաքննէ, կը հաստատէ, կը բեկանէ կամ կը բարեփոխէ Ակումբի մը դատարանի վճիռները, պայմանաւ որ բողոքարկուողը զրաւորապէս ներկայացնէ իր բողոքը, վճիռին իրեն հաղորդուած թուականէն մինչեւ մէկ ամիս:

Յօդ. 69.- Շրջանակին շարժուն եւ անշարժ ստացուածքները մատակարարելու վերին իրաւասութիւնը կը պատկանի Շրջանային վարչութեան:

Յօդ. 70.- Շրջանային վարչութեան հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուի Շրջանակին պաշտօնաթերթը, որուն խմբագրին ընտրութիւնը կ'ենթարկուի կեդրոնական վարչութեան վաւերացումին:

Յօդ. 71.- Շրջանակները, ըստ տեղական պայմաններու, կրնան ունենալ մէկ կամ աւելի Ենթաշրջանակներ՝ համապատասխան վարչութիւններով, որոնք կը վարեն Ենթաշրջանակին վերաբերեալ

ընդհանուր գործերը եւ պատասխանատու են Շրջ. վարչութեան:

Յօդ. 72.- Շրջ. վարչութիւնը պէտք է նախապէս կեդր. վարչութեան հաւանութիւնը ստանայ այն բոլոր ձեռնարկներուն համար, որոնք կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան հետ կապ ունին եւ որոնք տեղական հանգամանք չունին:

Յօդ. 73.- Շրջ. վարչութիւնը պարտի կեդր. վարչութեան վաւերացման ենթարկել իր տարեկան պիւտճէն, եւ պիւտճէին մէջ նախատեսուած այն ձեռնարկներն ու ծախքերը որոնք կրնան մեծապէս խանգարել պիւտճէին հաւասարակշռութիւնը:

ԳԼՈՒԽ Ե.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 74.- Ընդհանուր Պատգամաւորական ժողովը կուսակցութեան գերագոյն, օրէնսդրը եւ համադառու մարմինն է:

Յօդ. 75.- Ընդհանուր Պատգամաւորական ժողովը կը կազմուի կուսակցութեան բոլոր շրջանակներէն ընտրուած պատգամաւորներէն:

Յօդ. 76.- կուսակցութեան իւրաքանչիւր շրջանակը իրաւունք ունի նշանակելու պատգամաւոր մը. ասկէ զտու, շրջանակները պատգամաւոր կը զրկեն նաեւ հետեւեալ համեմատութեամբ.

100-250	անդամ	1	պատգամաւոր
251-500	անդամ	2	պատգամաւոր
501-750	անդամ	3	պատգամաւոր
751-1000	անդամ	4	պատգամաւոր
1001-1500	անդամ	5	պատգամաւոր
1501-եւ աւելի	անդամ	6	պատգ.

Յօդ. 77.- Նորակազմ ակումբ մը որ

իր աշխարհագրական զերբին բերմամբ չի կրնար կապուել ուրիշ շրջանակի մը, կը մասնակցի ընդհանուր Պատգմ. Ժողովին իրր առանձին Շրջանակ, պայմանաւ որ ունենայ առնուազն 25 անդամ, երբ այդ մասնակցութիւնը զուգադիպի իր կազմութեան առաջին տարիին, եւ առնուազն 50 անդամ, երբ իր կազմութենէն ի վեր անցած են մէկէ աւելի տարիներ:

Յօդ. 78.- Պատգամաւորներուն ընտրութիւնը կը կատարուի Շրջ. Պատգմ. Ժողովներու կողմէ, նոյն Ժողովին համար ընտրուած պատուիրակներուն թիւին մեծամասնութեամբ:

Այն պարագային որ Շրջ. Պատգմ. Ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւորներն ու փոխ - պատգամաւորները չկարենան մասնակցիլ Ընդհ. Պատգմ. Ժողովին, Շրջ. Վարչութիւնները եռապատիկ ցանկով պատգամաւորական թեկնածուներ կը ներկայացնեն ակումբներու անդամական Ժողովներու քուէարկութեանց:

Մէկ ակումբով ներկայացուած Շրջանակի մը ընդհանուր Պատգմ. Ժողովին պատգամաւոր կ'ընտրէ իր անդամական Ժողովին մէջ:

Յօդ. 79.- Ընդհանուր Պատգմ. Ժողովը կը գումարուի երեք տարին անգամ մը՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ նշանակուած վայրին մէջ:

Յօդ. 80.- Արտասովոր Ընդհ. Պատգմ. Ժողով կը գումարուի՝

ա) երբ Կեդր. Վարչութիւնը պէտք տեսնէ, իր անդամներուն մեծամասնութեան քուէով: Այս պարագային՝ հրաւիրագիրը պէտք է կրէ Կեդր. Վարչութեան անդամներու երկու երրորդին ստորագրութիւնները:

բ) երբ կուսակցութեան բոլոր շրջանակներու երկու երրորդը գրաւորապէս պահանջէ, միեւնոյն առաջարկով:

գ) երբ Կեդրոնական Վարչութիւնը

կը կորսնցնէ իր մեծամասնութիւնը:

Արտասովոր Ընդհ. Պատգմ. Ժողովը իր մասնաւոր նպատակը իրագործելէ յետոյ, կրնայ ուրիշ խնդիրներով ալ զրազիլ, պատգամաւորներու մեծամասնութեան հաւանութեամբ:

Յօդ. 81.- Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է հրաւիրագիր զրկել խնդիրներու ցանկով միասին, բոլոր Շրջանակներուն, Ընդհ. Պատգմ. Ժողովին գումարման թուականէն չորս ամիս առաջ: Օրակարգին պիտի ընկերանայ Շրջանակներու նիւթական, բարոյական եւ փիճակագրական տեղեկութիւնները սահմանաւորող հարցարան մը, որուն պատասխանը Շրջանային Վարչութիւնները պարտաւոր են Ընդհ. Պատգմ. Ժողովի գումարումէն մէկ ամիս առաջ հասցնել Կեդր. Վարչութեան:

Յօդ. 82.- Իւրաքանչիւր շրջանակ պատգամաւոր կ'ընտրէ իր շրջանակի անդամներէն եւ կամ ի հարկին ուրիշ շրջանակի պատկանող ընկերներէն, պայմանաւ որ անոնք ընտրելիութեան հանգամանքը ներկայացնեն:

Յօդ. 83.- Կեդրոնական Վարչութեան անդամներն եւս կրնան պատգամաւոր ընտրուիլ Ընդհ. Պատգամաւորական Ժողովին համար, պայմանաւ որ անոնք ձայն չունենան Կեդր. Վարչութեան համարատուութեան առեւ:

Յօդ. 84.- Իւրաքանչիւր պատգամաւոր կրնայ ներկայացնել մէկ ձայն:

Յօդ. 85.- Ընդհանուր Պատգմ. Ժողովին մասնակցող իւրաքանչիւր ընկեր, ըլլալ ան պատգամաւոր, Կեդր. Վարչութեան անդամ թէ պարզ խորհրդական, Ժողովին սկիզբը պարտի, յատենի Ժողովոյ, կատարել ու ապա զրաւորապէս ալ ստորագրել հետեւեալ երզումը.-

«Մասնակցելով Ռամկ. Ազատ. Կուսակցութեան այս Ընդհ. Պատգմ. Ժողովին, կ'եղնում պատ-

տյա վրայ ու յանուն հայրենիքիս եւ ազգիս՝ խղի մտօք քննել եւ դատել օրակարգի բոլոր հարցերը ու զաղտնապահ մնալ՝ խորհրդապահութեան տակ կատարուած խորհրդակցութեանց, վիճարանութեանց եւ տրուած որոշումներուն ներկայանալը»:

Յօդ. 86.- Ընդհ. Պատգամ. Ժողովը՝

ա) Կ'որոշէ իր օրակարգը, իր Ժողովական կանոններն ու Ժողովի տեւողութիւնը:

բ) Կը դժէ կուսակցութեան ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը, որոշելով գործելակերպի ընդհանուր գիծերը:

գ) Կը պահանջէ, կը քննէ եւ կը վաւերացնէ Կեդր. Վարչութեան ինչպէս նաեւ Շրջանակներու տեղեկագիրներն ու հաշիւները:

դ) Կը քննէ, կը դատէ ու կը պատժէ Կեդր. Վարչութիւնը հաւաքարար կամ աւտորանդամները անհատարար, եթէ ամբաստանութիւն կայ:

ե) Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւնը:

զ) Կ'ընտրէ Կեդր. Վարչութեան համար երեք փոխ - անդամներ:

է) Կը վերաքննէ Կեդր. Վարչութեան գաղափարային միջոցները, եթէ բողոքարկուելով գործը դրամատրապիս ներկայացնէ իր բողոքը:

ը) Կը քուէարկէ կուսակցութեան պիւտճէն եւ Կ'որոշէ Շրջանակներու մասնակցութեան չափը:

թ) Կը վերաքննէ ի հարկին Ծրագիրը եւ Հիմնական Կանոնագիրը:

Յօդ. 87.- Ընդհ. Պատգամ. Ժողովը օրինաւոր է, երբ շրջանակներու երկու երրորդը ներկայացուած է եւ ըստ յօդուած 75-ի տրամադրութեան՝ բնորոշելիք պատգամաւորներու ամբողջական թիւին կէսէն մէկ աւելին ներկայ է: Իսկ Ընդհ. Պատգամ. Ժողովի նիստերուն օրինաւորութիւնը պայմանաւորուած է վաւերաց-

ւած պատգամաւորներու թիւին կէսէն մէկ աւելին ներկայութեամբը:

Յօդ. 88.- Ընդհ. Պատգամ. Ժողովին պատգամաւոր կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն երկու տարի կուսակցութեան անդամ եղած են:

Նորակազմ շրջանակները բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 89.- Ընդհ. Պատգամ. Ժողովի որոշումները կը տրուին ներկաներու մեծամասնութեամբ՝ ի բաց առեալ հետեւեալ խնդիրները, որոնց համար անհրաժեշտ է վաւերացուած պատգամաւորներու մեծամասնութեան քուէն.

ա) Ծրագրի եւ Հիմնական Կանոնագրի փոփոխութիւն:

բ) Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն:

գ) Դատական միջոցներ:

դ) Պիւտճէի քուէարկութիւն:

ե) Ընդհանուր քաղաքականութեան հարցեր:

Յօդ. 90.- Ընդհ. Պատգամ. Ժողովի եզրակացութեանց ամփոփումը կը պատրաստուի ղեկանին կողմէ, բայց Կեդր. Վարչութեան միջոցով կը ղրկուի Շրջանակներու պատասխանատու մարմիններուն, խորհրդապահարար հաղորդուելու համար ակումբներուն:

Դիւանի իրաւասու է Շրջ. Վարչութեանց միայն յղելու նաեւ խորհրդապահական որոշումներու ամփոփում մը:

Յօդ. 91.- Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի ատենագրութիւնները եւ յարակից թուղթերը կը յանձնուին Կեդր. Վարչութեան՝ ի պահ եւ ի գործադրութիւն:

Յօդ. 92.- Ընդհանուր Պատգամ. Ժողովի որոշումներուն ու բանաձեւերուն, ինչպէս նաեւ ընդհանուր առմամբ Ծրագիր - Կանոնագրի տրամադրութեանց չորս Կեդր. Վարչութեան եւ Շրջանակներ-

բու միջեւ մեկնարանութեան անհամաձայնութեան մը պարագային, Կեդր. Վարչութեան տեսակէտը անմիջականօրէն պարտադիր է՝ ՇՐՋ. Վարչութեանց վերապահուած ըլլալով միայն իրենց նկատողութեանց յոռմը Ընդհանուր Պատգամաւորական ժողովին:

ԳԼՈՒԽ Զ.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 93.- Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Ընդհ. Պատգամաւորական ժողովէն, երեք տարուան համար, վաւերացուած պատգամաւորներու բացարձակ մեծամասնութեամբ, եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը:

Ընդհ. Պատգամաւորական ժողովի ընթացքին, Կեդր. Վարչութիւնը կը ղրադի միայն ընթացիկ գործերով, իսկ պատասխանատու խնդիրներու առթիւ կը դործադրէ Ընդհ. Պատգամ. ժողովի հրահանգները, ստիպողական պարագաներու մէջ բաւականանալով միայն այս վերջնոյն զիւանին կարծիքով:

Յօդ. 94.- Կեդրոնական Վարչութեան անդամները թէ՛ անհատապէս եւ թէ՛ հաւաքարար պատասխանատու են Ընդհ. Պատգամաւորական ժողովին:

Յօդ. 95.- Կեդր. Վարչութիւնը կը բաղկանայ առնուազն հինգ անդամներէ:

Երբ Կեդր. Վարչութեան անդամներէն մէկը կամ աւելին հրաժարին կամ պակսին, անոնց կը յաջորդեն Ընդհ. Պատգամ. ժողովին կողմէ ընտրուած փոխ - անդամները՝ առաւելագոյն քուէի կարգով:

Յօդ. 96.- Կեդր. Վարչութեան անդամակցութեան թեկնածու են անոնք միայն, որոնք առնուազն 5 տարի կուսակցութեան անդամ եղած են:

Յօդ. 97.- Իւրաքանչիւր Ընդհ. Պատգամ. ժողով կ'որոշէ յաջորդ շրջանի Կեդր. Վարչութեան պաշտօնավարը:

Յօդ. 98.- Կեդր. Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր զիւանը:

Յօդ. 99.- Կեդր. Վարչութիւնը, երբ հարկ վատէ, կը նշանակէ լիազօրներ, յանձնաժողովներ եւ կը վարձէ քարտուղարներ, գործիչներ եւ ուրիշ պաշտօնեաներ, իր սրտուամբ դործադրելու եւ կուսակցութեան ընդհանուր գործերուն ընթացք տալու համար:

Յօդ. 100.- Կեդր. Վարչութիւնը կը վերաքննէ շրջանակի մը պատգամաւորական ժողովին դատական վճիռները, պայմանաւ որ բողոքարկուէ գրաւորապէս ներկայացնէ իր բողոքը, վճիռին իրեն հաղորդուելէն մինչեւ երեք ամիս:

Յօդ. 101.- Կեդր. Վարչութեան հրահանգութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուին կուսակցութեան կեդրոնական պաշտօնական հրատարակութիւնները:

Յօդ. 102.- Կեդր. Վարչութեան պաշտօնն է՝

ա) Գործադրել Ընդհ. Պատգամ. ժողովին կողմէ քուէարկուած օրէնքներն ու որոշումները, եւ վարել կուսակցութեան ընդհանուր գործերը:

բ) Կանոնաւոր յարաբերութեան մէջ ըլլալ բոլոր շրջանակներուն հետ եւ անոնց հրահանգ տալ կուսակցութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան նկատմամբ, ինչպէս նաեւ իւրաքանչիւր շրջանակի յատուկ ներքին կազմակերպչական եւ կարգապահական խնդիրներու մասին:

գ) Տնօրինել փրփուականաւ միջոցներ՝ կուսակցութեան սկզբունքները եւ քաղաքականութիւնը ընդհանրացնելու համար:

դ) Առնուազն երկամսեայ շրջաբե-

րականներով չըջանալիները տեղեակ պահել կուսակցութեան ընդհանուր գործունէութեան եւ այն հարցերուն, որոնք կը շահագրգռեն կուսակցութիւնը:

ե) Թեյադրութիւններ ներկայացնել Ընդհ. Պատգամաւորական Ժողովին՝ յաջորդ շրջանի գործունէութեան եւ պիտօճէին համար:

Յօդ. 103.- Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի բեկանալու Շրջ. Վարչութիւններու որոշումները, երբ դանձր կուսակցութեան սկզբունքներուն եւ իր հրահանգներուն հակառակ դնէ:

Յօդ. 104.- Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի լուծելու Շրջանային Վարչութիւն մը, երբ ան յետ ազդարարութեան, կը չարունակէ գործել հակառակ կուսակցութեան սկզբունքներուն եւ ընդհանուր քաղաքականութեան կամ կ'անաստէ իր հրահանգներուն:

Այդ պարագային, Կեդր. Վարչութիւնը կը նշանակէ առժամեայ Շրջ. Վարչութիւն մը, միաժամանակ հրահանգելով գումարել արատաւոր Շրջ. Պատգամաւորական Ժողով, որ կ'ընարէ նոր Շրջ. Վարչութիւն:

Լուծուած Շրջ. Վարչութիւն մը՝ իր մեծամասնութեամբ վերանորոգելի չէ:

Յօդ. 105.- Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի վարչականօրէն ուղղակի կախակալելու որեւէ ընկեր որ՝

ա) կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան դէմ կը գործէ:

բ) կուսակցութեան ընդհանուր կարգապահութիւնը խախտող արարքներ կը գործէ:

գ) իր հեղինակութեան անսաստող արարքի մէջ կը դանդաղի:

դ) Շրջանակի մը պատակտումին պատճառ կը դառնայ:

Կախակալման այս տնօրինութիւնը կը հաղորդուի ենթակային պատկան

Շրջ. Վարչութեան՝ առ ի ղրաւութիւն եւ գործադրութիւն:

Այս տնօրինութեան դէմ որեւէ բողոք կ'ենթարկուի Ընդհանուր Պատգամ. Ժողովին:

Յօդ. 106.- Կեդր. Վարչութեան անդամներն ու ներկայացուցիչները իրաւասութիւն ունին իրենց գանձած շրջանակներու բոլոր պաշտօնական մարմիններու նիստերուն մասնակցել՝ խորհրդակցական ձայնով:

Յօդ. 107.- Կուսակցութեան սեփական չարժուէն եւ անչարժ ստացուածքներու մատակարարութեան վերին իրաւասութիւնը կը պատկանի Կեդր. Վարչութեան:

Շրջ. Վարչութիւնները վստահող դարար կը վայելեն իրենց շրջանակներուն սեփական չարժուէն եւ անչարժ ըստացուածքները մատակարարելու իրաւասութիւնը:

Յօդ. 108.- Կեդր. Վարչութեան անդամները պարտին ուխտել հաւատարմութիւն կուսակցութեան սկզբունքներուն ու շահերուն, եւ ստորագրել երդմնագիր մը:

ԵՐԴՄՆԱԳԻՐ

«Ստանձնելով Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդր. Վարչութեան անդամակցութիւնը, կ'երդնամ պատուոյս վրայ եւ հայրենիքիս անունով՝ հաւատարիմ մնալ Ռամկ. Ազատ. Կուսակցութեան սկզբունքներուն, մնալ ցկեանս գաղտնապահ, պահպանել եւ գործադրել անոր Մրգիրն ու Կանոնագիրը, խղճմտօրէն կատարել Ընդհ. Պատգամ. Ժողովին որոշումները եւ իր կողմէ ինձի վստահուած պաշտօնը, աչալը՝ չօրէն հսկել Ռամկ. Ազատ. Կուսակցութեան շահերուն վրայ եւ ջանալ անոր հետապնդած նպատակներուն իրագործման, հայ ազգին եւ հայրենիքին բարիքին համար»:

ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 109.- Հիմնական կանոնադիրը
վերաքննելի է կուտակյալթեան ընդհ.
Պատգմ. Ժողովին մէջ՝ անոր մասնակ-
ցող պատգամաւորներու ամբողջական
թիւին կէսէն մէկ տւելին ձայնովը:

ԲԱԺԻՆ

Բ.

ՆԵՐՔԻՆ
ԿԱՆՈՆԱԳՐԵՐ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ Ա. (ՐՄԵՆԱԿԱՆ) Կ (ԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ) Զ. ՇՐՋԱՆԱԿԻ

(ԱԿ-ի Գաղափարակիցների Պատգ. ժողովը նիստ գումարելով 1905 Մայիս 28ին Սէնթրլ Ֆօլս Բ. Ա. ի մէջ հետեւեալ կանոնադիր պատրաստեց:)

ՆՊԱՏԱԿ

Ա. ԱԿ-ի Զ. Շրջանակի նպատակն է իր անդամների դէպի իրար եւ դէպի Հայրենիք ունեցած պարտաճանաչութեան եւ հայրենասիրութեան ոգին արթնցնել, ներքին եւ արտաքին ուժ մը դոյալցնել, եւ ի պահանջել հարկին իր տրամադրութեան տակ զանաւանդ ուժերով օժանդակել Մայր Հայրենիքի մէջ մեր նրպատակը գործադրող ԱԿ. Գաղափարակիցներին:

Բ. Նիւթապէս եւ բարոյապէս նպատակ Արմէնիա թերթի տարածման եւ զարգացման:

ՄԻՋՈՑ

Ա. Նպատակի իրագործման միջոց կ'ընտրէ որ ամէն մէկ անդամ այս նուիրական գաղափարին տարածման առաքեալ մը պահանջ, եւ իր շրջանակի մէջ իր գաղափարական կեանքով ու բարոյակա՜նով յարգանք ներշնչէ ուրիշներին դէպի այս կազմակերպութեան գործը:

Բ. Նիւթական ուժ մը գոյացունել մօրից տուրքի անդամալծարներէն եւ հարկ պահանջած ատեն մասնաւոր հանդանուութեանց միջոցաւ:

ԳԱՂՏՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Կազմակերպութեան գոյութիւնը միշտ պէտք է մնայ խորհրդաւոր գաղա՜նիք մը: Ոչ մի անդամ իրաւունք չունի կազմակերպութեան մասին խօսիլ հրա՜

պարակի վրայ: Հրապարակային ժողով, թերթ եւն. վնասակար կը նկատուին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԱԿ. Զ. Շրջանակ ունի Ա. Պատգամաւորական ժողով, Բ. Յարարերական Դիւան եւ Գ. Մասնաճիւղեր:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ա. Իւրաքանչիւր տարին անգամ մը մասնաճիւղերէն ընտրուած պատգամաւորները միյապին զալով կը կազմեն Պատգամաւորական ժողով:

Բ. Պատգ. ժողով կ'որոշէ այն բոլոր անհրաժեշտ խնդիրները որոնք տարուան ընթացքին մէջ կը ծագին մասնաճիւղերի մէջ, կը ստանայ անոնց հաշիւները, կը քննէ Յարար. Դիւանի տարեկան գործունէյութիւնը եւ հաշուեկշիռը: Կը վերնորէ եւ կամ կ'ընտրէ նոր Յարար. Դիւանը եւ կանոնադրի վերաքննութիւնը կը կատարէ ի պահանջել հարկին:

ՅԱՐԱՐԵՐԱԿԱՆ ԴԻՒԱՆ

Ա. Պատգամաւորական ժողովը կ'ընտրէ քուէից առաւելութեամբ Զ. Շրջանակի Յարարերական Դիւան եօթ անդամներէ բաղկացեալ, որոնց պաշտօն կը տեսէ մի տարի. ժողովը կ'ընտրէ միայն երեք անդամներ, իսկ վերջիններն ալ կ'ընտրեն իրենց գործակից միւս չորս անդամները:

Բ. Դիւանը Շրջանակի վերին հսկող մարմինն է: Յարարերութեան մէջ կը մտնէ ուրիշ շրջանակներ հետ. նոյնպէս կանոնաւոր յարարերութիւն կը պահէ մասնաճիւղերի հետ: Կը ստանայ մասնա՜

*ճիւղերին պարբերական նամակները եւ
կը զործածէ... * :*

* Հոս կ'ընդհատուի այն բազմագրեալ օրի-
նակը, զոր ունինք մեր տրամադրութեան ներ-
քեւ – Վ. Ղ.:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ Հ. Ս. Ռ. Կ. ԳԱՀԻՐԷԻ ԱԿՈՒՄԲԻ

Յօդ. 1.- Հ. Ս. Ռ. Կուսակցութեան Գահիրէարնակ հիմնադիրները կազմած են Գահիրէի Ակումբը:

Յօդ. 2.- Գահիրէի Ակումբը, իրբեւ մասնաճիւղ Հ. Ս. Ռ. Կուսակցութեան հաւատարիմ պիտի մնայ Կուսակցութեան Ծրագրին, եւ պիտի ջանայ օգտակար ըլլալ անոր նպատակին՝ նիւթական եւ բարոյական աջակցութեամբ:

Յօդ. 3.- Գահիրէի Ակումբը իր շըրջանակին մէջ ինքնավար է եւ կը մատակարարուի տեղական միջոցներով:

Յօդ. 4.- Գահիրէի Ակումբը կը դործէ իր պատասխանատուութեան տակ՝ Հ. Ս. Ռ. Կուսակցութեան անունով, բայց կը ներկայացնէ միայն իր շըջանի անդամներուն կարծիքը:

Յօդ. 5.- Ամէն չափահաս հայ, առանց դատանանքի եւ պատկարգի խորութեան, կրնայ անդամակցիլ Հ. Ս. Ռ. Կուսակցութեան:

Յօդ. 6.- Անդամակցիլ փափաքողը նախապէս կը ներկայացուի երկու անդամներու կողմէ, եւ Ակումբին Դիւանը՝ քննութենէ վերջ՝ կ'ընդունի խնդրարկուն իրբեւ անդամ, եւ կամ՝ հակառակ պարագային՝ Ակումբին զնահատմանը կ'ենթարկէ որոշումը:

Յօդ. 7.- Ամէն անդամ պարտի ըստորագրել մասնաւոր տոմարի մը մէջ՝ քննութեան Կուսակցութեան Ծրագիրը եւ Հիմնական Կանոնագիրը, ինչպէս նաեւ Ակումբին ներկայ Կանոնագիրը:

Յօդ. 8.- Ակումբին տեղական պէտքերը եւ Կուսակցութեան բոլորականապի քննականութիւնը ծախքերը կը հոգացուին ամսարաւորութիւններով եւ ուրիշ հասոյթներով: Հարիւրին տասը վար կը գրուի իրբեւ

պահեստի դրամ՝ բացառիկ պէտքերու համար:

Յօդ. 9.- Իւրաքանչիւր անդամ կը վճարէ առնուազն մէկ ամսարաւորութիւն: Ամսարաւորութիւնն է 5 դրշ. ողջ: Երեք ամսարաւորութիւն չի վճարող անդամը ազդարարագիր կ'ընդունի Դիւանէն, եւ վեց ամսարաւորութիւն չի վճարողը կը ջնջուի անդամացուցակէն եւ իր անունը կը յայտագրուի Ակումբին Ժողովատեղիին մէջ:

Յօդ. 10.- Կարեւոր բայց նիւթապէս անձուկ անդամները ամսավճարէ զերծ կը մնան Դիւանին միաձայն որոշումով:

Յօդ. 11.- Ամսարաւորութիւն վճարող հաշուհիները եւս կրնան կազմել առանձին Օթեակներ եւ յաճախել Տեղական Ակումբը, խորհրդակցական իրաւունքով:

Յօդ. 12.- Մօտակայ քաղաքներու մէջ՝ երբ անդամներու թիւը 15ը չանցնիր, կը կազմուի Օթեակ մը՝ որ կը կապուի Գահիրէի Ակումբին: Առնուազն 5 անդամ կրնան Օթեակ մը կազմել, եւ իւրաքանչիւր Օթեակ կ'ունենայ իր նախագահը՝ որ Օթեակին անունով կը յարարուի Ակումբին հետ:

Յօդ. 13.- Գահիրէի մէջ եւս կրնան Օթեակներ կազմուիլ, որ մաս կը կադմեն Տեղական Ակումբին:

Յօդ. 14.- Պատիւը արատաւորող արարքի մէջ զոնուած եւ կամ Կուսակցութեան սկզբունքներուն դէմ դործող ոեւէ անդամ՝ մասնաւոր յանձնախումբի մը քննութենէն վերջ՝ կ'արտաքսուի Ակումբին որոշումով: Այդ յանձնախումբը կը բաղկանայ Դիւանէն՝ ինչպէս Ակումբին կողմէ քննուած երեք անդամներէ:

Յօդ. 15.- Դիւանը կը վարէ Ակումբին գործերը եւ համարատու է անոր:

Յօդ. 16.- Դիւանը կը բաղկանայ եօթը անդամներէ, որ իրենց մէջէն կ'ընտրեն Նախագահ մը, Քարտուղար մը, Գանձապետ մը եւ չորս Խորհրդական:

Յօդ. 17.- Դիւանը կ'ընտրուի Ակումբին անդամներուն կողմէ մէկ տարուան համար եւ իր անդամները վերընտրելի են:

Յօդ. 18.- Ակումբը կ'ունենայ ի չարկին, Պատուոյ Անդամներ:

Յօդ. 19.- Ակումբը իր գումարումները կը կատարէ յատուկ ժամադրաւայրի մը մէջ՝ ուր անդամները կը հաւաքւին սովոր գոնէ մէկ անգամ կանխաւ որոշեալ օր մը:

Յօդ. 20.- Գոնէ ամիսը մէկ անգամ Դիւանը Ակումբին անդամներուն խորհրդակցութեան կ'ենթարկէ իր օրակարգը:

Յօդ. 21.- Դիւանը կեդրոնական Ակումբին կը հաղորդէ պարբերաբար Ակումբին գործառնութեանց եւ տեղական հանդամանքներու մասին տեղեկութիւններ:

Յօդ. 22.- Ատենադրութիւնները եւ թղթակցութիւնները կը ստորադրուին Նախագահին եւ Քարտուղարին, իսկ բացառութիւններ՝ Գանձապետին եւ Նախագահին կողմէ:

Յօդ. 23.- Դիւանը կրնայ ուղղակի թղթակցել Կուսակցութեան միւս Տեղական Ակումբներուն հետ եւս:

Յօդ. 24.- Դիւանը իր որոշումները կուտայ ձայնի մեծամասնութեամբ:

Ակումբին նիստը օրինաւոր է անդամներու առնուազն մէկ երրորդին ներկայութեամբը, եւ որոշումները կը տրուին մեծամասնութեամբ:

Եթէ առաջին անգամ մեծամասնութիւն չըլլալուն պատճառով նիստ չի գու-

մարուի, երկրորդ անգամ նիստը օրինաւոր կը համարուի՝ առնուազն մէկ քառորդին ներկայութեամբը. միայն այդ պարագային, թէ որ ներկաները Ակումբին անդամներուն մէկ երրորդը չեն կադմեր, մեծամասնութիւնը ներկաներու երեք քառորդին ձայնովը կը գոյանայ:

Յօդ. 25.- Դիւանը Ակումբին որոշումով, իսկ ստիպողական պարագաներու մէջ իր նախաձեռնութեամբ, կը կադմակերպէ հանդէսներ եւ հրապարակաստեթիւններ, կը հրատարակէ շրջաբերականներ եւ կոչեր, կը մասնակցի պաշտօնադէպ ազգային եւ քաղաքական արտայայտութեանց, միշտ Ծրագրի սահմանին մէջ:

Յօդ. 26.- Դիւանը թղթակցելով կեդրոնական եւ միւս Տեղական Ակումբներուն հետ, կը փոխադրէ օգտաւորելի անոնց կողմէ հաղորդուած խորհուրդները եւ թելադրութիւնները, եւ կարելի եղած չափով անոնց հետ համերաշխ գործունէութեամբ մը՝ Կուսակցութեան ներդաշնակութիւնը ապահովել:

Յօդ. 27.- Ակումբը պարտաւոր է գործադրել Կուսակցութեան Ընդհանուր Ժողովին որոշումները:

Յօդ. 28.- Ակումբը համարատու է Կուսակցութեան Ընդհանուր Ժողովին:

Յօդ. 29.- Ամէն անգամ որ Կուսակցութեան Ընդհանուր Ժողովը դումարւի, Եգիպտոսի Շրջանակը (որուն մաս կը կազմէ Գահիրէի Ակումբը) կը մասնակցի այդ Ժողովին՝ Հիմնական Կանոնադրին տրամադրածին չափ պատգամաւորներով:

Յօդ. 30.- Գահիրէի Ակումբը լուծուած կը համարուի երբ իր անդամներուն թիւը 15էն պակասի իջնէ. այդ պարագային Ակումբը կը վերածուի Օթեակի մը եւ կը կապուի մերձակայ Ակումբի

մը, որուն կը յանձնէ իր աւելորդ գոյ-
քերը:

Յօդ. 31.- Ներկայ Կանոնադիրը վե-
րաքննելի է Ակումբին անդամներուն
բացարձակ մեծամասնութեամբը:

Գահիրէ, 30 I 13 Դեկտ. 1908

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՎԵՐ. ՀՆԶ. (ԱԶԳԱՅՆԱԿԱՆ - ԱԶԱՏԱԿԱՆ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԻՆ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ 1.- Վերակազմեալ Հընչակեան Կուսակցութեան կրնայ անդամակցիլ ամեն Հայ, առանց սեռի եւ դասանքի խտրութեան:

Անդամակցութիւնը երկու տեսակ է. գործօն՝ 18 տարեկանէն վերերու համար. օժանդակ՝ 18-էն վար տարիք ունեցողներու համար:

Օժանդակ անդամներ զերծ են տուրք վճարելու պարտականութենէն եւ չեն վայելեր քուէարկելու եւ քուէարկուելու իրաւունքը:

Յօդ. 2.- Կուսակցութեան անդամակցող ամեն անհատ պարտաւոր է երդնուլ, թէ հաւատարիմ պիտի մնայ Կուսակցութիւնը ղեկավարող սկզբունքներուն, ծրագրի ոգիին եւ կազմական կոնսոնսիդի տրամադրութիւններուն:

Յօդ. 3.- Որպէսզի նորեկ մը կարենայ մանել կուսակցական շարքերուն մէջ, անհրաժեշտ է որ արդէն իսկ անդամակցող երկու ընկերներ նպատաւոր վկայութիւն տան իր մասին: Իրենց հանրային կեանքին մէջ արատաւորուած մարդիկ չեն կրնար անդամակցիլ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան:

Յօդ. 4.- Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան շարքերուն մէջ մտնող իւրաքանչիւր ընկեր պարտաւոր է՝

Ա.- Նիւթապէս եւ բարոյապէս անջակցիլ կուսակցութեան հզօրացման եւ տարածմանը:

Բ.- Աշխատիլ մեր կուսակցութեան սկզբունքներուն հիմնաւորմանն ու իրադրութեանը:

Գ.- Քոյր կուսակցութիւններու հետ

կռիւ կամ բաղխում յառաջ բերող պարագաներէ զգուշանալ եւ անձնականութենէ հեռու կենալով վիճաբանութիւնները ըսկզբունքային հողէ դուրս չի հանել:

Դ.- Կէտ առ կէտ հետեւիլ կազմական Կոնսոնսիդի ընդ որ տրամադրութեանց, ինչպէս նաեւ այն ամեն հրահանգներուն, որոնք ի հարկին պիտի տրուին մասնաւոր շրջաբերականներով:

Ե.- Անուազն Մէկ ՏՕԼԱՐ ամսաբաժին վճարել փոխարէն ստանալով ընկալագիր:

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Յօդ. 5.- Վերակազմեալ Հնչակեան Հինգ ու աւելի թիւով ընկերներ քովէ քով գալով կը կազմեն Մասնաճիւղ մը:

Յօդ. 6.- Իւրաքանչիւր մասնաճիւղ կունենայ իր վարչութիւնը, որ կ'ընտրուի տարին անգամ մը, ժողովին ներկայ անդամներուն մեծամասնութեան զաղտնիքով:

Մասնաճիւղային ոեւէ ժողով օրինաւոր կը նկատուի, երբ ժողովին հրաւիրագրերը ատենին զրկուած են անդամներուն եւ կամ ժողովը պատշաճ կերպով ծանուցուած է. ներկաներուն թիւը գոնէ մէկ երրորդն ըլլալու է մասնաճիւղի անդամներու թիւին:

Յօդ. 7.- Ընտրութիւն կատարուելիք ժողովներու համար զրկուած հրաւիրագրերուն մէջ պէտք է անպայման յիշուի ընտրութեան օրակարգը եւ այդ հրաւիրագրերը պէտք է զրկուին ժողովին առնուազն մէկ շաբաթ առաջ:

Յօդ. 8.- Վարչութեան ընդ որ անդամներն ալ կամ կ'ընտրուին զաղտնի

քուէարկութեամբ, եռապատիկ ցանկի մը վրայէն, եւ կամ, տեղական պայմանները եթէ աւելի նպաստաւոր են վարչապետի զրութեամբ, գաղտնի քուէով կ'ընտրուի մէկ հոգի, որ իր պաշտօնակիցները կ'որոշէ եւ կը ներկայացնէ ժողովին վաւերացման կամ մերժումին: Անդամական ժողովը բանաւոր պատճառներ ցոյց տալով կրնայ մերժել ներկայացուած անուններէն մէկը կամ բոլորը, հարկադրելով որ վարչապետը ներկայացնէ նոր անուններ:

Յօդ. 9.- Առնուազն վեց ամիս կուսակցութեան անընդհատ անդամակցող մը միայն կրնայ վարչութեան անդամ ընտրուիլ:

Յօդ. 10.- Մասնաճիւղի մը վարչութիւնը կը բաղկանայ 3,5 կամ 7 անդամներէ, հետեւեալ պաշտօններով, ատենադպիր, գանձապահ - հաւաքիչ, փոխ - ատենապետ, փոխ - ատենադպիր:

Յօդ. 11.- Ատենապետին պաշտօնն է, վարչութիւնը նիստերու հրաւիրել, նիստերուն ատենապետել եւ հսկել ժողովի կանոնաւորութեան:

Ատենադպիրն հետ ստորագրել կարելորդ եւ պատասխանատու պաշտօնաթղթերու եւ նամակներու տակ:

Պարբերաբար նայիլ գանձապահին հաշիւներուն եւ գործառնութիւններուն:

Ատենադպիրն պաշտօնն է, ժողովներու արձանագրութիւնները պահել:

Ատենապետին հետ նամակներուն տակ ստորագրել:

Կնիքը պահել եւ գործածել բոլոր գրութիւններու տակ:

Դանձապահին պաշտօնն է.

Տուրքերը գանձել եւ ելեւմուտքի կանոնաւոր հաշիւ պահել:

Առանց վարչական ժողովի որոշումին ո'րեւէ գումար չի վճարել:

Պահել ծախուած կամ զրկուած գր-

ւամներու բոլոր արդարացուցիչ թուղթերը եւ ստացականները:

Փոխ - ատենապետ եւ փոխատենադպիր փոխանորդաբար կը վարեն այդ պաշտօնները, նոյն իրաւասութեամբ, երբ բանաւոր պատճառով, ատենապետ ու ատենադպիր չի կրնան իրենց պաշտօնը կատարել:

Յօդ. 12.- Հին վարչութիւնը առ առաւելն մէկ չարաթէն՝ նորընտիր վարչութեան պիտի յանձնէ իր մօտ գանուած ամեն գույք, գրամ, հաշիւ, եւայլն:

Յօդ. 13.- Հին վարչութեան անդամները վերընտրելի են:

Յօդ. 14.- Տարեշրջանի միջոցին վարչութեան պակասած անդամներու թիւը եթէ մեծամասնութեան պակաս է՝ պակասածներուն տեղը նորեր կ'ընտրուին վարչութեան կողմէ: Եթէ պակասողները մեծամասնութիւն ըլլան՝ նոր ընտրութիւն կը կատարուի անդամական ժողովի կողմէ, ամբողջ կազմին համար:

Յօդ. 15.- Մասնաճիւղ մը եթէ մասնաւոր տուփ չունենայ նամակատան մէջ, ատենապետին հասցէն պէտք է գործածուի իր պաշտօնական հասցէ: Անյարմարութեան պարագային՝ վարչութիւնը կ'որոշէ հասցէն: Տուփին բանալին կը մնայ ատենապետին մօտ:

Յօդ. 16.- Վերակազմեալ Հնչակեան Մասնաճիւղերու վարչութիւնները պարտաւոր են.

Ա.- Մասնաճիւղի ընկերներուն Ֆիզիքական եւ մտաւորական զարգացման խնամք տանիլ:

Բ.- Մասնաճիւղի ընկերներուն ամսականները կանոնաւորապէս հաւաքելով մասնաւոր տոմարի մը մէջ արձանագրել եւ գոյացած արգիւնքէն զեղջիլով տեղային պէտքերու համար թոյլատրելի հաքիւրին 20 գումարը, մնացեալը հասցնել Նահանգային վարչութեան:

Գ.- Վեց ամիսն անդամ մը մասնա-
ճիւղին բարոյական ու նիւթական գոր-
ծունէութեան հաշուետուութիւնն ընել
Նահանգային Վարչութեան:

Դ.- Աշալուրջ հետեւիլ կազմական
կանոնադրի տրամադրութիւններուն եւ
գործադրել զանոնք տառապէս:

Ե.- Միշտ յարաբերութեան մէջ մը-
նալ Նահանգային Վարչութեան հետ:

Զ.- Անդամներու թիւը չտայնելու
աշխատիլ, փրօփականտի զանազան մի-
ջոցներու գործածութեամբ:

Է.- Հասոյթի ադրիւրներ գտնել:

Յօդ. 17.- Կազմակերպական ընթա-
ցիկ ու սովորական ծախսերէն զուրս՝
մասնաճիւղերու կողմէ եղած արտակարգ
ծախքեր պէտք է հոգացուին տեղին վը-
րայ ձեռք բերուած արտակարգ հասոյթ-
ներով, եթէ կանոնադրով թույլատրուած
հարիւրին քսանը չի բաւէ այդ ծախքե-
րուն:

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 18.- Անդամական ժողովներ
տեղի ունենալու են երեք չարաթն ան-
գամ մը: Բացառիկ ժողովներ՝ բացառիկ
հանգամանքներու տակ տեղի կ'ունենան
վարչութեան հրաւերով:

Ժողովները յառաջ կը տարուին հե-
տեւեալ օրակարգով.

ա. Նոր անդամակցութիւն:

բ. Նախորդ նիստի արձանագրու-
թեան ընթերցում:

գ. Ընթերցում նամակներու եւ շքը-
ջաբերականի:

դ. Նախորդ նիստէն մնացած խնդիր-
ներու վերջնական կարգադրութիւն:

ե. Նոր խնդիրներ, առաջարկներ,
թելադրութիւններ:

զ. Տեղեկատուութիւն ատենադպի-
րին եւ գանձապահին կողմէ:

ԿԱՆԱՅ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

Յօդ. 19.- Կանանց մասնաճիւղերը
պիտի վայելեն արանց մասնաճիւղերու
իրաւունքները, եւ պիտի նկատուին կա-
տարեալ մասնաճիւղեր եւ առաջնոր-
դուն այս կանոնադրին տրամադրու-
թիւններովը, բացի տուրքէն, որ ամսա-
կան 25 սէնդ է:

Յօդ. 20.- Կանանց մասնաճիւղերը
իրենց պատգամաւորները պիտի ունենան
Ծրջանակային Պատգամաւորական Ժո-
ղովին մէջ:

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 21.- Ամերիկայի Ծրջանակին
Վերակազմեալ Հնչակեան Մասնաճիւ-
ղերը տարին անգամ մը Պատգամ. Ժողով
գումարելով կ'ընտրեն հինգ հոգիէ բաղ-
կացեալ Նահանգային Վարչութիւն մը,
հետեւեալ պաշտօններով. Ատենապետ,
Ատենադպիր, Գանձապահ եւ երկու Խոր-
հրդական անդամներ:

Ատենապետին պաշտօնն է՝

Վարչական կանոնաւոր նիստերու հը-
րաւիրել իր պաշտօնակիցները, նիստե-
րուն ատենապետել եւ հսկել ժողովին
կանոնաւորութեանը:

Ատենադպիրին հետ ստորագրել կա-
րէւոր եւ պատասխանատու պաշտօնա-
թղթերու, վկայականներու եւ նամակ-
ներու տակ:

Հսկել ժողովներու արձանագրու-
թեան եւ կարէւոր նամակներու պատճէն-
ներու կանոնաւոր պահպանման:

Պարրերարար նայիլ գանձապահին
հաշիւներուն եւ գործառնութիւններուն:

Ատենադպիրին պաշտօնն է՝

Արձանագրութեանց եւ նամակներու
պատճէնները պահել:

Ատենապետին հետ ստորագրել կա-
րէւոր եւ պատասխանատու գրութիւն-
ներու տակ, իսկ ոչ-կենսական ու ընթա-
ցիկ նամակներու տակ առանձինն:

Օրհաշիւի մը մէջ արձանագրել մուտքերն ու ելքերը, որոնք պէտք է համապատասխանեն գանձապահին տոմարներուն:

Գանձապահին հետ ստորագրել ստացականներուն տակ:

Կնիքը պահել եւ գործածել բոլոր վարչական թղթակցութիւններուն տակ:

Իւրաքանչիւր ամիս գանձապահին հետ՝ լիակատար հաշիւ տալ վարչութեան:

Գանձապահին պաշտօնն է՝

Կանոնաւոր տոմարներ պահել բոլոր ելեւմուտքերուն:

Ստացականներուն տակ ստորագրել առեւտրային հետ:

Ընթացիկ եւ որոշ ծախսերէն դուրս՝ ո՛րեւէ գումար չի վճարել առանց վարչական ժողովի որոշումին:

Պահել բոլոր ծախսերուն արդարացուցիչ թուղթերը:

Առեւտրային պահանջին վրայ պարբերաբար ցոյց տալ գանձաւին վիճակը:

Գանձապահը պէտք է երաշխաւորեալ ըլլայ:

Յօդ. 22.- Նահանգային Վարչութիւնը կ'ընտրուի ուղղակի գաղտնի քուէով, եռապատիկ ցանկի մը վրայ, եւ կամ վարչապետական ղեկութեամբ, երբ Պատգմ. Ժողովը որոշէ գործադրել այդ ղեկութիւնը:

Այդ պարագային՝ պատգամաւորները մէկ հոգի կ'ընտրեն, եւ ան իր պաշտօնակիցները կը ներկայացնէ Պատգմ. Ժողովի հաւանութեան կամ մերժումին:

Յօդ. 23.- Նահանգային վարչութեան գլխաւոր գործերն ու պարտականութիւններն են,

Ա.- Հսկել՝ որ Վերակազմեալ Հընչակեան մասնաճիւղերը անթերի գործադրեն Ծրագրի եւ կազմական կանոնադրի տրամադրութիւնները եւ անվատ հե-

տապնդեն Կուսակցութեան առաջադրած բոլոր նպատակները:

Բ.- Ամեն տեղ նորանոր մասնաճիւղերու կազմութեան հոգ տանիլ տեղական ոյժերով կամ յատուկ գործիչներու ձեռամբ: Գոյութիւն ունեցող մասնաճիւղերու բարոյական ու նիւթական գործունէութեան համար համարադրութիւնն ստանալ, անոնց մէջ ծագած անհամաձայնութիւնները հարթել, եւայլն:

Յօդ. 24.- Նահանգային Վարչութեան ուղղակի իրաւասութեան տակ կը համարուին թերթերն ու այն հրատարակութիւնները, որ Կուսակցութեան անունով կ'ըլլան Ամերիկայի մէջ:

Յօդ. 25.- Ամերիկայի շրջանակին մէջ գրծող խմբագիր, գործիչ եւ ուրիշ պաշտօնեաներ կը գտնուին Նահանգային Վարչութեան ղեկավարութեան տակ:

Յօդ. 26.- Նահանգային Վարչութեան անդամ ընտրուելու համար՝ ընկեր մը պէտք է առնուողն երեք տարի՝ անդամ նկատուած ըլլայ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Յօդ. 27.- Նահանգային Վարչութեան անդամները անհատաբար եւ հաւաքաբար պատասխանատու են Շրջանակի ընդհ. Պատգամաւորական Ժողովին, Նահանգային Վարչութեան բոլոր նիւթական եւ բարոյական գործառնութիւններուն ու գործունէութիւններուն համար:

Յօդ. 28.- Նահանգային Վարչութեան անդամները վերընտրելի են:

Յօդ. 29.- Վարչութիւնը կ'ընտրէ իր պաշտօնավարութեան տարեշրջանին մէջ հրաժարած մէկ կամ երկու անդամներու յաջորդները, հրաժարողներու թիւը երբ մեծամասնութիւն ըլլայ՝ մնացածները

պէտք է անմիջապէս Արաւիարդ Պատգմ. Ժողով գումարեն, նոր վարչութիւն մը ընտրելու համար:

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՇՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 30.- Նահգ. Վարչութեան կեդրոնէն հեռու գտնուած մասնաճիւղեր՝ Նահանգային վարչութեան կարգադրութեամբ առանձին շրջանակներու պիտի մերածուին եւ պիտի ունենան իրենց Շրջանակային վարչութիւնները:

Յօդ. 31.- Այս վարչութիւնները պիտի ընտրուին մասնաւոր շրջանակներու մէջ ինկող մասնաճիւղերու ներկայացուցիչներէն կազմուած Ժողովներու մէջ: Մասնաճիւղերու կողմէ ներկայացուցիչներ պիտի տրուին Ընդհ. Պատգմ. Ժողովի մասնակցելու թուական համեմատութիւնը որոշող կանոններուն համաձայն:

Յօդ. 32.- Այս վարչութիւնները չինդէն եօթը անդամներէ կը բաղկանան եւ իրենց պաշտօնը կը աւել մէկ տարի, Ընդհ. պատգամաւորական Ժողովէ Ընդհ. Պատգմ. Ժողով:

Յօդ. 33.- Շրջանակային վարչութիւններու պաշտօնն է՝

Հոգ տանիլ, իրենց շրջանակին մէջ, կուսակցութեան բրօքականութիւն, ջանքեր թափել նոր մասնաճիւղերու կազմութեան եւ անդամներու յաւելումին:

Սերտ յարաբերութիւն պահպանել քոյր մասնաճիւղերու մէջ, պարբերաբար խառն ձեռնարկներ կատարել տալով եւ համախմբումներ ունենալով:

Հսկել իրենց շրջանակին մէջ դործող գործիչի գործունէութեան վրայ եւ տալ ցուցմունքներ ու հրահանգներ, որոնք չեն հակասեր Նահանգ. Վարչութեան հրահանգներուն:

Մասնաճիւղերու մէջ ծագած գծաւորութիւնները հարթել:

Յօդ. 34.- Շրջանակային վարչու-

թիւնները կ'ունենան իրենց գիււանը, որուն անդամները կը կատարեն այդ պաշտօններուն կապուած պարտականութիւնները: (Տե՛ս Նահանգային Վարչութեան գիււանի կանոնները:)

Յօդ. 35.- Շրջանակային վարչութիւնները իրաւունք չունին զրամ դանձելու մասնաճիւղերէն: Մասնաճիւղեր իրենց զրամական գործառնութիւնները պիտի կատարեն միայն եւ ուղղակի Նահանգային Վարչութեան հետ:

Յօդ. 36.- Շրջանակային վարչութիւնները իրենց ընթացիկ ու գիւանական ծախքերը պիտի ստանան Նահանգային Վարչութենէն եւ համարատու մնան, այդ ծախքերուն համար, Նահանգ. Վարչութեան:

Մեծածախս ձեռնարկներ ընելէ առաջ՝ իրենց ծրագիրը պէտք է ներկայացնեն Նահանգային վարչութեան եւ ստանան անոր որոշումը:

ԳՈՐԾԻՉՆԵՐ

Յօդ. 37.- Առնուազն մէկ տարի կուսակցութեան անդամակցած եւ իրենց կարողութեամբ ու յատկութիւններով գործիչի պատասխանատու պաշտօնին յարմարութիւնը ունեցողներ միայն գործիչ կը նշանակուին:

Գործիչները կը գտնուին Նահանգային Վարչութեան իրաւասութեան տակ եւ կը գործեն անոր կողմէ նշանակուած վայրերու մէջ եւ անոր հրահանգներուն համաձայն:

Գործիչները պատասխանատու են Նահանգային Վարչութեան իրենց կուսակցական բոլոր գործունէութիւններուն համար:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 38.- Պատգամաւորական Ժողովը կը գումարուի տարին անգամ մը,

նահանգային վարչութեան յարմար դատած տեղը: Սեպտեմբերի առաջին Երկուշաբթին (Լէյպըր Տէյ):

Յօդ. 39.- Պատգամաւորական Ժողովի հրաւիրագրերը մասնաճիւղերու պէտք է ղրկուին առնուազն մէկ ամիս առաջ:

Յօդ. 40.- Շրջ. Ընդհ. պատգամաւորական Ժողովին Մասնաճիւղերը կը մասնակցին հետեւեալ համեմատութեամբ:

5-էն մինչեւ 30 անդամի համար 1 պատգամաւոր

35-էն մինչեւ 60 անդամի համար 2

65-էն մինչեւ 90 անդամի համար 3

95-էն մինչեւ 120 անդամի համար 4

125-էն մինչեւ 150 անդամի համար 5 պատգամաւոր:

Եւ այլ համեմատութեամբ՝ աւելի մեծ թիւերու համար:

Յօդ. 41.- Պատգամաւոր ընտրուելու համար ընկեր մը պէտք է առնուազն մէկ տարի անընդհատ անդամակցած ըլլայ կուսակցութեան, իբր անոր օրինաւոր մէկ անդամը:

Յօդ. 42.- Պատգամաւոր մը երկու ձայնէն աւելի չի կրնար ներկայացնել:

Յօդ. 43.- Պատգամաւոր մը երբ երկուքէ աւելի ձայն ստացած ըլլայ զանազան մասնաճիւղերէ՝ Պատգմ. Ժողովին կը մնայ որոշել թէ այլ աւելի ձայները որու պիտի տրուին:

Յօդ. 44.- Պատգամաւորներ իրենց մասնաճիւղերու վարչութեան ղեկաններէն ստորագրուած եւ կնքուած վկայագրով պէտք է ներկայանան: Մասնաճիւղեր կրնան խորհրդատուներ ընտրել եւ խրկել իրենց պատգամաւորներուն հետ:

Յօդ. 45.- Նահանգային վարչութեան անդամները չեն կրնար պատգամաւոր ընտրուել, բայց իրենց համարատուութեամբ:

Թեկէն ու հաշուետուութեանէն դուրս ա՛մեն խղրի մէջ իւրաքանչիւրը առանձինն մէկ ձայն ունի:

Յօդ. 46.- Պատգմ. Ժողովը օրինաւոր կը նկատուի երբ մասնաճիւղերու երկու երրորդին ներկայացուցիչները ներկայ են:

ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 47.- Արտակարգ Պատգմ. Ժողով կը զուգարուի.

ա.- երբ Նահանգային վարչութիւնը հարկ տեսնէ:

բ.- երբ Շրջանակի Մասնաճիւղերուն երկու երրորդը պահանջէ:

գ.- երբ Նահանգային վարչութիւնը իր մեծամասնութիւնը կորուսած ըլլայ:

Յօդ. 48.- Պատգամաւորական Ժողովի զլխաւոր դործերն ու պարտաւորութիւններն են.

Ա.- Շրջանակի մէկ տարուան դործունէութեան նիւթական եւ բարոյական համարատուութիւնն ստանալ:

Բ.- Նահանգային վարչութեան հարկները քննել եւ վաւերացնել:

Գ.- Յաջորդ Նահանգային վարչութիւնը ընտրել:

Դ.- Շրջանակին մէջ ծագած վէճերն ու անհամաձայնութիւնները կարգադրել:

Ե.- Ապագայ դործունէութեան մասին սրոշումներ անցնել եւ յանձնել նորընտիր Նահանգային վարչութեան դործադրութեան համար:

Յօդ. 49.- Պատգամաւորական Ժողովը իր գործերուն ընթացք կուտայ հետեւեալ օրակարգով.

ա) Ճշտում պատգամաւորներու օրինականութեան, իրենց մասնաճիւղերու անդամներուն թիւին համեմատութեամբը: Ընտրութիւն պատգամաւորական Ժողով:

զովի գիտնին՝ Ատենապետ, Ատենադր-
պիր, Բ. Ատենապետ, Բ. Ատենադպիր:

բ) Բերանացի կամ գրաւոր տեղե-
կութիւն մասնաճիւղերու պատգամա-
ւորներէն:

գ) Ընթերցում նախորդ Պատգմ. Ժո-
զովի արձանագրութեան:

դ) Ընթերցում նախնադային վար-
չութեան մէկ տարուայ գործունէութեան
տեղեկագրին:

ե) Ներթական հաշուետուութիւն՝
Նախնադային վարչութեան:

զ) Ներթական եւ բարոյական հաշ-
ւետուութիւն թերթի խմբագրութեան եւ
վարչութեան:

է) Վիճարանութիւն եւ սրոշում՝
Նախնայ. վարչութեան ներթական եւ
բարոյական համարադրութեան վրայ:

բ) Մասնաճիւղերու եւ նախնադային
վարչութեան կողմէ ներկայացուած եւ
յանձնախումբի կողմէ գատաւորուած
հարցերու շուրջ խորհրդակցութիւն եւ
սրոշում:

թ) Ընտրութիւն Նախնադային վար-
չութեան:

ԿԱՐԳ-ԱՊԱՀԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

Յօդ. 50.- Ամեն ընկեր պէտք է ան-
պայման ներկայ ըլլայ բոլոր անդամա-
կան ժողովներուն:

Յօդ. 51.- Իւրաքանչիւր ամսոյ լրա-
նալուն՝ ամեն ընկեր իր անդամավճարը
պէտք է վճարած ըլլայ անպայման:

Յօդ. 52.- Ուսանողներու, ինչպէս
նաեւ մասնաճիւղի վարչութեան կողմէ
անկարող նկատուած ընկերներու համար
այս կանոնը զանց կ'առնուի:

Յօդ. 53.- Մասնաճիւղերը իրենց
զբոսական գործառնութիւնները կա-
տարելու են միմիայն ու ուղղակի Նախնա-
դային վարչութեան ղեկանին հետ:

Յօդ. 54.- Դրամ պէտք չէ յանձնել

ո՛չ գործիչի, ո՛չ ալ նախնադային վար-
չութեան անդամի:

Յօդ. 55.- Առանց նախնադային
վարչութեան ղեկակցութեան ու որոշ
հրահանգին ո՛րեւէ գործիչի, պաշտօնեայի
կամ պարզ ընկերոջ տրուած դրամը ան-
հատակաւ կը նկատուի եւ վարչութիւնը
ոեւէ չափով պատասխանատու չէ անոնց
համար:

Յօդ. 56.- Առանց Նախնադային վար-
չութեան ղեկակցութեան՝ մասնաճիւղ-
եր իրարու հետ թղթակցելու իրաւունք
չունին:

Յօդ. 57.- Եթէ մասնաճիւղի անդամ
մը դժգոհութիւն, բողոք կամ առաջարկ
ունենայ ո՛րեւէ խնդրոյ մասին՝ պէտք է
զայն ներկայացնէ նախ Մասնաճիւղի
վարչութեան: Գոհացում չ'ստանալու
պարագային ղեկեւր է անդամական Ժո-
զովին: Անկէ ալ գոհացում չ'ստանալու
պարագային՝ ղեկեւր է Նախնադային
վարչութեան:

Յօդ. 58.- Շրջանակին Պատգմ. Ժո-
զովի տնօրինութեամբ գատաւորուած
ո՛րեւէ ընկեր կամ մարմին երբ ինքզինք
անիրաւուած զգայ՝ պէտք է սպասէ յա-
ջորդ Շրջանակային Պատգամաւորական
Ժողովին եւ անոր ներկայացնէ իր խնդ-
րին վերաբնութիւնը խնդրող ղեկում-
նողիւր: Այս տրամադրութեան անսա-
տողները ծանր պատասխանատուութիւն
կը հրաւիրեն իրենց վրայ:

Յօդ. 59.- Ամերիկայի Շրջանակին
մարմիններու տնօրինութենէն դոհ չի
մնացող ընկերներու առջեւ զեռ բաց կը
մնայ Կեդրոնական վարչութեան եւ Ընդ-
հանուր Պատգամաւորական Ժողովին ղի-
մելու իրաւունքը:

ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

Յօդ. 60.- Առանց բանաւոր պատճա-
ռի յաջորդարար երեք անգամ անգամա-

կան ժողովներէ՝ բացակայող անդամներ եւ երեք ամիս առանց արդարացուցիչ պատճառի անդամական տուրք չի վճարող ընկերներ նախ ազդարարութիւն կը ստանան իրենց պարտագանցութեան մասին եւ թերացումը շարունակուելու պարագային՝ կ'արտաքսուին Կուսակցութեան չարքերէն:

Յօդ. 61.- Ո'եւէ ընկեր եթէ չըջանակին կամ իր մասնաճիւղին հմայքին վընասող արարքի մը մէջ բռնուի եւ կամ կարդադահութեան ու կազմակերպական ոգիին դէմ դործէ անդամական ժողովի մեծամասնութեան քուէովը կ'արտաքսուի Կուսակցութենէն:

Յօդ. 62.- Եթէ ո'եւէ ընկեր իր դործիչի կամ ընկերի հանդամանքը շահագործելով դրամ չորթել փորձէ ընկերներէն՝ իսկոյն եւ հրապարակաւ կ'արտաքսուի Կուսակցութենէն:

ԵՐԴՄՆԱԳԻՐ

Կերդնում յանուն պատույս, յանուն Հայրենիքիս բոլոր նուիրական սրբութիւններուն՝ միշտ հաւատարիմ մնալ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան սկզբունքներուն եւ անոր ներկայացուցած նուիրական Դատին:

Կերդնում ամեն զոհողութեամբ եւ ի հարկին արեան գնով ծառայել անոնց իրականացմանը:

Հայրենադրութի պատիժին արժանանալ եւ թէ ո'եւէ կերպով դաւանանք իմ ուխտիս եւ գիտակցօրէն ու շարամտօրէն վնասեմ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ու անոր ներկայացուցած Սուրբ Դատին:

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ Ռ. Ա. Կ. ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԻՆ

Կ Ա Ձ Մ

Յօդուած 1.- Ներկայիս՝ Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Ջակաղիկի եւ Թանթայի Ռամկաւար Ազատական Ակումբները, իսկ յառաջիկային՝ հաստատուելիք նոր Ակումբները կը կազմեն Կուսակցութեանս Եգիպտոսի Շրջանակը, որ ինքնավար է:

Յօդ. 2.- Շրջանակս ունի իր Շրջանակային Պատգամաւորական Ժողովը, Շրջանային Վարչութիւնը եւ Ակումբներ՝ իրենց աեղական վարչութիւնները:

ԸՆԴՀ. ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 3.- Ռամկ. Ազատ. Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակը ունի իր առանձին կանոնադիրը, յարմարցուած աեղական պայմաններուն, համաձայն Կուսակցութեան հիմնական սկզբունքներուն եւ կանոնադիրին:

Յօդ. 4.- Շրջանակիս բոլոր Ակումբներէն մինչեւ Շրջանային Ժողովը պարտին պահել իրենց անդամներուն եւ յարաբերութեանց արձանագրութիւնները, որոնք սէտք է կրեն զիւանին ստորագրութիւնը:

Յօդ. 5.- Բոլոր պաշտօնական մարմիններու զիւանները պարտին աւանդապահ ըլլալ Կուսակցութեան տոմարներուն, թղթակցութիւններուն, պայմանադրութեանց եւ կնիքին:

Յօդ. 6.- Բոլոր վարչական մարմիններու եւ զիւաններու ընտրութիւնը կը կատարուի զազանի քուէարկութեամբ: Անդամները վերընտրելի են, երբ օրինական տրեւիք մը չի կայ:

Յօդ. 7.- Ընտրութեանց ատեն, մինչեւ վերջընթեր ամիսը իր անդամատուրքը առանց բանաւոր պատճառի չի վճար

բող անդամ մը, ընտրող եւ ընտրելի ըլլալ իրաւունք չունի: Յեանեալ տոքերու զանձումը կը վաւարի ընտրութիւններէն 24 ժամ առաջ: Ուեէ անդ ընտրելի չէ եթէ վերջին վեցամեայ շրջանին զոնէ երեք անդամական ժողովրու ներկայ զանուած չէ:

Յօդ. 8.- Անվստահութեան քուէնէ եւ կախակայման որոշումները ու մարմնի անդամներու ամբողջութեթիւնին մեծամասնութեամբը միայն կը նան տրուիլ, իսկ արտաքսումի վերաբեալ զատական վճիռները՝ երեք չորրդին քուէով:

ԵՐԴՄՆԱԳԻՐ

Յօդ. 9.- Կուսակցութեան Եգիպտոսի Շրջանակին բոլոր պատասխանաւարմիւնները կը ստորագրեն հետեւ երդմնագիրը.

«Կ'երդնունք մեր խղճին եւ պատւրայ հաւատարիմ զտնուիլ Ռամկավ Ազատական Կուսակցութեան սկզբունքներուն, պահպանել եւ գործադրել Կսակցութեան ծրագիրն ու կանոնադիր խղճմօրէն կատարել մեզի վստահու պաշտօնը եւ աշաւրջօրէն հսկել Կուսակցութեան շահերուն վրայ:»

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 10.- Ռամկավար Ազատակ Կուսակցութեան կրնայ անդամակցաւանց սեռի խտրութեան, 18 տարեկնէն վեր ամէն Հայ, որ կ'ընդունի Կսակցութեան սկզբունքները:

Յօդ. 11.- Անդամակցիլ փախազը նախապէս կը ներկայացուի երկու զամներու կողմէ, եւ Ակումբի Վարչթիւնը՝ յետ քննութեան, կ'ընդո

խնդրարկուն իրը անդամ եւ կամ կը մերժէ, որոշումը ենթարկելով Ակումբի զընահատման: Ամէն անգամ պարտի ըստորագրել յանձնառագիրը մը, ընդունելով Կուսակցութեան ծրագիրը, նաեւ հիմնական եւ ներքին կանոնադրները:

Յօդ. 12.- Կուսակցութեան անդամ չեն ընդունուիր անոնք որ՝

ա. Միաժամանակ ուրիշ հայ քաղաքական կուսակցութեան մը անդամ են:

բ. Ոճիրով եւ զեղծումով դատապարտուած են. եւ

գ. Ծանօթ են իբր յոռի նկարագրի աէր անձ:

Յօդ. 13.- Իւրաքանչիւր անգամ կը վճարէ առնուազն մէկ ամսարաժին, որ է 10 Եդ. Դհին: Կիներէ եւ ուսանողներէ կազմուած Ակումբները իրենք կ'որոշեն անդամատուրքի քանակը:

Յօդ. 14.- Նոր անդամները Յօդ. 13ի մէջ յիշուած անդամատուրքէն զատ պարտին վճարել նաեւ մուսքի տուրք մը, նուազագոյն 10 Եդ. Դհին:

Յօդ. 15.- Անդամատուրքէ մատամբ կամ ամբողջովին զերծ են միայն այն անդամները որոնց նիւթական անձկութիւնը կը հաստատուի իրենց Ակումբի վարչութեան կողմէ:

Յօդ. 16.- Բնակութեան փոփոխութեան հետեւանքով անգամ մը իր պատկանած Ակումբէն կրնայ ուրիշ Ակումբ մը փոխադրուիլ, վարչութեան գրաւոր յանձնարարագրով:

Յօդ. 17.- Իւրաքանչիւր անգամ միայն մէկ ձայնի իրաւունք ունի:

Յօդ. 18.- Ամէն անգամ պարտի յարգել կարգապահութեան օրէնքները: Ուեէ անգամ որ՝

1- Կուսակցութեան սկզբունքներուն դէմ կը դործէ,

2- Կարգապահութեան օրէնքները չի յարգեր:

3- Իրեն համար տրուած վճիռի մը դէմ օրինական միջոցներէ տարբեր միջոցներու կը դիմէ:

4- Ձի հաղանդիւր իր Ակումբի որոշումներուն,

5- Ձի վճարեր իր տուրքերը,

6- Կ'ոտնակոխէ Կուսակցութեան օրէնքները,

7- Ուրիշ հայ կուսակցութեան մը եւս կ'անդամակցի, ի հարկին առաջին ազդարարութենէ մը վերջ, զոր կ'ուզէ Ակումբի վարչութիւնը, կը կախակայուի իր Ակումբի անդամակցական ժողովին վճիռով, եւ կը կ'որանցնէ՝ իր անդամական իրաւունքները որոշուած ժամանակի մը համար, եւ եթէ հարկ տեսնուի կ'արտաքսուի յետ դատաւարութեան զոր կը կատարէ մասնաւոր յանձնախումբ մը, բաղկացած վարչութենէն եւ Ակումբի կողմէ ընտրուած երեք անդամներէ:

Յօդ. 19.- Ոճիրով եւ զեղծումով դատապարտուած անգամ մը կ'արտաքսուի կուսակցութենէն իր Ակումբին կողմէ:

Յօդ. 20.- Արտաքսուած անգամի մը անունը կը հաղորդուի Կուսակցութեան բոլոր Ակումբներուն, Շրջանային վարչութեան միջոցաւ:

Յօդ. 21.- Տրուած վճիռէ մը դժգոհ ուեէ կողմ կրնայ Շրջանային վարչութեան բողոքել, վճիռին թուականէն մինչեւ մէկ ամիս:

Ա Կ Ո Ի Մ Բ Ն Ե Ր

Յօդ. 22.- Եկիպատսի շրջանակին իւրաքանչիւր Ակումբի անդամներուն նուազագոյն թիւը պէտք է ըլլայ 15:

Յօդ. 23.- Նորակազմ Ակումբի մը ղեկութիւնը օրինաւոր կը ճանչցուի այն ատեն միայն, երբ իր կազմութիւնը կը վաւերացուի Շրջանային վարչութեան կողմէ:

Յօդ. 24.- Կիները կրնան առանձին Ակումբներ ունենալ, առանձին վարչութիւններով:

Յօդ. 25.- Իւրաքանչիւր Ակումբ կ'ունենայ 3-7 անդամներէ բաղկացեալ Վարչութիւն մը, որ կը պաշտօնավարէ մէկ տարի, եւ մինչդեռ իր յաջորդին ընտրութիւնը: Ունէ անդամ որ յաջորդական հինգ ժողովներու կը բացակայի, պաշտօնէ դադարած կը նկատուի եւ տեղը նոր քնարութիւն կը կառարուի:

Յօդ. 26.- Ակումբի մը Վարչութեան պահած կամ հրաժարած անդամներուն յաջորդները ընտրելու իրաւունքը կը պատկանի անդամական ժողովին:

Յօդ. 27.- Թէ՛ Ակումբի եւ թէ՛ անդամական ժողովի որոշումները կը տրուին մեծամասնութեամբ:

Յօդ. 28.- Ակումբի Վարչութիւնը կը վարէ Ակումբին գործերը եւ կը գործադրէ Երջանային Վարչութեան որոշումներն ու հրահանգները:

Յօդ. 29.- Ակումբի Վարչութիւնը համարատու է անդամական ժողովին, եւ այս վերջինը՝ Երջանային Վարչութեան:

Յօդ. 30.- Ակումբի Վարչութիւնը պարտաւոր է կանոնաւորապէս եռամսեայ տեղեկագիրներով Երջ. Վարչութիւնը իրազեկ պահել Ակումբի անդամներուն թիւին, ելեւմտական կացութեան եւ ընդհանուր գործունէութեան: Այս կանոնաւոր տեղեկագիրներէն զատ՝ Ակումբներու Վարչութիւնները պարտաւոր են նաեւ Երջանային Վարչութիւնը տեղեկ պահել անմիջական տեղեկագիրներով աշխարհի խնդիրներու, որոնց ծանօթութիւնը կարեւոր եւ օգտակար է կուսակցութեան:

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 31.- Առնուազն ամիսը մէկ ան-

գամ տեղի կ'ունենայ անդամական կանոնաւոր ժողովը, որուն հրաւերը գրաւորապէս կամ մամուլի միջոցաւ կը հաղորդուի բոլոր անդամներուն, ժողովէն առնուազն երեք օր առաջ:

Յօդ. 32.- Ակումբի մը անդամական ժողովը օրինաւոր է, երբ անդամներուն կէսէն մէկ աւելին ներկայ է:

Յօդ. 33.- Երբ առաջին հրաւերով ժողովը մեծամասնութիւն չունենայ, Վարչութիւնը կրնայ նոյն ամսուան մէջ երկրորդ հրաւեր մը ուղղել նոյն օրակարգով: Երկրորդ ժողովին ներկաներուն թիւը օրինական կը նկատուի եւ տրուած որոշումները պարտաւորիչ են բոլոր անդամներուն համար:

Յօդ. 34.- Վարչութեան տախտակաւոր, եւ անոր բացակայութեան փոխատախտակաւոր իրաւունք ունի արտաստիկոր նիստի հրաւիրելու անդամական ժողովը:

Յօդ. 35.- Ակումբի տարեկան ժողովը կը գումարուի Երջանակի Պատգ. ժողովին գումարման թուականէն առնուազն մէկ ամիս առաջ:

Յօդ. 36.- Ակումբի Վարչութիւնը տարեկան ժողովին մէջ կը կատարէ իր համարատուութիւնը որ կը տեղեկագրուի Երջանային Վարչութեան, ներկայացուելու համար Երջանակի Պատգ. ժողովին:

Յօդ. 37.- Ակումբի տարեկան ժողովին մէջ կ'ընտրուին Երջանակի Պատգ. ժողովին պատուիրակները, ներկայ կանոնադրին 43րդ տրամադրութեան համեմատ:

Յօդ. 38.- Կանանց Ակումբները, եթէ ուղեն կրնան տեղւոյն այրերու Ակումբին հետ խառն ժողով գումարել եւ միասին ընտրել իրենց պատուիրակները:

Յօդ. 39.- Եթէ կարելի չըլլայ ընկե-

րաբար կարգադրել վէճերը, որոնք կը ծագին ընդմէջ Ակումբի Վարչութեան, անդամներուն, Ակումբի անդամներուն եւ կամ Վարչութեան եւ Ակումբի անդամական ժողովին, անոնք կը յանձնուին Շրջան. Վարչութեան, որուն վճիռը պարտաւորիչ է բոլոր կողմերուն համար, մինչեւ Շրջ. և Շրջ. Պատգ. Ժողովը:

Յօդ. 40.- Շրջանային Վարչութեան որոշումներուն եւ կարգադրութեանց պէմ անաստացի Ակումբի Վարչութիւն մը կը հրաժարեցուցուի նոյն Շրջանային Վարչութեան կողմէ: Հրաժարեցուցեալ Վարչութեան անդամները վերընտրելի չեն:

Յօդ. 41.- Ակումբ մը լուծուած կը համարուի երբ իր անդամներուն թիւը 15էն պակաս է:

Յօդ. 42.- Ակումբի մը լուծման պարագային իր գոյքերը կը յանձնուին Շրջանային Վարչութեան:

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱԻ ՈՐՍԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 43.- Եզիպոսի Շրջանակը տարին անգամ մը կ'ուենայ իր Շրջան. Պատգ. Ժողովը, որ կը կազմուի Ակումբներու պատուիրակներէն, իւրաքանչիւր 20 կամ կոտորակ անգամի վրայ 1 պատուիրակով:

Յօդ. 44.- Շրջանակային Պատգամաւորական Ժողովին պատուիրակ կ'ընտրուին անոնք միայն, որ առնուազն մէկ տարի անգամ եղած են կուսակցութեան: Նորակազմ Ակումբները բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 45.- Շրջան. Պատգ. Ժողովը կը զրազի Շրջանակին վերաբերեալ խընդիրներով, կը սահմանէ տարեկան պիւտճէն եւ կ'ընտրէ Շրջանային Վարչութիւնը:

Յօդ. 46.- Ընդհ. Պատգամաւորական Ժողովի համար պատգամաւորներու ընտրութիւնը կը կատարուի Շրջան. Պատգ. Ժողովի, իսկ ստիպողական պայմաններու մէջ՝ Շրջանային Վարչութեան կողմէ: Հիմնական կանոնադրի Գլուխ է. Յրդ. եւ 4րդ. յօդուածներու արամադրութեանց համաձայն:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 47.- Եզիպոսի Շրջանակը կուսակցութեան կեդրոնական գանձին կը վճարէ տարեկան տուրք մը, որուն քանակը կ'որոշուի Ընդհ. Պատգ. Ժողովին կողմէ:

Յօդ. 48.- Շրջանային Վարչութիւնը կը բաղկանայ առնուազն չինք անդամներէ, կ'ընտրուի մէկ տարուան համար, եւ կը պաշտօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը: Երկու փոխանդամներ եւս կրնան ընտրուիլ, որոնք պաշտօնի կ'անցնին երբ Վարչութեան անդամներէն մին կամ երկուքը կը հրաժարին:

Յօդ. 49.- Շրջանային Վարչութեան անգամ կ'ընտրուին անոնք միայն որոնք առնուազն մէկ տարի անգամ եղած են կուսակցութեան: Նորակազմ շրջանակները բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 50.- Շրջանային Վարչութիւնը կ'ընդունի եւ կը դործադրէ կեդր. Վարչութեան հրահանգները եւ Շրջան. Պատգ. Ժողովի որոշումները: Կրնայ յարաբերութիւն մշակել միւս շրջանակներու հետ:

Յօդ. 51.- Շրջանային Վարչութիւնը պատասխանատու է իր Շրջանակի Պատգ. Ժողովին, որուն պարտի ներկայացնել իր տարեկան տեղեկագիրը եւ հաշիւը:

Յօդ. 52.- Շրջանային Վարչութիւնը երեք ամիսը անգամ մը պարտաւոր է զըր-

կել կեդր. Վարչութեան շրջանակի վիճակագրական, էլեմտական եւ բարոյական տեղեկագիրը: Ասկէ զատ՝ Շրջանային Վարչութիւնը յաճախակի թղթակցութիւններ կը կատարէ կեդր. Վարչութեան հետ, եւ Ակումբներուն կը հաղորդէ կեդր. Վարչութեանէն եկած հրահանգներն ու շրջաբերականները:

Յօդ. 53.- Շրջանակին չարժուէն եւ անչարժ ստացուածքները մատակարարելու իրաւասութիւնը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

Յօդ. 54.- Շրջանային Վարչութեան հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուի Շրջանակին պաշտօնաթերթը «Արեւ», եւ ուրիշ հրատարակութիւններ:

Յօդ. 55.- Շրջանային Վարչութիւնը պէտք է նախապէս կեդր. Վարչութեան հաւանութիւնն ստանայ բոլոր այն ձեռնարկներուն համար որոնք կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան հետ կապ ունին, եւ որոնք տեղական հանգամանք չունին:

Վ Ա Ի Ե Ր Ա Յ Ո Ի Մ

Յօդ. 56.- Ներկայ Ներքին Կանոնադիրը պատրաստուած Եզրպտոսի Պատգ. Ժողովի 19 Մարտ 1921ի նիստին մէջ, համաձայն Հիմնական Կանոնագրի սրամաղրութեանց, կ'ենթարկուի կեդր. Վարչութեան վաւերացման: Եզրպտոսի Շրջանակին յատուկ յաւելուածական արժամաղրութիւնները վերաքննելի են Եզրպտոսի Շրջան. Պատգ. Ժողովին կողմէ:

ՄԱՆՅԹ.- Ներկայ կանոնագրին տպագրութիւնը յապաղած եւ երկու քայլ կուսակցութեանց միացումը հռչակուած ըլլալով, Պատգ. Ժողովին մէջ կանոնագրի պատրաստութեան առթիւ գործածուած «Հայ Ռամկավար Կուսակցութիւն» բացատրութիւնը սրբագրուած է «Ռամկավար Ազատական Կուսակցութիւն» անունով:

ԿԱՆՈՆԱԳԻՐ Ռ. Ա. Կ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԻՆ (1934)

Ռամկավար Ազատական Կուսակցու-
թեան Ամերիկայի Շրջանակին կազմա-
կերպական բաժանումներն են՝

Ա. Տեղական Ակումբներ (Արանց,
Տիկնանց եւ Երիտասարդաց) :

Բ. Շրջանային Վարչութիւն:

Գ. Երիտասարդաց Շրջանային Վար-
չութիւն:

Դ. Շրջանային Պատգամաւորական
Ժողով:

Ե. Երիտասարդաց Շրջ. Պատգ. Ժո-
ղով:

ԳԼՈՒԽ Ա.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ. 1.- Ռամկավար Ազա-
տական Կուսակցութեան կրնայ անդա-
մակցիլ, առանց սեռի խտրութեան, 21
տարեկանէն վեր ամէն Հայ, որ կ'ընդու-
նի այս Կուսակցութեան սկզբունքները:

Յօդ. 2.- Թեկնածուներ պարտին
ստորագրել գիծումնադիր մը:

Յօդ. 3.- Թեկնածուներ Անդամակ-
ցութեան Յանձնախումբին կամ Վարչու-
թեան կողմէ պաշտօն քննութեան մը
ենթարկուելէ յետոյ անդամ կ'ընդունուին
Ակումբի օրինաւոր անդամական ժողո-
վի ներկաներու մեծամասնութեան քուէով
եւ ժողովին մէջ կը կատարեն իրենց ուխ-
տը:

Յօդ. 4.- Իւրաքանչիւր անդամ պի-
տի ստանայ ինֆնուքեան քարտ մը, ստո-
րագրուած Ակումբի Վարչութեան գիւա-
նէն (Ատենապետ եւ Ատենադպիր) եւ կըն-
քուած Ակումբի կնիքով եւ որ պիտի կրէ
նաեւ անդամին ստորագրութիւնը:

Յօդ. 5.- Բոլոր անդամները պար-

տին լեցնել Անդամակցութեան պատրաս-
տուած քարտ մը, որ տեղական Վարչու-
թիւններու միջոցաւ պիտի գրկուին Շրջ-
անային Վարչութեան:

Յօդ. 6.- Իւրաքանչիւր անդամ պար-
տաւոր է ընկերական համակրանքի եւ
սիրոյ վերաբերում ցոյց տալու Կուսակ-
ցութեանս բոլոր անդամներուն հանդէպ:

Յօդ. 7.- Կուսակցութեան անդամ չեն
ընդունուիր անոնք, որ ա) Ուրիշ Հայ
քաղաքական կուսակցութեան մը անդամ
են. բ) Ոճիրով եւ զեղծումով դատապար-
տուած են. գ) Ծանօթ են իրր յուր նկա-
րագրի տէր անձեր:

Յօդ. 8.- Ուրիշ քաղաք փոխադրուող
անդամ մը պարտի ունենալ իր Ակումբի
Վարչութեան գրաւոր յանձնարարակա-
նը:

ԾԱՆՕԹ.- Վարչութիւններ պարտա-
ւոր են Շրջ. Վարչութեանց իմացնել փո-
խադրուող անդամին անունը եւ նոր հաս-
ցէն:

Յօդ. 9.- Իւրաքանչիւր անդամ մի-
այն մէկ Ակումբի կրնայ անդամակցիլ
եւ միայն մէկ ձայնի իրաւունք ունի:

ԳԼՈՒԽ Բ.

ԱԿՈՒՄԲՆԵՐ

Յօդ. 10.- Ակումբ մը կը բաղկանայ առ նուազն հինգ անդամներէ:

Յօդ. 11.- Նորակազմ Ակումբի մը գոյութիւնը օրինաւոր կը ճանչցուի այն տակն ժխայն, երբ իր կազմութիւնը կը վաւերացուի Շրջանային Վարչութեան կողմէ:

ԾԱՆՕԹ.- Նորակազմ Ակումբ մը երբ իր մէջ չունի արդէն Ռաֆկավար Ազատական ընկեր մը, այդ պարագային ինքնաբերաբար կազմուած Ակումբ մը կուսակցութեան ներկայացուցչին կամ մօտակայ Ակումբի մը կողմէն ֆինուքեան եմթարկուելէ յետոյ վաւերացուելու է:

Յօդ. 12.- Ամէն Ակումբ կ'ունենայ առ նուազն երեք եւ առ առաւելն եօթր անդամներէ բաղկացեալ վարչութիւն մը, որ կը պաշտօնավարէ մէկ տարի:

Յօդ. 13.- Վարչութեան անդամները կ'ընտրուին Ակումբի տարեկան օրինաւոր անդամական ժողովին մէջ գաղտնի քուէարկութեամբ: Ընտրութիւնը օրինաւոր է, երբ ընտրուողը կը ստանայ ներկաներու մեծամասնութեան քուէն:

Յօդ. 14.- Վարչութեան բոլոր անդամներուն ընտրութեան համար նախընտրելի է որ գործադրուի ամբողջական ընտրութեան ձեւը (փոխանակ զատ զատ), եռապատիկ ցանկէ մը, զազանի քուէարկութեամբ: Թոյլատրելի է նաեւ որ ընտրութիւնը կատարուի Վարչապետական զրութեամբ, քուէաւանդներու երկու երրորդին քուէով:

(Ասիկա կը նշանակէ եռապատիկ ցանկի մը վրայէն գաղտնի քուէարկութեամբ ընտրել Ատենապետը, որ իր պաշտօնակիցները նշանակելով ամօնց ընտրութիւնը կ'ենթարկէ մոյն ամիսամական ժողովի վաւերացման:)

Յօդ. 15.- Նորընտիր վարչութեան հաստատումը կը կատարուի Ակումբի նոյն անդամական ժողովին մէջ՝ ուխտառութեան պատշաճ հանդիսաւորութեամբ:

ԾԱՆՕԹ.- Հին վարչութիւնը մնալով մը Շրջանային Վարչութեան կը հաղորդէ նոր կազմը առ ի վաւերացում:

Յօդ. 16.- Վարչական պաշտօնի ընտրելի կրնան ըլլալ միայն անոնք, որ մէկ տարի կուսակցութեան եւ վեց ամիս առնոյ հասա Ակումբին անդամ եղած են:

Յօդ. 17.- Ընտրութեանց տուն, միւշէկ, վերջնութեւ ամիս, առանց բանաւոր պատճառի, իրենց անդամատուրքը չի վճարող անդամներ ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունք չունին: (Վարչութեանց ֆինուքեամբ արտօնուած ընկերներ բացառութիւն կը կազմեն:) Յետեւ տուրքերու դանձումը կը փակուի ընտրութեան ժողովը սկսելէն անմիջապէս առաջ:

Յօդ. 18.- Ակումբի Վարչութեան պակասած կամ հրաժարած անդամներուն տեղ կ'առնուին յաջորդ առաւելագոյն քուէ ստացողները, իրենց ստացած քուէներու կարգով:

Յօդ. 19.- Ակումբի Վարչութիւնը կը վարէ Ակումբին գործերը, կը գործադրէ Ակումբի անդամական ժողովին որոշումները եւ Շրջանային Վարչութեան հրահանգները:

Յօդ. 20.- Ակումբին Վարչութիւնը համարատու է թէ անդամական ժողովին եւ թէ Շրջանային Վարչութեան:

Յօդ. 21.- Ակումբի Վարչութիւնը պարտաւոր է կանոնաւորապէս եռամսեայ տեղեկագրով Շրջանային Վարչութիւնը իրողեկ պահել Ակումբի անդամներու թիւին (աւելցած, հրաժարած, մեռած կամ արտաքսուած), ելեւտա-

կան կացութեան եւ ընդհանուր գործունէութեան մասին:

Յօդ. 22.- Վարչութիւնը հաւաքաբար պատասխանատու է իր անդամներու պաշտօնական գործերուն:

Յօդ. 23.- Վարչական կողմի պաշտօնեաներն են.-

1. Ատենապետ, 2. Փոխ-Ատենապետ,
3. Ատենադպիր, 4. Փոխ-Ատենադպիր,
5. Գանձապահ եւ Խորհրդակցաններ:

Յօդ. 24.- Ատենապետին պաշտօնն է՝

ա) Վարչութիւնը նիստերու հրաւիրել, նիստերուն տտենապետել եւ հսկել ժողովի կանոնադրութեան:

բ) Պարբերաբար քննել Գանձապահին հաշիւները եւ գործառնութիւնները:

գ) Ատենադպրին հետ ստորագրել կարեւոր եւ պատասխանատու պաշտօնաթուղթեր եւ նամակներ:

դ) Իր պաշտօնակիցներուն հետ խորհրդակցաբար նշանակել մնայուն Յանձնախումբեր, համաձայն 28րդ. Յօդուածին:

ե) Ատենապետել Ակումբի բոլոր ժողովներուն:

զ) Քննել եւ իր ստորագրութեամբ վաւերացնել Վարչական եւ Անդամական ժողովներու արձանագրութիւնները:

է) Հետամուտ ըլլալ իր պաշտօնակիցներու պարտաւորութեանց գործադրութեան:

Յօդ. 25.- Փոխ-Ատենապետին պաշտօնն է՝ Ատենապետի բացակայութեան կատարել անոր բոլոր պարտականութիւնները:

Յօդ. 26.- Ատենադպրին պաշտօնն է՝

ա) Վարչական եւ Անդամական ժողովներու արձանագրութիւնը պահել:

բ) Պահել Ակումբի անդամներուն անուանացանկը, արձանագրելով ծննդավայրը, ծննդեան քուակաւը, գրադուրը,

ամուրի⁶ է քէ ամուսնացած, եւ ո՞ր քը-ւականին կուսակցական եղած է:

գ) Վարչութեան բոլոր թղթակցութիւնները կատարել, Ատենապետին հետ ստորագրել ու կնքել բոլոր պաշտօնական գրութիւնները:

դ) Աւանդադահը ըլլալ Ակումբի կը-նիքին, վաւերաթուղթերուն եւ այլ պաշտօնական գրութեանց:

ե) Ամէն երեք ամիսն անգամ մը եւս ամսեայ (տես Յօդ. 21), նաեւ Շրջանակիս Պատգ. Ժողովէն երկու չարաթ առաջ Ակումբին տարեկան տեղեկագիրներ պատրաստելով գրկել Շրջանային Վարչութեան: Տարեկան տեղեկագիրը պիտի պարունակէ հետեւեալը.-

1.- Տարւան մը ընթացքին աւելցած նոր անդամներու անունները.

2.- Տարւան մէջ կախակայուած, հրաժարած, արտաքսուած կամ մեռած անդամոց անունները.

3.- Տուրք վճարող անդամոց թիւը:

4.- Վարչութեան արտօնութեամբ տուրք վճարող անդամոց թիւը:

5.- Անդարտաճանաչ անդամներու թիւը:

6.- Ակումբի մէկ տարւան գործունէութիւնը.

զ) Իր յաջորդին փոխանցել Ակումբին պատկանող բոլոր տեւրակներն ու գոյքերը, իր պաշտօնաշրջանի լրման:

Յօդ. 27.- Գանձապահին պաշտօնն է՝

ա) Հաւաքել եւ ապահով կերպով պահել բոլոր տուրքերը, բացառիկ եկամուտները եւ սեւէ կարգի դոյք, որ իր հսկողութեան կը յանձնուի:

բ) Մասնաւոր տոմարի մը մէջ արձանագրել Ակումբի անունով եկած բոլոր գումարները:

գ) Վճարել ու փոխանցել բոլոր այն գումարները, որ Ակումբի կողմէ կ'որոշուի:

դ) Ելեւմուտքի հաշիւները միշտ

պատրաստ ունենալ ի քննութիւն Ակումբի Հաշուեքննիչ Յանձնախումբի եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներուն:

ե) Տարեշրջանի լրման մանրամասն հաշուեկշիռ մը պատրաստել Ատենապետի տեղեկագրին հետ Շրջանային Վարչութեան ղրկուելու համար, նոյնը ներկայացնելով իրենց անդամական ժողովին:

զ) Իր պաշտօնի լրման՝ իր յաջորդին փոխանցել իր քով դանուած բոլոր դուրսերն ու գոյքերը:

(ԾԱՆՕԹ.- Սովորական քաղաքացուքիւններու, ժողովավարութեան եւ այլ բնութեայ գործերու համար դիւանը կը բաղկանայ Ատենապետէն ու Ատենապետի: Նիւթական բոլոր գործառնութիւններու մէջ Գանձապահը մաս կը կազմէ դիւանին եւ իր ստորագրութիւնը պէտք է երեւնայ Ատենապետին եւ Ատենապետին ստորագրութիւններուն հետ):

ՅԱՆՁՆԱՅԻՆՄԵՐ

Յօդ. 28.- Ամէն տարի Վարչութեան ընտրութենէն յետոյ, Ատենապետը՝ իր պաշտօնակիցներու ղիտութեամբ ու հաւանութեամբ՝ կը նշանակէ հետեւեալ Յանձնախումբերը, որոնցմէ իւրաքանչիւրին մէջ պաշտօն պէտք է առնեն Վարչութեան անդամները.

1. Անդամակցութեան Յանձնախումբ,
2. Մշակութային Յանձնախումբ,
3. Դաստիարակչական Յանձնախումբ,
4. Ընկերական Յանձնախումբ,
5. Հաստիարակչական Յանձնախումբ,
6. Այցելու Յանձնախումբ,
7. Դատական Յանձնախումբ:

որոնցմէ մին ի հարկէ Վարչութեան անդամներէն մին ըլլալու է:

Յօդ. 29.- Անդամակցութեան Յանձնախումբի պարտականութիւնն է Ակումբի անդամներուն թիւը աւելցնելու համար միջոցներ ի գործ դնել, ինչպէս նա-

եւ քննել իւրաքանչիւր թեկնածուի նկարագրը, յարմարութիւնները եւ հանրութեան մէջ վայելած վարկը եւ կատարած քննութեան արդիւնքը հաղորդել Ակումբի անդամական ժողովին:

Յօդ. 30.- Մշակութային Յանձնախումբի պարտականութիւնն է կազմակերպել դաստիարակչական հաւաքօթներ, հրապարակային, դասախօսական, լսարանական եւ ուրիշ ժողովներ եւ անոնց միջոցաւ մեր Կուսակցութեան իտէալին, քաղաքական ձգտումներուն եւ ընկերային բարոյականներուն շուրջ յուսարանութիւններ տալ Կուսակցութեան անդամներուն եւ Հայ հասարակութեան:

Յօդ. 31.- Ընկերական Յանձնախումբի պարտականութիւնն է, պարբերաբար սարքել ընկերական (սոցըլ) հաւաքօթներ, Ակումբի անդամները մտերմական յարաբերութեան մէջ պահելու համար, եւ միջոցներ կիրարկել անդամական ժողովները հաճելի ընծայելու համար:

Յօդ. 32.- Հաստիարակչական Յանձնախումբի պարտականութիւնն է, ստեղծել հաստիարակչական միջոցներ եւ Ակումբի անդամական ժողովի հաւանութեամբ դործադրել զանոնք ի չափ Ակումբին:

Յօդ. 33.- Այցելու Յանձնախումբի պարտականութիւնն է հետաքրքրուիլ անդամներուն անհատական եւ ընտանեկան վիճակով, միջոցներով զանոնք երբ սուգի մէջ են, եւ խնդակցել անոնց երբ առիթը ներկայանայ:

Յօդ. 34.- Դատական Յանձնախումբի պարտականութիւնն է, ընկերներու միջեւ ծագած վէճերն ու անհամաձայնութիւնները քննել պատշաճ կերպով, հաշտեցնել՝ եթէ հնարաւոր է, եթէ ոչ՝ իր քննութեան արդիւնքը եւ տուած վճիռը հաղորդել անդամական ժողովին, գործադրուելու համար:

ԾԱՆՈԹ.- Այն պարագային որ վե-
նը Դատական Յանձնախումբի անդամնե-
րէն մէկուն կը պատկանի, վարչութիւնը
այդ անդամին տեղ նշանակելու է ուրիշ
մը՝ Դատական Յանձնախումբի անդամ:

Յօդ. 35.- Ակումբի մէջ ծագած ու-
նէ վէճ երբ իր լուծումը չի գտներ տեղ-
ւոյն վրայ, Շրջ. Վարչութիւնը կը մի-
ջամտէ եւ իր վճիռը պարտաւորիչ է բո-
լոր կողմերուն համար, մինչեւ Շրջանա-
յին Պատգամաւորական Ժողով, ուր կա-
ռարուած դիմումի մը վրայ վճիռը կը
վերաքննուի: Այս դիմումը պէտք է կա-
տարուի Պատգ. Ժողովի դումարման թը-
ւականէն առ նուազն մէկ ամիս առաջ:

Յօդ. 36.- Շրջ. Վարչութեան որո-
շումներուն եւ կարգադրութեանց դէմ
անսաստող Ակումբի Վարչութիւն մը կը
հրաժարեցուցուի: Հրաժարեցուցեալ
Վարչութեան անդամները վերընտրելի
չեն:

Յօդ. 37.- Անդամներու հրաժարա-
կանները ընդունելու կամ մերժելու իրա-
ւասութիւնը կը պատկանի Ակումբի ան-
դամական Ժողովին:

Յօդ. 38.- Ակումբ մը լուծուած կը
համարուի, երբ իր անդամներուն թիւը
որոշուած նուազագոյն թիւէն պակաս է:

Յօդ. 39.- Լուծուած Ակումբի մը
անդամները պարտաւոր են միանալ իրենց
մօտակայ Ակումբին, իսկ երբ այդպի-
սին գոյութիւն չունի՝ պարտին իրենց
յարաբերութիւնը պահել Շրջ. Վարչու-
թեան հետ, մինչեւ տեղւոյն Ակումբի վե-
րակազմութիւնը:

Յօդ. 40.- Ակումբի մը լուծման պա-
րագային, իր գոյքերը կը զրկուին ան-
միջապէս Շրջանային Վարչութեան:

ՏԻԿՆԱՆՑ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Յօդ. 41.- Տիկիններ կրնան առան-

ձին Ակումբներ ունենալ, ուրոյն Վարչու-
թիւնով:

Յօդ. 42.- Տիկնանց Ակումբներու
կազմութեան պայմաններն ու պարտա-
կանութիւնները կը ղեկավարուին այս
Կանոնադրի տրամադրութիւններով, մէկ
բացառութեամբ - Տիկնանց անդամաւ-
ցութեան տարեկան տուրքը երեք տոլար
է եւ պարտաւորիչ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Այս Ակումբները կը ղեկավարուին
կազմական յատուկ կանոնադրով մը, ո-
րուն վերաքննութեան իրաւունքը կը
պատկանի Շրջանակի Պատգ. Ժողովին:

Ա.- Երիտասարդաց Ակումբներ կ'ու-
նենան առանձին Պատգ. Ժողով եւ առան-
ձին Շրջ. Վարչութիւն:

Բ.- Երիտասարդաց Պատգ. Ժողովը
կը գումարուի Շրջանային Պատգ. Ժո-
ղովէն մէկ ամիս առաջ:

Գ.- Երիտասարդաց Պատգ. Ժողովէն
ընտրուած հինգ հոգինոց Շրջ. Վարչու-
թիւնը պիտի մասնակցի Շրջանակի
Պատգ. Ժողովին՝ հինգ ձայնի իրաւուն-
քով:

Դ.- Երիտասարդներու Պատգ. Ժողո-
վին որոշումները պիտի վաւերացուին
Շրջանային Պատգ. Ժողովէն:

Ե.- Երիտ. Շրջ. Վարչութեանէն եր-
կու հոգի պիտի մասնակցին Երէջ Շրջ.
Վարչութեան՝ Շրջանակի Պատգ. Ժողո-
վի վաւերացումով, եւ որոնք պիտի նը-
կատուին յարաբերութեան կապ մը եր-
կու Շրջանային Վարչութեանց միջեւ:

Զ.- Երիտ. Շրջ. Վարչութեան որո-
շումները զործադրուելէ առաջ պիտի
վաւերացուին Շրջանային Վարչութե-
նէն: Այդ որոշումներու մերժումի պարտա-
դային Շրջանային Վարչութիւնը պի-
տի տալ հարկ եղած հրահանգները՝ զոր-
ծադրելի Երիտ. Շրջ. Վարչութեանէն:

ԳԼՈՒԽ Գ.

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 43.- Առ նուազին ամիսը մէկ անգամ տեղի կ'ունենայ անդամական կանոնադր ժողով, որուն հրաւերը զբաւորապէս եւ մամուլի միջոցաւ կը հաղորդուի բոլոր անդամներուն, ժողովէն առ նուազին հինգ օր առաջ:

Յօդ. 44.- Ակումբի մը անդամական ժողովը օրինաւոր է, երբ անդամներուն կէսէն մէկ տեղին ներկայ է:

Յօդ. 45.- Երբ առաջին հրաւերով ժողովը մեծամասնութիւն չունենայ, Վարչութիւնը կրնայ նոյն ամսուան մէջ երկրորդ հրաւեր մը ուղղել նոյն օրակարգով: Երկրորդ ժողովին ներկաներուն թիւը օրինական կը նկատուի եւ տրուած որոշումները պարտաւորիչ են բոլոր անդամներուն համար:

Յօդ. 46.- Վարչութեան Ատենայետը, եւ իր բացակայութեան՝ Փոխ-Ատենայետը, անդամներու մէկ երրորդի գիմումին վրայ՝ պարտաւոր է արտասովոր նիստի հրաւիրել անդամական ժողովը:

Յօդ. 47.- Ակումբի տարեկան ժողովը կը գումարուի Շրջանակի Պատգամաւորական Ժողովին գումարման թուականէն առ նուազին երկու շաբաթ առաջ:

Յօդ. 48.- Ակումբի Վարչութիւնը տարեկան ժողովին մէջ կ'ընէ Ակումբի մէկ տարուան համարառութիւնը, որ կը տեղեկագրուի Շրջանակի Պատգամաւորական Ժողովին:

Յօդ. 49.- Ակումբի տարեկան ժողովին մէջ կ'ընտրուին Շրջանակի Պատգամաւորականները՝ որոնց կանոնադրի տրամադրութեանց համաձայն:

Յօդ. 50.- Որոշումները ներկաներու մեծամասնութեամբ կը տրուին եւ պարտաւորիչ են բոլոր անդամներուն:

Յօդ. 51.- Տիկնանց, Արանց եւ Երիտասարդաց Ակումբներ եւ Վարչութիւններ, երբ պէտք տեսնեն, կրնան խառն ժողով գումարել:

ԳԼՈՒԽ Գ.

ՏՈՒՐՔԵՐ

Յօդ. 52.- Կուսակցութեան այլ անդամները կը վճարեն տարեկան տասներկու, տիկիները՝ երեք եւ երիտասարդները՝ երկու տոլարի պարտաւորիչ անդամատուրք մը:

Յօդ. 53.- Անդամատուրքէ զերծ են այն անդամներն ու անդամուհիները (Արանց, Տիկնանց եւ Երիտասարդաց), որոնց նիւթական աննպաստ պայմանները կը հաստատուին իրենց Ակումբներու Վարչութեանց կողմէն:

Յօդ. 54.- Նոր անդամներ պարսին վճարել ՄՈՒՏՔԻ տուրք մը անպայման, որուն գումարն ըլլալու է առ նուազին Մէկ տոլար, Արանց, Տիկնանց եւ Երիտասարդաց համար անխափր:

Յօդ. 55.- Ակումբներ Շրջանային Վարչութեան կողմէ իրենց համար սահմանուած գօթայիմ ի հաշիւ ԱՄՍԱԿԱՆ առաքումները կատարելու են կանոնաւորապէս:

Յօդ. 56.- Ակումբներու իրաւունք կը տրուի իրենց մօտ պահելու իրենց անդամատուրքի եւ այլ եկամուտներու հասոյթին 20 % -ը, տեղական ծախքերուն յատկացուելու: Իսկ այս տոկոսէն աւելցած գումարները կը մնան Ակումբին մօտ իրր պահեստի գումար:

Յօդ. 57.- Ակումբներ իրենց տուրքերու վճարումին համեմատութեամբ պատգամաւոր տալու իրաւունք ունին:

Յօդ. 57ա.- Այն ընկերները ընտրող եւ ընտրելի կրնան ըլլալ երբ իրենց ան-

պամատուրքին առ նուազն երեք չորրորդը վճարած են:

Յօդ. 58.- Գօթաները կը հիմնուին Արմավրեան արաբու անդամներու թիւին համեմատ եւ պարտաւորիչ են, (տես Յօդ. 53-ը):

ԳԼՈՒԽ Ե.

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԻՒՆ

Յօդ. 59.- Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին ղեկավար մարմինը կը կոչուի Շրջանային Վարչութիւն, որ կը կազմակերպէ ինն անդամներէ, որոնցմէ երեքը պիտի առնուին Երիտասարդաց Շրջանային Վարչութենէն, եւ կ'ընտրուի բոլորէն մարտական համար:

Յօդ. 60.- Շրջանային Վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք իրենց նուազն ԵՐԿՈՒ տարի անընդհատ անճշամ եղած են Կուսակցութեան եւ վերջնապէս են միայն մէկ անգամ:

Յօդ. 61.- Շրջանային Վարչութիւնը կ'ընտրուի Ամերիկայի Շրջանակի տարածական Պատգ. Ժողովին կողմէ, պատշաճամասերու եւ վերջացող տարուան Արջանային Վարչութեան անդամներու մեծամասնութեան գաղտնի քուէով:

Ընտրութիւնը կարելի է կատարել Յօդ. 13-ի տրամադրութեան համաձայն:

Յօդ. 62.- Վճարեալ պաշտօնականներ Շրջանային Վարչութեան անդամ չեն ունենար բլլալ:

Յօդ. 63.- Շրջանային Վարչութիւնը իր պատասխանատու է Շրջանակի Պատգ. Ժողովին, որուն պարտի ներկայացնել իր անդամներու տեղեկագիրը եւ նիւթական ամօրծառներ թիւնները:

Յօդ. 64.- Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին սեփական, չարժուէ ու աննշարժ, կալուածները մատակարարելու

իրաւասութիւնը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

Յօդ. 65.- Շրջանային Վարչութիւնը, երբ պէտք տեսնէ, կը նշանակէ լիազօրներ, յանձնարարներ եւ վարչ-քարտուղար կամ պաշտօնականներ՝ իր որոշումները գործադրելու եւ շրջանակի կուսակցական ընդհանուր գործերուն ընթացք տալու համար:

Յօդ. 66.- Այն պարագային, որ վարչ-քարտուղար կարելի չէ գտնել, Շրջ. Վարչութիւնը կը նշանակէ Գործող Մարմին մը, բաղկացած քարտուղարէն, խմբագիրներէն, թերթի վարչութենէն եւ գործիչներէն, եթէ կեդրոնափայլին մէջն են, գործերը վարելու համար:

Յօդ. 67.- Երբ Շրջ. Վարչութեան անդամներէն մին կամ աւելին պակաս կամ հրաժարին, անոնց կը յաջորդեն Պատգ. Ժողովէն ընտրուած փոխանդամները՝ առաւելագոյն քուէի կարգով, պայմանաւ որ Շրջ. Վարչութեան փոխանդամները չհամարուին մեծամասնութեան քուէն, եթէ ընտրուած փոխանդամները անբաւական են, առանձին քուէարկութիւն կատարել անոնց համար: (*)

Յօդ. 68.- Շրջանային Վարչութիւնը կը վերաքննէ Արմարի մը անդամական Ժողովին գաղտնի վճիռները, պայմանաւ որ բողոքարկուն զրաւորապէս ներկայացնէ իր բողոքը, վճիռի թուականէն մինչեւ մէկ ամիս:

Յօդ. 69.- Շրջանային Վարչութեան վերին հսկողութեան եւ պատասխանա-

(*) Եթէ փոխանդամները չընդունին, Շրջ. Վարչութեան իրաւունքն է ընտրել պակաս անդամներ, պայմանաւ որ Վարչութեան կազմը Պատգ. Ժողովէն ընտրուած մեծամասնութիւնը պահէ:

սուսութեան տակ կը հրատարակուին Ամերիկայի Շրջանակին պաշտօնաթերթերը եւ ուրիշ հրատարակութիւններ:

Յօդ. 70.- Շրջանային Վարչութեան պաշտօնն է՝

Ա. Գործադրել Շրջանակի Պատգ. Ժողովին կողմէ քուէարկուած որոշումներն ու օրէնքները, ինչպէս նաեւ կեդրոնական Վարչութեան հրահանգները:

Բ. Միջոցներ անօրինել Շրջանակի կուսակցական գործերուն բարուք կատարումին, եւ իր արտադրութեան տակ գրուած գումարներուն արգիւնաւէտ գործածութեան համար:

Գ. Պաշտօնի կոչել եւ հրաժարեցնել Շրջանակի բոլոր պաշտօնեաները, Քարտուղար, Խմբագիր, Գործիչ, Գործակատար, Ներկայացուցիչ, եւ այլն:

Դ. Ակումբները անդեակ պահել կուսակցութեանս ընդհանուր գործունէութեան:

Ե. Քննել կուսակցութեանս անդամներուն ղէմ բերուած ամբաստանութիւնները եւ ըստ այնմ պէտք եղած անօրինութիւններն ընել:

Զ. Ի հարկին ստանձնել եւ մատակարարել Ակումբներէն ունէ մէկուն պատկանող գրամները, կալուածներն ու զոյքերը:

Է. Թեյադրութիւններ ներկայացնել Շրջանակի Պատգամաւորական Ժողովին՝ յաջորդ շրջանի ընդհանուր պիւտճէին համար:

Ը. Տնօրինել բոլրականաւ միջոցներ կուսակցութեան սկզբունքները եւ քաղաքականութիւնը ընդհանրացնելու համար Ամերիկայի մէջ:

Յօդ. 71.- Շրջանային Վարչութեան անդամները անհատաբար եւ հաւաքաբար պատասխանատու են Շրջանակի Պատգ. Ժողովին:

Յօդ. 72.- Շրջ. Վարչութեան անդամներն ու ներկայացուցիչները իրաւա-

սութիւն ունին Շրջանակի բոլոր պաշտօնական մարմիններու նխատերուն մասնակցիլ խորհրդակցական ձայնով:

Յօդ. 73.- Շրջ. Վարչութեան անդամները պարտին ուխտել հաւատարմութիւն կուսակցութեան սկզբունքներուն եւ շահերուն, Պատգ. Ժողովին մէջ, իսկ բացակայ անդամներ՝ Շրջ. Վարչութեան Ժողովին մէջ:

Յօդ. 74.- Շրջ. Վարչութեան կողմէ նշանակուած Գանձապետը իբր երաշխաւորութիւն պարտի տալ երաշխագիր մը (սփոն), որուն քանակը կ'որոշուի Շրջանակի տարեկան Պատգ. Ժողովին կողմէ:

Յօդ. 75.- Շրջ. Վարչութեան անդամները պատգամաւոր չեն կրնար ընտրուիլ, սակայն իւրաքանչիւրը Պատգ. Ժողովին մէջ մէկ քուէի իրաւունք ունի, բաց ի Շրջ. Վարչութեան համարատուութենէն:

ԳԼՈՒԽ Զ.

ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 76.- Պատգամաւորական Ժողովը Ամերիկայի Շրջանակին գերագոյն, օրէնսդիր եւ համարառու մարմինն է:

Յօդ. 77.- Պատգամաւորական Ժողովը կը կազմուի Ակումբներու կողմէ ընտրուած պատգամաւորներէն:

Յօդ. 78.- Պատգամաւորական Ժողովը կը գումարուի տարին մէկ անգամ Շրջ. Վարչութեան հրաւերով:

Յօդ. 79.- Պատգ. Ժողովը օրինաւոր է, երբ Ակումբներու մեծամասնութիւնը ներկայացուած է:

Յօդ. 80.- Պատգամաւոր կ'ընտրուին միայն անոնք որ առ նուազն երկու տարի կուսակցութեան անդամ եղած են եւ կատարած են իրենց անդամի պարտականու-

թիւները: Նորակազմ Ակումբներ բացառութիւն կը կազմեն:

Յօդ. 81.- Ակումբներ կ'ընտրեն իրենց պատգամաւորները հետեւեալ համեմատութեամբ՝

5-25	անդամ	1	պատգամաւոր
26-50	անդամ	2	պատգամաւոր
51-75	անդամ	3	պատգամաւոր

և այսպէս իւրաքանչիւր յաւելւածական 25 եւ կամ նուազ անդամի համար մէկ պատգամաւոր աւելի:

Յօդ. 82.- Իւրաքանչիւր պատգամաւոր կրնայ ներկայացնել մէկ ձայն:

Յօդ. 83.- Տեղի հեռւորութեան պատճառաւ ուղղակի պատգամաւոր շըր՝ կելու անկարող Ակումբներ կրնան ուրիշ Ակումբի պատկանող բնակիչներ ընտրել, իսկ այն Ակումբները որոնք նշանակովի պատգամաւոր չեն ընտրեր, իրենց ձայնը գրկելու են Պատգ. Ժողովին:

Յօդ. 84.- Շըջ. Վարչութիւնը պարտաւոր է հրաւիրադիր գրկել ըրոր Ակումբներու, Պատգ. Ժողովի գումարման թուականէն առ նուազն մէկ տմիս առաջ:

Յօդ. 85.- Արտակարգ Պատգ. Ժողով կը գումարուի՝

ա) երբ Շըջ. Վարչութիւնը պէտք տեսնէ.

բ) երբ Շըջանակի Ակումբներուն մեծամասնութիւնը գրաւորապէս պահանջէ միեւնոյն առաջարկով:

գ) երբ Շըջ. Վարչութիւնը իր մեծամասնութիւնը կորսնցնէ:

Յօդ. 86.- Արաստովոր Պատգ. Ժողովը իր մասնաւոր նպատակը իրադործելէ յետոյ, կրնայ ուրիշ խնդիրներով ու զրադիւ, պատգամաւորներու մեծամասնութեան հաւանութեամբ:

Յօդ. 87.- Շըջանային Վարչութեան անդամ մը Պատգ. Ժողովի զիւանին ընտրելի չի կրնար բլլալ:

Յօդ. 88.- Պատգ. Ժողովը օրակարգի մասնաւոր հարցերէն դուրս՝

ա) կը պահանջէ, կը քննէ եւ կը վաւերացնէ Շըջ. Վարչութեան, ինչպէս նաեւ Ակումբներու տեղեկագիրներն ու հաշիւները:

բ) կը քննէ, կը դատէ եւ կը պատժէ Շըջ. Վարչութեան ամբաստանեալ անդամները:

գ) կը վերաքննէ Շըջ. Վարչութեան ղառական վճիռները, եթէ բողոքարկու կողմը գրաւորապէս ներկայացուցած է իր բողոքը:

դ) կը քուէարկէ Շըջանակի պիւտ՝ ձէն:

ե) կ'ընտրէ Շըջ. Վարչութիւնը եւ երեք փոխանդամներ:

զ) կ'ընտրէ Ընդհ. Պատգ. Ժողովի պատգամաւորները, երբ կեդր. Վարչութիւնէն հրաւիրադիր ստացած է:

է) կը վերաքննէ սոյն կանոնագիրը:

Յօդ. 89.- Պատգ. Ժողովի որոշումները կը արուին իւրաքանչիւր նիստի ներկաներու մեծամասնութեամբ, իսկ հետեւեալ խնդիրները կ'որոշուին պատգամաւորներու ամբողջական թիւին մեծամասնութեամբ.

ա) Շըջանակի կանոնագրի վերաքննութիւն.

բ) Շըջանային Վարչութեան ընտրութիւն.

գ) Դատական վճիռներ.

դ) Պիտձէի քուէարկութիւն.

ե) Ընդհ. Պատգ. Ժողովի պատգամաւորներու բնորոշութիւն:

ԳԼՈՒԽ Է.

ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 90.- Ուելէ անդամ, որ առանց բանաւոր պատճառի յաջորդաբար երեք անգամ կը բացակայի անդամական ժողովներէ, ազդարարագիր կը ստանայ

Վարչութենէն: Չորրորդ անգամ բացա-
կայելուն, անդամական ժողովի որոշու-
մով կը կախակայուի որոշ չրջանի մը հա-
մար:

Յօդ. 91.- Կախակայման շրջանը ըր-
բանալէն յետոյ, իբր ընկեր կը հրաւիր-
ւի անդամական ժողովի: Եթէ կրկին բա-
ցակայի, առանց բռնաւոր պատճառի,
անդամական ժողովի որոշումով կը դադ-
րեցուի անդամակցութենէ, եւ կը տեղե-
կագրուի Շրջ. Վարչութեան:

Յօդ. 92.- Ոեւէ անգամ, որ առանց
բռնաւոր պատճառի եւ կամովին չի վր-
ճարեր իր անդամատուրքերը մէկ տարի,
կը կախակայուի, եւ երբ կախակայման
թուականէն մինչեւ վեց ամիս իր յետոն-
եայ տուրքերը չի հատուցաներ, վերջին
ազդարարութենէ մը ետք կ'արտաքսուի:

Յօդ. 93.- Արտաքսուող եւ Կուսակ-
ցութենէն հրաժարող անդամ մը պարտի
եւ վերադարձնել իր ինքնութեան քար-
տը եւ զինանշան կոճակը, որոնց փոխար-
ժէքը պիտի հատուցուի:

Յօդ. 94.- Ոեւէ անգամ որ՝

ա) Կուսակցութեան սկզբունքներուն
դէմ կը դործէ,

բ) Կարդապահութեան եւ գաղտնա-
պահութեան օրէնքները չի յարգեր,

գ) Իրեն դէմ արուած վճիռի մը դէմ
ներքին օրինական միջոցներէ տարրեր
միջոցներու կը դիմէ,

դ) Ուրիշ Հայ կուսակցութեան մը
եւս կ'անդամակցի,

իր Ակումբի անդամական ժողովի վճի-
ռով կը կախակայուի եւ կը կորսնցնէ իր
անդամական իրաւունքները, որոշուած
ժամանակի մը համար, եւ ի հարկին
կ'արտաքսուի յետ դատաւարութեան:

Յօդ. 95.- Ոեւէ անգամ որ Կուսակ-
ցութեան մէկ ուրիշ անդամը հրապարա-
կով կը զրպարակէ, զրպարուած անդա-
մին դիմումին վրայ, յետ քննութեան կը

պատժուի, յարմար տեսնուած պատիժով
մը, որ կրնայ ըլլալ մինչեւ կախակայում
եւ արտաքսում, ըստ առաժանի:

Յօդ. 96.- Ոճիրով եւ զեղծումով դա-
տապարտուած անդամ մը կ'արտաքսուի
Կուսակցութենէն՝ իր Ակումբի անդամա-
կան ժողովի երկու երրորդի մեծամաս-
նութեան վճիռով:

Յօդ. 97.- Արտաքսուած անդամի մը
անունը կը հաղորդուի Շրջանային Վար-
չութեան որ իր կարգին շրջարեւականով
կը հաղորդէ Շրջանակի Ակումբներուն
եւ Կեդրոնական Վարչութեան:

Յօդ. 98.- Ակումբներու տուած վը-
ճիռէն դժգոհ ոեւէ կողմ իրաւունք ունի
դիմելու Շրջ. Վարչութեան՝ վերաքննու-
թեան համար, վճիռի թուականէն մինչեւ
մէկ ամիս:

Յօդ. 99.- Շրջ. Վարչութեան տուած
վճիռէն դժգոհ ոեւէ կողմ իրաւունք ու-
նի դիմելու Շրջանակի Պատգամաւորա-
կան ժողովին, վճիռի թուականէն մին-
չեւ մէկ ամիս առաջ, ուրկէ նաեւ դժգոհ
միացողը կրնայ դիմել Ընդհանուր Պատ-
գամաւորական ժողովին՝ որուն վճիռը
վերջնական է:

Յօդ. 100.- Յանդիմանութեան, ան-
փսաահութեան եւ կախակայումի վճիռ-
ները կը արուին Ակումբի անդամական
ժողովի մեծամասնութեան քուէով, սա-
կայն արտաքսումի վճիռը կը արուի յետ
օրինաւոր դատաւարութեան, Ակումբի
կողմէ ընտրուած մասնաւոր դատական
ատեանի մը առջեւ, երբ ամրաստանեա-
լին յանցաւոր ըլլալը կը հաստատուի:
Դատական ատեանի վճիռը ի զօրու կը
դառնայ Ակումբի անդամական ժողովի
ներկայ քուէատու անդամներու երեք
չորրորդին հաւանութեամբը:

Յօդ. 101.- Երբ Շրջ. Վարչութեան
անդամ մը իր պաշտօնաւարութեան շըր-
ջանին Կուսակցութեան սկզբունքներուն

դէմ դաշխակեցուցիչ ու անհատաորով
ընթացքի մը մէջ գտնուի, անմիջապէս
պէտք է չէզոքացուի իր պաշտօնէն: Վարչու
թեան միւս անդամները կը կազմեն ըն-
կերական աստան մը եւ առժամեայ վճիռ
կ'արձակեն մինչեւ որ Պատգ. Ժողովը ալ
վճիռը վերաքննելով վաւերացնէ կամ բե-
կանէ դաշին:

Յօդ. 102.- Արտաքսուող ընկերոջ մը
յանցանքը սպառնացանող պարագաները
պէտք է անմիջապէս հաղորդուին Շրջ.
Վարչութեան:

Յօդ. 103.- Շրջ. Վարչութեան հրա-
հանգներուն եւ կարգադրութեան անաս-
տող Ակումբ մը առժամապէս կը զազրեց-
իւ մտէն յարարելութենէ մինչեւ Պատգ.
Ժողովը՝ որ քննելով ինդիբը վերջնական
վճիռը կուտայ:

Յօդ. 104.- Բոլոր պատասխանատու
մարմինները, սկսեալ Ակումբի Վարչու-
թիւններէն մինչեւ Շրջ. Վարչութիւնը,
պարտաւոր են ներկայ կանոնադրի տրա-
մադրութիւններուն հակառակ դործող
կամ թերացող անհատ անդամներու եւ ի-
րենցմէ ստորագրած մարմիններու հանդէպ
անմիջական ազդու անօրինութիւններ
ընել: Այս մասին զանցառութիւնը ծանր
պատասխանատուութիւն կը հրաւիրէ վե-
րոյիչեալ իրաւասու մարմիններուն վրայ,
կուսակցական կարգապահութեան եւ կու-
սակցական վերին շահերուն դէմ մեղան-
շում մը նկատուելով:

ԵՐԴՄՆԱԳԻՐ

ՆՈՐ ԱՆԴԱՄԱԳՐՈՒՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Կ'ուխտեմ խղիւս եւ Պատուոյս վրայ,
յանուն Ազատութեան եւ Հայրենիքի բո-
լոր մուկական սրբութիւններուն, ծառա-
յել Ռամկավար Ազատական Կուսակցու-
թեան սկզբունքներուն, որդեգրելով անոր
դասանած ազգային եւ քաղաքական իտե-
ալները:

Կ'ուխտեմ այս վեհ վայրկեանէն ըս-
կեալ, հաւատարիմ անդամ մը ըլլալ
Ռամկավար Ազատական Կուսակցութեան,
եւ խղիւսօրէն ու կարգապահութեամբ
կատարել իմ վրայ դրուած բոլոր պարտա-
կանութիւնները, մուկելով իմ նիւթական
եւ քաղաքական կարողութիւններս Կու-
սակցութեան նպատակներուն իրագործ-
մանը համար:

Կ'երդնում ամէն գոհադութեամբ եւ ի
հարկին կեանքի գնով, մուկելով Կուսակ-
ցութեան, Ազգիս եւ Հայրենիքիս Սուրբ
Դատին՝ հաւատարմօրէն պահելով ինծի
վստահուած գաղտնիքները:

ԵՐԴՈՒՄ

Սոյն կանոնադրի Յօդ. 66-ի տրա-
մադրութեան համեմատ, Շրջ. Վարչու-
թեան անդամները կ'երդնուն հետեւեալ
բանաձեւով.

«Ստանձնելով Ռամկավար Ազատա-
կան Կուսակցութեան Ամերիկայի Շրջ.
Վարչութեան անդամակցութիւնը, կ'երդ-
նում Պատուոյս վրայ եւ Հայրենիքիս ա-
նունով, հաւատարիմ մնալ Ռամկավար
Ազատական Կուսակցութեան սկզբունք-
ներուն, պահպանել եւ գործադրել անոր
Ծրագիրն ու Կանոնագիրը, խղիւսօրէն
կատարել Պատգամաւորական Ժողովին
որոշումները եւ իր կողմէ ինծի վստա-
հած պաշտօնը, աչալքօրէն հսկել
Ռամկավար Ազատական Կուսակցութեան
շահերուն վրայ եւ ջանալ անոր քաղաքա-
կան նպատակներուն իրագործման, Հայ
Ազգին եւ Հայրենիքին քաղաքական համար»:

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ներկայ կանոնադրը վերաքննելի է
Ամերիկայի Շրջանակի Պատգամաւորա-
կան Ժողովին մէջ:

ԲԱԺԻՆ

Գ.

ԿԱԶՄԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

ՎԵՐ. ՀՆՁ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԱՄՓՈՓՈՒՄԸ*

Արմենական կազմակերպությունը եւ Հայ Յեղափոխական Միութիւնը անցեալ 1907 տարուան Օգոստոսին իրարու հետ միանալով՝ կազմած էին «Գաղափարակցական Միութիւն», իր յատուկ Ծրագրով եւ Հիմնական կանոնագրով:

Այս առթիւ վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան Եգիպտոսի Նահանգային Վարչութիւնը փութացած էր նոյն տարուան Սեպտեմբեր 4 թուակիր նամակով մը յանուն վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան՝ շնորհասուրել կատարած միութիւնը, միանգամայն ջերմ փառիաք յայտնելով որ Միացեալ կազմակերպութեան եւ վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան միջեւ եւս միութիւն մը յառաջ գար. քանի որ կարեւոր տարբերութիւն մը չկար երկու կազմակերպութեանց հայեացքներուն մէջ:

Գաղափարակցական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը համար 12 եւ 15 Նոյեմբեր 1907 թուական պաշտօնագրով մը պատասխանած էր թէ՛ սիրով կ'ընդունէր եղած միութեան առաջարկը եւ թէ՛ որոշած էր այդ նպատակաւ բանակցութիւններ վարելու համար լիազօր մը դրկել Եգիպտոս:

Գաղափարակցական Միութեան լիազօրը՝ ընկեր Գ. Պէօգիկեան նոյն տարւան Դեկտեմբերին հասնելով Եգիպտոս, նախնական բանակցութեանց ձեռնարկեց վերակազմեալ Հնչակեան կուսակցու-

թեան Կեդրոնական Յանձնախումբին հետ:

Երկարատեւ եւ բազմակողմանի խորհրդակցութիւններէ եւ կարծիքներու փոխանակութիւններէ յետոյ, որոնց շնորհիւ պարզուեցան երկու կուսակցութեանց Ծրագրի, կազմակերպութեան եւ Գործելակերպի վերաբերող բոլոր կէտերը, տեսնուեցաւ որ արդարեւ ոչ մի հիմնաւոր տարբերութիւն չկար երկու կուսակցութեանց հայեացքներուն մէջ, որ կարողանար արգելք հանդիսանալ ցանկալի միութեան:

Ուստի 1908 Փետրուար 5ին ձեռնարկուեցաւ միութեան պաշտօնական բանակցութեանց եւ կազմուեցաւ մանրամասն արձանագրութիւն:

Ընկեր Գ. Պէօգիկեան ներկայացուց Գաղափարակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան 1907 Նոյեմբեր 5 թուակիր վկայականը, որով իրեն լիազօրութիւն կը տրուէր վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան հետ բանակցութիւններ վարելու երկու կուսակցութեանց միջեւ միութիւն կայացնելու նպատակաւ:

Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան լիազօրները բացատրեցին թէ՛ Ամերիկայի եւ Եգիպտոսի վերջին Նահանգային Պատգամաւորական Ժողովներու որոշմամբը եւ միւս բոլոր շրջանակներուն հաւանութեամբը իրենց կուսակցութեան ընդհանուր ղեկավարութիւնը, մինչեւ ընդհանուր Ժողովը, յանձնուած էր Ամերիկայի եւ Եգիպտոսի Նահանգային Վարչութեանց, որոնք խորհրդակցաբար կը վարեն կուսակցութեան գործերը Կեդրոնական Յանձնախումբ անունանալով: Ըստ այնմ, ներկայացուցին համար

* Այս ամփոփումէն հատուածներ լոյս տեսած են Նաբանեանին կողմէ, ապա նաեւ Արտակ Դարբինեանին յուշագրութեան մէջ եւ այլուր, որոշ շեղումներ արձանագրելով ներկայ՝ հաւագատ բնագրէն:

41 եւ 1 Յունուար 1908 թուակիր վկայագիր մը, որով Ամերիկայի Նահանգային վարչութիւնը՝ իբր լրացուցիչ մաս կեդրոնական Յանձնախումբի, Եգիպտոսի Նահանգային վարչութեան իր պաշտօնակիցներուն լիազօր իրաւասութիւն կուտար վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան կողմէն կատարելու միութեան բանակցութիւնները Գաղափարակցական Միութեան հետ:

Այն վկայագիրը կը կրէր նաեւ վեր. Հնչակեան Կուսակցութեան Կիլիկիոյ Շրջանակին ներկայացուցիչ ընկեր Դաւիթ Մելիքեանի ստորագրութիւնը, յանուն իր պատկանած Շրջանակին:

Բանակցութեանց մասնակցեցաւ նաեւ վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան Փոքր-Հայքի գործիչներէն՝ ընկեր Ժիրայր-Վաչէն:

Այս կերպով վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացած կը լինէր իր ամբողջ կազմով:

Ըստ այնմ բանակցող կողմերը կազմութեան հետեւեալ կերպով.

Գաղափարակցական Միութեան կողմէն՝

Կեդրոնական վարչութեան անդամ եւ լիազօր՝ ընկեր Գ. Պէօգիկեան իրեն խորհրդական ունեւայով ընկեր Միւսայի Նաթանեան եւ Յարութիւն Պէյլարեան:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան կողմէն՝

Կեդրոնական Յանձնախումբի անդամներէն լիազօր ընկերք՝ Տոքթ. Տ. Էնփիւէնեան, Մ. Տամատեան, Կ. Գրիգորեան, Շ. Հովիւեան եւ Փոքր-Հայքի գործիչ ընկեր Ժիրայր-Վաչէ:

Հասկնալի է որ բանակցող երկու կողմերէն իւրաքանչիւրը կը ներկայանար մէկ-մէկ հաւասար ձայնով:



Բանակցող երկու կողմերն ալ կ'առաջնորդուէին այն հաստատ համոզումով թէ՝ Տանկահայ Ժողովրդի ներկայ նգնաժամային դրութեան հանդէպ՝ հայ յեղափոխական գործը կը կարօտէր աւելի քան երբեք մեծ հիգերու եւ միահամուռ գործակցութեանց: Անհրաժեշտ էր ուրեմն որ Տանկահայ դատի համար կազմուած առանձին առանձին կուսակցութիւնները ի մի համախմբուէին եւ միացնէին իրենց ջանքերը:

Այս պահանջը աւելի հրամայողական կը դառնար մանաւանդ այն կազմակերպութեանց համար, որոնք գործելով ազգայնական հողի վրայ եւ չունենալով հայեացքներու զգալի տարբերութիւններ, կարող էին բոլորովին ի մի ձուլուիլ եւ կազմել միակ յեղափոխական մարմին մը: Այս կերպով միայն կարելի պիտի ըլլար առաջ բերել համազգային մի գործող յեղափոխական կազմակերպութիւն, որուն անշուշտ ժողովուրդը պիտի տար իր օժանդակութիւնը աւելի մեծ հաւատքով եւ աւելի մեծ չափով:

Ուստի պէտք էր անպայման առաջ բերել այդ ցանկալի միութիւնը, եթէ նոյնիսկ փոխադարձ ծանր զիջումներ պահանջէր այն:

Այս զիջումներու իբր առաջին պայման կը ներկայանար անշուշտ միացող մարմիններուն անուններուն մի կողմ թողուիլ եւ մի նոր անունով հրապարակ գալը. զիջողութիւն՝ որուն յօժարական համաձայնեցան բանակցութեանց լիազօրները, առանց կանգ առնելու այն նրկատումին վրայ թէ՝ պատմական կայերու եւ յիշատակներու երկար շարք մը նուիրագործած էր իւրաքանչիւրին համար իր կուսակցութեան անունը: Եթէ հայրենիքի եւ հայութեան ընդհանուր եւ գերագոյն շահերը պէտք էր վեր նկատել կուսակցական ունէ նկատումէ կամ հաշիւէ, ապա ուրեմն եւ միութեան սուրբ

անունը եւ անոր համագային դրօշը պէտք էր անպայման վեր բռնել ամէն անունէ եւ ամէն հատուածական դրօշէ:

Այս կէտը սկզբամբ ընդունուելով՝ կազմակերպութեան նոր անունի որոշումը թողուեցաւ մինչեւ բանակցութեանց յաջող վերջաւորութիւնը:



Այնուհետեւ ձեռնարկուեցաւ երկու կուսակցութեանց Ծրագրին ու Հիմնական Կանոնագրին ուսումնասիրութեանն ու բաղդատութեանը, որոնք իբր հիմ պիտի ծառայէին միացեալ կազմակերպութեան նոր Ծրագրին եւ Հիմնական Կանոնագրին կազմութեանը:

Երկու կուսակցութեանց նպատակը ընդհանուր գծերով միեւնոյն էր. բայց բանակցող կողմերը ի նկատի ունենալով Տանկահայաստանի ազգագրական մասնաւոր կազմը, որ անհրաժեշտ կը դարձնէր որոշել այնտեղ ապրող տարբեր ցեղերու հանդէպ մեր ունենալիք դիրքը, թէ՛ յեղափոխական գործունէութեան ընթացքին եւ թէ մեր նպատակի իրագործման պարագային, միացեալ կազմակերպութեան նպատակը սահմանեցին հետեւեալ կերպով.

ՆՊԱՏԱԿ

1. Ազատել Տանկահայաստանը Օսմանեան բռնակալութենէն եւ հիմնել այնտեղ անկախ ինքնավարութիւն մը *, հաստատուած սահմանադրական լայն հիմունքներու վրայ, որ ապահովէր միանգամայն այնտեղ ապրող միւս բոլոր ցեղերու բարօրութիւնը եւ ազատ ու

խաղաղ կուլտուրական զարգացումը՝ համաձայն իրենց առանձնատուկ ընդունակութեանց:

Բացայայտ է ուրեմն որ ինքնավար Հայաստանի մէջ՝ Հայերու հետ միւս բոլոր ցեղերն ալ՝ պահելով հանդերձ իրենց ազգային ինքնորոշութիւնը, իրաւունք պիտի ունենան անխտիր մասնակցելու երկրին ընդհանուր վարչական եւ օրէնսդրական գործերուն:

2. Կազմակերպութիւնը իր այս հիմնական նպատակին իրագործումը հետապնդելով հանդերձ, կը ջանայ փաղափարական հանգամանքներու համաձայն վարչական բարեկարգումներ ձեռք բերել Տանկահայաստանի մէջ, հիմնուելով եւրոպական պետութիւններէն հաստատուած միջազգային դաշնադրութիւններու վրայ:

ՄԻՋՈՑՆԵՐ

Երկու Ծրագիրներով գծուած միջոցներուն մէջ կարեւոր տարբերութիւններ չգտնուելով՝ զանոնք իրարու կատարելապէս համաձայնեցնող բարեփոխումներ նշանակուեցան, Առժամեայ Կեդրոնական Վարչութեան թողլով այդ բարեփոխումներու հիման վրայ կարգաւորել միացեալ կազմակերպութեան միջոցները:

Ուզելով աւելի որոշ պատկերացնել միացող կուսակցութեանց հայեացքները եւ առաջնորդող սկզբունքները հայ ժողովրդի զանազան դասակարգերուն վերաբերութեամբ, հարկ դատուեցաւ նոր Ծրագրի Միջոցներու բաժնին մէջ աւելցնել հետեւեալը.



* Ցարդ հրատարակուած եւ մէկը միւսէն արտապայուած օրինակներուն մէջ *անկախ ինքնավարութիւն* արտայայտութիւնը եղած է *անկախ կառավարութիւն*, ինչ որ մղած է սխալ մեկնաբանութիւններու եւ դատումներու – Վ. Ղ.:

Նկատելով որ հայկական դատը առաջնապէս փաղափարական ինքնավարութեանն էր, ըստ որում Տանկահայաստանի ամ-

բողջ հայ ժողովուրդը հաւասարապէս կը
ննշուի ու կը տառապի բռնակալ քէժիմի
ներքեւ եւ այնտեղ գոյութիւն չունին դա-
սակարգային որոշ շերտաւորումներ եւ
հակամարտ շահեր, միացեալ կազմակեր-
պութիւնը կը մերժէ դասակարգային ա-
մէն յտրութիւն, ընդհակառակը պիտի
ջանայ, իբր յաջողութեան առաջին պայ-
ման, հայ յեղափոխութեան շուրջը հա-
մախօսել հայութեան բոլոր կենսունակ
տարրերը եւ կարելի եղած լայն չափով
ապահովել անոնց ամէնուն աջակցու-
թիւնն ու գործակցութիւնը:

*

Թէեւ երկու Ծրագիրներու մէջ ալ
միատեսակ էր գծուած յեղափոխական
գործելակերպը, սակայն ի նկատի ունե-
նալով անոր աւագ կարեւորութիւնը,
հարկ դատուեցաւ առանձին կերպով ծան-
րանալ հետեւեալ միջոցներու վրայ. քէ՛
ընդհանուր գաղափար մը տալու համար
միացեալ կազմակերպութեան գործելա-
կերպի մասին եւ քէ՛ աւելի որոշ կերպով
յուսաբանելու համար այն կէտերը՝ ո-
րոնք բաւականաչափ պարզուած չէին
յիշեալ Ծրագիրներուն մէջ:

1. Տանկահայ ժողովուրդը պատ-
րաստի ոեւէ պատահականութեան առաջ
կազմակերպեալ դիմադրութեան եւ *հե-
նապաշտպանութեան*:

2. Երկրի մէջ ապստամբական ոյժ
գոյացնելով՝ քաղաքական նպատաւոր
բոլորին ի գործ դնել *ընդհանուր ապրու-
սամբոյթիւն*:

3. Զգուշանալ վաղաժամ եւ աննպա-
տակ ցոյցերէ եւ մասնակի շարժումներէ
(ցուցական գործունէութիւն), որոնք
կարող են կասեցնել ապստամբական ոյժի
պատրաստութեան կանոնաւոր ընթաց-
քը եւ անջատ-անջատ ուժերու ջլատում-
վը վտանգել բուն իսկ Գործի ապագայ
յաջողութիւնը:

**

ՕՏԱՐ ՑԵՂԵՐՈՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔ.— Միաց-
եալ կազմակերպութիւնը սկզբունքով
կ'ընդունի օտար ցեղերու հետ համերաշ-
խութեան գաղափարը, պայմանով սա-
կայն որ ամէն պարագայի տակ անխախտ
պահուին հայկական դատի ինքնուրոյն
գոյութիւնը եւ դաշնագրերով հաստատ-
ւած մեր իրաւունքները եւ չստորադա-
ւին անոնք Թուրքիոյ վերանորոգութեան
կամ անոր ամբողջութեան եւ անկախու-
թեան պահպանման հարցին:

Այս հիմնական սկզբունքի պայմա-
նին տակ՝ կազմակերպութիւնը կը ձգտի՝

Ա. Աշխատիլ Տանկահայաստանի մէջ
հայերու վիճակակից միւս հպատակ ցե-
ղերու (Բիւրտ, Ասորի, Եգիպտի եւն.) հա-
մակրութիւնը շահելու դէպի հայկական
դատը, որեւ իրենց ազատագրութեան
դատն է, ջանալով զանոնք աստիճանա-
բար մեզ համերաշխելու եւ գործակցելու
այդ դատի յաջող լուծման համար:

Բ. 1. Թուրք ժողովուրդի մոլեռանդու-
թիւնը գրգռող արարքներէ զգուշանալ եւ
ջանալ գոնէ անոր բարեացակամ չեզոքու-
թիւնը ձեռք բերել:

2. Տանկահայաստանի մէջ երբ տե-
ղական ազգաբնակչութիւնը կառավարա-
կան բռնութիւններու կամ տնտեսական
ննշումներու դէմ բողոքներ կազմակեր-
պէ, կազմակերպութիւնը ոյժ կուտայ
այդ շարժման անուղղակի կերպով՝ տա-
լով անոր ժողովրդական գոյն:

3. Եթէ պատահի որ Թուրքիոյ գա-
նազան մասերուն հետ Տանկահայաստա-
նի մէջ եւս բռնապետական քէժիմի փո-
փոխութեան եւ ընդհանուր բարեկոր-
գութեան լուրջ եւ վստահելի շարժում-
ներ յստաջ գան, կազմակերպութիւնն իր
նպատակի երկրորդ հատուածի եւ համե-

բաշխութեան վերոյիշեալ հիմնական սկզբունքի համաձայն կ'աջակցի այդ ժողովրդական շարժման միայն այն ժամանակ, երբ համոզում գոյացնէ թէ՛ հայկական նահանգներուն ինքնավարութեան դաշնագրական իրաւունքը պիտի պահուի եւ յարգուի նոր րէժիմի տակ, եթէ նոյնիսկ Հայաստանը այս կերպով շարունակէ մնալ իբր մի բաղկացուցիչ մասը Օսմանեան պետութեան: Այդ աջակցութիւնն ու գործակցութիւնը երբ բոլորովին կարն եւ հրամայողական պահանջ-կոտութեան բնաւորութիւն մը չունի, տեղի կ'ունենայ տեղական ձեռնհաս մարմիններուն եւ կեդրոնական վարչութեան համաձայնութեամբ, պայմանով դարձեալ որ նախաձեռնութիւնը թուրքերու կողմէ ըլլայ եւ մասնակցութիւնը տեղական հայ ժողովրդի անունով կատարուի:

Գ. Տանկահայաստանէն դուրս Օսմանեան լուծը քօթափելու ձգտող միւս ցեղերու եւ ազգութիւններու հետ (Մակեդոնիա, Ալպանիա, Արաբիա, Եւայլն) եւս կ'ընդունի ալ համերաշխի կամ դաշնակցի, միաժամանակ ապստամբութիւն առաջ բերելու համար, իւրաքանչիւրը իր պահանջներուն, ձգտումներուն, ինչպէս նաեւ գործելակերպի մասին պահելով իր կատարեալ ազատութիւնը:

Դ. Օսմանեան ընդդիմադիր տարրերու ընդհանուր ֆոնկրէի սկզբունքը կ'ընդունուի մի միայն վերագրեալ վերապահումներու պայմանին տակ:

ԳՈՐԾՈՒՆԵՆԻԹԵԱՆ ՎԱՅՐ

Յեղափոխական գործունէութեան վայրն է ընդհանրապէս Տանկահայաստանը եւ Կիլիկիան:

Տանկահայաստան ըսելով կը հասկընա՞նք վեց վիլայէթները (Էրզրում, Վան, Բաղէշ, Տիգրանակերտ, Խարբերդ եւ Սեբաստիա իրենց հետ անմիջական ազդագ-

րական կապ ունեցող հայաբնակ գաւառները):

Նոյնպէս, Կիլիկիա ըսելով կը հասկընա՞նք Ատանայի եւ Հալէպի վիլայէթներու հայաբնակ մասերը:

Կիլիկիան պիտի նկատուի իբր դաշնակից Մեծ-Հայաստանին եւ միեւնոյն կազմակերպութեան ղեկավարութեան տակ ոյժ պիտի տայ Մեծ-Հայաստանի շարժումներուն, միաժամանակ տեղական առանձին բարեկրթագումներ պահանջելով Մեծ-Հայաստանի պահանջներու հիման վրայ:

Գործելավայր ըսելով կը հասկընա՞նք ինքնապաշտպանութեան եւ ապստամբութեան վայրեր, որոնք կ'որոշուին տեղական յարմարութեանց համաձայն, երկրի ձեռնհաս մարմիններու եւ կեդրոնական վարչութեան համահան կարգադրութեամբ:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐԸ իրենց տեղական ինքնապաշտպանութեան պահանջները լրացնելէ յետոյ, կարելիութեան սահմանին մէջ, իրենց նիւթական, բարոյական եւ ֆիզիքական ոյժերը կը տրամադրեն բուն ապստամբութեան վայրերուն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԻՈՒՆԻՆԵՐ

Երկու կազմակերպութիւններուն ալ կազմակերպական դրութիւնը կը յենու *չափաւոր կեդրոնացման* վրայ: Ըստ այնմ միացեալ կազմակերպութեան մէջ իւրաքանչիւր շրջանակ իր տեղական ներքին խնդիրներու համար կը վայելէ ինքնավարութիւն, թէեւ պատասխանատու է կեդրոնական վարչութեան, իսկ ընդհանուր բնաւորութիւն ունեցող ամէն խմբիւրներու համար ենթարկեալ է կեդրոնական վարչութեան իրաւասութեան:

Կեդրոնական վարչութիւնը իր կարգին պատասխանատու եւ համարաւոր է ամբողջ կազմակերպութեան՝ Ընդհա-

նուր Պատգամաւորական ժողովի միջոցաւ: Կեդրոնական վարչութիւնը անկարող է երկրի վերաբերեալ, նա մանաւանդ ապստամբութեան նման ծանրակշիռ խնդիրներու մէջ՝ բացարձակ որոշում կայացնել. առանց երկրի ձեռնհաս մարմիններու խորհրդակցութեան եւ համաձայնութեան:

ՎԱՐՉԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Երկու կուսակցութեանց վարչական կազմակերպութիւնը, որ նոյնպէս համապատասխան է, հիմնուած է ընտրական սկզբունքներու վրայ եւ աստիճանաբար կր բարձրանայ հետեւեալ կարգով.

Խումբ, որ կազմակերպութեան կորիզն է. կ'ունենայ իր ընտրեալ խմբապետը.

Մասնաճիւղ, կազմուած խմբերէ. կ'ունենայ ընտրեալ վարչութիւնը.

Նահանգային Շրջանակ, կազմուած զանազան մասնաճիւղերէ եւ որ կ'ունենայ իր նահանգային կամ շրջանային վարչութիւնը, ընտրուած նահանգային պատգամաւորական ժողովէն.

Կեդրոնական վարչութիւն, ընտրուած ընդհ. Պատգամաւորական ժողովէն.

Ընդհանուր Պատգամաւորական ժողով, որ կազմակերպութեան գերագոյն օրէնսդիր մարմինն է, կազմուած շրջանակներու ներկայացուցիչներէն:

- Շրջանակները մէկ կամ աւելի պատգամաւոր կ'ուղարկեն ընդհանուր Պատգամաւորական ժողովին համեմատութեամբ իրենց անդամներու թուական առանելութեան, Հիմնական Կանոնագրով նախագծուած սահմանադրումներու համաձայն:

Կազմակերպութեան այս զանազան կարգերու իւրաքանչիւրի պարտք եւ ի-

րաւունքները, փոխադարձ յարաբերութիւնները եւ առ հասարակ զանոնք ղեկավարող ընդհանուր սկզբունքները եւ օրէնքները մանրամասն գծուած են երկու կազմակերպութեանց իրարու համեմատուած եւ պատշաճեցուած Հիմնական Կանոնագրին մէջ:

Կազմակերպութեան շրջանակները կազմակերպական հիմնական կէտերու մէջ եւ ընդհանուր գծերով իրարու համապատասխան լինելով հանդերձ կրնան մանրամասնութեանց մէջ տարբերիլ իրարմէ տեղական պայմաններու համաձայն. նոյնպէս արտասահմանի Մասնաճիւղերու կազմակերպութիւնը կը տարբերի երկրի Մասնաճիւղերի կազմակերպութենէն: Թէ՛ երկրի եւ թէ՛ արտասահմանի իւրաքանչիւր շրջանակ ինքն կը պատրաստէ իր Ներքին Կանոնագիրը եւ Կեդրոնական վարչութեան վաւերացումէն վերջ գործադրութեան կը դնէ զայն:

ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՊԱՐՏՔՆ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Ընկերներու պարտքն է իրաւունքը որոշող օրէնքները երկու կազմակերպութեանց մէջ ալ գրեթէ համանման լինելով՝ երկուստեք թեթեւակի բարեփոխումներով հաստատուեցան:

Ընդունուեցաւ Գաղափարակցական Միութեան Ծրագրի մէջ գծուած ընկերներու *Խնդնազինման գրութիւնը*, որով ամէն մէկ ընկեր պարտաւոր է կազմակերպութեան տրամադրութեան տակ ունենալ գէնք կամ զինել իւր փոխարէն մի ուրիշը, հատուցանելով գէնքի համար որոշուած գումարը:

Ինքնագինման դրութիւնը գործադրութեան դնելու համար, Կեդրոնական վարչութիւնը կը սահմանէ որոշ կանոններ:

**

ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Միացեալ կազմակերպութեան կանոնագրին մէջ գոյութիւն պիտի ունենան, նայելով յանցանքի աստիճանին կամ կարեւորութեանը, հետեւեալ պատիժները. նկատողութիւն, յանդիմանութիւն, տուգանք, շարքերէ ժամանակաւոր արտաքսում, իսպառ արտաքսում. իսկ ամենածանր պարագային, ինչպէս մատուցութիւն, դաւանանքիւն եւն. մահուան պատիժ:

Վերոգրեալ պատիժներու գործադրութեան վերաբերեալ մանրամասն տրամադրութիւններ երկու կուսակցութեանց Ծրագիրներու մէջ ալ գծուած լինելով՝ գրեթէ նոյնութեամբ ընդունուեցան:

ՀԱՄԱԿԻՐ ԱՆԴՈՄՆԵՐ ԿԱՄ ԽՈՒՄԲԵՐ

Բոլոր անոնք որ չեն քարկուելով հանդերձ կազմակերպութեան կանոններուն, կը համակրին անոր Ծրագրին եւ յօժարակամ կը նպաստեն անոր զարգացմանն ու զօրութեանը, թէ՛ բարոյապէս՝ իրենց խորհուրդներով, եւ թէ՛ նիւթապէս՝ իրենց պարբերական նուիրատուութիւններով, կը համարուին *Համակիր* կամ *բաջալերող* անդամներ:

Համակիրները կարող են վերածուիլ խումբերու, որոնց համար կը մշակուի առանձին կանոնագիր:

Համակիր խումբեր կրնան կազմուիլ նոյնպէս իգական սեռէ:

ՀԱՍՈՅԹԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Միացեալ կազմակերպութեան հասոյթի ադրիւրները պիտի լինին անդամական վնարներ, ինքնագինման [արշաւ], համակիր անդամներու կամ խումբերու կանոնաւոր վնարումները, կամաւոր նուէրներ, գաղտնի հանգանակու-

թիւն. իսկ արտասահմանի այն երկիրներէ մէջ, ուր որ քաղաքական հանգամանքները կը ներեն, նաեւ յայտնի հանգամանակութիւն, ներկայացում, վիճակահանութիւն եւայլն:

Բացարձակապէս արգիւտած է բռնի գրամ պահանջել:

Իւրաքանչիւր Շրջանակ իր հասոյթի մէջէն հոգալէ վերջ տեղական անհրաժեշտ ծախքերը, մնացեալին 30 % ը կ'ուղարկէ ամէն վեց ամիսն անգամ մը Կեդրոնական Վարչութեան. իսկ 70 % ը կը հասցնէ Գործելու վայրը Կեդրոնին միջոցաւ կամ նորա ցոյց տուած եղանակաւ, յստկացուելու համար ինքնապաշտպանութեան կամ սպաստաբանական ուժի պատրաստութեանը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Միացեալ կազմակերպութիւնը կ'ընդունի թէ առանց արտասահմանի մէջ հզօր եւ յարատեւ ջանքերու անկարելի է երկրի յեղափոխական գործին անհրաժեշտ օժանդակութիւնը ստեղծել:

Արտասահմանեան գործունէութեան միջոցներն են.

ա. Գրաւոր եւ բերանացի բրօքականութ.

բ. Դիւանագիտական յարաբերութիւններ եւ քաղաքական հանգամանքներու լուրջ ուսումնասիրութիւն.

գ. Ի նպաստ հայկական դատի հասարակաց կարծիքը պատրաստել հրատարակութիւններով եւ դիմումներով.

Գրաւոր եւ բերանացի բրօքականութ. - Կազմակերպութիւնն սկզբունքով ընդունած է՝

Ա. Բերանացի բրօքականութ գործիչներով ինչպէս նաեւ քաղաքական հանգամանքներու ներածին չափ հրապարակային ժողովներով.

Բ. Գրաւոր բրօքականութ.

ս. Գաղտնի շրջաբերականով.

բ. կիսապաշտօնական կամ գաղափարակից թերթերու միջոցաւ.

գ. Պրօշխրներով.

դ. Պաշտօնական օրկանով:

Ծանօթութիւնք.— Ա. Արտասահմանի նահանգային շրջանակները եթէ յարմար տեսնեն, կարող են հրատարակել կիսապաշտօնական թերթ, Կեդրոնական վարչութեան հաւանութեամբը, պայմանով սակայն որ ծախսերը հոգացուին բաժանորդագրութեամբ եւ չծանրանան կազմակերպութեան գանձին վրայ:

Բ. կիսապաշտօնական թերթերու ուղղութիւնը պէտք է համապատասխանէ կազմակերպութեան ընդհանուր հայեացքներուն եւ սկզբունքներուն, միանգամայն մնալով գաղափարական պայքարի բարձրութեան վրայ. հակառակ [պարագային] Կեդրոնական վարչութիւնը իրաւունք ունի փոխելու խմբագրական մարմինը Նահանգային վարչութեան միջոցաւ, կամ նոյնիսկ թերթը դադարեցնելու իր կիսապաշտօնական հանգամանքէն:

Գ. Ամերիկայի Նահանգային վարչութիւնը միայն ունենալով կիսապաշտօնական օրկան, սկզբունքով կ'ընդունուի նորա գոյութեան պահպանութիւնը, իսկ անունը պահելու կամ փոխելու, ինչպէս նաեւ խմբագրական կազմը ընտրելու իրաւասութիւնը կը պատկանի Միացեալ Մարմնոյ նորընտիր Նահանգային վարչութեան, որ հաւաքաբար պատասխանատու է թերթին ուղղութեանը:

Դ. Միացեալ կազմակերպութիւնը սկզբաւր կ'ընդունի թէ՛ անպայման հարկաւոր է ունենալ պաշտօնական օրկան. հրատարակուած Կեդրոնական վարչութեան կողմէ եւ անոր ուղղակի պատասխանատուութեան տակ. բայց եթէ Կեդրոնական վարչութիւնը ի վիճակի չլինի անմիջապէս իր պաշտօնական օրկան ու-

նենալու, կարող է կազմակերպութեան պաշտօնական օրկանի հանգամանքը առժամայէտ տալ Ամերիկայի կիսապաշտօնական թերթին, այդ մասին նախապէս համաձայնութիւն կայացնելով միացեալ կազմակերպութեան նորընտիր Նահանգային վարչութեան հետ:

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Գաղափարակցական Միութեան լիազօրը եւ իր խորհրդականները, որոնց հաղորդուեցաւ Հնչակեան Կուսակցութեան եւ վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան միջեւ կնքուած Համերաշխութեան Դաշինքը եւ այդ առթիւ կազմուած արձանագրութիւնը, ընդունեց այդ Դաշինքի օգտակարութիւնը, եւ հետեւաբար որոշուեցաւ որ Միացեալ Կազմակերպութիւնն եւս պահպանէ ու գործադրէ գայն մինչեւ առաջիկայ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, որու իրաւասութեան կը վերաբերի վերահաստատել, բարեփոխել կամ բեկանել գայն:

Այս որոշումը պիտի հաղորդուի Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան Միացեալ Կազմակերպութեան Առժամեայ Կեդրոնական վարչութեան կողմէ. անմիջապէս որ միութիւնը յայտարարուի:

ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Բանակցող երկու Կուսակցութիւնները ի մի ձուլելու եւ վերագրեալ հիմունքներու վրայ մի կատարեալ ամբողջութեան եւ միակ կազմակերպութեան մը վերածելու համար, ղեկավարող մամլոյ մը անմիջական կազմութիւնը անհրաժեշտ նկատուեցաւ. ուստի որոշուեցաւ կազմել Առժամեայ Կեդրոնական վարչութիւնը, որ լրացնէր այդ պէտքը:

եւ միանգամայն վարէր Միացեալ Կազմակերպութեան գործերը մինչեւ առաջիկայ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը:

Առժամեայ Կեդրոնական Վարչութիւնը պիտի կազմուի հետեւեալ կերպով. Գաղափարակցական Միութիւնը իսկապէս բաղկացած լինելով դեռ նոր միացած երկու կազմակերպութիւններէ (Արմէնական եւ Միութեանական) եւ իր Առժամեայ Կեդրոնական Վարչութիւնը կազմուած ըլլալով այդ երկու կազմակերպութեանց մէկ մէկ լիազօրներէն, Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնն եւս կ'ընտրէ մի լիազօր, եւ այս երեքը կը լինին Միացեալ Կազմակերպութեան Առժամեայ Կեդրոնական Վարչութեան անդամներ: Սակայն անհրաժեշտ նկատելով որ Կեդրոնական Վարչութիւնը բաղկանայ հինգ անդամէ, որոշուեցաւ որ այդ երեք լիազօրները միաձայնութեամբ ընտրեն երկու անդամ եւս, մէկը Գաղափարակցական քեռէն եւ միւսը՝ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութենէն:

Ա.Ռ.Ա.Զ.Ի.ԿԱՅ ՊԱՏԳԱՄ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Նկատելով որ երկու կուսակցութեանց շարքերուն միաձուլումը եւ ցըրւած ոյժերուն վերանորոգումը ժամանակի կը կարօտի, որոշուեցաւ քուսկանէս մօտ տարի մը վերջ գումարել Միացեալ Կազմակերպութեան անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը, այսինքն դէպի 1909 տարուայ գարունը. բայց ոչ աւելի ուշ քան այդ պայմանաժամը:

ԱՆՈՒԻՆ

Միացեալ Կազմակերպութեան անունը որոշուեցաւ.

«ՄԻԱՅՅԵԱԼ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ»

Այս կերպով միանգամ ընդ միշտ կը

դադրին առանձին գոյութիւն ունենալէ «Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւն», «Գաղափարակցական Միութիւն», կամ այս վերջնոյն բաղկացուցիչ մասերն եղող «Արմէնական Կազմակերպութիւն» եւ «Հայ Յեղափոխական Միութիւն» կուսակցութիւնները:

Իբր բացատրութիւն «Միացեալ» բառին, որոշուեցաւ մինչեւ առաջիկայ Պատգամ. Ընդհ. Ժողովը՝ նոր անուան տակ փակագծի մէջ նշանակել միաձուլող երեք կազմակերպութեանց նախկին անունները:

ՄԻՈՒԹԻՒՆ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Բանակցող լիազօրները իւրաքանչիւրն իր պատկանած կուսակցութեան Կեդրոնական Մարմնոյն պիտի ծանուցանեն միութեան կնիքովը. Կեդրոնական Մարմինները իրենց կարգին պիտի յայտարարեն միութիւնը իրենց Շրջանակներուն եւ քերթերուն:

Առժամեայ Կեդրոնական Վարչութեան կը մնայ

ա. Կատարուած միութիւնը ի գիտութիւն ծանուցանել հայ յեղափոխական միւս կուսակցութիւններուն.

բ. Բանակցութեանց ներկայ Ամփոփումը հաղորդել Միացեալ Կազմակերպութեան բոլոր Շրջանակներուն եւ ձեռք առնել շարքերուն միաձուլման բոլոր գործնական միջոցները.

գ. Պատրաստել Միացեալ Կազմակերպութեան նոր Ծրագիրը եւ Հիմնական Կանոնագիրը եւ գործադրութեան դնել զանոնք:

Միութեան բանակցութեանց ընդարձակ ատենագրութիւնը՝ որ հիմ պիտի բռնուի նոր Ծրագրի եւ Հիմնական Կանոնագրի պատրաստութեան, մէկ օրինակ խմբագրուելով եւ բանակցող լիա-

գործերէն ստորագրուելով կը դրուի Առ-
ժամեայ Կեդրոնական Վարչութեան տը-
րամադրութեան տակ:

Աղէքսանդրիա. 15 Սեպտեմբեր 1908

Գաղափարակցական Միութեան
Լիազօրներ
Միֆ. Նաթանեան Գ. Պէօգիկեան

Վերակազմեալ Հնչակ. Կուսակցութեան
Լիազօրներ
Մ. Տամատեան
Շաւարշ Հովիւեան
(Կնիֆ)

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Վերակազմեալ Հնչակեան Կուսակ-
ցութեան եւ Գաղափարակցական Միու-
թեան (Արմէնական - Միութենական)
միութեամբ կազմուած «Հայ Յեղափո-
խական Միացեալ Կազմակերպութիւնը»
Օսմանեան Սահմանադրութեան նոր պայ-
մաններու բերմամբ՝ որչափ ատեն որ
մեզմէ անկախ հանգամանքները մեզ չը-
սլարտաւորցնեն՝ դադրած ըլլալով այ-
լեւս յեղափոխական կազմակերպութիւն
մը լինելէ, իր ամբողջ կազմով կը միա-
խառնուի «ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ -
ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ» անու-
նով քաղաքական կուսակցութեան մէջ
որը հիմնուած է միացող կուսակցու-
թիւններու լիազօրներուն կողմէ հրաւիր-
ւած լուրջ եւ գիտակից անձնաւորութիւն-
ներէ:

Աղէքսանդրիա, 31 Հոկտեմբեր 1908

Ի դիմաց
Միացեալ Հայ Յեղափոխական Կուսակ-
ցութեան

Գաղափարակցական Միութեան
Լիազօրներ
Միֆ. Նաթանեան Գ. Պէօգիկեան
(Կնիֆ)

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան
Լիազօրներ
Մ. Տամատեան
Շաւարշ Հովիւեան
(Կնիֆ)

1908 թ. Դեկտ. 6 Գահիրէ
Ալէքսանդրիա

Սիրելի ընկերներ,

Ստացած ենք Դեկտ. 2 թուակիր Ձեր պաշտօնական գրութիւնը. ներփակ բանակցութեանց ամփոփումի ստորագրուած եւ կնիւած մէկ օրինակովը:

Փոխադարձաբար կը դրկենք Ձեզ ատոր ուրիշ օրինակ մը, ստորագրուած Գաղափարակցական Միութեան լիազօրներիս կողմէն եւ կնիւած Արմէնական Կազմակերպութեան կնիով. (Գաղփ. Միութիւն առանձին կնիք չունի) որով փոխանակուած կ'ըլլան երկու կողմի լիազօրների միջեւ Միութեան արդիւնքն եղող պաշտօնական արձանագրութիւնները:

Կը ցաւիմ որ, հակառակ մեր ջերմ փափաքին, կարելի չեղաւ մեզ մինչեւ այսօր (Կիրակի) գումարել Գաղափ. Միութեան եւ վեր. Հնչակեան Կուսակցութեան Գահիրէի մասնաճիւղերի անդամների միացեալ ընդհ. ժողով, հազորդելու համար անոնց Միութեան վերջնական կնիւմը եւ Միացեալ Կազմակերպութեան «Հայ Սահմանադրական - Ռամկավար Կուսակցութեան» մէջ միախառնուիլը: Յառաջիկայ Չորեքշաբթի օրուան յետաձգուած է ժողովը, որու համար լինելիք նախապատրաստութիւնները ձեռք առնուած են արդէն: Այս օրուան գումարուելիք Հ. Ս. Ռ. Կուսակցութեան ժողովին հետեւեալ չի պիտի կրնան ներկայ ըլլալ Միացեալ Կազմակերպութեան տեղւոյս ընկերները. բայց չենք կարծեր որ այդ արգելի կրնայ ըլլալ ժողովի աշխատանքներին եւ որոշումներին:

Վստահ ենք, որ դուք եւս, համաձայն ընկեր Տամատեանի ունեցած մեր տեսակցութեան, հրաւիրած էք մեր կողմէն տեղւոյդ մեր ընկերները ներկայ ըլ-

լալու Միացեալ Կազմակերպութեան անդամակցական ընդհ. ժողովին եւ յայտնելու անոնց հարկ եղածները: Մեր կողմէ գրուած է արդէն:

Ընկերային սիրալիր բարեւներով

Գաղափարակցական Միութեան
լիազօրներ

Միք. Նաթանեան Գ. Պէօգիկեան
(Կնիք)

Գազիւրէ 10 Դեկտեմբեր 1908 Ն. Տ.

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերակազմեալ Հնչ. կուսակցութեան եւ Գաղափարակցական Միութեան «Արմենական եւ Միութեանական» կազմակերպութեանց միջեւ, Միութեան առթիւ եղած բանակցութիւնները յաջողութեամբ աւարտելէ վերջ, Միութեան պաշտօնական կնիքով, դադրելով իւրաքանչիւրը իբր ուրոյն կազմակերպութեան գոյութիւն ունենալէ, համաձայն կուսակցութեանց Արագօրներուն համախոհ կարգադրութեան եւ հրահանգին, Միացեալ երկու Մարմիններուն՝ բնկերական ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ այս երեկոյ, Վերկով. Հնչ. Մասնահիւղի ժողովարահին մէջ ատենապետութեամբ բնկեր Պէօգիկեանի:

Ժողովը ունկնդրելէ վերջ Միացեալ Մարմիններուն բերանացի եւ գրաւոր տեղեկութիւններն ու հրահանգներն սրտագին ուրախութեամբ ողջունեց «Հայ Սահմանադրական Ռաւկավար Կուսակցութեան անունով քաղաքական կազմակերպութիւնը», զոր Վերկ. Հնչ. եւ Գաղափարակցական Միութեան Արագօրները ուրիշ անկախ հայրենասէր մտաւորականներու ջանքերով ու գործակցութեամբ կազմած էին, օժտելով զայն Ազգային արդի պահանջմանց եւ ռաւկավարական սկզբունքներու համապատասխան լայնիմաստ Ծրագրով մը, որուն շուրջ յօգուտ ազգային վերածնութեան հնարաւոր պիտի լինէր համախմբուիլ յեղափոխականներու հետ, ազգային պարտաւանդ անհատներն ու խմբակցութիւններն ալ:

Հետեւաբար լինելով հիմնադիր անդամները նոյն ազգային քաղաքական կուսակցութեան, այսօրու(ը)նէ իսկ լուծեալ կը համարին Վերկ. Հնչ. Յեղափոխական Կուսակցութիւն ու Գաղափա-

րակցական Միութիւն անունով ուրոյն կամ միացեալ մասնահիւղերուն գոյութիւնը ու անունները եւ սիրայօժար որդեգրելով կը համախմբուին Հայ Սահմանադրական Ռաւկավար քաղաքական նոր կազմաւորեալ համայնավար Ազգային դրօշի անուն տակ, զայն հաստատուն հիմերու վրայ բարձրացնելու առաջադրութեամբ ու գօտեպնդուած:

Գաղափարակցական Միութեան
Արագօրներ

Գ. Պէօգիկեան Միք. Նաթանեան
(կնիք)

Ի դիմաց Գահիրէի Վերկ.
Հնչ. Մասնահիւղի

Ատենադպիր Ատենապետ

Փ. Պալունի Սմբատ - Հրանդ
(կնիք)

ՇՐՋԱՆԵՐԱԿԱՆ - ՀՐԱՀԱՆԳ

ԹԻԻ 10

Հ. Ս. Ռ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՇՐՋԱՆԱԿԻ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՆ

Սիրելի ընկերներ՝,

Հ. Ս. Ռ. Կուսակցության 15րդ Պատգամ. ժողովին որոշումովը, Կուսակցությանն եւ Ազգայնական ու Ռամկավարական սկզբունքներու համակիր բոլոր տարրերու եւ մարմիններու միջեւ միութիւն մը գոյացնելու նպատակաւ ընտրուած մեր լիազօր Յանձնախումբը պաշտօնապէս հաղորդեց Նահանգ. Վարչութեան, թէ Վերակազմեալներու հետ եղած բանակցութիւններու ձախող ելքէն ետք [ստունց մանրամասնութիւնները ձեզ ծանօթ են]. Ամերիկահայ զանազան գաղութներու [Պոսթոն, Նիւ Եօք, Ուտորը, Փրալիտէնս, Սիրաքիւզ, Ֆրէզնօ, եւ այլն], ոչ-կուսակցական ժողովրդացիին խմբակցութիւններու լիազօր ներկայացուցիչներուն հետ կատարեալ համաձայնութիւն գոյացած է նոր կուսակցութեան անուան. ծրագրին եւ գործելակերպին մասին:

Կուսակցութեան անունը պիտի ըլլայ ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ:

«ԱԶԳ»-ը թերթը՝ իր անունով՝ պիտի մնայ Կուսակցութեան պաշտօնաթերթը:

Ծրագրին մէջ պահուած են մեր կուսակցութեան համար կենսական ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Կուսակցութիւնը պաշտօնապէս կը յայտարարուի Մայիս 10ին, «Ազգ»ի միջոցաւ:

Միաձայնութեամբ անցուած որոշման մը համաձայն Միութիւնը գոյացրնող լիազօրներու յանձնախումբը նորակազմ «ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ» ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ պիտի ըլլայ մինչեւ յառաջիկայ Պատգամաւորական ժողովը, որ պիտի գումարուի առ առաւելն երեք ամսուայ ընթացքին: Ներկայ Նահանգ. Վարչութիւնս իր հաշուետուութիւնը եւ փոխանցումը պիտի կատարէ, անմիջապէս, նորակազմ կուսակցութեան ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ. որ մօտ օրէն պաշտօնապէս շրջաբերականներով իր հրահանգները կը հաղորդէ ձեզի:

Մինչ այդ, դուք պիտի շարունակէ՛ք ձեր հին գործունեութիւնը՝ առանց երբեք թուրալու: Մենք մեծ հաւատք եւ որոշ պատիւառներ ունինք ձեզի բսելութէ, այս նոր ձեռնարկը շատ չ'անցած մեծ յաջողութիւն մը պիտի ըլլայ եւ իր շուրջ պիտի բոլորէ մեծ թուով գիտակից եւ յուրջ ազգայիններ: Արդէն Պոսթոնի. Նիւ Եօքի, Ուտորի, Փրալիտէնսի, Սիրաքիւզի, Ֆրէզնոյի եւ ուրիշ քաղաքներու մէջ հարիւրաւորներ պատրաստ կը սպասեն զալ միանալու: Զեզի կը մնայ այս նոր գատրին մէջ գործել իբրեւ խմբորդ տարր: Դուք պիտի ըլլաք աղբ այս նոր կուսակցութեան, դուք պիտի հալթայթէք մզիչ ոյժը եւ ձեռներէցութիւնը:

Մի մտնաք որ *կուսակցութեան առաջնորդը գրեթէ փոխուած չ'է եւ ոգին նոյնը կը մնայ*: Դուքսէն մեզի պիտի բերեն թուական ոյժ եւ մտաւոր կարողութիւն ալ, որոշ չափով: Այս բոլորին մէջ սակայն ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ ԵՒ ՆԵՐԿԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆ Է որ մեզ բոլորս կը մղէ ձեռք կարկառելու նորագոյն քաղաքական պահանջներուն արքնոյ այս ազգայիններուն: Ուրեմն, նախապաշարունակելէ չ'առաջնորդուինք: Դուքսը մեզ տակաւին պիտի նանչնան իբր ՌԱՄԿԱՎԱՐԱՆԵՐ:

Կուսակցութիւնը նիւթապէս ալ պիտի գործնայ եւ պատրաստ պիտի ըլլայ երկրի մէջ սկսուելիք մեծ գործին:

Վերջին երկու շաբթուայ ընթացքին
կուսակցութեան շարքերուն միացան 45
նոր ընկերներ, Նիւ Եօքի մէջ՝ 3, Լօրէն-
սի մէջ՝ 8, Ան Արպըրի մէջ՝ 4, Հէյվրի-
լի մէջ՝ 4, Հայլընտ Փարքի եւ Տիքսոյ-
քի մէջ՝ 11, Շիֆակոյի մէջ 2, եւ Պօսթո-
նի մէջ 13, նախորդ թւոյն հետ միատեղ
կ'ընէ 570 նոր ընկերներ, զորս Նահանգա-
յին վարչութիւնս սրտանց կը գնահատէ
եւ կը գովէ մեր բոլոր ընկերներու եռան-
դուն գործունէութիւնը:

Սիրելի՛ ընկերներ, շրջաբերականը
վերջացնելէ առաջ Նահանգային վար-
չութիւնս կուգայ յայտնել իր շնորհակա-
լութիւնները Հ. Ս. Ռ. կուսակցութեան
ենթա - Նահանգային վարչութիւննե-
րուն, Ակումբներուն եւ ընկերներուն, ի-
րենց ցոյց տուած կուսակցական ոգիին,
յանձն առած զոհողութիւններուն, եւ ե-
ռանդուն գործունէութեանց համար:
Վստահ ենք թէ մեր բոլոր ընկերները

միեւնոյն կուսակցական ոգիով, քաղա-
քական հասունութեամբ եւ ազգին ծառա-
յելու վսեմ գաղափարականով տոգոր-
ւած, այս փոխանցման փափուկ շրջա-
նին, գիտակցութիւնը պիտի ունենան ի-
րենց ուսերուն վրայ ծանրացող պատաս-
խանատութեան, եւ ըստ այնմ առաջ
պիտի երթան նոր ընկերներու հետ սըր-
տակից գործակցութեամբ:

Ընկերական սիրալիր բարեւներով,

Ի դիմաց՝ Հ. Ս. Ռ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ատենադպիր
Գ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Ատենապետ
ՏՕՔԹ. Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ

Մայիս 10, 1919, Պօսթոն Մէս

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ *

Յունիս Տի իրիկունը քաղաքիս Salle des Agriculteurs-ի մէջ տեղի ունեցաւ հիմնադրական հասարակութիւն Հայ Ազգային Ազատական Միութեան:

Նախաձեռնարկները, որոնք ստորագրած էին այդ հասարակական հրաւիրող կոչը՝ հետեւեալ անձերն էին.

Տոքթ. Արթինեան, Յ. Իսկէնտէր, Ա. Թերզիպաշեան, Վահան Թէքէեան, Արշակ Չօպանեան, Տոքթ. Ն. Տէր-Ստեփանեան, Գառնիկ Ֆնտքլեան, Լեւոն Կիւմիշկէրեան, Ռ. Գարիպեան, Պօղոս Էսմէրեան, Ն. Ներսէսեան, Տ. Քէլէկեան, Ս. Սիմոնեան, Ճ. Մալքոյժ, Իսկար Շաւին, Տիրան Ալեքսանեան, Տոքթ. Պ. Քօլօրեան, Մ. Էրամ, Ե. Մանուկեան, Դ. Մարրեան, Վ. Մեսրոպեան:

Բանախօսեցին ՊՊ. Ա. Չօպանեան որ կը նախագահէր, Գառնիկ Ֆնտքլեան եւ Տոքթ. Ն. Տէր-Ստեփանեան, որոնք պարզեցին պատճառները, որոնց համար այդ նախաձեռնութիւնը տոնել անհրաժեշտ նկատած էին:

ՊՊ. Վահան Թէքէեան եւ Աւետիս Թերզիպաշեան, իրր Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան անդամներ, իրենց անհատական համակրութիւնը բերին այս ձեռնարկին եւ յոյս յայտնեցին որ իրենց կուսակցութիւնը սիրալիք բնուէն իրութիւն պիտի ընէր եւ իր աջակցութիւնը պիտի նուիրէր այս նախաձեռնութեան:

Նախագահը կարգաց կազմակերպիչներու կողմէ խմբադրուած հետեւեալ որոշումը, զոր ներկաները, թուով մօտ 200 հոգի, ծափահարութիւններով բնորոշեցան.

* Կ'արտատպենք Հայ Ազգային Ազատական Միութեան Փառիզի պաշտօնաբերք «Հայաստան»ի Ա. թիւէն:

Մենք, Salle des Agriculteurs-ի մէջ 1919 Յունիս Տի հասարակական ներկայ գտնուող Հայերս, լսելէ յետոյ ՊՊ. Ա. Չօպանեանի, Գ. Ֆնտքլեանի, Ա. Թէրզիպաշեանի, Տոքթ. Տէր-Ստեփանեանի եւ Վ. Թէքէեանի բանախօսութիւնները,

Նկատելով որ վաղուան անկախ Հայաստանի մէջ, ազգային կեանքի կանոնադրման եւ զօրացման համար՝ իւրաքանչիւր Հայ քաղաքացիի անհրաժեշտ պարտքն եւ իրաւունքն է իր քաղաքական եւ քննիչական հայեացքներուն համարադրանոց կազմակերպութեան մը մէջէն ազդել հանրային գործունէութեան բնթացքին վրայ:

Նկատելով որ այն կազմակերպութեանց մէջ որ ղեկավար դերը պիտի կատարեն մեր ազատ հայրենիքին մէջ, անհրաժեշտ է գոյութիւնը ազգային յատուցութեան ազդու ազդակարգային կուսակցութեան մը:

Նկատելով որ արդէն իսկ Արեւմտահայոց մէջ Վերակազմեալ Հնչակեան եւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութիւնները եւ Արեւելահայոց մէջ Հայ Ժողովրդական կուսակցութիւնը ազգային ռամկավարական այդ նոյն սկզբունքներուն հիման վրայ կազմուած են:

Նկատելով որ այդ երեք կուսակցութեանց ձուլումը, որուն փափաքը շատոնց կը յայտնուի անոնց ղեկավարներուն կողմէ, այժմեան բարենպաստ պայմաններուն մէջ աւելի եւս բնական ու զիւրիկն պիտի ըլլայ:

Նկատելով որ այս վերջերս՝ մասնաւորապէս Սահմանադրական Ռամկավար եւ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեանց միջեւ բանակցութիւններ տեղի կ'ունենան ձուլումը իրականացնելու համար,

Կ'որոշենք կազմել Գործադիր Մարմին մը որ պաշտօն պիտի ունենայ, մէկ կողմէ՝ յարաբերութեան մասնէլ ալլը երեք կուսակցութեանց կեդրոնական վարչութեանց հետ՝ նպաստելու համար որ ձուլման մասին անոնց թափած ջանքերը բաղձալի արդիւնքին շուտով յանգին, եւ միւս կողմէ՝ ամէն ջանք ի գործ դնել, որպէսզի ալլ ուղղութեան կողմնակից բոլոր հայերը՝ այժմէն իսկ զիմելով Գործադիր Մարմնոյն կամ անոր մասնաճիւղերուն, անգամ արձանագրուին եւ իրենց բարոյական ու նիւթական օջակցութիւնը բերեն բոլոր ալլ համախոհ տարրերու միացմամբ կազմուելիք մեծ կուսակցութեան, որուն ծրագրերը իր գլխաւոր գծերուն մէջ կ'ամփոփենք սապէս՝

1.- Հայկական բոլոր հողամասերու միացմամբ կազմուած անկախ Հայաստան.

2.- Ռաւկալարական Խորհրդարանական կառավարութիւն.

3.- Հայերէնը պաշտօնական լեզու հալ պետութեան.

4.- Խղնի ու դաւանանքի կատարեալ ազատութիւն, եւ օրէնքի սոցիալական հաւաստանի բոլոր քաղաքացիներուն համար.

5.- Զրի եւ պարտադիր մանկական կրթութիւն.

6.- Պետական պարտաւորութիւն անհող եւ սակաւահող երկրագործներու բաւականաչափ հող ապահովելու.

7.- Ընկերական բոլոր անհրաժեշտ բարեկարգմանց ջերմ հոգածութիւն.

8.- Կանանց քուէարկութեան իրաւունք.

9.- Ժխտում հայրենասիրութիւնը բույցնող միջազգայնամոլութեան եւ անհատական մանապէսութիւնը խեղդել ձգտող հաւաքատիրական (Collectiviste) վարդապետութեանց:

«Կ'առաջարկենք՝ կազմուելիք մեծ կուսակցութեան համար «Հայ Ազգային Ազատական Միութիւն» անունը:

Այս բնոյժանուր ցանկութեանց շուտովայիտ եւ ամբողջական իրականացման համար, անհրաժեշտ կը նկատենք որ Գործադիր Մարմինը կազմակերպէ համաժողով մը, որ մեծ կեդրոնի մը մէջ կայանայ մօտ ատենէն եւ ուր վերոյիշեալ երեք կուսակցութեանց ինչպէս եւ ալլ կեդրոններու չեղոք Հայութեան ներկայացուցիչներ գան կատարել ծրագրի մանրամասն ու վերջնական խմբագրութիւնը եւ կազմել միացեալ կուսակցութիւնը, որուն կեդրոնատեղին պիտի ըլլայ Հայաստանի մայրաքաղաքը»:

– Յունիս 30ի իրիկունը տեղի ունեցաւ նոյն սրահին մէջ երկրորդ հաւաքում մը, որուն հրաւիրուած էին վարիդարեակ այն Հայերը որ արդէն իսկ իրենց հաւանութիւնը յայտնած էին Ազգ. Ազատական Միութեան անդամակցելու:

Բանախօսեցին ՊՊ. Զօպանեան, Թէքէեան, Արշակ Սափրաստեան եւ Մ. Միհրդատեանց, որ Պրիւքսէլէն եկած էր այս հաւաքման մասնակցելու:

Ներկայ էին Արեւելահայոց Ժողովրդական կուսակցութեան վարիչներէն՝ ՊՊ. Էնֆիլէճեան եւ Միքայէլ Պաղաճանեան. այս վերջինը բնագործակատնարանութեամբ մը գնահատեց եւ խրախուսեց նորահասաւոր կազմակերպութիւնը, եւ յայտնեց թէ Ժողովրդական կուսակցութիւնը ամենամեծ ուրախութեամբ պիտի ողջունէ այս երեւոյթը եւ պիտի նպաստէ բնոյժանուր միացման ծրագրին իրականացման:

Նախագահը կարդալէ յետոյ Փրօֆ. Թումանեանի համակրական մէկ նամակը, յայտնեց իր եւ իր բնակըներուն խորին ցար մահուանը առթիւ Պ. Յարութիւն Մասաչիւսեանի, որուն վաղաժամ անհետացմամբ ազգը կը կորսնցնէ ամենաթանկագին բազմալատար կործիչ մը

և և Ազատական Միութիւնը իր ամենա-
ջերմ համախոհ աջակիցներէն մին: Ներ-
կաները յոտնկալս յարգեցին հանգուց-
եալին յիշատակը: Յետոյ նախադաճը ա-
ռաջարկեց նախաձեռնարկներուն կողմէ՝
հետեւեալ անուններու ցուցակը, կազմե-
լու համար Միութեան զործադիր մար-
մինը

Յ. Իսքէնաէր, Տոքթ. Քօլօլեան,
Տոքթ. Տէր-Ստեփանեան, Էսկար Շա-
հին, Լեւոն Կիւմիւշիկերտան, Տոքթ. Ալ-
լահիւերաի, Գ. Սինապեան, Պօղոս Մսրը-
լը, Օ. Գարիպեան, Պօղոս Էսմէրեան,
Երուսնդ Աղաթօն, Ճ. Մալքօլմ, Փրօֆ.
Թումաճեան, Դ. Մսրեան, Մ. Միհրը-
ղատեանց, Արամ Ճէվաշիրճեան, Վ. Մա-
րաշեան, Ե. Թընկըր, Յ. Պարկիրճեան,
Վ. Թադւորեան, Կ. Կէվրէկ, Գ. Ֆնտըլլ-
եան, Արչակ Սաֆրատեան, Ն. Չամիշ-
եան, Տիգրան խան Քէլէկեան, Ներսէս
խան Ներսէսեան, Ս. Սիւսեան, Տիգ-
րան Կամսարական, Ա. Չօպանեան:

Ներկաները ծափահարութիւններով
ընդունեցան այս ցուցակը:

Գանի մը օր յետոյ զործադիր մար-
մինը ունեցաւ իր առաջին հաւաքումը եւ
գիւանը հետեւեալ անձերէն.

ՊՊ. Գրիգոր Սինապեան՝ ատենա-
պետ, Ա. Չօպանեան՝ զեր ատենապետ,
Տոքթ. Ն. Տէր-Ստեփանեան եւ Ա. Սաֆ-
րատեան՝ ատենադպիր, Պօղոս Էսմէր-
եան՝ դանձապահ, Վ. Մարաշեան, Ա-
րամ Ճէվաշիրճեան, Վ. Թադւորեան,
Կ. Կէվրէկ:

Դիւանը որոշեց հրատարակել շարա-
թաթերթ մը «Հայաստան» անունով, իբր
սլաշտօնաթերթ Միութեան:

Բոլոր մեր այն ազգակիցները, որ կը
համակրին Միութեանս ծրագրին եւ կ'ու-
ղեն անդամակցիլ ու աջակցիլ անոր, կը
խնդրուի որ իրենց հաւանութիւնը զրկեն
Միութեանս սլաշտօնատեղին, հետեւեալ
հասցէով՝

Union Nationale Libérale Arménienne
74. Rue Lafayette. PARIS

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերակազմեալ Հնչ. Կուսակցութեան
Ամերիկայի Նախագ. Վարչութեան

Յարգելի հայրենակիցներ,

Ներգրեալք՝ Հայ Ազգ. [այլին] Ազատական Միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած միացման նախապատրաստական խորհրդաժողովի աշխատութիւններուն արդիւնքն է: Օրինակներ զբերուած են երեք կուսակցութեանց ի մօտոյ գումարուելիք Պատգ. Ընդհ. Ժողովներուն, ինչպէս նաեւ տնոնց Հայաստանի, Կիլիկիոյ, Պոլսոյ, Ամերիկայի եւ Եղիպատսի Կեդրոնական կամ Գլխաւոր ներկայացուցչական մարմիններուն:

Խորհրդաժողովը՝ Ազգային շահերու տեսակէտէն հրամայողական բացարձակ պահանջ նկատեց եւ կատարելապէս հնարաւոր գտաւ երեք կուսակցութիւններու շուտափոյթ միացումը: Այս նպատակաւ անիկա ջանաց գիւրացնել միացման վերջնական համաժողովին գործը, իր կողմէ ընդունելով եւ կուսակցութեանց մօտալուտ Ընդհ. Պատգամաւորական Ժողովներուն որոշման ներկայացնելով միացման գործողութեան եւ ծրարագրի կարգ մը հիմնական կէտերը, խորհրդաժողովը ստիպողաբար եւ թախանձաւոր իր իրաւունքէն ամէն բանէ առաջ հայրենիքի շահը իրենց կէտ նպատակի ունեցող երեք կուսակցութեանց գերագոյն ժողովներուն՝ որպէսզի մանրամասնութիւններու վերաբերմամբ իրենց կարելի տարակարծութիւնները ստորագասեն միութեան մեծ հարցին, բոլոր այնքան հրահանգ տան իրենց ընտրելիք լիազօրներուն եւ յառաջիկայ խորհրդաժողովին մէջ գոյանալիք միութիւնը անկոչելի հռչակելէ ետք՝ միացեալ կուսակցութեան մէկ տարի ետքը գումարուելիք առաջին Ընդհ. Պատգ. Ժողովին թողուն անխորարար կատարել

անհրաժեշտ երեւցող ծրագրային եւ այլ բարեփոխումներ:

Վստահ ըլլալով թէ այս առաջարկը, իրրեւ միակ գործնական միջոց ամէնքին կողմէ հետապնդուած ձեռնարկին իրականացման, կը համապատասխանէ արդէն Ձեր փափաքին, եւ պիտի գտնէ Ձեր սպասարատական ընդունելութիւնը, խորհրդաժողովս ինքզինք բարեբախտ կը համարէ այս նուիրական գործին աշխատակցիլ կոչուած ըլլալուն համար եւ կը ներկայացնէ Ձեզ, յարգելի հայրենակիցներ, իր ջերմ մագթանքներն եւ բնկերական սիրալիր ողջոյնները:

Փարիզ, 4 Օգոստոս 1920

Վահան Թէֆէեան

Միքայէլ Պապաջանեան

Աւետիս Թերգիպաշեան

Արշակ Զօպանեան

Նշան Տէր Ստեփանեան

Յ. Գ.

Հաճեցէք Ձեր սպասախանր հասցնել նամակով կամ հեռագրով Հայ Ազատական Միութեան Գործադիր Մարմնոյն, հետեւեալ հասցեով՝

A. Tchobanian

9 Rue Gay

Paris (France)

Հայ Ազատական Միութեան նախաձեռնութեամբ՝ ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցչին եւ Ռամկավար Կուսակցութեան երկու վարիչ անդամներու մասնակցութեամբ անցեալ տարուան ընթացքին Փարիզէն քրթակցութիւններ եւ բանակցութիւններ կատարուած էին, Հայ ժողովրդական, Ռամկավար եւ Վեր. Հնչակեան կուսակցութեանց մարմիններու հետ, անոնց ամենքին միացումով դեմոկրատիկ սկըզ-

բումբներու վրայ հիմնուած ազգային ուժեղ կուսակցութիւն մը կազմելու համար:

Առջն բանակցութեանց հետեւանօք որոշուած էր Փարիզի մէջ գումարել վերոյիշեալ մարմիններու լիազօր ներկայացուցիչներով կազմուած նախապատրաստական ժողով մը՝ նպատակ ունենալով միութեան իրագործման համար անհրաժեշտ եղող նախնական աշխատանքներ կատարել եւ միանալ կոչուած կողմերուն խորհրդակցութեան ենթարկել այն մի բանի հիմնական սկզբունքները. որոնց մասին կանխորոշ հասկացողութիւն մը մեծապէս պիտի դիւրացներ միութեան լիակատար ժողովին աշխատութիւնները:

Այդ նախապատրաստական ժողովը տեղի ունեցաւ Փարիզի մէջ 1920 Յուլիս 25-30-ին: Անոր մասնակցեցան իբրեւ լիազօր պատուիրակ Հայ ժողովրդական կուսակցութեան կողմէ Մ. Պապաջանեան, Ռամկավար կուսակցութեան կողմէ Վ. Թէֆէեան եւ Ա. Թէրզիպաշեան, Ազատական Միութեան կողմէ Ա. Զօրանեան եւ Ն. Տէր Ստեփանեան: Ժողովին աշխատութեան մասնակցեցան նաեւ Պ. Էնֆիլէնեան (Ժող. կուս.) Մ. Միքըրդատեանց (Ա. աւտ. Միութ.) եւ Կ. Փափագեան (Ռամկ. կուս.): Վերակազմալ Հնչակեան կուսակցութեան Ամերիկայի Նահանգային Վարչութիւնը Ազատ. Միութեան Գործադիր Մարմնէն իմացուցած էր հետագրով թէ՛ Պոլսէն իրենց երկու ընկերները պիտի գային մասնակցելու խորհրդածողովին, բայց այդ կուսակցութեան Պոլսոյ Նահանգային Վարչութեան կողմէ Յունիս 29 թուական պաշտօնական նամակ մը կը յայտնէ որ հակառակ իրենց փափագին իրենց երկու ընկերներուն անհնար եղած է ներկայ ըլլալ նախապատրաստական ժողովին ու կ'աւելցնէր. «Կը յուսանք որ ժողովին աշխատութիւնները որոնք նախնական

բնոյթ կը կրեն անշուշտ, յաջողութեամբ պիտի վերջանան, որուն համար մենք ի սրտէ բաղաճառով ենք, միայն պիտի խնդրէինք որ արդիւնքին մասին մեզ իրազեկ պահէք եւ տրուած որոշումներու մասին մեզ գրէք, որպէսզի մենք ալ ի վիճակի ըլլայինք մեր կարծիքներն ու տեսակէտները բանաձեւել, առաջիկայ Ընդհանուր ժողովին մասնակցելու համար»: Խորհրդածողովս խնդրոյ առարկայ եղող հարցերը բնութեան ենթարկելէ յետոյ, յանգեցաւ հետեւեալ եզրակացութեանց:

Ա. Միաձայնութեամբ անհրաժեշտ եւ բացարձակապէս կարելի գտաւ ժողովրդական եւ Ռամկավար կուսակցութեանց անմիջական միացումը վստահ ըլլալով թէ Վեո. Հնչակեան կուսակցութիւնը եւս՝ նկատի ունենալով իր յայտնած տրամադրութիւնները, համամիտ եւ ջանադիր պիտի գտնուի միութեան հորագործման:

Բ. Ազատական Միութիւնը իր կազմուած օրէն բազմաթիւ կեդրոններէ խնդրանք ուտացած էր անդամներ արձանագրելու եւ մասնաճիւղեր կազմելու: Միութեան Գործադիր Մարմինը, սակայն, նախընտրելի գտած էր պահպանել այդ խմբակցութեան բուն նպատակը, որ էր միջնորդ եւ միութեան գիծ հանդիսանալ երեք համախոհ կուսակցութեանց միջեւ: Նախապատրաստական խորհրդածողովս նպատակաւարմար գրտաւ այդ եղանակ եւ որոշեց որ Ազատ. Միութիւնը պահպանէ իր միջնորդի դերը, մինչեւ վերջնական խորհրդածողովը, եւ ձուլուի կատարուելէ յետոյ միացեալ կուսակցութեան, կուսակցութեան տնօրէն խորհուրդը ինքն իսկ ձեռնարկէ անկախ եւ չէզոք տարրերու կազմակերպութեան:

Գ. Նկատի ունենալով որ ժողովրդական կուսակցութեան տարեկան համագումարը տեղի պիտի ունենայ յառա-

ջիկայ Սեպտ. 12-ին Երեւանի մէջ, իսկ Ռամկավար ինչպէս նաեւ Վեր. Հնչակեան կուսակցութեանց պատգամաւորական ժողովները տեղի կ'ունենան Պոլիս յառաջիկայ Օգոստոս ամսոյն ընթացքին. նախապատրաստական խորհրդաժողովը տեղի ունենայ Նոյ. 1-ին եւ հաւաքատեղին ըլլայ Պոլիս, որ իբրեւ կեդրոնավայր մասնաւոր դիւրութիւններ կ'ընծայէ արդի պայմաններու մէջ:

Իւրաքանչիւր կուսակցութիւն ինչպէս եւ Ազատ. Միութիւնը այդ վերջնական համաժողովին կը մասնակցին առնուազն երկու եւ առաւելեւ 5 պատուիրակով: Ամէն հարց կը վնասի ոչ թէ ձայներու մեծամասնութեամբ, այլ կողմերու համաձայնութեամբ: Ժողովրդական, Ռամկավար եւ Վեր. Հնչակեան կուսակցութիւնները իրենց մօտակայ Պատգ. Ընդհ. Ժողովներու մէջ կ'ընտրեն վերջնական համաժողովին համար իրենց պատուիրակները, տալով անոնց լիազօր իրաւունք՝ միացման վերաբերեալ բոլոր հարցերը վնասելու: Եթէ պատահի որ լիազօրներու համաժողովը չի կրնայ համաձայնիլ ծրագրային տեւեխներու շուրջ, անոր վերջնական որոշումը կը յետաձգուի միացեալ կուսակցութեան Ա. համագումարին:

Դ. Լիազօրներու համաժողովը կը կազմէ միացեալ կուսակցութեան ծրագիրը եւ կանոնագիրը եւ կ'որոշէ միացեալ կուսակցութեան Ա. համագումարին տեղը եւ ժամանակը: Նախընտրելի է որ այդ համագումարը տեղի ունենայ 1921-ի աշնան Հայաստանի մայրաքաղաքին մէջ: Լիազօրներու համաժողովին պատրաստած ծրագիրը պարտաւորիչ պէտք է ըլլայ մինչեւ Ա. համագումարը:

Ե. Լիազօրներու համաժողովը կ'որոշէ միացեալ կուսակցութեան շրջանային վարչական բաժանումները, որոնք կը կառավարուին ասպակեդրոնացման սկզբունքով, եւ կը գծէ բաղկացուցիչ շրջ-

ջաններու իրաւասութեանց եւ փոխադարձ յարաբերութեանց պայմանները:

Զ. Լիազօրներու համաժողովը կ'որոշէ Ա. համագումարին կազմութեան եղանակը, նշելով իւրաքանչիւր շրջանի ներկայացուցչութեան համեմատութիւնը:

Է. Լիազօրներու համաժողովը որոշելէ յետոյ միութիւնը՝ կը կազմէ միացեալ կուսակցութեան Գերագոյն խորհուրդը որ կը բաղկանայ 10 անդամներէ: Իւրաքանչիւր Պատգ. ժողով կանխաւ ընտրած պիտի ըլլայ երեքական անդամ եւ Ազատական Միութիւնը մէկ անդ, Գերագոյն խորհուրդին անդամակցելու համար: Գերագոյն խորհուրդին պաշտօնաշրջանը կը տեւէ մէկ տարի կամ մինչեւ միացեալ կուսակցութեան Ա. համագումարը: Գերագոյն խորհուրդը ինք կ'ընտրէ իր կեդրոնատեղին: Նախընտրելի է որ ան ըլլայ Հայաստանի մայրաքաղաքին մէջ:

Ը. Գերագոյն խորհուրդը իբր ընդհանուր ղեկավար մարմին կը վարէ կուսակցութեան ներքին եւ արտաքին ընդհանուր քաղաքականութիւնը, կ'որոշէ կուսակցութեան գործելակերպը (քաբիք), յարաբերութեան մէջ կ'ըլլայ շրջաններու կեդրոնական վարիչ մարմիններու հետ եւ անոնց վրայ կը կատարէ վերահսկողութիւն:

Թ. Ազատական Միութեան Գործադիր Մարմինը, ժողովրդական եւ Ռամկավար կուսակցութեանց տնօրէն մարմինները, ինչպէս նաեւ Վեր. Հնչակեան կուսակցութեան տնօրէն մարմինը (եթէ համաձայն ըլլայ) մինչեւ միացման վերջնական ժողովը ջանադիր պիտի ըլլան ֆօնտ մը գոյացնել զայն դնելու համար միացեալ կուսակցութեան տրամադրութեան տակ:

Ժ. Բաղդատական ֆննութեան մը ենթարկելով ժողովրդական, Ռամկավար եւ Վեր. Հնչակեան կուսակցու-

թեանց ծրագիրները, խորհրդատուական ղեկավարներու համար միացեալ կուսակցութեան ծրագրին յօրինումը, որոշեց պատգամաւորական ժողովներուն ներկայացնել հետեւեալ էական սկզբունքները որք իբրեւ հիմ կը ծառայեն միացեալ ծրագրին:



1.- Միացեալ անկախ Հայաստանի իրականացումը եւ զարգացումը:

2.- Պաշտպանութիւն Հայկական Պետութեան սահմաններէն դուրս մնացած հայ ազգաբնակչութեանց իրաւունքներուն:

3.- Հանրապետական կառավարութիւն՝ հիմնուած դեմոկրատիկ սկզբունքներու վրայ:

4.- Ազատութիւն խօսքի, խղիւղի եւ դաւանանքի:

5.- Բոլոր քաղաքացիներու հաւասարութիւնը օրէնքի առջեւ:

6.- Անձեռնմխելիութիւն անձի եւ բընակարանի:

7.- Ընդհանուր, ձրի եւ պարտադիր դաստիարակութիւն:

8.- Պահպանում Սեփականութեան սկզբունքին եւ քաջակերութիւն անհատական նախաձեռնութեան:

9.- Պետական վերահսկողութիւն աշխատութեան եւ դրամագլուխի արդար եւ համերաշխ գործակցութեան վրայ:

10.- Ազատութիւն բանտարական միութիւններու եւ ժողովներու եւ իրաւունք գործադուլի:

11.- Ուր-ժամեայ աշխատութեան աստիճանական ներուժումը ուր որ հնարաւոր է:

12.- Պարտաւորիչ ապահովագրութիւն բանտարներու ընդդէմ արկածի, հիւանդութեան, ծերութեան եւ անգործութեան:

13.- Տուրքերու բաշխում յառաջատուական դրութեամբ:

14.- Հայերէնի գործածութիւն իբրեւ պետական լեզու:

15.- Պետութեան եւ եկեղեցիի անջատում:

16.- Պարտադիր զինուորական կրթութիւն եւ ծառայութիւն:

17.- Դատական եւ վարչական իշխանութեանց բաժանում: Դատաւորները անկախ եւ անփոփոխելի: Դատաւարութիւն հրապարակաւ:

18.- Սահմանադիր ժողովի, խորհրդարանի եւ բոլոր ներկայացուցչական մարմիններու ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի քուէարկութեամբ, առանց սեռի, ցեղի եւ դաւանանքի խտրութեան:

19.- Մանտաքեր պետութեան մը տալահովումը որոշ ժամանակամիջոցի մը համար, իբրեւ Ազգերու Ընկերակցութեան հովանաւորութիւնը գործադրող:

20.- Հայաստանի բոլոր հողերը տնտեսականօրէն կը ստականին Հայ Պետութեան:

Պետութիւնը հողի վերաբեւմամբ իր իրաւունքները կը փոխանցէ անհատներու եւ ընկերութիւններու, պայմանաւ որ անոնք մշակեն ու արդիւնաւորեն այդ կերպով իրենց տրուած հողերը:

Միեւնոյն պայմաններով պետութիւնը կը փանչնայ անհատներու եւ ընկերութիւններու ներկայիս ունեցած հողային տիրութեան իրաւունքները:

Անհատներու եւ ընկերութիւններու սեփական հողերու *հորժան* (տարածութեան եւ որակի չափ) կ'որոշուի իւրաքանչիւր երկային շրջանի համար յատուկ յանձնաժողովներու միջոցաւ եւ պետական օրէնքի մը հիման վրայ:

Ըստ վերոյիշեալ սկզբունքներու պետութիւնը իրաւունք ունի բռնագրաւելու անհատներու եւ ընկերութիւններու սեփական իւրաքանչիւր շրջանի յատուկ *հորժա*՝ ւնեւի եղող հողերը, արդար հատուցում ընելով անոնց տէրերուն:

Բռնագրաւման չեն ենթարկուիր այն հո-
ղերը, որոնք թէեւ *հորմայէն* աւելի բայց
հանրային օգտակարութիւն մը կը ներ-
կայացնեն, ինչպէս նաեւ այն հողերը,
որոնք իբրեւ պարտեզ, այգի, բանջարա-
նոց կամ բուծարան, իրենց վրայ կը կը-
րեն մասնաւոր աշխատանքի մը եւ ծախս-
ներու արդիւնքը:

Ի նկատի ունենալով որ ազատագ-
րուելիք Թրքահայաստանի մէջ գիւղա-
ցիութեան պէտքերուն լայնօրէն գոհա-
ցում տրուելէն ետքը կը մնան դեռ շատ
ընդարձակ հողեր, եւ նկատելով որ մաս-
նաւոր քաջակերութեան կը կարօտին
գաղթականութեան վերադարձը եւ երկ-
րին տնտեսութեան զարգացման անհրա-
ժեշտ դրամագլուխի մուտքը, վերոյիշ-
եալ *հորմի* պայմաններով բռնագրաւումի
սկզբունքը Թրքահայաստանի մէջ կը կի-
րարկուի այն ատեն երբ կառավարու-
թեան կողմէ ատոր պէտքը զգացուի:

Պետութիւնը ճիշդաբար կը հայթայ-
թէ բաւականաչափ մշակելի հող՝ հողա-
գուրկ կամ սակաւահող գիւղացիներուն:

Համագգային նշանակութիւն ունե-
ցող եւ ամբողջ հայ ժողովուրդին նուիրա-
բերմամբ գոյացած վանքերու, եկե-
ղեցիներու եւ վարժարաններու սեփական
հողային ստացումները եւթակայ չեն
բռնագրաւմամբ սեփականագրկութեան:
Պետութիւնը կը հսկէ սակայն անոնց ար-
դիւնաւոր գործածութեան վրայ, ի միջի
այլոց այն նպատակով որ շրջանի բնակ-
չութիւնը չգրկուի այդ հողերուն միջոցա-
րէ ապրուստը ապահովելու հնարաւորու-
թեանէն:

Հաշտութեան դաշնագրի տրամադ-
րութեան համաձայն Հայաստանի մէջ
վագրֆային հողերու վրայ իսլամ հասա-
րակութեան մասնաւոր իրաւունքները կը
պահպանուին, ինչպէս որ Թիւրքիոյ մէջ
հայերու կրօնական եւ դպրոցական հաս-
տատութեանց կալուածներու վրայ պահ-
պանուած են հայերու իրաւունքները:

Երկրին հանգային եւ ջրային հարս-
տութիւնները պետական սեփականու-
թիւններ են, անոնց շահագործումը ան-
հատներու եւ ընկերութեանց կը տրուի
մասնաւոր վերահսկողութեան իրաւուն-
քով մը:

Վահան Թէքէեան

Միլիթարի Պապարջանեան

Աւետիս Թէրզիպաշեան

Արշակ Զօպանեան

Նշան Տէր Ստեփանեան

3. Գ.

Խորհրդածոյովին աշխատութիւն-
ներն վերջացած էին, երբ օգտուելով
վեր. Հնչակեան կուսակցութեան վարիչ
անդամներէն Պ. Հրաչ Երուանդի Փարիզ
ներկայութիւնէն, բացառիկ նիստի մը
մէջ պատեհութիւն տրուեցաւ որ անկա-
ծանօթանայ կատարուած աշխատանք-
ներուն եւ իր եզրակացութիւնները հա-
ղորդէ այդ կուսակցութեան Ամերիկայի
եւ Պոլսոյ վարչութիւններուն:

Պ. Հրաչ Երուանդ ծանօթանալէ ետք
կատարուած աշխատութիւններուն յայտ-
նեց իր համակրանքն եւ խոստացաւ որ
հարկ եղածը տեղեկագրէ ուր որ անկ է:

ՊԱՏՃԷՆ ՌԱՄԿԱՎԱՐ ԵՒ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ*

ՆԻՍ Ա.

Ռամկավար եւ Վերակազմեալ Հըն-
չակեան կուսակցութեանց կողմէ միաց-
ման մասին յայտնուած բոլորն փախա-
քով՝ երկու կուսակցութեանց ընդհ.՝
պատգմ. ժողովներու կողմէ ընտրուած
երեքական լիազօրներու, թուով վեց,
պաշտօն յանձնուած ըլլալով սոյն նպա-
տակին իրազօրեման համար սկսիլ բա-
նակցութիւններու, Լիազօրներու առա-
ջին ժողովը տեղի ունեցաւ 1921 Յունիսար
1 (Նոր տոմար) ժամը ճիշդ 3-ին «Պէք-
եար» փողոց, 22 թիւ, Տօքթ. Գուլումճե-
եանի սենեակը եւ կատարուեցան հե-
տեւեալ նախապատրաստական աշխա-
տութիւնները:

Ա.- Միաձայնութեամբ ատենապետ
ընտրուեցան Տիարք Միհրան Սըվազլը եւ
Ա. Թէրզիպաշեան, սոյն պաշտօնը փոխն
ի փոխ վարելու համար:

Բ.- Նոյն պայմանով ատենադպիր
ընտրուեցան Տիարք Գրիգոր Պէօզիկեան
եւ Միհրան Վ. Գալֆայեան:

Գ.- Որոշուեցաւ չարաթը երեք դի-
շերային ժողով ունենալ՝ Գշ., Եշ. եւ
Շր. օրերը, ժամը ճիշդ 9ին:

Դ.- Լիազօրութեան հարցը բարձրա-
ցուելով, որոշուեցաւ ընդհանուր պատ-
գամաւորական ժողովներու կողմէ փոխա-
նակուած պաշտօնական նամակները բն-
դունիլ որպէս լիազօրութեան գիր:

* - Ռ.Ա.Կ. Կեդրոնական Արխիւին մէջ գը-
տանք երկու օրինակ ներկայ բանակցութեանց
պատճենէն, մին՝ Հրաչ Երուանդին ձեռագրով:
Կու տանք բաղդատաբար համադրուած օրինակը:

Նշենք թէ երկու պատճեններուն տարբերու-
թիւնները արդիւնք ըլլալու են անուշադիր ար-
ձանագրութեան:

Հաստատուեցաւ թէ երկու կողմի
լիազօրները բացարձակ իրաւասութիւն
ունին միութիւնը կնքելու եւ յայտարար-
ելու: Թէեւ Վեր. Հնչակեան կուսակ-
ցութեան Ընդհ. Պատգմ. ժողովը զեռ կը
չարունակուի, բայց այս խնդրոյ շուրջ
իր վերջնական որոշումը տուած եւ իր
ներկայացուցիչները լիազօրած է:

Վերոյիշեալ խնդիրները քննուելէ եւ
որոշուելէ վերջ կազմուեցաւ հետեւեալ
աշխատութեանց ծրագիրը:-

ԾՐԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Ա.- Քննութիւն ծրագրի եւ սկզբ-
բունքներու:

Բ.- Գործիքակերպ,

Գ.- Քննութիւն կազմական կանո-
նադրի,

Դ.- Միացման ձեւակերպութիւննե-
րը:

Ժողովը փակուեցաւ ժամը 4:20-ին,
յառաջիկայ ժողովը տեղի կ'ունենայ Գշ.
դիշեր ժամը 9-ին, Ֆէրիաիէ թիւ 48,
Տիար Արամ Ինճիճեանի բնակարանը:

Ներկաներ

Ռամկ. Կուսակց. կողմէ

Տիար Ա. Թէրզիպաշեան

Տիար Ա. Ինճիճեան

Տիար Գ. Պէօզիկեան

Վեր. Հնչ. կուսակց. կողմէ

Տիար Պ. Տէրոյեան

Տիար Մ. Գալֆայեան

Ծանօթութիւն.- Այս ժողովին ա-
տենապետն էր Տիար Ա. Թէրզիպաշեան,
ատենադպիրը Մ. Վ. Գալֆայեան, Տիար
Մ. Սըվազլը կը բացակայէր հիւանդու-
թեան պատճառաւ:

ԺՈՂՈՎ Բ.

4 Յունվար 1921

Ժողովրդային տնտեսական ժամը 9:15-ին
Պ. Արամ Ինճիճեանի բնակարանը: Ատե-
նապետը Տիար Ա. Թէրզիպաշեան, ատե-
նադպիր Տիար Մ. Գալֆայեան:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ա.- Ատենադպրութիւնը երկու օրի-
նակ պիտի բլլայ, մէկ-մէկ օրինակ իւրա-
քանչիւր կողմին տրուելու համար:

Բ.- Աշխատութեանց ծրագրին առա-
ջին մասը թողլով յառաջիկայ ժողովին,
որոշուեցաւ սկսիլ Բ. մասը կազմող
«Գործելակերպ»ի վիճարանութեան:

Գ.- Ներքին հարցերու շուրջ յեղա-
փոխութիւն չենք բնդունիր, օրինակ՝ պե-
տական հարուած եւ այլն. ապաստահա-
նադրական միջոցներով:

Միացեալ կուսակցութիւնը ի նկատի
առնելով Ռուսիոյ եւ Կովկասահայաստա-
նի ներկայ քաղաքական անորոշ դրութիւ-
նը՝ ինք կը ստանձնէ նախաձեռնութիւնը
հետապնդելու թրքահայ ժողովրդի ֆի-
զիքական գոյութիւնը եւ Սէվրի դաշնագ-
րով անոր ճանչցուած քաղաքական իրա-
ւունքները, միշտ վերջնական նպատակ
ունենալով Միացեալ Անկախ Հայաստա-
նը:

Միացեալ կուսակցութիւնը կ'ընդ-
գրէ կիլիկեան քաղաքականութիւն մը,
ունենալով որպէս նուազագոյն նպատակ
կիլիկեան ինքնավարութիւն՝ Փրանսա-
կան մանաւանդ տակ, համաձայնելով աե-
ղական տարբերու հետ, ըստ կարեւոր
պահանջով տեղւոյն հայկական բնոյթը:

Ներկաներ

Ռամկ. Կուսկց. կողմէ

Տիար Ա. Թէրզիպաշեան

Տիար Ա. Ինճիճեան

Տիար Գ. Պէօզիկեան

Վեր. Հնչ. Կուսկց. կողմէ

Տիար Մ. Սրվազլը

Տիար Պ. Տէրոյեան

Տիար Մ. Գալֆայեան

ՆԻՍՏ Գ.

1921 Յունվար 6

Ժողովրդային տնտեսական ժամը 10-ին ընդ ա-
տենապետութեամբ Տիար Թէրզիպաշեա-
նի, ատենադպիրն էր Գ. Պէօզիկեան:

Օրակարգ

1.- Քննութիւն ծրագրի, սկզբունքի
եւ կազմական կանոնադրի:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1.- Կարգացուելով Ռամկավար Կու-
սակցութեան ծրագրին ու կազմական
կանոնադրը, տեսուեցաւ որ անոնց
ընդհանուր գիծերուն մէջ երկու կուսակ-
ցութիւններն ալ համամիտ են:

Եւ որովհետեւ Վեր. Հնչակեան Կու-
սակցութեան ծրագրի պատրաստութիւ-
նը վերջնականապէս աւարտած չէր,
կարգացուած ծրագրէն մէկ օրինակ յանձ-
նուեցաւ Վեր. Հնչակեան լիազօրներուն,
ուսումնասիրելու համար անոր մանրա-
մասնութիւնները եւ յառաջիկայ Գշ. օր-
ւան նիստին բերելու իրենց դիտողու-
թիւնները:

Յաջորդ նիստը որոշուեցաւ ընել յա-
ռաջիկայ Կիրակի իրիկուն, 9 Յունուար
1921, ժամը 9-ին, Տիար Ա. Թէրզիպաշ-
եանի բնակարանը:

ՆԻՍՏ Գ. ԵՒ Ե.

9 Յունվար 1921 Կիրակի

11 Յունվար 1921

Ատենապետ Ա. Թէրզիպաշեան

Ատենադպիր Մ. Գալֆայեան

Տիար Ա. Թէրզիպաշեանի բնակարանը նիստը բացուեցաւ ժամը 10-ին...
Օրակարգն էր Ազգ. քաղաքականութեան նկատմամբ միացեալ կուսակցութեան զիջքը հանդէպ միւս կուսակցութեանց:

Երկար վիճարանութիւններէ վերջ, վերջնական որոշումը յետաձգուեցաւ յաջորդ ժողովին, որ տեղի ունեցաւ 11 Յունուար 1921, Գշ. զիշեր ժամը 9-ին, Տիար Թէրզիպաշեանի բնակարանը, վեղ լիազօրներու ներկայութեան, եւ տրուեցաւ հետեւեալ որոշումը:

1.- Միացեալ կուսակցութիւնը իրեն հարադատ թարգմանը հալ ազգային իրականութեան՝ կը ստանձնէ առաջնորդող դեր ազգ. քաղաքականութեան մէջ, եւ միւս կուսակցութիւններու հետ կը դործակցի ալն պարագային միայն, երբ ազգ. դերագոյն պահանջները կը պարտադրեն զինքը:

Ընկեր Արմազըր ի դիմաց Վերակազմեալ Հնչակեան լիազօրներու յայտարարեց թէ իրենք համամիտ են Ռամկավար լիազօրներու հետ սկզբունքային խնդիրներու նկատմամբ եւ առաջարկեց նախապատուութիւն տալ միացեալ կուսակցութեան անունը որոշելու խնդրոյն: Ընկեր Արմազըրի յայտարարութիւնը ընդունուելով որոշուեցաւ օրակարգի անցնել միացեալ կուսակցութեան անունը որոշելու հարցը:

Օրակարգ

1. ԱՆՈՒՆԻ ԽՆԴԻՐԸ

Ընկեր Գալֆայեան յայտնեց թէ իրենց Պատգամ. Ժողովը որոշած ըլլալով բոլորովին նոր անուն մը տալ միանալիք կուսակցութեանց, առաջարկեց մերտէլ միացեալ կուսակցութիւնը «Ազատական Ժողովրդավարական» անունով:

Ասոր ի պատասխան ընկեր Ինճիճեան յայտնեց թէ Ռամկ. կուսակց. Պատգամ. Ժողովը իրեն հակա պայման

միութեան, բացորոշապէս յայտնած է որ միանալիք կուսակցութեան անուն մէջ անպատճառ Ռամկավար բառը պիտի պահուի, հետեւաբար ինք կը կարծէ, թէ Ռամկավար բառին քով ուրիշ յարմար բառ մը աւելցնելով արդէն նոր անուն մը ստեղծուած կ'ըլլայ, քանի որ մեր կուսակցութիւնը արդէն իսկ փոխած է անունը՝ Ռամկավար բառին հետ կցուած միւս բառերուն ջնջումով:

Ընկեր Թէրզիպաշեան.- Ազատական անունը նոր անուն չի կրնար ըլլալ, քանի որ Վեր. Հնչակեան կուսակցութեան Պոլսոյ շրջանակը երկու տարիէ ի վեր զայն պաշտօնապէս կը դործածէ իր անվան անուն:

Ընկեր Գալֆայեան.- Յայտնեց թէ Պոլսոյ շրջանակի կողմէ առանձնապէս դործածուած Ազատական բառը, կուսակցութեան պաշտօնական անունը չէ, եւ չի կրնար ալ ըլլալ: Մեր կուսակցութեան պաշտօնական անունն է «Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւն», եւ ինչպէս որ ամէնու ծանօթ է, կուսակցութեան մը անուն փոփոխութիւնը միմիայն Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին իրաւասութեան սահմանին մէջ է, եւ ան է որ կրնալ նոր անուն մը որոշել:

Ընկեր Թէրզիպաշեան.- Անգամ մը եւս չեշտեց թէ Ազատական անունը պաշտօնապէս դործածուած է:

Ընկեր Ազմազըր.- Յայտնեց թէ իրենք չեն պնդեր Ազատական բառին վերայ, ալ կ'ուզեն որ երկու անուններն ալ վերցուն, եւ աւելցուց թէ Ռամկավար բառը չի մարմնացներ իւր մէջ մեր ընդգրկած սկզբունքները, ալ Ազատական տառն է որ որոշապէս կ'արտայայտէ ալս առանձնաբեր:

Ընկեր Պէօգիկեան.- Առաջարկեց, քանի որ Ռամկավար անունը բացորոշապէս կը մարմնացնէ երկու կուսակցութիւններու ալ սկզբունքները, ինչո՞ւ ալ բառը ջնջուի: Եթէ ժողովրդավարական

բառը պէտք է գործածել, աւելի լաւ չէ՞ որ ասոր հոմանիշ բառը եւ ընդհանրացած Ռամկավար բառը գործածուի:

Ընկեր Գալֆայթան.— Համաձայն մեր Պատգամաւորական Ժողովէն մեզ տրուած հրահանգներուն՝ կ'առաջարկեմ երկու կողմի անունները թողլով բոլորովին նոր անունով մը զուրս դալ. ես կը կարծեմ թէ ասիկա այն միակ լուծումն է, որ կրնայ գոհացնել երկու կողմն ալ:

Ընկեր Իննիսեան.— Շեշտած ըլլալով Ռամկավար բառին քով ուրիշ բառ մ'ալ աւելցնելով նոր անուն մը կազմութիւնը, ընկեր Թէրզիպաշեան հետեւեալ կերպով արտայայտուեցաւ, որուն համաձայն գտնուեցաւ նաեւ ընկեր Պէօզիկեան. «Անձամբ ներկայ չըլլալով մեր Ընդհ. Պատգամաւորական Ժողովի նիստերու ամբողջութեան, որոշապէս չեմ յիշեր թէ Պատգմ. Ժողովը Ռամկավար բառը պահելու պէտքով անոր կցուելիք ուրիշ ոեւէ յարմար բառի մը գործածութեան համար առարկութիւն ըրած է թէ ոչ: Ուստի վիճարանութեանց շարունակութիւնը, առաջարկեց, յետաձգել յառաջիկայ նիստին, որպէսզի իրենք պատահութիւնը ունենան կարգաւոր Պատգամաւորական Ժողովի արձանագրութիւնները այդ մասին:

Ժողովը վաւարեցաւ ժամը 12-ին. յառաջիկայ Ժողովը տեղի կ'ունենայ Ուրբաթ օր, ժամը 3ին, Տօքթ. Գալֆայթեանի Սովետէի փողոց թիւ 2 գործատեղին:

ՆԻՍՏ Զ.

Ուրբաթ 14 Յունվար 1921

Ժողովը սկսաւ ժամը 9ին, Տօքթ. Գալֆայթեանի գործատեղին, Սովետէի փողոց թիւ 2, աստեղծաբանութեամբ ընկեր Սրվազլըի Աստեղծադիրներն էին Գ. Պէօզիկեան եւ Մ. Գալֆայթեան:

Ծանօթ.— Ժամը 3ի Ժողովը տեղի

չունեցաւ. ընկեր Սրվազլըի բացակայութեան պատճառաւ:

ՕՐԱԿԱՐԳ

1.— Շարունակութիւն «Անուան խնդրոյ» օրակարգին

Ընկեր Թէրզիպաշեան յայտնեց որ կարդացած լինելով իրենց Պատգամ. Ժողովի աստեղծարութիւնները, կը կարծէ որ անկարելի չգտներ յարմար բառ մը կցել Ռամկավար անունին:

Ընկեր Սրվազլը յայտնեց թէ այս անունի խնդիրը փորձաքար մը կրնայ ներկատուիլ միութեան խնդրոյն շուրջ. Վերակազմեալները կ'ուզեն հաստատական ոգին արմատախիլ ընել ապագայ կուսակցութեան մէջ:

Եթէ երկու անունները յիշուին, որոնցմէ մէկը յիշեցնէ մէկ կուսակցութիւնը, եւ երկրորդը՝ միւս կուսակցութեան անունը, այսպիսով չինիշ նպատակի մը չ'պիտի կրնանք հասնիլ:

Մենք հոս հաւաքուած ենք իրրեւ երկու կուսակցութեանց լիազօրներ հաւասար իրաւունքներով, ընդգրկելու անուն մը, որ անցեալ անունները մոռացութեան թողու: Եթէ՝ օրինակի համար, միացեալ կուսակցութիւնը կոչենք Ռամկավար եւ Վեր. Հնչակ. անունով, այդպիսի բարեբառ արդիւնքի չ'պիտի կրնանք հասնիլ: Առաջարկը, ինչպէս բերուած է Ռամկավար լիազօրներու կողմէ, կը ցոյցանէ միութեան գաղափարը ո՛չ թէ երկու կուսակցութեանց ձուլումով, այլ միայն ազգայնական կուսակցութեան միացումով Ռամկավար անունին տակ. եւ այս չէր մեր բանակցութեանց նպատակը: Ռամկավար լիազօրներուն տրուած լիազօրութիւնը իրենց Պատգամ. Ժողովին կողմէ կը հաստատէ այս կերպ ոգի մը, որ տրամադօրէն հակառակ է այն ըմբռնումին՝ որ պէտք ենք ունենալ միութեան իրագործման համար:

Ընկեր Թէրզիպաշեան արտայայտուե-

ցաւ հետեւեալ կերպով. «Ռամկ. Կուսակցութեան միութեան ջերմ փափաքը մեր կարծիքով առաջնութեան իրաւունքը կը վախճի, քանի որ Ռամկավար Կուսակցութեան նախաձեռնութեամբ էր որ Բարիլի մէջ հիմը դրուեցաւ միութեան գործին * եւ յետոյ իրենց Պատգամաւորական Ժողովին է որ առաջին քայլը կ'առնէ դէպի իրականացում Բարիլի մէջ եղած յղացումին: Ռամկավար Կուսակցութիւնը «Ռամկավար» բառին պահպանման մէջ ալի հիմնական տեսակէտը ունեցած է, որ այդ բառն է որ կրնայ իր մէջ բովանդակել, գերազանցապէս, այն ոգին՝ որ կը պարունակէ իր ընդգրկած ծրագիրը, ինչ որ միանալու կոչուած համախոհ Կուսակցութեանց ծրագիրը եղած է. Ռամկավար Կուսակցութիւնը չանտեսելով հանդերձ համախոհ Կուսակցութեան յարաբերական ոյժերը, չէ մերժած ուրիշ յարմար անուն կրելու հաւանականութիւնը: Բազմաթիւ են օրինակներ ազգային թէ օտար կուսակցութեանց տարեգրութեանց մէջ, ուր մեր վերեւ յիշուած պատճառաբանութիւններով՝ առանց պէտք ունենալու նոր անունի՝ ստեղծուած է միացուած կամ պատշաճեցուած անուններով միութիւն:

Պատգամ. Ժողովը, իր խորհրդակցութեանց մէջ անշուշտ աչքի առաջ ունեցած է զանազան հաւանականութիւններ: Որինակի համար, չէ՞ք խորհիր որ, եթէ նոր անուն մ'ընդգրկենք, մեր Կուսակցութենէն կամ գուցէ եւ ոչ-Կուսակցական չէզոքներէ մաս մը մարդիկ Ռամկավար անունը, որպէս արդէն ռէքլամ դառած անուն, գործածեն նոր Կուսակցութիւն մը առաջ բերելու համար: Ես զեռ չեմ խօսիր այն թէքնիքական անհնարաւորու-

թեան մասին, որպիսին անցեալ նիստին մէջ ընկեր Ինճիճեան յայտնեց, եւ որուն համաձայն, Պատգ. Ժողովին որոշումով կաշկանդուած ենք մենք եւ որով մասին կը փափաքէինք լսել Կուսակցող միւս կողմը, թէ արդեօք ինքն ալ չ'զանե՞ր որ մեզմէ անկարելին է որ կ'սպասուի:

Ընկեր Ինճիճեան խօսք տունելով բնաւ. «Ես ներողամտութիւնը խնդրելով ընկեր Սիմոնի, պիտի բողոքէի իր խօսքերուն մէջ դրած այն ձևին՝ որով իբր թէ մենք կ'ուզենք պարտադրել մեր կամքը միւս քոյր Կուսակցութեան, տրուած ըլլալով որ մենք միութեան ջերմ փափաքով է որ եկած ենք հոս:

Ընկեր Սքվալը հարցուց ընկեր Ինճիճեանի, թէ որ մենք առաջարկէինք վերակազմեալ Հնչակեան անունը պահել՝ ի՞նչ պիտի րսէիր:

Ընկեր Ինճիճեան պատասխանեց. «Նկատի առնելով մեր Պատգ. Ժողովէն մեզի տրուած որոշ հրահանգները, չպիտի ընդունէինք: Եւ կը ցաւիմ որ միութիւնը յաջողցուցած ըլլալու պատիւը ներկայ պայմաններուն մէջ ձեզի է որ պիտի պատկանի, որովհետեւ մենք կարող չենք ձեր փափաքին ընդառաջ երթալու, կաշկանդուած ըլլալով Ընդհ. Պատգամաւորական Ժողովի ծանօթ որոշումով:

Ընկեր Տէրոյեան.- Այնքան մըն ալ տրամաբանական չեն երեւիր ինձ արդեւած փաստարկութիւնները. օրինակի համար ընկեր Թէրզիպաշեան կը յիշեցնէ մեզ թէ իր Կուսակցութիւնն է որ նախաձեռնարկ եղած է եւ այս՝ նոյն Կուսակցութեան անկեղծութիւնը կը ցուցնէ: Մենք հաւատարմով իր Կուսակցութեան անկեղծութեանը՝ պիտի յիշեցնէինք թէ միութեան բուն բաղձանքը եղած է երկուստեք, եւ այս՝ տարիներու պատմութիւն մ'ունի իր ետեւ եւ թէ միացման քանի մը փորձեր եղած են, թէ եւ անյաջող ելքով: Այդ ձախողուած փորձերուն

* Հ. Երուանդին ձեռագրով արտագրուած օրինակին մէջ կայ փակագծեալ հետեւեալ արձանագրութիւնը. «Խեղաթիւում մը. Ազատական Միութեան կը վերաբերի նախաձեռնութիւնը եւ միջնորդութիւնը այդ գործին»:

մէջ կը տեսնենք որ կազմուելիք նոր կուսակցութեան անուան հարցին ամենամեծ կարեւորութիւններէն մին արուած է եւ ճիշդ այդ փորձուած փաստաւոր կէտէն զգուշանալու համար է որ իմ կուսակցութիւնս որոշած է երկու կուսակցութեանց անուններն ալ չգործածել կազմուելիք կուսակցութեան անուան մէջ եւ որով նոր կուսակցութիւնը ներքին չբաժնի միմեկի մը պիտի չունենայ: Այսպիսով, կարծեմ որ կուսակցութիւնս նախ ժխտելով իր անունը եւ պահանջելով նոր իր քոյր կուսակցութենէն՝ միութեան համար իր անկեղծութեան ապացոյցներէն մին տուած կը լինի: Ժողովրդավար ոգին ուրիշ անունով մըն ալ կարելի է արտայայտել: Դարձեալ ընկեր թէրզիպաշեան գիտել կու տայ ի միջի այլոց, թէ արդէն ոչքլամ եղած անուն մը երբ նոր կուսակցութեան անունին մէջ չգործածուի, հաւանաբար ուրիշ կուսակցութիւն մը կամ խմբակ մը պիտի օգտուի անկէ: Ինծի այնպէս կը թուի որ ճիշդ մտածած կ'ըլլամ եթէ նկատել տամ թէ այդ հարցը հնարուած եւ մէջտեղ նետուած է հաւանաբար ըլլալիք միութեան հաշուոյն խոչընդոտ մը յարուցանելու նպատակով եւ հեղինակը կամ կուսակցութիւն մըն է եւ կամ ամհավար ոչ միութենական անհատ մը: Այսօրինակ պատմութիւններ յաճախ չըջան տուած են միութեան անցեալ փորձերու տակէն: Անոնք չէ որ միայն կուսակցութեան մը ոգին կը հայելիացնէ, այլ աւելի անոր տարած կեանքն ու գործերը: Իսկ ընկեր ինձիմեանի արտայայտութեան կը պատասխանեմ թէ երբ միութեան ջերմ բաղձանքովն է որ այստեղ երկու կուսակցութիւնները կը խօսին, մեզ կը մնայ մեր փոխադարձ գերագոյն զոհողութիւնը մէջ բերել եւ հնարաւոր դարձնել ակնկալուած միութեան իրադրոժումը: Բոլորին ալ պարտադրելի է այդ, որ պէսպիսի մեր այս բանակցութիւնով հա-

նինք բաղձալի նպատակին:

Ընկեր Գալֆայեան «Ես կը մերժեմ ընկեր թէրզիպաշեանի այն պաշտօնաբեր թէ իրենք մենէ աւելի զօրաւոր են, որովհետեւ ո՛չ ոք գիտէ թէ ի՞նչ է մեր զօրութիւնը ճշգրիտ կերպով, այլ կարծիքներ կան, ինչպէս որ մենք ալ ունինք կարծիքներ թէ այս կամ այն մասին մէջ մենք ենք աւելի զօրաւոր եւ ուրիշ մասին մէջ անոնք: Հետեւաբար, ես ընկեր թէրզիպաշեանի խօսքերը կ'ընդունիմ որպէս կարծիք, ինչպէս մեր կարծիքը: Բայց ոչ ամբողջ կուսակցութեան, այլ շրջանակներու հաշուոյն, հետեւապէս՝ կը կրկնեմ անգամ մը եւս ընկերներուս բաժնը՝ թէ մենք հոս եկած ենք բանակցելու հաւասար իրաւունքներով եւ միմիայն այդ պայմանաւ է որ կրնանք շարունակել բանակցութիւնները: Կր մերժեմ նոյնպէս այն պաշտօնաբեր թէ իրենք են (Ռամկավարներ) եղած տուածին անգամ միացման փափաքողը Բարիդի մէջը. այլ կ'ըսեմ թէ՝ մեր կուսակցութիւնը մէկէ աւելի անգամներ փորձած է միացման: Գալով «Ռամկավար» բառի պահպանման մասին ցոյց արուած պատճառներուն եւ պատճառարանութեանց, պարտաւոր եմ ըսել թէ երբ մենք ամէնքս ալ գիտենք թէ երկու կուսակցութիւնները իրարմէ բաժնող ո՛չ մէկ ծրագրային տարբերութիւն գոյութիւն ունի, եւ միակ տարբերութիւնը որ կայ՝ այն ալ կուսակցութեանց անունն է, հետեւաբար՝ չեմ կարծեր որ սեւէ պատգամաւորական Ժողով որ անկեղծօրէն միացման փափաքող է, ինչ որ կը վկայեն մեր Ռամկավար լիազօրները իրենց Պատգամ. Ժողովի մասին, նկատողութեան չ'առնէ այն միակ տարբերութիւնը, որ գոյութիւն ունի եւ որ անուան տարբերութիւնն է, որ գուցէ շատ մը միացման փորձերու ձախողութեան պատճառներէն մէկը եղած է ժամանակին: Նոյնպէս կը զարմանամ միացման անկեղծօրէն փափաքող կուսակցութեան

մը Պատգամաւորական Ժողովին՝ որ որոշում մը տուած պահուն նկատողութեան չ'առնելը թէ արուած որոշումը թէ՛ եւ բառինքեան իմաստ յայնախօս՝ բայց անգործագրելի է միւս կուսակցութեան անուան որոշ վարդապետութիւն մը չը՝ չատկանչելուն պատճառաւ, թէ՛ եւ ան հատուցող մըն է ազգայնական, ազատական որոշ վարդապետութեան: Հետեւաբար, արդէն ըսի եւ անգամ մը եւս կը կրկնեմ թէ մեր կուսակցութեան անունն է Վեր. Հնչակեան կուսակցութիւն, հետեւաբար ըստ Ռամկավարներու Պատգամ. Ժողովի տուած հրահանգին եւ ձեր յայտարարութեան, անիկա յարմար բառը չէ՛, եւ հակառակ որ ես այս խօսքերը հոս կ'ըսեմ՝ ի պատասխան ձեր յայտարարութեան՝ եւ ոչ թէ որպէս առաջարկ, արուած ըլլալով որ վիճարանութեան ոչ մէկ իրաւունք եւ արտօնութիւն ունիմ այդ մասին: Հետեւաբար՝ առանց ուղեւորուել հետեւութիւն հանել Ռամկ. կուսակցութեան կողմէ արուած այն որոշ, պայմանէն, որը միակ տարբերութիւնը եղող անունի հարցը կը զգուսարագնէ, եւ անձնապէս նոյն իսկ կարելիութիւն չեմ տեսներ մեր Պատգամաւորական Ժողովին դուրս ալ առնելու:

Ընկեր ինքնինքեան յայտանց. «Էս գիտել պիտի տայի մեր ներկայ բոլոր ընկերներուն որ եթէ մեր Պատգամ. Ժողովը Ռամկավար բառը անպայման միացեալ կուսակցութեան անունին մէջ պահել որոշած է, նոյնը անկարելի չ'ընել նաեւ մեր համախօս կուսակցութեան, որու անունը գոնէ Պոլսոյ մէջ այս պահուս դուրս արուած Ընդհանուր Պատգամ. Ժողովին տպագրեալ պաշտօնական նամակաթուղթերու վրայ «Վերակազմեալ Հնչակեան Ազգայնական Ազատական» է: Հետեւապէս քանի որ դուք չէք առաջարկել, ինչպէս մենք կ'ստատէինք, եւ կ'առաջարկեմ, զոր օրինակ Ազատական բառը առնել ձեր անունէն եւ կցելով զայն մեր

Ռամկավար բառին՝ նոր կուսակցութիւնը անուանել «Ազատական Ռամկավար»:

Ժողովը փակուեցաւ ժամը 12ին. յառաջիկայ Ժողովը տեղի կ'ունենայ ընկեր ինքնինքեան ընտրարանը, Դչ. ժամը 9ին, հնարաւորութիւն արուելու համար Վեր. Հնչակեան լիազօրներուն՝ սոյն առաջարկը իրենց Պատգամ. Ժողովին ներկայացնելու:

ՆԻՍ Է.

22 Յունիս 1921

Պ. Ինքնինքեան ինքնապարանք

Ներկայութիւն ամբողջական:

Ժողովը բացուեցաւ ժամը 9ին:

Ասենապետ ընկեր Թէրզիպաշեան

Ասենապետի Գալֆայեան:

Ընկեր Տէրոյեան ի դիմաց իր ընկերներուն հետեւեալ յայտարարութիւնը բրաւ. «Ուրախ եմ յայտարարելու որ մեր Պատգամ. Ժողովը, նկատելով որ քոյր կուսակցութեան Պատգամ. Ժողովը վերջացած է եւ թէ անոր կողմէ արուած անիմփոխելի պայմանին վերաբերնութիւնը անհնարին է, ուստի մեր Պատգամ. Ժողովը ինքզինքին յայտնեց չոր վիճեցնելու համար բոլորիս կողմէ բաղձալի միացման հարցին իրականացումը: Ընդունեց որ միացեալ կուսակցութեան անուան մէջ պահուի Ռամկավար բառը: Բայց այս ուրախութիւն լուրը ձեզ հաղորդելու խնդրութիւնը չափ կարճ եղաւ զժրագործարար եւ մենք այսօր կը գրանուինք ցաւալի հարկին տակ հետեւեալ յայտարարութիւնը քնելու.

«Ռամկավար կուսակցութեան պաշտօնաթերթը «Ժողովուրդի Զայն»ը իր Յունիս. 18ի խմբագրականով արհամարհոտ եւ վիրաւորիչ ակնարկութիւն մը բրած էր մեր կուսակցութեան մասին: Այդ ակնարկութիւնը չէր կրնար բղիթի բարե-

կամական տրամադրութենէ, գործածելով ամենամեղմ բացատրութիւն մը:

«Որպէսզի միութեան բանակցութիւնները յառաջ տարուին հիմ ունենալով երկու կողմին բացարձակ հաւատարութիւնն ու փոխադարձ յարգանքը եւ անկեղծութիւնը, կը պահանջենք որ Ռամկ. կուսակցութիւնը իւր պաշտօնաթերթին մէջ յայտարարէ թէ խմբագրականի այդ արտայայտութիւնը չի ներկայացներ կուսակցութեան կարծիքն ու զգացումը, որոնք բոլորովին յարգալիւր են զէպի Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը»:

Այս յայտարարութեան առթիւ Թէրզիպաշեանը բառու.

Ես ինծի պարտք կը համարեմ իմ եւ իմ ընկերներու կողմէ մեր գոհունակութիւն եւ ուրախութիւն յայտնել, որ այս առթիւ անդամ մ'ենս երեսան կու գայ երկուստեք միութեան ջերմ փափաքը, ինչ որ փստահ եմ շուտով պիտի հասցնէ զմեզ միութիւնը հաշակելու բարերաստիկ գործին: Գալով երկրորդ հարցին, Ռամկավար լիազօրներ հաւատացած են թէ իրենց բացարձակ համոզումն այն է, որ ակնարկուած յօդուածը անկարելի է որ մեր քոյր կուսակցութիւնը սեւէ կերպով վիրաւորելու գիտումով եղած ըլլայ, իրենք այնպէս կը կարծեն թէ յօդուածագիրը Քաղաքական Ժողովոյ հանդէպ իր պաշտպանած թէգր աւելի ուժեղ ընելու համար բրած է գրիչի վրիպում մը: Իրենք կը գնահատեն նաեւ թէ քոյր կուսակցութիւնը կրնայ արդար ըլլալ իր վրդովումին մէջ, գուցէ լաւ չ'զիտնալով ոչ միայն Ռամկավար ընկերներու իւրաքանչիւրին տաժած յարգանքը հանդէպ քոյր կուսակցութեան, այլ նաեւ նոյնիսկ յօդուածագրին նոյն զգացումներն: Այսու հանդերձ Ռամկավար լիազօրները յայտարարեցին թէ իրենք չեն ուզեր նկատել թէ վերջերս «Առաւօտ» թերթին մէջ երեւոյթ կարգ մը յօդուածներուն պա-

տասխանելու մտքով կրնայ դրուած ըլլալ ակնարկուած պարբերութիւնը: Միեւնոյն տաւն Ռամկ. լիազօրները խնդրեցին որ պատահութիւն արուի իրենց աւելի խորապէս ուսումնասիրելու «Առաւօտ»ի խմբագրականները, փափաքուած լուծումը տալու համար այդ միջադէպին բարձման խնդրոյն:

Ժողովը փակուեցաւ ժամը 12-ին. յառաջիկայ ժողովը տեղի կ'ունենայ երեքշաբթի երեկոյեան ժամը 9ին Ռամկավարներու կեդրոնատեղին, Շիրակ համրայ, թիւ 42:

ՆԻՍՏ Ը.

27 Յունվ. 1921

Ժողովը տեղի ունեցաւ Ռամկ. քլլիւր. բացուեցաւ ժամը 9.30ին: Ներկայ էին ընկերներ Մ. Սըվաղլը, Ա. Թէրզիպաշեան, Ինճիճեան, Տէրոյեան, Գալֆայեան:

Ատենապետն էր Թէրզիպաշեան:

Ատենադպիրն էր Գալֆայեան:

Երկար վիճարանութիւններէ վերջ, արուած ըլլալով որ Ռամկավար լիազօրները պնդեցին «Ազատական Ռամկավար» անուան վրայ եւ չ'ընդունեցին Վեր. Հնչակեան լիազօրներու կողմէ առաջարկուած «Ռամկավար Ազատական կուսակցութիւն» անունը, Վերակազմեալ լիազօրները ընդունեցին «Ազատական Ռամկավար» անունը վերապահութեամբ:

Բացումը լրագրական վէճի համար որոշուեցաւ հրատարակութիւնը հետեւեալ չրջարեականին (յայտարարութեան ?), ստորագրուած հինգ լիազօրներու կողմէն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տրուած ըլլալով որ երկու կուսակցութեանց միութեան բանակցութիւնն-

րուն յաջող ելքը մեր ընկերներուն եւ հայ ժողովուրդին ամենաջերմ փափաքն ու ակնկալութիւնն է, մենք լիազօրներս պարտք կը համարենք յայտարարելու թէ վերջերս մեր Պոլսոյ օրկաններուն մէջ իրարու հանդէպ երեւցած կարգ մը արտայայտութիւնները, չեն ներկայացներ երկու կուսակցութեան ոգին եւ տեսակէտը եւ չեն կրնար խախտել անոնց փոխադարձ յարգանքն ու համակրանքը:

Օգտուելով այս առիթէն՝ պարտք կը համարենք հրաւիրել մեր բոլոր ընկերներն ու օրկանները զգուշ ըլլալ կուսակցական արժանապատուութիւն վիրատուելու հանդամանք ունեցող հրատարակութիւններէ եւ արտայայտութիւններէ:

Ծանօթութիւն.- Կր խնդրուի երկու կուսակցութիւններու բոլոր օրկաններէն արտատպել:

Հայ Ռամկ. Կուսակց.

Լիազօրներ

Ազգ. Ազատ. վեր. Հնչակեան Կուսկց.
Լիազօրներ

ՆԻՍՏ Թ.

30 Յունվար 1921

Նիսար սկսաւ Հայ Ռամկավար Կուսակցութեան քլիւսին մէջ: Կատենապետէր Պ. Սըվազլը եւ ատենադպիրն էր Գ. Պէօզիկեան:

Օրակարգ

1.- Շարունակութիւն նախորդ նիստի խնդրոյն:

Պ. Գալփայեան յայտնեց թէ քանի որ նախորդ ժողովին մէջ որոշուած էր Պոլսոյ թերթերուն մէջ հրատարակել յայտարարութիւն մը՝ թէ երկու քոյր կուսակցութիւններ յարգանք ունին իրարու դէմ եւ լրագրական հրատարակութիւններ չեն ցոյցներ կուսակցու-

թեանց հայեացքները՝ ինք կը պնդէ այս որոշման գործադրութեան վրայ:

Պ. Պէօզիկեան յայտնեց թէ ինքը համակարծիք չէ լրագրութեանց միջոցաւ ալլալիսի յայտարարութիւն մը ընելու, նիւթ չ'ատու համար խորժանքներու:

Ընկեր Տէքոյեան յայտնեց թէ ալլալիսի յայտարարութեամբ մը ցրուած կ'ըլլան արդէն եղած թիւրիմացութիւնները:

Թէրգիպաշեան.- «Ժողովուրդի Ձայն»-ի Յունվար 18ի խմբագրականին մէջ վեր. Հնչակ. Կուսակց. հանդէպ եղած ակնարկութեան համար, համաձայն վեր. Հնչակեան Կուսակցութեան լիազօրներու պահանջումին, նոյն թերթի Յունվ. 24ի թիւին մէջ լիւրջի բաւարարութիւն տրուած լինելով, անցեալ նիստին մէջ սպառաշին նմանօրինակ միջադէպներ չ'ստեղծելու կանխահոգութեամբ որոշուած էր յատուկ ջրջարեքականով ամփոփելուն եւ կուսակցականներուն ուշադրութիւնը հրաւիրել զգուշ մնալու համար ալլալիսի միջադէպներ յառաջ բերելէ: Այս որոշումը հաւասար յանձնառութեան խմատով արուած ըլլալով՝ կուսակցութիւններէն եւ ոչ մէկին կողմէ մասնաւոր պարտադրութիւն չէր ենթադրեր: Հետեւաբար այս որոշման գործադրութեան ձեւի փոփոխման մասին եղած առաջարկը միւս կողմի դիտողութեան տեղի չ'պէտք է տար:

Ընկեր Իմնիֆեան հետեւեալը աւելցուց վերի յայտարարութեան վրայ.

«Կարծեմ փափաքելի էր որ այս խնդիրը նկատողութեան առնուէր «Առաւօտ»-ին մէջ երեւցած չորս յօդուածներու մասին պէտք եղած ճշգրտմը կատարուելէ յետոյ»:

Պ. Սըվազլըն կը յայտարարէ հետեւեալը.

«Բանաձեւը ընդունուած է երկու կողմի լիազօրներու կողմէ երկար վիճա-

տարարութիւն մը հրատարակութեան տալուն համաձայնեցան Վեր. Հնչակեան լրագորները, որ պիտի ստորագրուէր երկուստեք: Այսպէս ալ որոշուեցաւ եւ բանաձեւը ստորագրուեցաւ երկուստեք եւ ընկեր Պէօզիկեանի բացակայութիւնը նկատի առնելով, հարցուցի ներկայ եղող Ռամկաւար լրագորներուն, Թէրզիպաշեանի եւ Ինճիճեանի, թէ կարո՞ղ են ստորագրել եւ թէ ընկեր Պէօզիկեան համակարծիք էր: Ինճ պատասխանուեցաւ թէ կը կարծեն որ համամիտ է յիշեալ ընկերը եւ եթէ համակարծիք ալ չ'ըլլայ, Ռամկաւար լրագոր ընկերներու մեծամասնութեան պիտի համակերպի ան:

Գալով անունի հարցին, Ռամկաւար լրագորներ հարցուցին թէ ի՞նչ կարելի է ընել այդ հարցին շուրջ, եւ ի՞նչ է Վեր. Հնչակեաններու վերջին խօսքը:

Ընկեր Գալֆայեան ի դիմաց իր ընկերներուն յայտնեց հետեւեալը. «Մեր կողմէ վերադաշուեթեամբ ընդունուած անունը ներկայացնելով մեր Պատգամաւորական Ժողովին, անիկա որոշեց թէ չ'իրնար իր առաջուան որոշումը, այն է «Ռամկաւար Ազատական Կուսակցութիւն» փոխել եւ եթէ Ռամկաւար լրագորներ համաձայն չ'գտնուին այս ձեւով անուան հարցին, այժմէն, վերջնական ձեւով լուծուելուն, Վերակազմեալ լրագորները համաձայն իրենց Պատգամ. Ժողովին տուած որոշման, կը յայտարարեն

թէ թէ անհամաձայն չ'պիտի գտնուին նոյն հարցին մինչեւ «Ժողովրդական Կուսակցութեան» լրագորներու ժամանումը յետաձգուելուն:

Ատոր ի փոխարէն Ռամկաւար լրագորները յայտնեցին թէ չեն կարծեր թէ Ժողովրդական Կուսակցութիւնը քաղաքական ներկայ հանգամանքներու մէջ ի վիճակի ըլլայ իր լրագորները ղրկել կարենալու, հետեւաբար յետաձգելու չէ անուան խնդրոյն վերջնական լուծումը: Իրենք բացարձակօրէն յայտնեցին թէ Վերակազմեալ Հնչակեաններու կողմէ վերադաշուեթեամբ ընդունուած «Ազատական Ռամկաւար» անունէն զատ ուրիշ անուն չեն ընդունիր:

Վերակազմեալ լրագորները պատասխանեցին թէ որքան ատեն որ Պ. Պատգամեան երկու կուսակցութեանց լրագորներու կողմէ ստորագրուած պաշտօնական նամակին չէ պատասխանած, Ռամկաւարներու վերոյիշեալ կարծիքը կը մնայ ենթադրութիւն եւ վաղաժամ է այդ մասին արտայայտուիլ:

Ծանօթ.- Այս վերջին նիստը երկարած լինելով մինչեւ գիշերուայ ժամը երկուքը, առանց եզրակացութեան բաժնուեցանք, այն հասկացողութեամբ որ պիտի սպասէինք Ժողովրդականներու մասնակցութեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՌԱՄԿԱՎԱՐ ԵՒ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ

Ազգայնական երկու կուսակցություններու միացումին համար յառաջ տարած բանակցությունները յաջողութեամբ վերջացած ըլլալով այսօր կը հռչակենք անոնց անպայման ու վերջնական միութիւնը՝

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ**

անունին տակ:

Այս իրողութիւնը ծնունդ է ուժերու տնտեսումին, կեդրոնացումին ու ազգային ծառայութեան մասին ամենախորունկ համոզումներու եւ կամեցողութեան: Երկու կուսակցութիւնները կը միանան աւելի ուժգին քափով նուիրուելու համար իրենց կոչումէն բխած պարտաւորութիւններուն եւ աւելի ներուժ կեանք տալու համար ազգայնական ու ռաւակալարական այն սկզբունքներուն, որոնցմով ժողովուրդի մը քաղաքական գոյութիւնը կը դառնայ առողջ, զօրաւոր, ապահով, եւ ազատութեան ու խաղաղութեան մթնոլորտի մը մէջ բոլոր ուժերը հնարաւորութիւն կ'ունենան իմացական ու տնտեսական անկաշկանդ զարգացումի ու բարգաւաճումի:

Երկու կուսակցութիւններու միութիւնը հաւատարմութեան վերանորոգւած ուխտ մըն է նոյն ատեն դէպի հայ ժողովուրդի քաղաքական, տնտեսական ու մտաւորական լաւագոյն շահերը ու դէպի ազգային հաստատութիւնները, սեփականութիւններն ու բնորոշ յատկութիւնները, լայնախոհ տրամադրութիւն-

ներով. եւ յանձնառութիւն մը՝ միշտ գերծ մնալու հատուածային, դասակարգային ու աղանդամոլական միտումներէ եւ նեղմիտ անջատողականութենէ:

Հայ ժողովրդի գերագոյն շահերուն մտահոգութիւնովը կայացուած այս միութիւնը վստահ ենք թէ ո'չ միայն սիրազեղ զգացումներով ու խանդավառութեամբ իրարու կողքի պիտի նետէ երկու կուսակցութիւններուն բոլոր հետեւորդները, աշխատելու բուն եռանդովը լեցւած, այլ ժողովուրդէն պիտի գնահատուի իբր շինարար գործ. եւ իրեն հրաւիրէ բոլոր այն ուժերը որ քաղաքական կեանքի մէջ նետուելու համար այս տեսակ միութեան մը քաղաքական ունենին:

Այս հասկացողութիւններով ու այս յառաջադրութիւններով հայ իրականութեան կը յանձնենք

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ:**

Ռաւակալար կուսակցութեան
միութեան լիագործներ

Ա. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

ԱՐԱՄ ԻՆՃԻՃԵԱՆ

Գ. ՊԵՕԶԻԿԵԱՆ

Ազատական կուսակցութեան
կեդրոնական վարչութիւն

ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԵԱՆ

ՀՐԱԶ ԵՐՈՒԱՆԴ

ԼՈՒԹՅԻԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կ. Պոլիս, Հոկտ. 1 1921

ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ ԹԻԻ 1 ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՆ

Սիրելի ընկերներ,

Ռամկավար Ազատական կուսակցության կեդրոնական վարչութեան համար խնդրական բաղադրություններն ձեր եւ անխառն հրճուանքի առիթ մըն է իր առաջին չրջաբերականն ուղղել կուսակցութեան բոլոր անդամներուն:

Ոգեւորուած ու սրտասնդուած ենք մենք այս միութիւնով եւ գործի ձեռնարկած ենք՝ վայելելով եղբայրական միջոցառումի մը անուշութիւնը: Տարակույս չունինք թէ մեր բոլոր չրջանակներն ու ընկերները անխառն նոյն զգացումներն ունին, եւ լեցուած են միութիւնը արմատացնելու եւ կուսակցութիւնը զօրացնելու բուն կամեցողութիւնովը:

Ընկերներ, միութիւնը չկայացաւ միայն հոգեկան վայելքի եւ գոհունակութեան համար, կայացաւ, որպէսզի աւելի մեծ ուժերով ու աւելի զօրաւոր թափով գործենք, եւ այդ կերպով արժեքընենք այն առողջ սկզբունքները, ուղղութիւնն ու ոգին, որ ինչպէս անցեալին, նոյնպէս ալ հիմա կը նկատենք անհրաժեշտ ու էական՝ մեր ժողովուրդի փրկութեան ու վերածնունդի գործին մէջ:

Այս միութիւնը, ուրեմն, մեր բոլորին համար պէտք է նշանակէ աւելի մեծ գործունէութիւն, եւ աւելի բուն նուիրում՝ մեր հայրենասիրական կոչումին ու նպատակին, առանց յղճութեան ամենափոքր նշանի, եւ առանց խանդավառութեան թուլացումի:

Ռամկավար Ազատական կուսակցութիւնը պէտք է յայտնուի եւ գործէ հայ կեանքին մէջ միշտ իր կենսունակ, առողջ ու լրջախոհ կազմակերպութիւն, իր մէջ խառնելով իր բոլոր անդամներուն գիտակցութիւնը, նախանձախնդրու-

թիւնն ու զոհարերութեան պատրաստակամութիւնը:

Մեր վերախոյ, բազմաթիւ, ժողովուրդը՝ բուժող կազմակերպ եւ վերաշինող զօրաւոր ու սրայաւ ձեռքի մը կը կարօտի. մեր կուսակցութիւնը, ինչպէս անցեալին մէջ, պիտի ձգտի այդ ձեռքն ըլլալ, ամէն առիթով, ու հասարակական ամէն գործի մէջ, երեսան բերելով այդ գրական յատկանիւշերը:

Ասիկա նշանարանն է, որ մեր բոլոր ընկերները պէտք է իրենց մտքին մէջ տպաւորեն եւ արթուն պահեն զայն միշտ, անոր ձգտելու եւ անոր հասնելու համար:



Ընկերներ, կեդրոնական վարչութիւնը խղճմիտ ու անխառն աշխատութեան յանձնառու՝ մեր բոլոր ընկերներէն կ'սպասէ նիւթական ու բարոյական բոլորանուէր աջակցութիւն, որպէսզի հնարաւորութիւն ունենայ լիովին գլուխ հանելու իր վրայ դրուած բոլոր պարտաւորութիւններն եւ պատկելու բոլոր անկալութիւնները:

Մեր կուսակցութեան գործունէութիւնը պէտք է բնագործակալի եւ տարածուի ամէն կողմ: Անոր համար նիւթական միջոցներ անհրաժեշտ են. մեր բոլոր ընկերներուն միութեան առթիւ զգացած խանդավառութեան ու գոհունակութեան գործնական մէկ շափանիչը պիտի ըլլայ այն անյետաձգելի գոհողութիւնը, որ այս օրերուն պէտք է յայտնուի եւ կուսակցութիւնը օժտէ անկաշկանդօրէն ու լայնօրէն շարժելու ու գործելու միջոցներով:

Ընդհանուր ու արդիւնաւոր հանդար-

նակութիւն մը ամենէն անկեղծ ու սիրա-
լիկ ցոյցը պիտի ըլլայ միութեան ափ-
ին եւ կուսակցութեան բարձր նպատակ-
ներուն հանդէպ:

Մենք պարտաւոր ենք մտածել վաղ-
ւան վրայ ալ, երբ քաղաքական փոխ-
ւած ու աւելի ձեռնառու պայմաններ շատ
աւելի պիտի ընդարձակեն գործունէու-
թեան մեր դաշտը: Վաղուան համար
չիմնադրաւ՝ իր տեղն ունենալու է մեր
ընկերներուն մօտին մէջ, եւ անոր զոյա-
ցումին համար ալ յարմար տալիքներով
յարմար ձեռնարկներ կատարուելու եւ
ջանքեր թափուելու են:

Ընկերներ, կեդրոնական վարչու-
թիւնը մինչեւ Ընդհ. Պատգամաւորա-
կան ժողովի գումարումը, որ տեղի պի-
տի ունենայ վեցէն ինը ամիս ժամանա-
կաշրջանի մը մէջ, պիտի գործէ եւ ա-
ռաջնորդուի երկու սեկտուն մտածում-
ներով՝ մոռցնել առկա բոլորովին թէ եր-
կու կուսակցութիւններ էին որ միացած
են մէկ կազմակերպութեան մէջ, եւ աշ-
խատիլ որ այս ժողովուրդը փնտռէ այս
կուսակցութիւնը այնպէս, ինչպէս նա-
ւարեկութեան բռնուած մարդիկ լասար
կը փնտռեն:

Այս յառաջընթացութեան մէջ ինքնարա-
ւութիւն չենք զգար. պէտք ունինք մեր
բոլոր ընկերներուն նման մտածումնե-
րուն եւ համապատասխան ոգիին ու ջան-
քերուն: Պէտք է ձգել որ ամպիլ ամենա-
փոքր կտոր մը մթաղնէ կուսակցութեան
պայծառ հորիզոնը, հինէն բերուած թէ
նոր արծարծուած անհամաձայնութիւն-
ներով: Կեդրոնական վարչութիւնը պի-
տի ըլլայ անաչառ ու անկողմնակալ իրա-
ւարար՝ ամէն անհամաձայնութեան:

Մենք վստահ ենք, թէ բոլոր ընկեր-
ներու զիտակցութիւնը, կարգապահու-
թիւնն ու նախաձեռնողութիւնը, եւ
վարչութիւններու անաչառութիւնն ու
հոգածութիւնը կուսակցութեան համար
պիտի երաշխաւորեն խաղաղ գործունէու-
թեան չրջան մը, ուր ամէն մարդ հան-
գիստ սրտով պիտի նուիրուի շինարար
աշխատութեան:

Կեդրոնական վարչութիւնը յաճախ
պիտի գրէ Շրջանային վարչութիւննե-
րուն եւ անոնց միջոցով տեղեակ պահէ
մեր ընկերները ազգային կենսական խըն-
դիրներուն եւ մեր զատին ազգայ ու ա-
նոր հետ սերտ առնչութիւն ունեցող մի-
ջազգային երեսփոխներուն մասին, որ
պէտքի ամէն կողմ մեր ընկերները ունե-
նան տեսակէտի ու հասկացողութեան
նոյնութիւն:

Գործի, ուրեմն, սիրելի ընկերներ,
մշտապառ խանդավառութեամբ եւ ընկե-
րական սիրազեղ ու առաք զգացումներով:

Ընկերական սիրալիք բարեւներով

Ռաւկավար Ագատական Կուսակցութեան
Կեդրոնական վարչութիւն՝

Ատենադպիր Ատենապետ
ՀՐԱՁ ԵՐՈՒԱՆԻ ՎԱՀԱՆ ԹԷՔԵՆՍՆ
Կ. Պոլիս 14 Հոկտեմբեր 1921

Կեդրոնական վարչութեան հասցէ՝

ՆԱՄԱԿԻ ՀԱՄԱՐ

MR. A. VARJABEDIAN

Boîte Postale 120

Pera, Constantionple

ՀԵՌԱԳՐԻ ՀԱՄԱՐ

VARJABEDIAN

«Joghovourti Tzaine»

Constantionple

ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԵՒ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՄՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒՆ ԵՒ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՆ

Սիրելի ընկերներ,

Հոկտեմբեր երեքին անհուն հըր-
նուանով մըն էր որ Հայ Ռամկավար եւ
Ազատական Կուսակցութեանց կեդրոն-
ներէն ստացանք հետեւեալ հեռագիրը.-

*«Միութիւնը ստորագրուեցաւ եւ
հռչակուեցաւ...»*

ԹԻՐԶԻՊԱՇԵԱՆ, ՀՐԱԶ ԵՐՈՒԱՆԴ

Այս հեռագիրը անսահման ուրախու-
թիւն եւ խանդավառութիւն պատճառեց
մեզի եւ առիթ տուաւ որ երկու կուսակ-
ցութեանց ձուլումի գործը փութացնեմք։

Ազատական եւ Ռամկավար Կուսակ-
ցութեանց Ամերիկայի Շրջանակի Նա-
հանգալին Վարչութիւններէն կազմուած
խառն ժողովս՝ ձուլումի բոլոր կարգադ-
րութիւններն րբաժ, այժմ հաճոյքն ունի
ձեզ հաղորդելու թէ Հոկտեմբեր 18-ին
յոյս տեսնելիք Միացեալ Կուսակցութեան
այս շրջանակի պաշտօնաւարներէն մէջ պի-
տի յայտարարուի երկու կուսակցու-
թեանց միութիւնը։

Ձուլումի գործը, օրինական հիմե-
րու վրայ դիտելու համար անհրաժեշտ կը
նկատենք ձեր ուշադրութեան յանձնել
հետեւեալ կէտերը.-

1.- ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Միացեալ Կուսակցութեան Նահան-
գալին Վարչութիւնը կազմուած է երկու
կուսակցութեանց վարչութեանց միացու-
մով - իննական հոգի։ Շրջանակալին ըն-
քացիկ գործերը վարելու համար կազ-
մուած է 10 հոգիեւոյ Գործադիր Մարմին
մը - հինգական հոգի։

2.- ՄԱՍՆԱՃԻՂԵՐՈՒ ԵՒ ԱԿՈՒՄԲ- ՆԵՐՈՒ ՄԻԱՑՈՒՄ

ա.- *Վարչութիւններ.* - Ակումբներ-
ը կամ մասնաճիւղերու վարչութիւն-

ները կը կազմուին՝ իւրաքանչիւր կողմի
վարչութեանէն առնուած հինգական ըն-
կերներով, ընդամենը 10 հոգի։ Այն վա-
րչութեան մէջ ուր մէկ կամ միւս կողմը
մասնաճիւղ կամ ակումբ չունի, գոյու-
թիւն ունեցող մարմինը կը պահէ իր կազ-
մը եւ կը յարաբերի Նահգ. Վարչու-
թեան հետ իբր մէկ մասնաճիւղը կամ ա-
կումբը միացեալ Կուսակցութեան այս
շրջանակին։

բ.- *Քլարներու միացում.* - Քլարներ-
ը պէտք է միացնել՝ բնութեամբ այն վա-
րչութեան հետ որ աւելի յարմարութիւն ունի, թէ
դիւրամտաշէյիութեան եւ թէ կեդրոնա-
կան վայր մը յայտնու տեսակէտէն։ Հոն
ուր միայն մէկ քլար կայ անհկա կը դառ-
նայ միացեալ մասնաճիւղին կամ ակումբ-
ին քլարը։

գ.- *Գոյերու եւ գանձերու միա-
ցում.* - Գոյերը եւ գանձերը պէտք է
միանան անխորաբար։ Ընկերները եր-
կուստեք ցոյց տալու են անվերապահ ոգի
մը եւ անկեղծ տրամադրութիւններ։

դ.- *Հրապարակալին ժողովներու
պատրաստութիւններ.* - Միացեալ մա-
սնաճիւղերու կամ ակումբներու վարչու-
թիւնները նախօրոք պատրաստուելու են
հրապարակալին ժողովներու, այնպէս
որ միացեալ վարչութեան առաջին շրջա-
բերականը ստանալուն պէս կարող ըլ-
լան առանց դժուարութեան ժողով սար-
քել։

Սիրելի ընկերներ,

Ձուլումի գործը լաւագոյն եւ յաջող
կերպով գլուխ հանելու համար անհրա-
ժեշտ է որ մեր ընկերները իրարու հան-
դէպ տածեն բացարձակ յարգանք, անվե-

րապահ համակրանք հե եղբայրական սէր:

Երկար ատենէ ի վեր բաղձացուած միութիւնը գեղեցիկ իրականութիւն մ'է այսօր որ կը խօսի մեր բոլորին սրտին ու հոգիին հետ, կը հրապուրէ. կը խանդավառէ մեզ, եւ մեզի կը ներշնչէ այն անսահման հաւատքը թէ Ռաֆայէլար Ազատական կուսակցութիւնը հայ իրականութեան մէջ պիտի կատարէ առաջնորդողի դեր մը, պիտի հանդիսանայ միակ հուժկու պաշտպանը հայ աւանդական սրբութեանց եւ պիտի առաջնորդէ մեր ազգը դէպի ազատութեան հանգրուանը:

Օ՛ն, ուրեմն, ընկերներ, նորոգենք սրբազան պարտականութիւն մը կատարելու մեր ռւխար, կանգնինք պատնէշին վրայ գինուորի մը համայն յատկութիւններովը օժտուած, պրկենք մեր ջիգերը, եւ անգամ մըն ալ անճատուր ըլլանք փրկարար վնասակեանքիւններու:

Հայ ազատագրութեան այս աղօտեալ վաղորդայնին եւ հայ յուսալքումի խաւարին մէջէն, երկու քոյր կուսակցութիւններու այս միութիւնը շողշողուն նառագայթի մը պէս պիտի փայլի հայ

իրականութեան մէջ, եւ ո՛վ գիտէ, թերեւս անհիկա պիտի ըլլայ հայ ազատագրութեան նախալոյսը, անկախութեան ռահվիրան եւ հետեւաբար հայ համայնքին յաւերժական օրհնութիւնը:

Ահաւասիկ առիքը, ընկերներ, գտնայնդուելու եւ իրականացնելու հայ ժողովուրդին ստուար մեծամասնութեան մեզմէ սպասած ակնկալութիւնը:

Ընկերական ջերմ բարեւնեքով

ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍ. Հ. ՌԱՄԿ. ԿՈՒՍ.

ԱՄԵՐ. ՆԱՀԱՆԳ. ԱՄԵՐ. ՇՐՋ.

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ՏՔ. Յ. ԾՈՎԻԿԵԱՆ Մ. Յ. ԱՆԱՆԻԿԵԱՆ

ՏՔ. Ա. Տ. ՄԱՐԿՈՍԵԱՆ Ա. ԳԵՈՐԳԵԱՆ

Ե. ՄԵՍԻԱՆԱՆ ՏՔ. Կ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՏՔ. Լ. ԿԻԻԼԷՋԵԱՆ ՏՔ. Հ. ՔԷՊԱՊՃԵԱՆ

Յ. ԶԱՐԻՖԵԱՆ Ս. ՄԱԼԵՒՄԷՋԵԱՆ

Մ. ԿԻՒՐԵՂԵԱՆ Ս. ԱԴԱՄԵԱՆ

ՎԱՀԷ-ՀԱՅԿ Կ. Յ. ՓԱՓԱՋԵԱՆ

Մ. ՓԵՐԵՅԵԱՆ Մ. ԳՈՆՏԱՋԵԱՆ

Տ. Յ. ՊՈՅԱՃԵԱՆ Վ. ՄԱԼՔՕՄ

Հոկտեմբեր 13, 1921

Պոստոն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

	էջ 5
<i>Այս ժողովածուն</i>	
<i>Բաժին Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՒ ԿԱՆՈՆԱԳՐԵՐ</i>	
Աումենական Կազմակերպություն	11
– Ծրագիր Արմենական Կազմակերպության	13
– Ներքին Կանոնագիր խմբապետ. ժողովներին...	15
– Խումբերի ներքին Կանոնագիր...	17
Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցություն	19
– Հ.Ս.Ռ.Կ.ի Ծրագիր	21
– Հիմնական Կանոնագիր Հ.Ս.Ռ.Կ.ի	32
– Ծրագիր Հայ Ռամկավար Կուսակցության	36
– Հիմնական Կանոնագիր Հ.Ռ.Կ.ի	39
– Ծրագիր Ազգային Ռամկավարական Կուսակցության	47
– Սահմանադրություն Ա.Ռ.Կ.ի	54
– Կանոնագիր Ա.Ռ.Կ.ի	55
Վերակազմեալ Հնչակեան Կուսակցություն	61
– Ծրագիր Վեր. Հնչ. Կուսակցության	63
– Հայ Ազատական Կուսակցություն	65
– Ծրագիր – Կանոնագիր Հայ Ազատ. Կուսակցության	67
– Ծրագիր Վեր. Հնչ. (Ազատ.–Ազգայնկն.) Կուսակցության	73
– Ծրագիր Ազատական Կուսակցության	88
Ռամկավար Ազատական Կուսակցություն	93
– Ծրագիր Ռ.Ա.Կ.ի	95
– Հիմնական Կանոնագիր Ռ.Ա.Կ.ի	113
– Ծրագիր Ռ.Ա.Կ.ի	139
– Հիմնական Կանոնագիր Ռ.Ա.Կ.ի	141
<i>Բաժին Բ. ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐԵՐ</i>	
– Արմենական Կուսակցության Զ. Շրջանակի	155
– Հ.Ս.Ռ.Կ. Գահիրէի Ակումբի	157
– Վեր. Հնչ. Կուսակցության Ամերիկայի Շրջանակին	160
– Ռ.Ա.Կ. Եգիպտոսի Շրջանակին	168
– Ռ.Ա.Կ. Ամերիկայի Շրջանակին	173
<i>Բաժին Գ. ԿԱԶՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ</i>	185
– Վեր. Հնչ. Կուս.ի եւ Գաղափարակցական Միութեան միջեւ միութեան առթիւ կատարուած բանակցութեանց ամփոփումը	187
– Նաժական Վ.Հ.Կ.ին Գղպկց. Միութենէն	197
– Ատենադպրութիւն Գղպկց. Միութեան եւ Վ.Հ.Կ.ի	198
– Շրջաբերական–հրահանգ թիւ 10 Հ.Ս.Ռ.Կ.ի	199
– Հայ Ազգային Ազատական Միութեան կազմաւորումը	201
– Նախապատրաստական խորհրդածողովի եղրակացութիւնները	204
– Պատճէն Ռամկավար եւ Ազատական Կուսակ– ցութեանց միութեան բանակցութեանց	209
– Պաշտօնական յայտարարութիւն Ռամկ. եւ Ազատ. Կուսակցութեանց միութեան	220
– Շրջաբերական թիւ 1 Ռ.Ա.Կ.ի	221
– Հայ Ռամկ. եւ Ազատ. Կուսակցութեանց Ամե– րիկայի մասնաճիւղերուն եւ ակումբներուն	223

Այս ժողովածուն

Սրբագրեց	ԵՂԻՍ ԳԱՅԱՆԵԱՆ
Գրաշարեցին	ՇԱՀԷ ՊԱՒՈՒԿԵԱՆ ԱՐԱ ԶԱՔԱՐԵԱՆ
Էշադրեց	ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՀՏԵՍԵԱՆ
Տպագրեց	ԱՐՏԱՇԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Կազմեցին	ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՆԳԻՆԷ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Ժողովածուն տպարան յանձնուեցաւ 1 Մարտ
1988-ին:

Տպագրութիւնը աւարտեցաւ 4 Ապրիլ 1988ին:

PRINTED IN LEBANON